281.6

ՀԱՅԱՍՕՐԵՆ



ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 1995

ԾԱՂԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Խմբագրեմբեր - Խոզեմբեր - Վեհապեմբեր

1995

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵԻ ՍՐՔԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

18596-Ա2

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՂԲՅՈՒՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ...

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի առաքյալների դերը քրիստոնեական հավատքի տարածման և քրիստոնեական Եկեղեցու հաստատման գործում ունեցել է որոշադրիչ վճռական նշանակություն: Հիսուս Իր երկրավոր կյանքի ընթացքում Պաղեստին երկրից դուրս չեկավ. Նա միայն Իր ազգի՝ եբրայեցի ժողովրդի շրջանակներում քարոզեց Իր կրոնի ճշմարտությունները: Իր հարությունից հետո և երկինք համբառնալուց առաջ, Իր շուրջ համախմբված տասներկու առաքյալներին ուղղեց աշխարհումս Իր արտասանած վերջին բառերը, ասելով. **«Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա. ինչպես Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացեք ուրեմն, աշակերտ դարձրե՛ք բոլոր հեթանոսներին, նրանց մկրտեցե՛ք Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանե՛ք նրանց կատարել այն բոլորը, ինչ որ պատվիրեցի ձեզ: Եվ ահա ես ձեզ հետ եմ (լինելու) մինչև աշխարհի վախճանը»** (Մատթ., ԻԸ 18—20):

Արևից շառավիղող ճառագայթի նման Հիսուսի տասներկու առաքյալները և Հիսուսին հետևող աշակերտները տարածվեցին աշխարհի չորս կողմերը և Երկնային Լույսի շողերը ցանեցին ժողովուրդների կյանքերում: Նրանք իրենց քարոզության **խոսքին**՝ որպես կնիք ճշմարտության ընծայեցին իրենց **արյունը** մարտիրոսության՝ երկնային արքաճաճանչ պսակով գագաթավորելով իրենց երկրավոր կյանքերը:

Առաքյալների Քրիստոսատուր իշխանության և Քրիստոսապարգև հավատքի վրա հիմնվեցին Քրիստոսի Եկեղեցիները բազում ազգերի և երկրների մեջ: Տասներկուսից երկուսը՝ **Ս. Թադեոս և Ս. Բարթուղիմեոս** անուններով ճանաչված առաքյալները իրենց հավատքի և սիրո սերմերը ցանեցին Հայաստանի հողում և այնտեղ գտան իրենց առաքելության վախճանական պսակը, հայկական հողին խառնելով Ս. Հոգիով սպունգացյալ իրենց մարմինները, որպես սերմ ծլարձակելի: Նրանք եղան մեր Եկեղեցու առաջին հիմնադիրները, ինչպես հաճախ ասում ենք մեր եկեղեցաբանական լեզվով՝ **«Առաջին Լուսավորիչք Հայաստանեայց աշխարհի»:**

Նրանց տոնը, այսինքն՝ նրանց անձերի, կյանքերի, հավատքի, առաքելության ոգու, քարոզության, ծառայության հիշատակի և պատգամի վերակենդանացումը մեր Եկեղեցու հավատացյալների կյանքում, մշտապես

խմորի նման ներգործել է և ներգործում է մեր ազգի գիտակցության և հոգեխառնության, հիշողության և ինքնաճանաչության տարածքներում:

Մենք հպարտությամբ մեր Եկեղեցին կոչում ենք **Հայաստանյայց ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Եկեղեցի:** Առաքելական լինելը բնականորեն բացառիկ պատիվ է մեր Եկեղեցուն: Բայց **առաքելությունը** սոսկ պատմական ծագումի, ժամանակային սկզբնավորումի հարց չէ մեզ համար: Դա անցյալից ժառանգված մի տեսակ կայական, ձևական հատկանիշ չէ միայն: Առաքելականությունը նաև ու մանավանդ այսօրվա հատուկ և մշտակենդան երևույթ է, որովհետև մեր Եկեղեցին առաքյալներից ժառանգել է **առաքելության կոչումը** որպես իր գոյության իմաստն ու նպատակը: **Առաքելություն** կնշանակի **առաքելության** ներշնչման անսպառելի ուժ:

Մեր հայրերն այսպես են իմացել առաքելականության իմաստը և այդ հասկացողությամբ Եկեղեցին ըմբռնել են հաստատված **«ի վերայ հիման սուրբ առաքելոց»:** Առաքյալներին նվիրված տոները բազմաթիվ են և բազմերանգ մեր Եկեղեցու ծիսական կարգում: Գեղեցկահյուս և հոգելից շարականներ են հորինվել նրանց հիշատակի պանծացման համար: Ներբողներ են գրվել ի խնդիր նրանց կատարած գործի գովերգության և արժևորման:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՅՑԸ ՌՈՒՄԻՆԻԱ



ՀՈԿՏԵՄԲԵՐ 26

Վեհափառ Հայրապետը, հրավիրված լինելով Ռումինիայի Օրթոդոքս Եկեղեցու ինքնագլխության 110-ամյակի և Պատրիարքության 70-ամյակի տոնակատարությանը, Հայաստանից Ռումինիա մեկնեց՝ մասնակցելու և իր շնորհավորանքը անձամբ բերելու Ռումինիայի Օրթոդոքս Եկեղեցու հավատացյալ հոտին և նրա գահակալ Թեոկթիստ Պատրիարքին:

Հայոց Հայրապետի օդանավը վայրէջք կատարեց Ռումինիայի մայրաքաղաքի «Օտոպեն» օդանավակայանում հինգշաբթի, հոկտեմբերի 26-ին, տեղական ժամանակով ժամը 10.00-ին:

Գարեգին Ա Կաթողիկոսին դիմավորելու էին եկել Ռումինիայի Օրթոդոքս Եկեղեցու գլուխ Թեոկթիստ Պատրիարքը, Մոլդովայի թեմի միտրոպոլիտ Դանիելը, Պանատի թեմի միտրոպոլիտ Նիկոլայը, Սիբիուի թեմի միտրոպոլիտ Անտոնիևը, Թեոֆան եպիսկոպոսը և այլ հոգևորականներ: Ներկա էին նաև Ռումինիայի բարձրաստիճան կառավարական անձինք՝ Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկուի հատուկ ներկայացուցիչ, կրոնի հարցերով գլխավոր խորհրդական տիար Պ. Օպալևկին, կրոնական գործոց նախարար Իլիե Ֆոնտան:

Օդանավակայանում էին նաև Ռումինիո և Բուլղարիո հայոց հոգևոր առաջնորդ Տիրայր արքեպս. Մարտիկյանը՝ թեմի հոգևոր դասով, Ռումինիայում և Մոլդովայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գևորգ Ղազինյանը, ՀՀ դեսպանատան աշխատակիցներ, Ռումինիայի հայոց միության վարչության նախագահ Վարուժան Ոսկանյանը, հայ համայնքի ազգայիններ՝ հանձինս պարոնայք Հակոբ Քրմզյանի, Ժիրայր Կյուլպեճկյանի և այլոց:

Ամենայն Հայոց Հայրապետը օդակայանի հանդիսավոր սրահներից մեկում իր ողջույնի խոսքն ուղղեց Թեոկթիստ Պատրիարքին, Ռումինիայի վսեմաշուք նախագահ Իոն Իլիեսկուին, պետական բոլոր անձանց, ներկաներին՝ հեռուստատեսության ու ռադիոյի միջոցով ռումին ժողովրդին՝ մաղթելով, «որ այս երկիրը (Ռումինիան) շարունակի իր վերելքը՝ Աստծուն, մարդկությանը և ռումին ժողովրդին ծառայելու համար»:

ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔԸ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Ռումինիան հայ ժողովրդի համար հարազատ տուն է եղել դարերից ի վեր: Ես էլ այսօր գալով, ինձ իմ հարազատ տանն եմ զգում, երբ մանավանդ գտնվում եմ իմ սիրելի եղբոր՝ Թեոկթիստ Պատրիարքի մոտ՝ կիսելու իր ուրախությունը Ռումինական Օրթոդոքս Եկեղեցու ինքնագլխության (ավտոկեֆալության) և անկախության 110-րդ տարեդարձի առթիվ: Ես ողջունում եմ Ռումինական Հանրապետությանը, նրա վսեմաշուք նախագահին, բոլոր պետական անձնավորություններին և ցանկանում եմ ի խորոց սրտի, որ այս երկիրը շարունակի իր վերելքը Աստծուն և մարդկությանը և Ռումինական ժողովրդին ծառայելու համար: Քառորդ դար առաջ ես այցելել եմ այս երկիր, բայց հիմա գալիս եմ այնպիսի մի ժամանակ, երբ այն կերպարանափոխվել է, պայծառակերպվել: Մենք եղբայր ժողովուրդներ ենք եղել, նաև Ռոմեն և Հայ Եկեղեցիները: Անկախության այս շրջանին ավելի ևս պետք է սերտանա մեր եղբայրությունը: Կաղոթեմ Աստծուն, որ այս տոնակատարությունը լինի մի նորոգման առիթ:

Օրվա երկրորդ կեսին, ժամը 13.00-ին, Վեհափառ Հայրապետին իրեն ուղեկցող Տիրայր արքեպս. Մարտիկյանի և Արտակ աբդ. Տիգրանյանի հետ հրավիրվեց Ռումինիայի Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարքարան՝ ճաշի, որին մասնակից եղան նաև Օրթոդոքս մյուս Եկեղեցիների գահակալները և պատվիրակությունները:

Տոնակատարությանը մասնակցելու համար Բուխարեստ ժամանեցին հետևյալ պատվիրակությունները. Կոստանդնուպոլսից՝ Տիեզերական Պատրիարք Բարթողոմեոս Ա-ն, Ալեքսանդրիայից (Եգիպտոս)՝ Պարթենիոս Պատրիարքը, Բուլղարիայից՝ Մաքսիմ արքեպիսկոպոսը, Սերբիայից՝ Պավել Կերման Պատրիարքը, Կիպրոսից՝ Խրիսոստոմոս արքեպիսկոպոսը, Անտիոքի և Երուսաղեմի Պատրիարքների ներկայացուցիչները, Չեխիայի, Ֆինլանդիայի, Լեհաստանի, Ճապոնիայի, Ալբանիայի Օրթոդոքս Եկեղեցիների պետ արքեպիսկոպոսները, Հունաստանի Եկեղեցու պատվիրակությունը, Հռոմից՝ Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ կարդինալ Կասիդին, այլ եպիսկոպոսներ և հրավիրյալներ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Եվրոպայի Եկեղեցիների Համագումարի ներկայացուցիչները, Անգլիայից՝ Անգլիկան Եկեղեցու պետ Քենթրբերիի արքեպիսկոպոսի ներկայացուցիչը:

Ժամը 16.00-ին Վեհափառ Հայրապետը ներկա գտնվեց Թեոկթիստ Պատրիարքին «HONORIS CAUSA» պատվավոր դոկտորի կոչման և համապատասխան դիպլոմի շնորհման հանդիսավոր արարողությանը, որը տեղի ունեցավ Ռումինիայի պետական համալսարանում, ռեկտոր պրն. Կոնստանտինեսկուի միջոցով:

Նույն օրը, ժամը 19.00-ին, Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև տոնակատարությանը մասնակցող մյուս պատվիրակությունները հրավիրվեցին Պատրիարքարանի սրահներից մեկը, որտեղ Վեհափառին, ինչպես և մյուսներին հիշատակի նվերներ մատուցվեցին՝ ձեռաց խաչ և պանակներ:

Այդ արարողությունից հետո բոլոր ներկաները Պատրիարքարանի հաշտասրահում մեկտեղ ընթրեցին:

Այդպես ավարտվեց Վեհափառ Հայրապետի Ռումինիա այցելության առաջին օրը:

Կիսակողմից ու ներքևից պատկերված օրացուցակիմպլանտ

Օդանավակայանում Թեոկթիստ Պատրիարքի հետ

Figure missing from the original publication

Դիմավորում Խորհրդարանի շենքի մոտ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 27

Ռումինի Եկեղեցու ինքնագլուխ հռչակվելու տոնակատարությանը հրավիրյալ բոլոր հյուրերը առավոտյան ժամը 8.00-ին ուղևորվեցին դեպի Պատրիարքարան: Այդ օրը Ռումինի Օրթոդոքս Եկեղեցին նաև տոնում էր իր մեծագույն սրբերից մեկի՝ Դիմիտրիուսի հիշատակը, որը համարվում է Բուխարեստ քաղաքի պահապան սուրբը:

Վեհափառ Հայրապետին, ինչպես և մյուս հյուրերին եկեղեցականներից կազմված թափորը առաջնորդեց դեպի այն վայրը, որտեղ գեղեցիկ տաղավարի ներքո հանգչում էր Սբ. Դիմիտրիուսի մասունք-պահարանը, որին օրեր ի վեր երկրպագելու և նրանից օրհնություն առնելու համար էր գալիս Բուխարեստի ողջ բնակչությունը: Այնուհետև մայրավանքի բակում պատրաստված բացօթյա մեծ բեմի վրա մատուցվեց հանդիսավոր ս. պատարագ՝ մասնակցությամբ Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարքների, արքեպիսկոպոսների և ներկայացուցիչների:

Պատարագի ընթացքում հավատացյալ ժողովրդին ուղղված խոսքով հանդես եկավ Թեոկթիստ Պատրիարքը՝ հայտնելով հատկապես իր ուրախություն ու շնորհակալությունը բոլոր հյուրերին:

Պատարագի վերջավորությանը մաղթանքի և շնորհավորանքի խոսք ունեցան Օրթոդոքս Եկեղեցու պետերն ու ներկայացուցիչները: Այստեղ իր ողջույնի խոսքն ասաց նաև Ղպտի Օրթոդոքս Եկեղեցու պետ Շենուդա Պատրիարքը:

Պատարագի ավարտին, ժամը 14.00-ին, Բուխարեստ քաղաքի հարգի հյուրանոցներից մեկի ընդարձակ սրահում ճաշկերույթ տրվեց Թեոկթիստ Պատրիարքի պատվին, որի ծննդյան 80-ամյակն էր և քահանայական ձեռնադրության 45-ամյակը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 28

Ռումինի Եկեղեցու ինքնագլխության և անկախության տոնակատարությանն հանդիսությունը տեղի ունեցավ հատուկ ծրագրով պատրաստված նիստով, որը կայացավ ռումին պետության Ազգային Ժողովի սրահում:

Ներկա գտնվեց նախագահ Իլիեսկուի ներկայացուցիչը, քանզի նախագահը դեռ չէր ժամանել Նյու Յորքից, որտեղ մասնակցում էր ՄԱԿ-ի գագաթաժողովին: Ներկա էին նաև Սենատի, Պառլամենտի նախագահները, վարչապետ Նիկոլաե Վըկըրոյուն և այլ նախարարներ:

Այստեղ էին նաև հրավիրված հոգևորականները և Ռումինի Եկեղեցու բարձրաստիճան հոգևոր դասը:

Պաշտոնական հյուրերի շարքում էին նաև Ռումինիայում մյուս երկրների ներկայացուցիչները, որոնց թվում Ռումինիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գևորգ Ղազինյանը: Հրապարակային ելույթներ ունեցան Թեոկթիստ Պատրիարքը, Տիեզերական Պատրիարք Բարթոլոմեոս Ա-ն, Մոլդովայի և Բուկովինայի Դանիել միտրոպոլիտը, Յաշի միտրոպոլիտը, Ռումինիայի ասուվածաբանական համալսարանի ռեկտոր հայր Դումիտրու Պոպեսկուն, նախագահի ներկայացուցիչ Վիկտոր Օպալսկին, Ռումինիայի Խորհրդարանի Սենատի նախագահ Օլի-

վիու Գերմանը, վարչապետ Նիկոլայե Վըկըրոյուն, Ռումինիայի Ակադեմիայի նախագահ Վիրջիլ Կոնստանտինեսկուն:

Քույր Եկեղեցիների շարքից խոսք ունեցավ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Վատիկանի ներկայացուցիչ կարդինալ Կասիդին, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԺԵՎ) ներկայացուցիչ վերապատվելի Վեզլի Աիարաժան: Հանդիսավոր նիստն ավարտվեց Թեոկթիստ Պատրիարքի խոսքով:

Օրվա երկրորդ կեսին, ժամը 14.00-ին, բոլոր ներկաները հրավիրվեցին ճաշկերույթի նախագահ Իոն Իլիեսկուի մոտ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 110-ՐԴ ԵՎ ԻԲՐԵՎ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՄԱՆ 70-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ ԽՈՍՎԱԾ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Փառք և գոհություն կվերառաքեմ առ Սբ. Երրորդություն, մեր երկնավոր Հորը, Որդվույն և Սբ. Հոգվույն, ինձի տված ըլլալուն համար այս ուրախ առիթը Ռումեն Ուղղափառ քույր Եկեղեցվո հետ բաժնելու իր անկախության 110-րդ և պատրիարքության բարձրացման 70-րդ տարեդարձներուն առիթով: Անձնապես և հանուն Հայաստանյայց Եկեղեցվո կողջունեմ, Ձերդ Սըրբություն, եղբայր ի Քրիստոս՝ Թեոկթիստ Պատրիարք, հարգարժան անդամներ Սբ. Սինոդի, հոգևորականներ և հավատացյալ ժողովուրդ Աստուծո, անդամներ Ռումեն Ուղղափառ Սբ. Եկեղեցվո:

Կողջունեմ նաև բոլոր իմ ուղղափառ եղբայրներս, Նորին Սրբություն Բարթողոմեոս Ա Տիեզերական Պատրիարք և բոլոր պետեր և ներկայացուցիչներ Ուղղափառ Եկեղեցիներու ընտանիքին, որոնք ներկա են այստեղ՝ նույն ուրախությունը բաժնելու:

Հատկապես ուրախ եմ վկա դառնալով այն էկյումենիկ ոգիին և համաքրիստոնեական տարողության, որով դուք հարստացուցած եք այս հանդիսությունը՝ ներկայությամբը տարբեր Եկեղեցիներու պետերուն, ներկայացուցիչներուն և էկյումենիկ մեծ կազմակերպություններուն, ինչպես Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին և Եվրոպական Եկեղեցիներու Համաժողովին:

Արդյո՞ք այս մեկը պարզ արտահայտությունը չէ էկյումենիկ գիտակցության հառաջընթացին, մեր ներկա քրիստոնեական իրավիճակին մեջ, երբ անհատ Եկեղեցիի մը մեկ իրագործումը կամ անոր կյանքին մեջ նշանակալից դեպքի մը վերհիշումը մաս մը կկազմեն ամբողջ քրիստոնյա Եկեղեցվո կյանքին: Ես կշնորհավորեմ ձեզ, սիրելի ռումանացի եղբայրներ և քույրեր, որ ձեր Եկեղեցվո այս մեծ տարեդարձին այսպես էկյումենիկ երանգ տված եք: Թող այս էկյումենիկ ոգին մեր քրիստոնեական վկայության մնայուն ճանապարհը դառնա, երբ կմոտենանք երկրորդ հազարամյակի ավարտին և կպատրաստվինք դիմավորելու երրորդ հազարամյակը մեր բոլորիս Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի առաջնորդությամբ:

Այս առիթով կշնորհավորեմ նաև Ռումանիո պետությունը, գլխավորությամբ Ն. Վ. Իոն Իլիեսկուի, Ռումանիո նախագահին, ինչպես նաև ռումանացի ամբողջ ժողովուրդը, որովհետև կհավատամ, որ այս տոնախմբությունը նաև ազգային ուրախության և հպարտության առիթ է: Ո՛վ կրնա

Վեհափառ Հայրապետը ելույթ է ունենում Ռումինիայի Խորհրդարանում

Վեհափառ Հայրապետը օրհնում է Հայաստանի դեսպանատան դռոը

մոռնալ, որ Ռումանիո Ուղղափառ Եկեղեցին ամբողջապես միաձուլված է ռումանական ազգային կյանքի պարունակին, որուն ամբողջ մշակույթը և ազգային ոգին ու պատմությունը ներթափանցված են քրիստոնեական հավատքով՝ ուղղափառ արբազան ավանդությամբ: Թող ձեր ազգային պատմության նոր ժամանակաշրջանը շարունակե վայելել այդ քրիստոնեական հավատքի բարիքները, մանավանդ արդիական ժամանակներուն, որոնք այնքան վճռադրոշմ նկարագիր ունին:

Ողջույնի այս հակիրճ խոսքիս մեջ հետևյալ մտածումները կուզեմ փոխանցել որպես տեսակ մը հայկական մասնակցություն ռումանական հոբելյանական այս տոնակատարության:

ա) Ռումանական Ուղղափառ Եկեղեցին անցնող դարերու ընթացքին շոշափելիորեն արտահայտած է քրիստոնեական հավատքը՝ գրեթե անընդմիջաբար փորձաքարի զարնվելով, դժվար պահեր հաղթահարելով, հալածանքի և պայքարի տոկալով: Պարզ խոսքով՝ Ռումանիան հաճախ ապրած է «Գեթսեմանին» և «Golgotha»... Ռումանացի ուղղափառ ժողովուրդին համար մարտիրոսությունը տեսական, աստվածաբանական մտածողության առարկա չէ եղած այնքան, որքան կենդանի փորձառություն մը՝ միշտ հարության տեսիլքով և հավատարմությամբ ու տոկունությամբ ապրված:

Ահավասիկ գոյութենական վկայություն մը, որ մեզ՝ հայերս, և ձեզ ռումանացիներդ, կմիացնե եղբայրական կապով: Հռոմեական կաթոլիկ պատմաբան մը ըսած է. «Նահատակությունը հայոց պատմագրության հոմանիշ է»: Կհավատամ, այս բնորոշումը ճիշդ է նաև Ռումանական Ուղղափառ Եկեղեցվո պատմության համար: Գոհություն Աստուծո, որ Իր շնորհքով և պարգևած զորությամբ մենք վերապրած ենք բոլոր նեղություններեն և դժվարություններեն և կշարունակենք ապրիլ, և ապրիլ ստեղծագո՛րծ կերպով: Պետք է բաժնենք մեր քրիստոնյա եղբայրներուն և քույրերուն հետ այս պատգամը. այն է, որ Խաչը կառաջնորդե դեպի հարություն, երբ կապըրվի խաչելության արարքին ընդմեջեն և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խաչելության մասնակից դառնալով:

բ) Չեմ ուզեր շատ ծանրանալ պատմության վրա: Մեր քրիստոնեական վկայությունը կշարունակենք այսօր՝ նոր պայմաններու մեջ և նոր մարտահրավերներու առաջ: Ռումանացիներ և հայեր՝ երկու ազգերս ալ, նոր թոթափած ենք բռնակալությունը և ուրիշներու կողմե մեր շահագործումը:

Հրճվանքով կտեսնեմ այն իրականությունը, որ ձեր Եկեղեցին վերանորոգման նոր շրջան մը կբոլորե: Նոր կառուցված եկեղեցիները, ձեր աստվածաբանական ճեմարանները, դպրեվանքները և համալսարանները թիվով ավելցած են: Ուսանողներու թիվը մեծապես աճած է: Բանավոր և հրատարակյալ քարոզչությունը լայն տարողություն գտած է և բազում նման գործունեություններ ուժական ներդրում են և արգասաբեր: Այս բոլորը վերանորոգումի ճշմարիտ նշաններ են: Թող Աստուծո անունը փառավորվի:

Մոտավորապես նույն կամ նման նշաններ սկսած են երևիլ մեր Հայ Եկեղեցվո կյանքին մեջ ի Հայաստան և հարտահայման: Ամենայն խոնարհությամբ կփափաքիմ փառք և գոհություն վերառաքել առ Աստված, որ պատիվը ունեցա ընտրվելու Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց ազատ և անկախ Հայաստանի մեջ: Ազատության նոր շունչ մը կա այսօր Հայաստանի մեջ, ինչպես արևածագ մը, բազմամյա ձմեռնային

խավարե ետք: Յոթանասուն տարվան հալածանքը և ուրացումը քրիստոնեության պետք է այժմ վերապրբագրվի:

Ռումանական Եկեղեցվո անկախացման 110-րդ տարեդարձը ոսկի առիթ մըն է ձեր Եկեղեցվո վերաւորոգության շարժումը առավել ևս պայծառացնելու բազում մարզերու մեջ՝ հոգևոր, ծիսական, կրթական, մշակութային և ընկերային: Մենք հայերս կպատրաստվինք տոնելու մեր Եկեղեցվո պաշտոնական հիմնադրման կամ Հայաստանի մեջ քրիստոնեության պետական կամ ազգային կրոն հռչակման 1700-րդ տարեդարձը: Կհուսամ և կաղոթեմ, որ այս դարադարձը ևս առիթ հանդիսանա մեր Եկեղեցվո վերաւորոգության և աւոր առաքելության ընդլայնման մեր ժողովուրդին համար ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Հետևաբար, մենք կարիքն ունինք սերտ գործակցության՝ կատարելու համար այն պարտականությունը, որ վստահված է մեզի մեր Տիրոջ կողմե:

գ) Բոլորդ տեղյակ եք, որ Հայ Եկեղեցին ներկայություն եղած է Ռումանիո մեջ ավելի քան վեց հարյուր տարիներե ի վեր: Ռումանացի ժողովուրդը և Ռումանական Ողղափառ Եկեղեցին միշտ ալ ցուցաբերած են գործակցության օրինակելի վարքագիծ մը՝ հյուրընկալելով և բարեկամական կապեր հաստատելով հայ ժողովուրդի զավակներուն հետ, որոնք այս օրինյալ երկիրը հասան հաճախ փախուստ տալով ցեղասպանութենե՝ գործադրված իրենց իսկ հայրենիքին մեջ: Անոնք այստեղ գտած են ջերմ օճախներ Ռումանիո տարբեր շրջաններուն մեջ: Եթե մենք եղբայրներ և քույրեր եղած ենք տառապանքի ժամանակներուն մեջ, հիմա պետք է դառնանք գործակիցներ խաղաղության և անկախության տարիներուն: Այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Ն. Եորգան, Հ. Ճ. Սիրունին, Փրոֆ. Չիթեսքուն և մեր երջանկահիշատակ նախորդը՝ Վազգեն Ա Կաթողիկոսը, մեզի՝ այսօրվան ապրողներուս համար փարոսներ են, երբ կնայինք ապագային: Այս քրիստոնեական հանձնառության, եղբայրության և ավելի սերտ գործակցության պատրաստակամության ոգիով կողջունեմ այս նշանակալից պահը Ռումանական Ողղափառ Եկեղեցվո կյանքին մեջ: Կհավատամ, որ այս առիթը և մեր հասարակաց պատմության այս դարձակետը մեր բոլորին համար օրհնության աղբյուրի պիտի վերածվին:

Թող Տերը այս օրինյալ առիթը վերածե Ռումանական Ողղափառ Եկեղեցվո բազմահարուստ վկայության նոր ժամանակաշրջանի մը՝ ի փառս Աստուծո, ի բարգավաճումն ռումանացի ժողովուրդին՝ որպես աստվածահաճո ծառայություն մը Տիեզերական Եկեղեցվո և համայն մարդկության: Ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ՌՈՒՄԻՆԱՀԱՅՈՑ ԹԵՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 29

Եօթյա (Հոկտեմբեր 26—28) հանդիսություններին և նիստերին մասնակցելուց հետո, Հայոց Հայրապետն իր անդրանիկ հովվապետական այցը բերեց Ռումինիայում բնակվող հայ զավակներին:

Հոկտեմբեր 29-ին, կիրակի, Գյուտ Խաչի տոնի օրը, սուրբ պատարագի ընթացքին, որը մատուցում էր Արտակ աբեղա Տիգրանյանը, Ամենայն

Հայոց Հայրապետը զանգակների ղողանջի ներքո, հոգևոր հայրերի ուղեկցությամբ հանդիսավորապես մուտք գործեց Ռումինիայի հայոց առաջնորդանիստ Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցի: Հայոց եկեղեցին լեցուն էր հավատացյալներով: Հայոց Հայրիկի խոսքը լսելու և օրհնություններ ստանալու էին եկել Բուխարեստի չորս կողմերում բնակվող հայորդիներ: Սրբազան պատարագի արարողությանը Վեհափառի կողքին ներկա էին Ռումինահայոց թեմի առաջնորդ Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, Բուխարեստի հայոց համայնքի հոգևոր հովիվ Զարեհ ծ. վարդապետ Պարոնյանը, Սուչեավայից, Կոստանցայից, Յաշից և այլ շրջաններից քահանա հայրեր և աշխարհականներ:

Այս առիթով Վեհափառ Հայրապետի հետ աղոթելու էր եկել Թեոկթիստ Պատորիարքի ներկայացուցիչ, Պաճատի միտրոպոլիտ Նիկոլայը: Պատարագին ներկա էին նաև Ռումինիայում և Մոլդավիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան տիար Գևորգ Ղազինյանը, Ռումանիայում հավատարմագրված Լիբանանի դեսպան տիար Էմիլ Պետրանը:

Սրբազան պատարագի մատուցման ավարտին, հանուն իր ժողովրդի, Վեհափառին ուղղված ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքով հանդես եկավ Ռումանահայոց թեմի առաջնորդ Սրբազան Հայրը՝ մաղթելով Վեհափառին, **«որ Աստված երկար ընե Ձեր կյանքի օրերը, որպեսզի Դուք դառնաք հայ հավատքի հոգևոր շաղախը»:** Ապա Վեհափառ Հայրապետը, Սրբազան Հոր շնորհակալության և ողջույնի խոսքից հետո, եկեղեցու խորանից իր հոտին ուղղեց օրհնաբեր և մխիթարիչ իր խոսքը:

Աստծուն փառք և գոհունակություն ընծայելուց և առաջնորդ Սրբազանին, Թեմական Խորհրդին, հոգևորականաց դասին և համայնքային կազմակերպություններին իր շնորհակալության և գնահատանքի խոսքն ասելուց հետո Վեհափառ Հայրապետը խոսեց Խաչի խորհրդի մասին: Հորդորեց և խրախուսեց ժողովրդին, որ գիտենան խաչի զորությամբ ապրել իրենց կյանքը, այսինքն՝ զոհողության առաքինությամբ արժեցնել իրենց կյանքը: **«Այս ձևով միայն դուք կարող եք շենացնել ձեր կյանքը և մանավանդ հայության նոր կյանքի կշռույթին ազատ և անկախ Հայաստանի և համայն Սփյուռքի հետ»:** Հորդորեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ հաղորդ մնալու և լիցքավորվելու նրանից ճառագայթող հավատքի զորությամբ:

Պատարագի ավարտին հայոց առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը շուրջ 45 րոպեների տևողությամբ անգլերենով հարցազրույց ունեցավ Ռումինիայի ազգային հեռուստատեսության **«Նորություններ», «Կրոնը և կյանքը»** հաղորդումների գլխավոր խմբագիր Քրիստիան Ունտիանուի հետ, որն էլ հաջորդ օրը եթեր հեռարձակվեց հեռուստատեսությամբ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 30

Վեհափառ Հայրապետը, նախապես ունենալով Ռումինիայում Հայաստանի Հանրապետության դեսպան տիար Գևորգ Ղազինյանի հրավերը, ժամը 10-ին այցելեց հայկական դեսպանատուն: Վեհափառին ուղեկցում էին Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, Զարեհ ծ. վարդապետ Պարոնյանը, Արտակ աբեղա Տիգրանյանը, քահանա հայրեր, ազգային ներկայացուցիչներ: Դեսպանատան մուտքի առջև Վեհափառին դիմավորեցին աղ ու հացով, որն էլ օրհնելով և ճաշակելով Նորին Սրբությունն ուղղվեց դեպի դեսպա-

ճառում: Հյուրասիրության ընթացքին պրն. դեսպանն իր և դեսպանատան մյուս աշխատակիցների անունից ողջունեց և շնորհակալություններ հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը, իր խոսքը ուղղելով հայոց դեսպանին և ներկաներին, իր ուրախությունն արտահայտելուց հետո, շեշտեց կարևորությունն ու օգտակարությունը Հայաստանի Հանրապետության դեսպանատան Ռումինական պետության և Հայաստանի պետության միջև օրեց օր զարգացող փոխհարաբերությունների գործում և գնահատեց հայ համայնքի բերած նպաստը դեսպանատան առաքելությանը:

Այնուհետև Վեհափառը իրեն հիշատակ դեսպանատանը նվիրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատկերով բյուրեղապակյա գեղեցիկ ծաղկաման: Նպա «Պահպանիչ» աղոթքով օրհնեց հայոց եռագույնը և դեսպանատունը, ասելով.

Այսօր ես բախտավոր եմ զգում և փառք եմ տալիս Աստծուն, որ երբ ոսք դրեցի ռումինական հողի վրա, մեր շատ սիրելի Սրբազանի, հոգևորական դասի, մեր եկեղեցու ներկայացուցիչների կողմից տեսա մեր հայրենիքի ներկայացուցիչը մեր ազգայինների հետ միասին: Դա ինձ համար, վրա-
տահ եմ նաև ձեզնից շատերի համար, եզակի ուրախության մի պահ է և այս պատճառով ցանկանում ցանկացա, ինչպես ասում է Սուրբ գրական խոսքը, որ անցպատմած այս այցելության ընթացքում իմ ծրագրի մեջ հատուկ տեղ ունենա այս մոնթմիկ այցելությունը ձեր դեսպանատուն, ոչ միայն ձեր, այլ նաև մեր ազգի զավակների համար, որոնք ապրում եք Ռումինիայի մեջ: Ես տեսա, թե ինչպես, երբ այս երկրի Խորհրդարանի ամբիոնից խոսք առնելու պատիվը տրվեց ինձ, իմ դիմաց նստող անձերի՝ օտար դեսպանների կենսորոշում նստել էր Հայաստանի Հանրապետության դեսպանը: Այդ պահը ես երբեք չեմ մոռանա:

Երբ Հայոց Հանրապետության արտաքին գործոց նախարարը առաջին անգամ ոսք դրեց Միացյալ Ազգերի Կազմակերպության շենք, և նստեց աթոռին, նրա դիմաց գրված էր՝ «Ռումինիա»: Հայաստանն վերադառնալու ճանապարհին իրեն ընդունեցի. Ռաֆֆա Հովհաննիսյանն էր նա, ում մանկությունից ճանաչել էի Նոր Նախիջևանում: Իր հոր՝ Ոիչարդ Հովհաննիսյանի ուսուցիչն էի եղել Վրացյանի օրոք, երբ նա ճեմարանի մեջ ուսանող էր:

Իսկ նրա որդուն՝ Ռաֆֆուն ասացի. «Տղաս, ես ոչ մեկին ճախանձելու սովորություն չունեմ. Կաթողիկոս եղել եմ, քիչ թե շատ գրող եմ նաև, ճախանձելու պատճառ չունեմ, բայց մեկտեղ, Աստված թող ձերի իմ ճախանձս, ես ճախանձեցի քեզ, որ դու եղար այն աճը, որ ՄԱԿ-ի մեջ կանգնեցիր հարյուր հիսուն պետությունների ներկայացուցիչների առջև ու ոտքի միլիոն հաշվվող քո հայ ժողովրդի ներկայացուցիչը եղար, և դա ինձ համար մեծ հշանակություն ուներ: Երբ հայկական դեսպանատուն եմ գնում, դեսպանատուն ո՛չ շենքից եմ հայում, ո՛չ պատերից, ո՛չ առոիճաններից, ո՛չ էլ որիշ արտաքին երևույթներից, այլ այն գաղափարից, որ ես այլ ազգերի մեջ դիմագիծ ունեմ, անուն ունեմ, և այդ անունը այս դեսպանատնով է արտահայտվում Ռումինիայի մեջ, որիշ երկրների մեջ՝ որիշ անուններով, բայց հայոց դեսպանատունը հայոց տունն է, Հայոց Եկեղեցու կողմից, Հայոց Եկեղեցուց անբաժան:

Այդ նոյն օրը, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը եղավ հայկական գերեզմանատունը, որտեղ Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռի մեջ իր նախա-

Առաջնորդարանի բանգարանի վերաբացման պահին

Ազգային առաջնորդարանում

գահույքամբ հոգեհանգստյան պաշտոն կատարվեց բոլոր ննջեցյալների համար:

Հայոց Հայրապետն այցելեց Ռումինիայի վերակազմյալ թեմի առաջնորդ Հուսիկ արքեպիսկոպոս Ջոհրապյանի, ազգային հերոս Հարություն Զաքըրյանի, Պետրոս Վարդպարոնյանի, մտավորականներ՝ բանաստեղծ-պատմաբան Հակոբ Սիրունիի, ուսուցիչ-բանաստեղծ Զարեհ-Պլպուլ Պարոնյանի, Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի հոր և այլ մտավորականների և ազգային գործիչների շիրիմներին:

Ժամը 13.00-ին Վեհափառն իր Հայրապետական այցելությունը բերեց հայոց եկեղեցուն կից Ռումինահայ գաղութի մշակութային կենտրոն, որտեղ նա ականատես եղավ տպարանի և խմբագրության աշխատանքներին, ուր խմբագրվում և հրատարակվում են **«Արարատ** և **«Նոր կյանք»** թերթերը և այլ հրատարակություններ, այցելեց երիտասարդաց ակումբ:

Վեհափառին ողջույնի և շնորհակալության խոսքով դիմավորեց Հայկական Միության վարչության նախագահ Վարուժան Ոսկանյանը: Վեհափառն իր օրհնության և գնահատանքի խոսքով հանդես գալով կոչ արեց ներկաներին՝ փարվելու Հայ Եկեղեցուն, գործակցելու նրա հետ ավելի ընդլայնված աշխատանքով:

ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔԸ ՀԱՅ ՄԾԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ

Սիրելի Սրբազան, հոգևոր եղբայրներ, հարգարժան դեսպան Հայաստանի, սիրելի պատգամավոր այրե. Ոսկանյան և անդամներ վարչության և ամբողջ միության,

Ես հաճախ եմ ասում. մեր Տերը՝ Քրիստոս Ինքը, երբեք գրասեղան չունեցավ, երբեք թղթակցություն չունեցավ, նամակ գրել, նամակներ ստանալ, մեկ խոսքով՝ վարչական կյանքի այնպիսի ձևեր չունեցավ, որոնք մարդուն կհեռացնեն ժողովրդից: Քրիստոս Աստված լինելով՝ մոտեցավ ժողովրդին, ժողովրդին գնաց, ժողովրդի մեջ եղավ, խոսեցավ, գնաց ծովեզերք, նավի վրա ելավ, գնաց փողոց, գնաց տաճարի մուտքը, մտավ տները, մեկ խոսքով՝ ուր ժողովուրդն է ապրում, Աստված այնտեղ է Իր ներկայացուցիչների միջոցով: Հովվապետական այցելությունները իմ կյանքիս մեջ կարևոր մեկ տեղը պիտի գրավեն, և արդեն եթե հետևեցիք այս անցնող վեց ամիսներին, երբ Աստված ինձ տվեց շնորհքը, որ լինեմ այս ժողովրդի հոգևոր պետը, ես առաջին անգամ ասացի. «Ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն»: Պետք է ես ճանաչեմ իմ ժողովրդին, և ժողովուրդս պետք է ճանաչի ինձ:

Ճանաչելը ի՞նչ է նշանակում: Թղթով կարող եմ ճանաչել՝ անուն, մականուն, թվական, տեղ: Այդ ճանաչել չէ: Չինաստանն էլ կարող եմ ճանաչել այդպես: Ճանաչել, նշանակում է հաղորդվել, զգալ ժողովրդի ապրումները քո մեջ, զգալ, թե ժողովուրդը ինչ է ակնկալում Եկեղեցուց, զգալ, թե ժողովուրդը ինչպես է կապված եկեղեցուն, զգալ, թե ինչու է հետու մնում, մեկ խոսքով՝ այդ կենդանի հաղորդությունն է, որ հոգևորականի կոչումն ու պարտականությունն է: Մենք ուղարկված ենք, մենք մեզ չենք քահանա դարձրել, այլ Աստված: Ժողովուրդն է կանչել մեզ, և մենք պիտի այդ ժողովրդի մեջ լինենք, և այսօր ես բախտավոր եմ, որ առիթը ունեմ ռումինահայ գաղութը տեսնելու:

Այսօր ես այստեղ Հայկական Միության կենտրոնի մեջ եմ գտնվում;

Այն մարդը, որ Միության անդամ կդառնա, այնտեղ պիտի գա, այն, որ վարչական պատասխանատվություն կզբաղեցնե, կնշանակե, որ ինքը պատասխանատվություն կզգա՝ հանդեպ Աստուծո, հանդեպ ազգին, հանդեպ հայրենիքին, հանդեպ Եկեղեցուն: Մեր եկեղեցին այսօր շատ պետք ունի, շատ-շատ պետք ունի մարդու: Ով պիտի ստանձնի պատասխանատվություն. այս պետք է այսպես լինի, մյուսը պետք է այդպես լինի, պետք է լինի, պետք է լինի: Այո՛, ես էլ գիտեմ ձեր չափ, բայց ով պետք է կատարի: Ո՛ւր են մարդիկ, ո՞ւր են քաջ մարդիկ: Մի օր, Աստվածաշնչից եմ բերում այս պատմությունը, Աստված ասաց. «Ես կուզեմ ժողովրդիս ուղարկել հովիվ: Շատերն ասացին. Ես չեմ կրնար, ես չեմ կրնար, իսկ Եսայի մարգարեն ասաց. «Ահավասիկ ես, առաքեա զիս, (Ահավասիկ ես, զիս ղրկե), բայց իմ շրթունքներս պիղծ են»: Աստված նրա շրթունքներին կրակը մոտեցրեց ունելիով, և սրբվեցին նրա շուրթերը: Եվ գնաց ժողովրդին, ծառայեց ժողովրդին:

Նաև Հիսուս ամեն բան կարող էր անել, Աստված էր ամենակարող: Բայց մարդիկ ընտրեց՝ տասներկու առաքյալները, յոթանասուներկու աշակերտները: Ուղարկեց և ինքն էլ գործեց մարդոց մեջ: Մեր ազգն էլ պետք ունի կամավոր ծառայություն ստանձնել գիտեցող անձերի: Եթե երբեք մենք կազմակերպություններ չունենանք մեր գաղութների մեջ, մենք իբրև ազգ կորսված ենք: Եթե ես փոքր ժամանակս դպրաց խմբի անդամ չլինեի մեր գյուղի եկեղեցու մեջ, եկեղեցական չէի դառնա: Եթե երբեք մեր շատ մը կազմակերպությունները՝ երիտասարդական, բարեսիրական, քաղաքական, մշակութային, կրթական, չըլլային, ինչպես պիտի մեր ազգը արտասահմանի մեջ դիմանար: Պետությո՞ւն ունեինք մենք, ո՞վ պահեց մեր լեզուն, կազմակերպությունները պահեցին: Նրանցից գլխավորագույնը Եկեղեցին է: Կազմակերպությունները, սակայն, կգան և կգնան ժամանակների հետ, բայց Եկեղեցին հավիտենական է, կմնա:

Ես հարյուրերեսունմեկերորդ Կաթողիկոսն եմ: 130 հոգի ինձնից առաջ գործել են և բոլորն էլ ծառայել են եկեղեցու միջոցով Աստծուն, բայց ժողովրդի միջոցով: Եվ եթե երբեք մենք չունենանք այսպես կամավոր, այդ բառն է, որ ես կշեշտեմ, կամավոր ծառայություն, իրենց կամավոր ծառայությամբ ազգանվեր գործին չմասնակցող անձեր, ես կենթադրեմ, որ մեր ազգը շատ երկար չի կարող դիմանալ, մանավանդ Հայաստանից դուրս՝ արտասահմանի մեջ:

Հիմա ամեն մարդ իրավունքի մասին է խոսում. կենդանիների իրավունք, կանանց իրավունք, հաշմանդամների իրավունք, վարորդների իրավունք: Իրավունք, իրավունք, իրավունք: Ռուս մեծ գրող Սոլժենիցինը վտարանդությունից վերադառնալով Ռուսաստան, ասաց. «Արևմուտքի մեջ ես շատ լսեցի իրավունք բառը, բայց չլսեցի պարտականություն բառը: Շատ քիչ լսեցի»: Շատ խորունկ դիտողություն է: Մենք իրավունք ունենք, մենք իրավունք ունենք, մենք իրավունք ունենք: Ինչի՞ իրավունք ունես, եթե պարտականություն չունես: Պիտի պարտականությունդ կատարես, որ ունենաս իրավունք:

Շատ գեղեցիկ և աքանչելի մի միտք կա 1863 թ. արևմտահայ Ազգային Սահմանադրության մեջ: Հիմա նոր սերունդը մոռացել է. «Ամեն անհատ պարտականություն ունի ազգի հանդեպ, և ամեն ազգ պարտականություն ունի անհատի հանդեպ»: Ինչ որ քո պարտականությունն է նրա հանդեպ, նրա իրավունքն է, ինչ որ նրա պարտականությունն է քո հանդեպ, քո իրավունքն է: Առանց պարտականության իրավունք գոյություն չունի;

Այս պատճառով էլ ես, որ քիչ թե շատ կարդացել եմ ռումինահայ գաղութի պատմությունը, և այստեղ գալուցս առաջ էլ բացեցի Հակոբ Սիրունու գիրքը՝ «Հայոց Եկեղեցին Ռումեն հողի վրա», ևս Աշոտ Աբրահամյանի «Հայ գաղթավայրերի պատմության» Ռումինահայությանը վերաբերող հատվածը: Ձեր անցյալի մասին բավական կարդացի, և 25 տարի առաջ էլ եղել եմ այստեղ, քիչ թե շատ ճանաչել եմ ռումինահայությանը և ձեզ մի հարցում կուղղեմ. ինչո՞վ մնաց ռումինահայությունը: Այս եկեղեցիով: Այս ամբողջ եկեղեցին ոչ թե իբրև միայն զուտ հոգևոր, ևեղ իմաստով կրոնական կենտրոն, այլ ամբողջ ազգ իր մեջ համախմբող: Եկեղեցու կողքին անվավաճիկ այս տունն է, անդին թանգարանը, գրադարանն է, մշակույթի կենտրոնը, անդին՝ առաջնորդարանը, վարչական եկեղեցական կենտրոնը: Այս համալիրն է, այս ամբողջությունն է, որ ձեզի կտա ամեն իրավունք, եթե դուք միշտ շեն պահեք այս ամբողջը:

Դեռ ականջիս մեջ հնչում են բառերը մեր ամենասիրելի Վազգեն Ա. Կաթողիկոսի, երբ որ իրեն կհանդիպեի, երբ ես Կիլիկիո միաբան էի, Կիլիկիո Աթոռի զավակ էի, Կիլիկիո Աթոռին Կաթողիկոս էի.

— Տղաքս, հասկցե՛ք ինձի, չեմ կրնար ընել,—կըսեր:

Գիտեմ, կհասկնամ, այլ էր ժամանակը: Ըրավ գերագույնը մարդը: Էջմիածինը շենցուց: Ով որ կերթա Էջմիածին, կհպարտանա: Եվ պարտականությունը կատարեց: Պարտականությունը կատարելու համար իրավունք ունի բոլորիս հարգանքին: Բայց եթե պարտականությունը չկատարեր, ինչով պիտի իրավունքը ունենար ամբողջ ժողովրդի հարգանքին: Ոյպես վերջին խոսք ցանկանում եմ ասել, թե մի հուսահատվեք, եթե նեղությունների հանդիպեք: Ես գիտեմ, փոքր գաղութների մեջ, ուր հայությունը թվով շատ մեծ չէ, մարդիկ ներքին դժվարություններ կունենան. մեկը բան մը կըսե, մյուսը՝ կնեղվի, մեկը տեղ մը կնստի, մյուսը՝ կնեղվի, ասանկ բաներ կըլլան, բայց այդ պզտիկ բաներից վեր պետք է մնանք: Այս Միության մեջ երբ կգտնվեմ և այս Միությանը կուզեմ բաժակ բարձրացնել, կուզեմ, որ այս գաղափարները այս բաժակի հետ տանեք ձեզ հետ: Սրանք իմ կարդացած գրքերից քաղված ճշմարտություններ չեն, կյանքովս ապրած եմ:

Մի՛ հուսահատվեք: Այս ազգը եթե ապրել է այսքան տարիներ, ինչո՞ւ այսօր չպիտի ապրի, ի՞նչն է, հուսահատության պատճառն ի՞նչն է: Հուսահատություն և հայություն այնպես են, ինչպես ջուրը և կրակը: Իրար կողք չեն կարող դրվել այս երկուսը՝ հայություն և հուսահատություն: Թող Աստված բոլորիս զորացնի, և դուք էլ միշտ բարձրանաք ձեր կյանքում և միշտ հավատարիմ մնաք հայությանն ու մեր հայրենիքին:

Երեկոյան ժամը 17.30-ին Վեհափառ Հայրապետը հոգևոր դասի առաջնորդությամբ և «Հրաշափառի» երգեցողությամբ հանդիսավոր մուտք գործեց Ռումինիայի հայոց առաջնորդանիստ Ս. Հրեշտակապետաց եկեղեցի: Այստեղ Վեհափառը հանդիսատեսը եղավ իր պատվին կազմակերպված հոգևոր համերգին: Ներկա էին Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Սրբազան Հայրը, ողջ հոգևոր դասը, Ռումինիայում ՀՀ դեսպան տիար Գևորգ Ղազինյանը, Ռումինիայում Լիբանանի դեսպան տիար Էմիլ Պետրանը, հայ ազգայիններ, հայ և ռումին հավատացյալներ: Եկեղեցու երգչախմբի կատարմամբ հնչեցին «Քրիստոս յարեաւ», «Ուրախ լեր», «Հրեշտակային», «Սուրբ սուրբ», «Ընդդեմ», այլ շարականներ և պատարագի հատվածներ: Երգողների մեծ մասը [illegible]

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԱՋՍԱՅԻՆ

ՀՈԳԵՎԱՐԱԿԱՆ 81

Առավոտյան ժամը 10.30-ին Հայոց Հայրապետի իրեն ողնակցող ճոպանուղիների ճնշող ավելից **Գյումրիացին** 19-րդ դարի Ս. Նաումյանցների վերանորոգված առաջին օրթոդոքս վանքն է, որ բնակվում էին շուրջ 40 միաբաններ: Վանքի մուտքին Վեհափառին դիմավորից վանահայրը Նախնեաց Հայրապետական Հոգեգոլության կրոնական Հայրապետին և ճոպանուղիների կառուցման աշխատանքներին մասին: Այցելից վանքի թանգարան, գանձատուն, ծանոթացավ վանական կյանքի պայմաններին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՎԱՆՔԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ

Սիրելյալ Սրբազան եղբայր, ճեփնայացուցիչ մեր սիրելի ճոգևոր եղբորը Թեոկտիստ Պատրիարքի և վանճանյալը այս վանքի, ճոգևոր տեսուչ, սիրելի վարդապետներ և սուճեր, ժառանգավոր ուսուճողներ,

Մեր այսօրվա այցելությունը պատմական այս վանքին մի ճոր լույս և ճոր զույճ ավելացրեց իմ այցելությանը Թումանյան Օրթոդոքս Եկեղեցուճ: Ընդ առաճախառարությունը, ճանդիսական պատարագին, պետական և կրոնական աճանց Պատրիարքին, ճանգիստավոր պատարագին մասնակցեցի և ես ժողովրդիս:

Այս վանքը, իճչպես կտեսանեք, կիսով իր պատկերվեցով: Ավերատրանքի թարգմանություն է այս տաճարը և վանքը: Հայտատանի մեջ երբ մենք այցելենք հին եկեղեցիները, բարերը խոսում են ճավատքից և ճավատքով:

Մենք աճցյալ չենք. աճցյալ ունենք, ճետևաբար մենք ճոր արթնացող, վերանից արթնացած ժողովուրդներ ենք, մի ճոր շրջանի մեջ մտած՝ թե՛ ռումինացիս պատմության և թե՛ հայկական պատմության: Դուք մանանախացող, նիհարատարդներ, կճաչեր պետի ապագան: Քրիստոնեական հավատքը երբեք չի կարող սաճմանափակվել ժամանակով և տարածությամբ: Արանից տարիներ, դարեր առաջ այս եկեղեցու մեջ տպրած և գործած ճոգևորականներ կային: Հիմա կարգը մեր՝ ապրողներիս համար է, որ մենք էլ արժեցնենք մեր քրիստոնեական հավատքը այսօրվա կյանքի մեջ:

Ես կուզեմ ճան իմ գոճությունը ատ Աստված արտաճայտել, որովճետև հայ ժողովրդի զավակները ռումինական ճողի վրա ավելի քան 600 տարիներ կապրեց, իրենց եկեղեցին ճամաձայն, իրենց քրիստոնեական հավատքը: Երեկ և առաջի օր ես եղա Բուխարեստի մեր ժողովրդի զավակների ճետ: Տեսա իրենց գրադարանը, տեսա իրենց դպրոցը, տեսա իրենց

ապարանք, տնաս իրենց առաջնորդարանը, տնաս իրենց ծովեզերյան նկուղները, տնաս, որ ձայն կյանքը տաճկահպատակ ազատ կրոնքի պայմանների ներքո ապրի այդ օրհնյալ ծոցի վրա կշտրտնջալիք: Մենք էլ Հայաստանի մեջ մի ծոր ազատության շրջան նոր սպասում ենք 4—5 տարիներից ի վեր:

Հիմա ծոր հրճտատարդներ են գալ նկնկեցի գալ: Այս տարի մեր կենտրոնական ծովային ճանապարհի վրա տեղեր 100 տաճ, դպրեվանքներ: Որքե նրան վանքերի մեջ էլ տեղեր գրական դպրեվանքներ: Աշակերտների թիվը կրկնապատկված է: Հավատքը վերսին կատարի մեր ժողովրդի կյանքի մեջ:

Ավելի ուշ, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը ուղղվեց դեպի **Ֆրանկեյան**[6] այցելելու համար տեղի 19-րդ դարի կոստանց վանք, որ այսօր բնակվում են շուրջ 150 միաբան քույրեր: Այստեղ աշխատում են և իրենց գործարանում ճյուտում եկեղեցական զգեստների համար կերպաս:

Այստեղ, աղոթքից և Ներսես Շնորհալու «**Ողբ Լուսոյ**» երգելուց հետո, Վեհափառ Հայրապետը իր օրհնության և բարեմաղթանքի խոսքն ուղղեց միաբան քույրերին: Երկար տարիների արդյունաշատ կյանք և արեշատության մաղթեց Ռոմիճանական Օրթոդոքս Եկեղեցու պետ Թեոկտիստոս Պատրիարքին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔԸ

Սիրելի Սրբազան առաջնորդ Ռոմիճիայի և Բուդապեշտի, սիրելյալ հոգևոր եղբայրներ, հարգարժան դեսպաններ, պետական անձնավորություններ, ազգային ժողովականներ, բարերարներ և թանկագին եղբայրներ ու քույրեր,

Այս պահը մեր անդրանիկ հովվապետական այցելության մեջ անմոռանալի և քաղցրագույն պահերից մեկը պիտի մնա անկասկած: Երեկ երբեք Սասունցի նման ժամանակ ոտս իմ հովվապետական այցելության մասին գրելու, և երեկ երբեք գրիչս մեղանից հանեմ, արտիս մեղանից մեռ պիտի թռչե[1] գրելու համար այս տողերը, զորս պիտի հատկացնեմ այս թանգարանի բացման պահին: Ոտ իմ համար ուրիշ պահ է: Այստեղ[2] թանգարանի մեջ, որ երբեմն դուք կկոչեր գանձատուն, այստեղ խոսում է ճոգին, անմահ ճոգին, անմահ ճոգին, և կսպեղցնեմ[3] անմահացումին ճոգին: Մարդիկը կերթան, արվեստը, ճոգևոր արժեքը կմնա: Մեր գրիչներն ասում էին. «Ջնորհ երթա, դասդնս ի ճող, գիրս մնա չիշատակող»:

Գիտեմ, ձեռքից ացդին է գիրը, հոգին վեր է, քան մարմինը, և ասոր վկան գանձատունն է, որ կխոսի, որ կնվազե անմահության երգը՝ անմահացուցիչ արժեքների հավերժախոսությամբ: Ի՞նչ է արվեստը, բարեկամներ, ի՞նչ է մշակույթը: Քարը կառնես՝ քարը քար է լեռան վրա, քարը քար է պատի վրա, քարը քար է գետնի վրա: Բայց երբ որ մի արվեստագետ առնի այդ քարը՝ մարմարը, և հոգուց բխող ապրումների զորությամբը այդ քարին կուտա հարվածներ և այդ քարեն դիմագիծ մը կբերե, գաղափար մը կարձանացնե, այն ժամանակ քարը կդադրի քար լինելուց ու կդառնա խոսուն արձան: Երբ որ բանաստեղծը ճերմակ թուղթը կառնի ու սև մելանով նրա վրա իր հոգուց բխող ապրումներ, զգացումներ, ձգտումներ, գանգատներ կարձանագրի, իր ձեռքը կերթա, բայց գիրը կմնա և կխոսի հավերժորեն:

Կառնես կտավ, անիմաստ կտավ մը, որ կրնա անկողնի շոր ըլլալ, բայց երբ որ նկարիչը անոր վրա գծեր, գույներ, ներդաշնակություններ կատեղծե, այն ատեն կտավը կտավ լինելուց կդադրի և գեղանկար կդառնա:

Կառնես ձայնը, աղմուկ էլ կարող է լինել ձայնը, բայց ձանի մեջ տակտ դնես, ներդաշնակություն դնես, երաժշտություն կդառնա, ու կերգես, կլսես շաթականներ, մեր ժողովրդական երգեր, դասական երգեր: Ձայնն էլ մեկնաբանության եղանակն է:

Կառնես ուրիշ քար մը, և այդ քարին վրա կուգա Մոմիկ վարդապետ մը ԺԳ դարու վերջերուն և ԺԴ դարու սկիզբին ու կքանդակե խաչքար մը: Ինքը կգնա, խաչքարը կմնա և կխոսի մինչև այսօր: Էջմիածնի Վեհարանի մուտքի մոտ ով կգա, կտեսնի: Կտեսնի 1308 թվականին քանդակված խաչքարը, որ կխոսի և կխոսի: Վերածննդյան շրջանի ամենամեծ արվեստագետներից Միքելանջելոն երբ Մովսեսի քանդակը պատրաստեց, Հռոմից դուրս այն կանգնեցրեց: Լեռնեն բերված՝ անձև, անգույն, անիմաստ մարմարին Մովսեսի կերպարանքը տվեց, որուն մորուքը ալիքներու նման իր դեմքեն կիջներ: Ետ գնաց մի քայլ, նայեց Մովսեսի արձանին, իր շինած արձանին, ինքգինքը այդ արձանի մեջ դրած պատկերին, իր հոգիին, և առավ գավազանը փոքրիկ, խփեց արձանին և ասաց. «Խոսիր Մովսես»: Եվ Մովսես կխոսի, մինչև այսօր կխոսի:

Մշակույթը հոգու հաղթանակն է նյութի վրա: Մշակույթը անմահություն է մեր երկրավոր կյանքի մեջ թափանցող: Մշակույթը երկինքը երկրին կմիացնի: Մշակույթը երկրավոր մարդիկը կվերացնի, կհոգիացնի: Այսօր դուք այստեղ այդ մշակույթի տոնը հիմնեցիք, և ինչպես բացման պահին ես ասացի, այն անլռելի զանգակատուն մըն է: Դուք, սիրելի եղբայրներ, քույրեր, գավակներ Հայ Եկեղեցու, հավատարիմ գավակունք հայոց ազգի, պիտի չմոռանաք, որ եթե երբեք զանգակը չի լռեր, զանգակատունը միշտ կհնչե: Ականջ պետք է, որ ձայնը լսենք: Լռեցրեցին շատ զանգակներ մեր պատմության մեջ: Խփեցին լեզուները մեր զանգերի ու կոտրեցին, կապեցին և տարան, բայց հոգու միջից խոսող զանգակը ո՞վ կարողացավ լռեցնել: Ո՛վ: Եվ կհնչե այդ զանգը: Բայց ես կտեսնեմ, որ աշխարհը այսօր խժժալուր աշխարհ մըն է. այնքան ձայներ կան հեռատեսիլեն, ռադիոյեն, փողոցեն, թերթերեն: Ձայնե՜ր, ձայնե՜ր խժժալուր, կուգան և մեր մանուկներուն, մեր երիտասարդներուն ականջները կխռովեն: Մաքրել պետք է մեր ականջները, որպեսզի կարողանանք լսել այս գեղարվեստի առարկաներուն, լուռ, անբարբառ ձայները:



Վեհափառ Հայրապետը Զվարթնոցի Ս. Աստվածածնի վերափոխման
վանքի տղավորությունների մասյանում իր տղավորությունները գրառելիս

Աղոթքի պահ

Աշխարհը ցվաճում է մեզ: Աշխարհը սկսած է մեզ մեզմից հեռացնել: Աշխարհայացքապաշտությունը, հաճոյապաշտությունը, փուչ, անիմաստ արժեքների հետևից վազքը սկսել է մեր մեջ մեր հայկական ուղեղությունը խրժժացնել, խժժացնել եմ ասում, հատակության մեջ կորացնել և անորոշության վերածել: Աշխարհի մեծագույն դեկավարներից մեկը մեր ժողովրդի համար ամենաուժանը պահին ասաց. «Հայաստանցին ծառայել ցշանակում է քաղաքակրթությանը ծառայել»: Եթե այդ մարդը այդպես ասաց, մենք կծառայե՞նք այսօր մեր մշակույթին: Հարց եմ տալիս ձեզ: Այս է հարցումը, որ այս թանգարանը ձեզ է ուղղում: Մի թողեք այս թանգարանը որբ, մենք է: Հուր մեղք եք: Ինչիչ թող չկորչի այս ձայներից:

Այս խաչերի էլ կմնան ցույցը, արվեստի էլ կմնա ցույցը: 1401-ի կոդակի էլ կմնա ցույցը, ձեռագիրն էլ կմնա ցույցը, բայց մենք կխեղճանանք, մենք կաղբատանանք: Մենք հոգուց կպարպվենք և կդառնանք հաճույքի մի մեքենա: Հետևաբար, այս թանգարանը Հոմանիո հողին վրա մեր բաց թանգարանի, Հայաստան կոչված թանգարանի, երկրքի տակ բացված թանգարանի մանրակերտն է: Պատահ մը Հայաստան կկոչեմ այս թանգարանը: Մի փոքրիկ պատառիկ Հայաստանից բերված: Հայոց հոգու ծնունդ եղող արվեստի այս աքանչելի վկայություններուն վրա կուզեմ, որ դուք գործերաք և կարողանաք պահել այնպես բարձր և այնպես խոսուն, պերճախոս, որ ձեր կյանքում երբ ճեղության հանդիպեք, այստեղ գաք, երբ հուսահատություն զգաք, այստեղ գաք, որպեսզի հույս ըմպեք, որպեսզի լույս ըմպեք, որպեսզի բաջություն առնեք այս հավերժական անմահությունից ճառող և երբեք չպարտվող մեր մշակույթից: Որ դա լինի հոգևոր դարմանատուն, որ դա լինի մեր հոգիների առողջության, հարազատության, ամբողջության մեկ փոքրիկ լաբորատորիա: Անհավասիկ բաներ կգործածեմ արդի աշխարհեն, որպեսզի հասկանալի դառնամ մեր երիտասարդներին մասնավորապես: Եվ, ի վերջո, իմ մաղթանքս է, որ արվեստների լեզուն կենդանի մնա մեր ժողովուրդների մեջ, և իմ հպարտությունն է, որ մեր Մայր Հայրենիքի, այսօրվա ազատ, անկախ պետության ամենաուժանը պայմանների տակ մեր բոլոր արուեստները երաժշտական-մշակութային կյանքով կապրեն:

Շատ-շատերը բաց են: Եվ երբ որ հյուրեր են գալիս ու կտեսնեմ զիրենք՝ կհպարտանամ: Առաջ երեկոյան յոթին կամ ութին կսկսեին համերգները, թատրոնները, օպերաները, հիմա ժամը տասնմեկին, երկուսին, որովհետև երեկոները էլեկտրականություն չունին: Հոգ չէ: Ժամը ի՞նչ կարժե: Կարևորը հոգին է, կարևորը գոյությունը պահելն է: Կերակուրը ժամը մեկին ես կերել, թե տասներկուսին, կամ ցույնիսկ կեսօրից հետո, ինչ հոգ: Կարևորը ամոթի չմնալ հոգիեն, հոգևորից, հոգեկանից:

Եղբայրներս, քույրերս, կշնորհավորեմ ձեզ, ձեր Սրբազանին և ձեր Հայր Սուրբին, որ այնքան աշխատանք տարած է հետույցները հավաքելու և գործարող ձևերով պահելու զայն ճախանձախնդրությունը ունի, մեր ազգային թեմական իշխանության բոլոր բարերարներին, բոլոր այն անձերին, որոնք իրենց կյանքից մասնիկ մը խառնեցին և կխառնեն շարունակ մեր համայնական կյանքին, մեր ազգային կյանքին ոստիկանական այս օրհնյալ հողի վրա: Ես որքան պիտի որսխանանայի, որ այստեղ լինեին նաև Ռումինիայի իշխանության ներկայացուցիչները և այստեղ մենք կարողանայինք իրենց ներկայությամբ հայտնել մեր խոր շնորհակալությունները այն ազնվական վերաբերմունքի համար, որ Ռումինիայի պետությունը ցույց տը-

ның іс ғылымдық іс ғылыс ашу ның ғылым ғылымдық ғылымашылық: Ның ғылымдық-ғылымашылық ғылымашылық ашық ғылғ ғылымашылық, ғылымашылық ашық:

Ғылымдық, ғылымашылық, ғылы, ашы ның ашылық ғылымдық ғылымдық, ғылымдық ашық ашық: Ғылы, ғылымашылық, ғылғ ғылымашылық ашық ғылымдық ашық ғылымдық ашық ашық ашық ашық ашық ашық:

Ның ғылымдық ашық ашық ашық ғылымдық ашық ашық ашық ашық ашық аш

ծացնեին, բայց կնոջոցը, որ Հարությունից կողքի ոսկեհատ եմ ուսել Հասուն: Մեր պատմությունը մեզ հետ ես մայ կյանքի բնությունը կնոջոցներով դյուրանալ վրա՝ սպիտակ և սև բեկերով ծաղկած: Ցեղ կա, որ սպիտակը ուժեղ է, սեր կա, որ սևը ուժեղ է: Մենք մեր ազգությունը ոչ թե պետք ասելով ծանոթացնում, այլ նրանով, որ մեզ ամենքս էլ կարող ենք ամեն ինչ ասել, ամեն ինչ գրել, ամեն ինչ կարդալ, առանց ոչ մեկի հարցնելու, թե ինչ ենք ասում, գրում և կարդում: Ես ուզում եմ ասել, որ մեր ազգությունը ոչ թե ինչ-որ մի ցեղ է, այլ մի ոգի, որ ամեն ինչ կարող է ընդունել և ամեն ինչ կարող է տալ:

Հայերս ծնվում ենք, ապրում ենք և մեռնում ենք: Մենք ոչ մեզ համար ենք ծնվում, ոչ մեզ համար ենք ապրում և ոչ մեզ համար ենք մեռնում: Մեր ամեն մի ծնունդը մի նոր ծնունդ է: Մեր ամեն մի կյանքը մի նոր կյանք է: Մեր ամեն մի մահը մի նոր մահ է: Մենք մեր ծնունդներով, կյանքերով և մահերով մեզ համար ոչ մի բան չենք անում: Մենք ամեն ինչ անում ենք ուրիշների համար: Մենք ամեն ինչ անում ենք մեր հարևանների համար, մեր ընկերների համար, մեր թշնամիների համար, մեր հետաքրքրության համար, մեր հետաքրքրության համար, մեր հետաքրքրության

ушдбр: Ыйбй йбцр ийф рр ощощрр: Убпр п'ц ыршф бйрйщщдйбр: Яр-
шф йбрйщщдйбр 'ошрйбщбй щий Юорйбщбй, щий Яорйщбй, йщ
фйрдбй дрдщйбй ырйбрщйщ й ырйбщщйщ йбр ощщбйрр: Ебйщбдбй
ьщш ц йщй ррфй идрщощдбй цйбщрщй: Ед шдц Ебйщбдбй ррдц шщщдш-
ыршдщщдщ ддщдщбр йбр дщдщрфбй щщрц' ящдрщбщщдщ, шбдщр-
щщйбй ырйбрщйщ йбш щщщдш ц йбр ощрщдщбр:

Цщрршбщбдд ёщйщщщёщщфщбй ьрр Ыдшрщдрй ощдфбй щйш' Яцбйщ
фйщбй ьдьрррц п'ц ьбйщбдбй щщр рщрщдбй й п'ц ш щйщщщдбй й п'ц ш
щрршщрщдбй: Ебрдбй щщй' шйбй йбц ддщщбй рррбй рр ощдрбй йбрц ы-
йбщбй щщ ц' Убррбй Ебйщбдбй, ящдрщщбй йбрйщщдйбр й йбрдщр-
ощрдщбр йщщш йбрц: Ед шдц ц Ебйщбдбй, щр рщрц ррдц рщш ящщщдбй
рщш щщ ц (Ебйщщрш), щр цдрщщбй рщдр ящдрщщщдщбрщ йрщрдщбр
р Ярщщщш: Шдц Ебйщбдбй дщдщрщрй ц: Ед фйцр щщщш ьцр, щр ьдщ
ц фщщщщбй, ьрр йбр ьбйщбдббрр рщщдрщ ьй: Щщщщщщбй йбрц рщщш-
ящщбрр ьбйщбдбй й ящдрщщбй йщщщбй щщ ьбйщбдббрр: Ебйщбдббрр
ррдц ящщрщщбй щщш: Оп щц 25 щщрй щщщц, ьрр шй рщщрй ц, шй
щщщй ёщщщрщщбй ящдрщщщщ рщщц, рй ёщщбйй ьщрщщщщ щрр,
щр йбр ёщщрдбй й Убрщбй щщрщщщдрщщбрщ й Убщщбй щщй 7 щщщщщ-
щщрщщщщ щщрр, рщй ьдщщ, щр ящщбрщрщр ьрщй ящдрщщщщбй, щрщй
щщщщй ер ёщщщрщй:

Ёщщй, ррбй рщбйщрщьщщ ящщщщщбй ццщщщщьщщ ьрр щщщщ щщщщ,
ьц ц ррбр ьрщщщ йбщ рщщщщщбрщ щщщй йр щбйщщщрр: Ед ящщщщщ рй-
йр рщщй ц'ёщрщ щщщщрщщбрщ ьрщщ йр ыбйщщщрр: Ед ящщщщщ ьрщщ-
щщщщщ ед: Ёщщщщщ ьрщщ щщщщщщ щщщщ ер щщщщщщщ щщщщ, щр-
рщщбй ьщщщщщщ: Ещщ щщщщщщ ц щрщщщщщ щщ ящщщщщщ ьрщщщщ-
ящщщщ щщщ щщщщ ц щщщщщщщщщ щщщщ ер щщщщщщщщщ щщщщщщщщщ
рщщщщщщщщщ щщщщщщщщщщ

ռումեռացի տիկին մը ճոպռածին երեխաս ձեռքին մեջ, երեք տող ոսոխ վրա այդ երեխան բնեռում վրա իջչպես պատճ է: Հիսացած էի: Եվ ասածն բա-ձեր պատմեցի իրեն: Հետո 400 աշակերտ կար Միհին դպրեվարժի մեջ, 350 կար այսոնեղը, Միրուձին ալ նկատ դասախոսությամբ, Սրբազանն ալ կար, ուրիշ պրոֆեսորներ ալ կային, այն ատեն Գոլոպոլիտը բան, որ գասրացած եմ: Ասաց այդպես է, երբ ամեռ մեկ բան դասձեռքը այս երեխի մեջ, ասոնք մի նկեղեցի կերչ: Գեղեցիկ պատկեր մըռ է: Ու մեկ բան ու դաս-ձեռ Ռումաձիո մեջ՝ նկեղեցիներ են: Գարձեա այս բառերը Հայաստանի հա-մար գրված են: Ու կույսը ու դասձեռ Հայաստանի մեջ, Ասոնք կոչվ են բա-ռեր՝ նկեղեցիներ, ձորերը Ասոնք, ասոնցնե ոչիներ Հայաստանի մեջ՝ Ասոնք կոչվ են նկեղեցիներ: Ես ալ ասոնք կոչվ եմ, ու ամեռքս ալ ասոնք կոչվ է: Ասոնք ձեռ ազգ է ու ձեռ Նկեղեցին:

Տեսեք, այսօր նկեղեցին ա պետությունից բոլորն բաժանված են: Ներ-կան կողմ կրոնական ուսուցը դուրս, պետական դպրոցներում մեջը կրո-նական ուսուցչ չկա: Շատ այսօր կզսեն, «Մենք պետք է վերադառնանք կրո-նական ասպետներին ու կանչենք, այն ատեն Գոլոպոլիտը ձեռ ձեռ ձեռնարկեց: Շա-բոլորն ջանքերով չմեռաց: Ներ կան կողմ կրոնական ուսուցը դուրս, պետական դպրոցներում մեջը կրո-նական ուսուցչ չկա: Շատ այսօր կզսեն, «Մենք պետք է վերադառնանք կրո-նական ասպետներին ու կանչենք, այն ատեն Գոլոպոլիտը ձեռ ձեռ ձեռնարկեց: Շա-

— Իրավունք չունեն նկեղեցիները բանալ, իրավունք չունեն պետա-կան ասպետներ ունենալ ասոնց, իրավունք չունեն պատճեն բանալ, ի-րավունք չունեն կրոնական բան ընդունելու:

Ընդհանուր է մեզ ալ նրանց ասպետներ ձեռ ձեռնարկ ասոնց բանալ պետք է, ամեռ մեկ ալ ասոնց, ինչ Գոլոպոլիտ ալ ասոնց, ինչ Գոլոպոլիտ ալ ասոնց, ինչ Գոլոպոլիտ

Այնպես ես հպարտանալու պետք չունիմ Հռիփսիմեի տաճարին գեղեցկությամբը: Անիկա իր կարգին: Ես պետք ունիմ Հռիփսիմեի տաճարը ժողովրդի համար հոգեկան սնուցումի աղբյուրի վերածել: Քարերեն չէ, որ պիտի հավատք առնեն այնպես մարդ: Աստուծո խոսքը պետք է քարոզվի: Մարդու պետք ունինք, մարդո՛ւ: Ուրախ եմ ձեզի ըսելու, որ մեր մեջ, Մայր Աթոռին մեջ, երիտասարդ նոր սերունդ մը կա և այդ սերունդը առավել արթնացած է իր պարտավորությանը դիմաց և անդավաճան հոգևոր ճեմարանը 97 աշակերտներով և ուրիշ այլ փոքր դպրեվանքեր և դպրանոցներ:

Հոգևոր արթնություն մը կա, նոր գիտակցություն մը կա և մեր Եկեղեցին կոչված է այդ գիտակցությունը աշխուժացնելու, ժողովուրդի կյանքին մեջ գործոն հեղափոխիչ, բարեփոխիչ ուժի վերածելու: Պիտի երթալ ժողովուրդին, չսպասել, որ ժողովուրդը մեզի գա: Հիսուս ծովուն ափը գնաց, նավակին վրա ելավ, նավակեն խոսեցավ: Լեռը ելավ, լեռան վրայեն խոսեցավ, փողոց իջավ, փողոցին մեջ խոսեցավ, տաճար գնաց, տաճարին հրապարակին մեջ խոսեցավ: Տուները այցելեց, տուներուն մեջ խոսեցավ: Աստված գնաց դեպի ժողովուրդը, որպեսզի ժողովուրդը գա դեպի Աստված:

Մենք այսօր կոչված ենք մեր պատմության դարձակետային այս հանգրվանին ամբողջական, անվերապահ մասնակցություն բերելու մեր ազգի, Եկեղեցիի կյանքին մեջ, այստեղ, կա՛մ Հայաստանի մեջ, կա՛մ Ամերիկայի մեջ, կա՛մ Եվրոպայի մեջ, կա՛մ Հնդկաստանի մեջ, կա՛մ Ավստրալիայի մեջ: Եթե ես ինձի իրավունք տամ մեր քրիստոնեության կողմից մահացու անվանվող յոթ մեղքերուն վրա մեկ հատ ավելցնել, այն կլլլա անտարբերությունը:

Ասիկա մեղքերուն մեղքն է: Եվ ինչ որ կըսե Եզնիկ մեր մատենագիրը. «Անգործ մեղուն ավելի վատ է, քան խայթող պիծակը»: Խայթող պիծակը գոնե կխայթե, մեկը կարթնցնե: Իր չարությամբը կրնա բարիք մը գործել: Իսկ անգործ մեղուն, որ ոչ մեղր կարտադրե, ոչ ալ ուրիշ գեղեցկություն մը կշինե, անոր գոյությունը ինչո՞ւ համար է: Հետևաբար, այս օրը կանչված օր մըն է մեզի: Եվ ինձմե սկսյալ, իբրև կաթողիկոս, իբրև ծառաներուն ծառա, Սրբազանեն սկսյալ, մեր պետական, մեր քաղաքական, մեր գրական, մշակութային բոլոր այս անձերեն սկսյալ մինչև ամենեն բարձրը, մինչև բանվորը, մինչև աշխատավորը, մինչև արհեստավորը մասնակցին: Այդ մասնակցությունն է, որ եռանդ կուտա:

Ազգի մեջ մեկը չկա, որ տեղ չունենա: Ո՞վ ըսավ, որ աթոռին վրա նստողն է ամենակարևորը: Ճակատեն կհամբուրեմ այն մարդը, որ կերթա, եկեղեցին կավլե, և չեմ կրնար արժեք տալ այն ժողովականին կամ այն հոգևորականին, որ իր պարտականությունը չի կրնար կատարել: Աշխատանքի տեսակը չէ, որ աշխատանքին արժեքը կշինե: Ոգին, որով աշխատանքդ կընես, այդ է կարևորը: Ի՞նչ կընեմ ես, Դանիել Վարուժան մը, կա՛մ գրողները, կա՛մ հոգևորականները, որ մեծ-մեծ բաներ կգրեն, եթե գրաշարը չըլլա, տպողը չըլլա, ձեռքը սևին մեջ խառնողը, մելանին մեջ ձեռքովը թաթխվող և գիրքը կազմողը: Ով պիտի Շնորհալիին գրքերը, Նարեկացիին գիրքը մեզի հասցներ, եթե երբեք այդ գրիչները չըլլային, որ գիրերը տպագիրի պես, ինչպես տեսաք երեկ վերը, չհասցնեին մեզ մեր ձեռագրերը, կաղքատանայինք:

Մեզի համար այսօր կմնա մեկ հրամայական, միության հրամայականը: Եկեղեցին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության իր կենտրոնով, մեր Հայրենիքը՝ իր վերանկախացյալ պետականու-

թյամբ, մեր բոլոր գաղութները, առանց խտրության: Կարենանք ներդաշնակ միասնությամբ աշխատանքի լծվիլ: Ես լավ գիտեմ, որ այս իմ ըսածս կրնա իդեալական թվիլ ձեզի, մարդ ենք, թերություններ ունինք, միությունը միշտ չենք կրնար արտահայտել: Այս բոլորը գիտեմ, այս բոլորի մեջեն անցեր եմ: Բայց հիմա հարց մը տամ: Հո՞նքը պիտի շտկենք, թե աչքը պիտի քանդենք:

Գիտեմ, ես ձեր ցավն ալ գիտեմ, որովհետև այդ ցավին մեջեն անցած եմ: Լեզուն պահելը, ես գիտեմ, դժվար է ձեզի համար: Ես ապրած եմ Ամերիկա, եղած եմ Անգլիա: Տեղ եղած է, որ ես ելած եմ բեմեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով խոսելու հարկադրված եմ և կհասկնամ Սփյուռքին մեր այս ցավը: Ծովուն մեջ ինկեր ենք, պետք է անպայման թաց ըլլանք, չենք կրնար բյուրեղ ըլլալ: Այս բոլորը գիտեմ, բայց ճիգ մը պետք է: Ավելին, քան ինչ որ Ռումանացին կըներ, ավելին, քան ինչ որ ֆրանսացին: Ես իմ աշակերտներուս Անթիլիասի մեջ նույն բանը կըսեի. «Տղաքս, եթե դուք ձեր կյանքերը պիտի չափեք Լիբանանցիի կյանքին չափովը, չենք կրնար հայ մնալ: Անկե ավելի բան մը պետք է ընենք, որ հայ մնանք:

Խորունկ մտածում է, թե մայրենի լեզուն ունեցող գերի ժողովուրդները կնմանին բանտարկյալի մը, որն իր ձեռքի մեջը ունի, սակայն, բանտի բանալին: Ուրեմն, երբ որ մենք օտար լեզու միայն գիտնանք և հայերեն լեզու երբեք չգիտնանք, կնմանինք օտարի բանտին մեջ գտնվող անձի: Բայց երբ որ մենք սկսինք հայերենը քիչ թե շատ սորվիլ, այն ատեն բանալին կունենանք բանտեն դուրս գալու և մեր ազատությունը, իբրև հայ, գտնելու: Շատ խորունկ մտածում մըն է: Ես գիտեմ, ես ալ արտասահմանցի՝ հայ եմ: Այսօր իմ եղբորս զավակները, ես ուրիշը չեմ կրնար մեղադրել, դժվարությամբ հայերեն կխոսին: Օտար երկիր է, բայց կխոսին, քիչ թե շատ կխոսին:

Երիտասարդ տղա մը կար Ամերիկայի մեջ, որուն ծնողքը՝ հայրը, մայրը, ինծի բարեկամ էին, և հաճախ իրենց տունը կերթայի: Հորը և մորը սպգնապը այն էր, որ իրենց զավակը չի կրնար հայերեն խոսիլ: Շատ կսիրեր ինծի այդ զավակը: Ես ալ համոզեցի, սակայն օգուտ չըրավ: Չէր կըրնար: Հանկարծ օր մը այդ տղան թելեֆոն ըրավ ինծի Նյու Ջերսիեն Նյու Յորք, թե այսօր, Սրբազան, մեր տունը պիտի գաս, շատ կարևոր խոսելիք ունիմ քեզի»:

Ըսի՝ հայրիկիդ տուր խոսիմ հետը: Ըսավ, որ ես ալ չգիտեմ, այս տղան բան մը կըլլա կոր, եկուր, Սրբազան: Ես ալ գացի: Ինչ ընեի:

Այսօր, ըսավ, դպրոցի մեջն էի, և բոլորն ալ ամերիկացի էին: Եվ դաս կառնեինք: Եվ դասագիրքը բացավ ուսուցիչը, երկու էջի վրա տեսա Անիի եկեղեցին էր: Եվ որովհետև Հայաստանի ճարտարապետություն, Հայաստան էին ասում, ամբողջ աշակերտները՝ 38 հոգի, ինծի ճայեցան: Ես կեդրոն դարձա: Ես հպարտ էի զգում ինձ, որ իմ ազգս այսպես ճանչցրեց: Հիմա, ըսավ, ինծի գիրք տուր ես հայերեն պիտի սորվիմ: Եվ հիմա ուրախ եմ ըսելու, որ մեծցած է բավական և հիմա կխոսի և իր քույրն ալ արդեն կխոսի և Հայաստան կուգան երբեմն էլ՝ իրենց ծնողքին հետ: Վերաևորոգվեցավ: Վերաևորոգման պահն է, եղբայրներս, քույրերս, ամենքիս համար ալ:

Երեկ այցելեցի ձեր ննջեցյալներին, գացի գերեզմանատունը և այնտեղ ոչ թե մահը տեսա, այլ կյանքը: Կյանք մը, որ գերեզմանով չի փակվիր: Ես կշնորհավորեմ բոլորդ, որ այդքան մեծ հարգանք կուտաք ձեր ննջեցյալներուն: Անոնք կխոսին ձեզ հետ և կուզեն, որ ինչ որ անոնք ըրին, այն ատեն, երբ շատ դժվար պայմաններու տակ էին, մենք, որ հիմա ավելի դյու-

րին պայմաններու տակ ենք, ընդունինք, ավելին ընելու կոչված լինինք: Եթե կուզեք գիրենք հարգել, կյանքով հարգեք և ոչ թե միայն անցյալը պաշտելով, անցյալով հպարտանալով: Այս էին իմ քանի մը մտածումները, որ այսօր ձեզի հետ բաժնեցի:

Ռումանիո այս այցելությունս առաջին հանգրվանն է: Առաջին հանգրվան կըսեմ, որովհետև կհուսամ, կաղոթեմ, որ ասիկա առաջինը և վերջինը չըլլա: Ուրիշ անգամ մը գալու ատիթը ես կունենամ: Երկրորդ անգամ գամ այստեղ, ոչ թե երբեք, այլ երբ գամ, այն ատեն Մոլդավա և Սուչավա անպայման պիտի երթամ: Վերադառնալով մեր բոլորի հոգևոր տունը եղող Ս. Էջմիածին, կուզեմ որ բոլորդ ալ գիտնաք, որ այնտեղ իմ աղոթքներուս մեջ դուք ևերկա պիտի ըլլաք անպայման:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը պատասխանեց դասախոսությանը ներկա գտնվողների հարցերին, որից հետո հարցազրույց ունեցավ Ռումինիայի ազգային ռադիոկայանի համար:

Իսկ ավելի ուշ, ժամը 20.00-ին, Վեհափառ Հայրապետն իրեն ուղեկցող շքախմբի կազմով հյուրընկալվեց Ռումինիայում Լիբանանի դեսպան Էմիլ Պետրանի տանը: Այստեղ դեսպանը հակիրճ և բովանդակալից մի ճառով բարձրորեն գնահատեց Վեհափառ Հոր բազում ծառայությունները Լիբանանին և կարևորեց դերը լիբանանահայ գաղութի: Վեհափառն իր պատասխան խոսքի մեջ շեշտեց այն իրողությունը, որ Սիրիան և Լիբանանը, հայության դեմ գործված ցեղասպանությունից հետո, եղան առաջին օրրանը կամ օջախը հայության վերակազմությունին Սիրիոքում:

ՆՈՅԵՄԲԵՐ 1

Օրվա երկրորդ կեսին, ժամը 13.00-ին, Ամենայն Հայոց Հայրապետն իր շքախմբի մյուս անդամների հետ հրավիրվեց Ռումին Եկեղեցու Պատրիարքարան, հրաժեշտի և բարի գնանապարհի ճաշի: Ճաշին ներկա էին Օրթոդոքս Եկեղեցու պետ Ալեքսանդրիայի Պարթենիոս Պատրիարքը, Բուլղարիայից՝ Մաքսիմ Պատրիարքը, այլ ներկայացուցիչներ ու հյուրեր, Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Սինոդի անդամներ: Ներկա էին նաև պաշտոնական անձինք, ինչպես Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկոյի ներկայացուցիչ տիար Պ. Օպլսկին, կրթական գործոց նախարար Իլիե Ֆոնդրան, Ռումինիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Գևորգ Ղազինյանը, Ռումինահայ համայնքի Մշակութային Միության նախագահ պրն. Վարուժան Ոսկանյանը: Ճաշից հետո Պատրիարք Թեոկթիստոն իր ընդունարանում առանձին հանդիպում ունեցավ Հայոց Հայրապետ Գարեգին Ա. Կաթողիկոսի հետ: Շուրջ 40 րոպեների ջերմ եղբայրական մթնոլորտի ընթացքում հրաժեշտի և բարի գնանապարհի խոսքերի փոխանակումից հետո, Թեոկթիստ Պատրիարքն իր և ռումինական ժողովրդի գոհունակությունը հայտնեց Հայոց Հայրապետին, Ռումինիա իր անդրանիկ այցելության համար: Խոսվեց նաև երկու Եկեղեցիների փոխհարաբերությունների զարգացման մասին:

Ապա Վեհափառ Հայրապետը, ի նշան եղբայրության և սերտ համագործակցության Թեոկթիստ Պատրիարքին նվիրեց Ս. Էջմիածնի էմալազարդ արծաթյա սկիհ:

Ռումինիայի Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարքարանում
Թեոկթիստ Պատրիարքի հետ հանդիպման պահին

Ռումինիայի պետական համալսարանում Թեոկթիս Պատրիարխին
պատվավոր դոկտորի կոչում շնորհելու արարողության ընթացքում

ՆՈՅԵՄԲԵՐ 2

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Հինգշաբթի, նոյեմբերի 2-ին, առավոտյան ժամը 10.30-ին, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը և Ռումին Օրթոդոքս Եկեղեցու պետ Թեոկթիստ Պատրիարքը, Հայ և Ռումին Եկեղեցիների հոգևորականներից կազմված թափորով, «Ուրախ լեր Ս. Եկեղեցի» շարականի երգեցողությամբ, հանդիսավոր մուտք գործեցին հայոց առաջնորդանիստ եկեղեցի: Այստեղ երկու Եկեղեցիների պետերը իրենց օրհնությունը բաշխեցին ներկա հավատացյալներին և, եղբայրական ջերմ խոսքերի փոխանակումից հետո, ուղևորվեցին դեպի Բուխարեստի օդանավակայան:

Թեոկթիստ Պատրիարքի հետ միասին ողջերթի էին եկել պատրիարքական փոխանորդ եպիսկոպոս Նիֆոն, Ռումին Եկեղեցու բարձրաստիճան այլ հոգևորականները, ինչպես և Ռումինիայում Հայաստանի Հանրապետության դեսպան տիար Գ. Ղազինյանը, Ռումինիայում Լիբանանի դեսպան տիար Էմիլ Պետրանը և ուրիշներ:

Ռումինիայի տեղական ժամանակով ժամը 12.00-ին, օդանավը թռիչք առնելով հասավ Երևանի «Զվարթնոց» օդանավակայան, տեղական ժամանակով 16.30-ին:

Վեհափառին դիմավորելու էին եկել Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, ՀՀ նախագահի պրն. Լևոն Տեր-Պետրոսյանի աշխատակազմի ղեկավար Շահեն Կարամանուկյանը, կրոնական գործոց պետական խորհրդի նախագահ Լազար Սուջյանը, միաբան հայրեր և Մայր Աթոռի վարչակազմի ավագ անդամներ:

Օդանավակայանից Վեհափառն առաջնորդվեց Ս. Էջմիածին: Մայր տաճարում գոհաբանական աղոթք մատուցվեց, որի ավարտին Վեհափառն իր տպավորությունները հաղորդեց ողջ միաբանությանը և հոգևոր ճեմարանի սաներին:

ԱՐՏԱԿ ԱԲԵՂԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՕԴԵՍԱ

Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տաբեգրությունների մեջ 1995 թվականի նոյեմբեր 24-ից 26-ը Վեհափառ Հայրապետի բնորոշմամբ արձանագրված կմնա իբրև «Օդեսահայության օր», երբ Հայոց սրբազնասուրբ մյուռոնով օծվեց մի նոր եկեղեցի Ուկրաինայի օրհնյալ հողում:

Հովվապետական այս այցելության ընթացքում Նորին Սրբության ուղեկցում էին Գերաշնորհ Տ. Ամաղիա եպիսկոպոս Արարաջյանը, Հոգեշնորհ Տ. Նավասարդ վարդապետ Կճոյանը, գավազանակիր Հոգեշնորհ Տ. Աբոտակ աբեղա Տիգրանյանը, հոգևոր ճեմարանի ուսանողներ և աշխարհական ամձիներ, որոնց թվում՝ նորակառույց եկեղեցու ճարտարապետ տիար Բաղդիկ Արզումանյանը:

Օդեսայի օդանավակայանում Նորին Սրբությանն ու նրա շքախմբին դիմավորեցին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Նաթան ծ. վարդապետ Հովհաննիսյանը, Օդեսայի փոխանախագահ պետ տիար Վալերի Բալուխը, Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դեսպան տիար Հրաչ Սիլվանյանը, քաղաքապետի ներկայացուցիչը, թեմական խորհրդի անդամներ:

Մեքենաների շարասյունն օդանավակայանից ուղղվում է քաղաքի պետական պաշտոնական ընդունելությունների սրահ, որտեղ Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպվել էր մեծ ընդունելություն:

Հաջորդ օրը, նոյեմբերի 25-ին, շաբաթ առավոտյան, Ամենայն Հայոց Հայրապետը տեղական պետական իշխանությունների ուղեկցությամբ ճաշկեպարիկ է գետեղում Աննայտ գիմվորի գերեզմանին՝ ի հարգանս Երկրորդ համաշխարհային պատերազմի հերոսների:

Ժամը 10,30-ից 11,30-ը Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Օդեսայի ճաշճաշգապետ պարոն Ռուսլան Բոդելանին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Ձերդ Վսեմություն և հարգելի հյուրեր,

Ձեզմե շատերուն համար թերևս այս պահը սովորական պահերեն մեկը է, բայց ոչ ինձի համար: Իմ կյանքիս մեջ առաջին առավոտն է, որ կսպիտ ուկրաինական օրհնյալ հողին վրա, և այս երկրին տաքն ու պարզ միասին կտեսնեմ՝ թե՛ ձյունը և թե՛ արևը: Սա կնշանակե, որ երկիր մը, որ կրնա

պաղին մեջ արև բերել, արևին տակ ձյուն ստեղծել, այդ երկիրը գեղեցիկ երկիր է: Արևը չի կրնար շատ այրել, ոչ ալ ձյունը կրնա շատ սառցնել:

Այսօր մենք մեր երկու երկրների՝ Ուկրաինայի և Հայաստանի վերանկախացյալ շրջանում առաջին անգամն է, որ եկեղեցի ենք օծում Օդեսայում: Մեր Եկեղեցին Հայաստանի մեջ ունի իր կենտրոնը Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռով, բայց այնպիսի Եկեղեցի է, որ աշխարհով մեկ տարածված ընդարձակ դերակատարություն ունի: Ինչ որ կպատահի մեկ գաղութի մեջ, պատահած կըլլա ամբողջ հայ ազգի համար: Այսօր ես ողջունում եմ Նորին Վսեմության հոգատար, սիրալիր վերաբերումը Օդեսայի այս շրջանում ապրող մեր հայ ժողովրդի նկատմամբ: Ողջունում եմ Ձեր անձի մեջեն ամբողջ Ուկրաինո ժողովուրդը և Ուկրաինո մեջ գործող մեր հայոց թեմը՝ գլխավորված Նաթան ծայրագույն վարդապետի կողմից: Այսօր ես ողջունում եմ նաև Ղրիմից եկող մեր սիրելի հայ եղբայրներին և քույրերին և նաև Ղրիմի Խորհրդարանի նախագահին: Նրանք էլ այդ նույն Եկեղեցու զավակներն են, և ես ուրախ եմ, որ այս ուրախությունը, որ Օդեսայի մեր հանդիպումը կապրի, նաև կբաժանվի ատիկա մեր մյուս համայնքների կողմից:

Ես իմ խոսքս կավարտեմ այն մտածումով, որ Նորին Վսեմությունը ըսավ, թե մենք դժվար օրերի միջից ենք անցնում այսօր: Նույնն է նաև մեր հայ ժողովրդի համար: Եվ կուզեմ մեկ բան այստեղ հիշեցնել Աստուծո Գիրքեն՝ Աստվածաշունչ մատյանեն. «Ով որ խաչ շալկել գիտե, հարության կարժանանա»: Ոսկին, որ կրակի մեջեն կանցնի, մաքուր ոսկի կդառնա: Տառապանքի միջից անցնող ժողովուրդն էլ փառքի կհասնի: Այս մաղթանքով ես կաղոթեմ առ Աստված, որ օրհնի այս երկիրը, օրհնի Օդեսա նահանգը և քաղաքը և ժողովուրդը և հայ ժողովուրդի ու հայ պետության, Հայաստանի Հանրապետության, Հայ Եկեղեցու և Սուրբ Էջմիածնի և Ուկրաինայի ժողովրդի և պետության ու Եկեղեցու հարաբերությունները շարունակեն օրեցօր վերելք արձանագրել, ի բարձուս երթալ:

* * *

Նույն օրը Վեհափառ Հայրապետի պատվին ընդունելություն է կազմակերպում նաև Օդեսայի քաղաքապետ պարոն Էդուարդ Գուրվիցը: Ընդունելության ընթացքում փոխանակվում են նվերներ և երկուստեք ասվում արտաբուխ ջերմ խոսքեր:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Երկրի մը կամ քաղաքի մը մասին ըսել, կարդալ ուրիշ բան է և տեսնել ուրիշ բան է: Ես արտասահմանում, որտեղ ապրել եմ իմ կյանքը, տեսել եմ ուկրաինացիներ, լսել եմ Ուկրաինո մասին, Օդեսայի մասին, քարտեզի վրա գիտեի ուր է, բայց հիմա, որ տեսա, ճանչցա քաղաքը, տեսա, թե ինչ բան պատմական հարստություն ունեցող և նոր կյանքով հառաջացող քաղաք է: Հայաստանից դուրս, իմ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո, առաջին քաղաքն է, որտեղ ես մի եկեղեցի եմ օծելու: Օդեսան, որ մեր ժողովրդի հանդեպ տառապանքներից հետո եղել է մի ապաստարան, եղե՛ է մի նոր օջախ, այսօր այս եկեղեցիով ավելի ծաղկելու է:

Նահանգապետարանում հանդիպում Օդեսայի նահանգապետի հետ

Ծաղիկներ զետեղում Ա. Լենինի գրանդան վիմոնումենտի մուտքի մոտ

Քաղաքապետի պատասխան խոսքից հետո Վեհափառ Հայրապետը շարունակեց.

Ես վստահ եմ, որ մեր նորակառույց եկեղեցու օծումը մի դարձակետ է, որը կարևոր թվական պիտի լինի Օդեսայի հայության կյանքում: Մեր Եկեղեցին շատ մոտից ընդելուզվել է, շաղախվել է մեր ազգի, մեր պետության հետ: Նմանապես թե՛ Ուկրաինայի ժողովուրդը և թե՛ Հայաստանի ժողովուրդը դիմագրավել են դժվարին, ծանր պայմանների և տառապանքը հաղթահարել են իրենց քրիստոնեական հավատքով: Տեսակ մը նույնանման ճակատագիրներ են դիմակայել նրանք: Ես ուկրաինացիներ ճանչցել եմ Ամերիկայում, Կանադայում, տեսել եմ, թե նրանք ինչպես են հավատարիմ մնացել ուկրաինական ավանդույթներին:

Ես էլ ծնվել և իմ կյանքս ապրել եմ Հայաստանից դուրս, սակայն հոգեկան պատկանելությամբ ես ինձի զգացել եմ Հայաստանի մաս և բաժին: Հիմա Ուկրաինայի ժողովուրդը և հայ ժողովուրդը ոչ միայն մի նոր պատմության շրջանի առաջ են գտնվում: Այլևս անցյալը պետք չէ ավաղել միայն, պետք է նայել ապագային ներկայի աչքերի միջից:

Խանդավառությամբ անցավ նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետի հանդիպումը հայ համայնքի անդամների հետ քաղաքի մշակույթի տանը: Այն սկսվեց Կիրակնօրյա վարժարանի սաների թատերական ներկայացումով:

Հավարտ ներկայացման, Գարեգին Ա Կաթողիկոսը, իր հայրական օրհնությունը բաշխելով օդեսահայությանը, կոչ արեց հաստատ ու հավատարիմ մնալ ազգային ավանդություններին, հայեցի դաստիարակություն ջամբել հայ մատղաշ սերնդին և բարձր պահել ազգային արժանապատվությունն Ուկրաինայի հյուրընկալ հողում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄԾԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ

Հարգարժան պետական, քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներ և հարազատ, թանկագին, հավատարիմ, հայրենակից եղբայրներ և քույրեր,

Փառք Աստուծո, որ ինձ շնորհեց և այս առիթը՝ լինելու նաև Օդեսայում: Առհասարակ հրապարակավ խոսելու դժվարություն չեմ ունեցել, բայց այսօր ունեմ այդ դժվարությունը: Այդ դժվարությունը գալիս է այս երեխաներից: Այնքան գեղեցիկ պատկեր ներկայացրին այս բեմի վրա, այնքան արտամոտիկ, գրավիչ էին իրենց դերասանական արվեստով, իրենց երգով ու պարով, որ այսպիսի ինքնաբուխ գեղեցկության դիմաց ինքս ինձ ասացի՝ ինչպե՞ս խոսեմ: Դա ինքնին խոսք էր մեր բոլորի սրտերին խոսող, ազդեցություն գործող խոսք էր:

Այսօր ես շնորհակալություն եմ հայտնում Ուկրաինայի թեմի առաջնորդին՝ Ներսես ծայրագույն վարդապետին, թեմական իշխանության և Օդեսայի մեր ժողովրդի պատասխանատուներին, որոնք այս գաղափարը ունեցան ոչ միայն ինձ հրավիրելու, որ ձեզ հետ լինեմ, այլ նաև այս փոքրիկ հանդիսության համար, որի միջից ես լսեցի հայ գալիք սերունդի ձայնը: Եվ

Երեխա՛, ձեր ձմռոցներից իմ խոսքը ասելուց առաջ ես ձեզ եմ ասելու մի բան, որ չմոռանաք երբեք ձեր կյանքում: Հիմա լսելու է տեսնում եք, որ արդեն մայրամուտ է, և գիշերը է սկսվում, բայց ինչո՞ւ է ինձ թվում, թե արև ծագեց երեկոյի մեջ: Ո՛րտեղ էր այդ արևը: Գուցե էիք այդ արևը: Մեր աղատագրի, մեր ժողովրդի կենցաղական ցնծագեղգեղումից դեսի աղատած այդ արևից շատը բերեցիք ձեր թաշմի ձայլերով, ձեր կաչաոս շարժուձևերով, ձեր վառվռուն աչքերով: Ասացեք, երեխա՛ք: Ինձ խոստացո՞ւմ եք, որ սրտից էլ ասելու ի գեպ ձմռոցներդ պիտի ճեպկտրեք: (Ծեծե՛):

Այսօր, երբ ես առաջին անգամ տոթեց եմ ունենում ձեզ ճառ լինելու, այս պատը երբեք չպիտի մոռանամ, ոչ թե իմ աճձնական կյանքի կենցաղության մեջ, այլ Մարդ Աթոռի սարեգրության մեջ: Եվ երբ վերադառնամ երեւանշատի, Ասումն կամքով, Հայաստանց և Մարդ Էջմիածնի, այնտեղ Էջմիածնի տոմարում պիտի գրեմ. 26 հոկտեմբեր Օրհասի հայրապետց օրն է Էջմիածնի պատմության մեջ:

Առաջ հուզմունի չէ, որ ասում եմ այս խոսքը, որովհետև որպես Աթենքցւոյ Հայոց Նախարհիս, Հայաստանացից դուրս առաջին անգամ է, որ եկեղեցի եմ օծում, և դա Օրհասի Մարդ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին է լինելու:

Այս երեկո, երբ այսպես հավաքվել եմք միասին, ուզում եմ մի քանի մտածումներ ձեզ հետ բաժանել, որպեսզի իմանաք, թե ձեր Նախարհիս ինչպես է քնթռնում մեր հայրերից կյանքը՝ այս օրերին դիտած մեր եկեղեցու տեսակցությունից:

Առաջին մտածում: Բարեկամից կյանքը ազատ բաշխությունից է, որին խոսքով՝ կյանքը կարող, միասնական, միասդատ, անշարժ երևոյթ չէ: Ծանրախոհությունը մարդկային կյանքի բնական երևոյթ է: Եվ երբ մեզ պատ անշարժացնում մեր հայրենիքի, անցյալ պիտի տեսնենք, որ ոչ միայն ծանրախոհ, այլ և ուրախ ենք եղել: Մեր ազգային կյանքը ոչ միայն ողբերգական, այլ և կատակերգական է եղել: Մեր ազգ

Օրենսդիր իշխանության ներկայացուցիչների



Օծումից մի պահ

ռանց ծառա լինելու ժողովրդին: Գնահատենք մեր անկախությունը, այլապես փոքրերի այս սերունդը մեզ պիտի անիծի, եթե մենք այսօր մեր պարտականությունը հաճդեպ այդ հայրենիքին չկատարենք գիտակցությամբ, պատասխանատվության զոհողության գերագույն աստիճանով: Ես մի երիտասարդ հոգևորական մըն էի ժամանակին: 1958 թվականին, երբ Անգլիայում բարձրագույն ուսում էի ստանում մի համալսարանում, հրավիրվեցի անգլիական մի շրջանակում խոսելու հայության մասին: Այստեղ մի անձ, 90 տարեկան մի անգլիացի, վեր կանգնեց, երբ ես խոսեցի և ասացի. Այսօր մենք Երևան քաղաքի համալսարանում ունենք 2500 ուսանող, ուր նրանք իրենց բարձրագույն ուսումն են ստանում, թե ճարտարագիտականում 1500 ուսանողություն ունենք, թե Բեյրութում, Ամերիկյան համալսարանում, 700 հայ ուսանողություն ունենք Բեյրութի գաղութից: Այդ անգլիացի ծերունին վեր կացավ և ձեռնափայտը ձեռին ասաց. «Դուք ուզում եք ասել, որ հայ ժողովուրդն ապրո՞ւմ է»: Ասացի, թե ինչո՞ւ այդ հարցումն եք տալիս: Անշուշտ ապրում ենք:

«Ես հիշում եմ իմ մանկության օրերը,—ասաց,—երբ մենք կիրակնօրյա դպրոցներում փոքրիկ, փոքրիկ գումարներ՝ մեկ կոպեկ, երկու կոպեկ հավաքում էինք և հայ գաղթական ժողովրդին էինք ուղարկում, որբերին, այրիներին, հիվանդներին, և կարծեցինք, որ վերջացավ ձեր բախտը: Եվ հիմա,—ասաց ինձ,—ես էն պատանի տղաներից էի, որ լսել եմ անգլիացի մեծ քաղաքականագետ Լորդ Սոլսբերիի այն խոսքը, որ ասում էր. «Մեր նավերը չեն կարող Տավրոսյան լեռնաշղթայից անցնել՝ հասնելու համար Արարատ և օգնելու հայ ժողովրդին»:

«Ես հիմա անդրադառնում եմ,—ասաց,—որ մեր քաղաքագետները սխալվել են»:

Ասեցի, ես ձեզ ասելիք չունեմ, դուք գնացեք անգլիական պետությանը ասեք, թե որ սխալվել են, ինձ մի ասեք:

Ես աչքերովս տեսել եմ այն վիճակը, որ մեր ժողովուրդն ապրում էր համաշխարհային առաջին պատերազմից հետո մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը, թե ինչպես նրանք ցնցոտիներով ապրում էին Բեյրութի ճամփեքին, ցեխոտ, թիթեղածածկ տների մեջ: Բոլորն էլ քանդվեցին, և նոր կյանք սկսվեց: Հայաստանում այսօր, այդ բոլոր նեղություններից հետո, եկած է այն օրը, երբ մենք կանգնում ենք Աստուծո առաջ, պատմության դիմաց և աշխարհին հանդիպակաց և ապրում ենք: Մենք շարունակում ենք և շարունակելու ենք մեր երթը հայկյան ճամփով, մեր լեզվով, մեր հայրենիքով, մեր պետությամբ և մեր Եկեղեցիով:

Եթե իմ հայրը այսօր երկինքեն խոսեր, պիտի ասեր. «Նախանձում եմ քեզ, տղաս, որովհետև այս օրը երազեցի, բայց չտեսա: Դուն տեսար: Կեցիր այդ թվականին առջև և արժեցուր ինձի»:

Մենք ունեցել էինք մի ազատ, անկախ պետություն 1918 թվականից մինչև 1920 թվականը: Բայց դեպքերն այնպես էին բերել ամբողջ տարածաշրջանում, որ այդ անկախությունը կարճատև եղավ, և այսօր մենք վերջապես հրճվում ենք, երբ տեսնում ենք, որ առողջ հիմերի վրա հայ ժողովրդի կամքով դրված հիմքը առավել ևս կբարձրանա, տոկուն կերպով կբարձրանա և այդ բարձրացման մեջ ամեն մեկս, կաթողիկոսեն սկսյալ մինչև այս երեխաներից ամենեն փոքրը ունի իր բաժինը բերելու: Ոչ ոք թող կանգ առնի պատմության այս պահի առջև և ասի՝ ինձի ինչ, ինձ չի հետաքրքրում: Դա մարդավաճառություն է, ոչ թե հայադավաճանություն, այլ

մարդադավաճանություն: Անպատասխանատու մարդը մարդ չէ Աստուծո առջև: Դա մի խոտ է, եկել է, գնացել է, հետքն անգամ հայտնի չէ: Հետևաբար, այսպիսի պատմական պահին, երբ իմ տկար ուսերին դրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսության ծանր պարտականո.թյունը, ես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Խորանի վրա ուխտեցի մի անգամ ևս, որ Աստված ինչ որ տալու է ինձ իբրև կյանք, ես այն չեմ խնայելու մինչև իմ վերջին շունչը իմ հայրենիքին և իմ ժողովրդին ընծայելու:

Այսօր այդ պարտականությանը մեջ ես զգում եմ, որ մեր Եկեղեցին իր մեծ նշանակությունը և հսկայական կարևորությունը, արժեք ներկայացնող առաքելությունը ունի կատարելիք հանդեպ հայրենիքին, հանդեպ հայ ժողովրդին և անոնց մեջեն ալ՝ հանդեպ Աստուծո: Այլապես Եկեղեցի չէ: Մի հաստատություն է, անհոգի: Մայր Աթոռը կոչված է մեր ամբողջ ժողովրդի մեջ քրիստոնեական առողջ գաղափարները, քրիստոնեական կրոնի բարոյական սկզբունքները տարածելու, այնպիսի գիտակցություն արմատավորելու, որ առանց հոգևոր-ազգային արժեքների մի ժողովուրդ երկար չի կարող տոկալ այս աշխարհում:

Սիրելիներ, մենք հանճախ մի մեծ սխալ ենք գործում: Ես եկել եմ, որ իմ մեջ այդ սխալը դատապարտեմ, արբագրեմ, ապա իրավունք ունենամ ուրիշներին մատնանշելու այդ սխալը: Ո՞րն է այդ սխալը: Այդ սխալն այն է, որ մեր ժողովուրդը բերվել է այնպիսի մի կացության, որի մեջ մտածում է, որ քրիստոնեական հավատքը մեր հայրերի գործն է: Մենք եղել ենք պատմության մեջ, մենք ունեցել ենք պատմության մեջ, մենք կառուցել ենք պատմության մեջ, մենք հրաշալի եկեղեցիներ ենք կանգնեցրել, մենք սքանչելի ձեռագրեր ենք մանրանկարել, մենք հրաշալի գրական գործեր ենք ստեղծել, եղել ենք... եղել ենք... ունեցել ենք... ունեցել ենք... արել ենք... արել ենք...:

Մենք այսօր այդ բոլոր ժառանգության դիմաց ի՞նչ ենք անում, դրանք բոլորը վերակենդանավորելու, դրանց բովորին նոր հոգի տալու, նոր ուժ տալու համար: Ոչ մի մարդ, ոչ մի անձ իրավունք չունի իր հայրերի իրեն թողածովը հպարտանալու, եթե ինքը պատրաստ չէ այդ եղածի վրա իր բաժինը դնելու: Մենք որի՞ կնմանենք. ա՞յն անձին, որն իր հոր ժառանգությունը ապառում է, մսխում է: Բայց մի զավակ, որ իր ժառանգն է ստացել, և ինքը այդ ժառանգը այնպես է օգտագործում, որ նոր տվյալներով, նոր նվաճումներով այդ ժառանգը հոխացնում է, պատիվ նրան: Նրա գլխավորը կարելի է համբուրել: Հետևաբար, մենք այսօր, իբրև Եկեղեցի, պետք ունենք վերակենդանացնելու մեր ժողովրդի քրիստոնեական հավատքը Եկեղեցիի, գրականության, դաստիարակության ճամփով: Այո՛, Սուրբ Էջմիածին կասենք: Սրբություն սրբոց կասենք: Մեր հայրերի հոգեկան արժեքների ուխտավայր կասենք, բայց Էջմիածինը քար չի, Էջմիածինը հուշարձան չի, Էջմիածինը 1700-ամյա թողված կոթող մը չի: Շարժում է, կյանք է, միաբանություն է, հոգևոր ճեմարան է, ոռոգում է հայկական և հոգեկան մեր ժողովրդի անդաստանում: Այս է Էջմիածինը: Ոչ միայն անցյալի ժառանգ, այլև այսօրվան կյանք և առաքելություն:

Մեղք այն մարդին, որ ինքն իրեն զոհ կզգա: Կնշանակի, որ ինքը կամք չունի, որ ինքը զոհ դառնալուց վերջը այդ զոհը չվերածի նոր ուժի. և՛ բողոքի, և՛ ընդվզումի, և՛ դրական ներգործության: Երբեք ես չեմ ուզում, որ այդ սխալը մենք շարունակենք գործել, անցյալը մեծացնելով և քրիստոնեական հավատքը անցյալին հետ նույնացնելով: Դա հավիտենական հա-

վատք է: Ավետարանում ասված է և չի կարող փոխվել՝ «Դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցէ»: Եկեղեցին չի կարելի հաղթահարել, որովհետև ան հոգիին դուռն է: Ինքզինքդ պիտի ուրանաս, որ կարենաս:

Ավարայրի դաշտում իրենց կյանքը Հայրենիքին և Եկեղեցուն ընծայած վարդապետաց սերունդի ընտրելագույն այդ հավատարիմ գինվորականները արտասանեցին **1500 տարիներ առաջ.** «Յայսմ հաւատոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել, ո՛չ հրեշտակք երկնից և ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, ո՛չ սուր, ո՛չ ջուր և ո՛չ գինչ և են դառն հարուածք»:

Այս հավատքից մեզ ոչ ոք չի կարող հեռացնել, ո՛չ երկնքի հրեշտակները և ոչ մարդիկ, ոչ սուրը, ոչ ջուրը, ոչ հուրը, կրակը, և ոչ ալ զենքին որևէ մեկ տեսակ հարված, որքան էլ դառն լինի այդ հարվածը:

Այսպիսի խոսքով, այսպիսի հավատքով ապրած ժողովրդի սերունդն ենք մենք այսօր: Անհավասիկ պատրաստվում ենք տոնելու մեր Եկեղեցու պաշտոնական հիմնադրության, քրիստոնեության որպես պետական կրոն ճանաչման 1700-ամյակը: Եվ գրքերում օտար և հայ գրքերում, բառարաններում, հանրագիտարաններում գրվել է. «Հայոց ազգը եղավ առաջին ազգը, որ պետականորեն ճանաչեց քրիստոնեությունը որպես պետական կրոն»: **Շատ լավ: Եղանք ժամանակին: Ի՞նչ ենք այսօր: Արժեցնո՞ւմ ենք այդ առաջնությունը: 1700 տարի պաշտոնական կրոնք: Եվ որքան ենք հեռացել, դուք ձեզ հարց տվեցեք: Քանի՞ տեղ տակավին եկեղեցիներ չունենք:**

Հառաջիկա շաբաթ օր Էջմիածնում մենք տոնելու ենք հայոց գույգ առաքյալների, Հայաստանում առաջին անգամ քրիստոնեություն քարոզող Թադեոս և Բարդողիմեոս առաքյալների տոնը: Ես այնպես տնօրինեցի, որ այդ օրը բոլոր կրոն ուսուցող ուսուցիչները հավաքվեն: Ռոլորին էլ հրավիրել եմ այնտեղ և պիտի սկսենք, արդեն սկսել ենք, բայց պիտի շարունակենք ավելի ուժ տալ այն կազմավորման աշխատանքին, որ ուսուցիչներ պիտի պատրաստեն մեր զավակներին առողջ կրոնական, քրիստոնեական դաստիարակության համար, մեր Եկեղեցու ավանդության համաձայն: Այլապես, եղբայրներս և քույրերս, ինձ լավ մտիկ արեք, եթե մենք չանենք մեր գործը, ուրիշները պիտի գան, աղանդավորները պիտի գան և պիտի հեռացնեն մեր ժողովուրդը իրենց հայրենի սուրբ կրոնքի ուղիղ ճանապարհից: Թույլ չենք տա: Խոսքի պետք ունինք, կյանքերու պետք ունինք, անձերու պետք ունինք, ծառայող և ոչ թե դիտող, դատող, քննադատող, դժգոհող: Այդ սերունդը չպիտի լինի մեր նոր սերունդը: Մենք այսօր պարտականությունը ունենք մեր նոր հայրենիքը, մեր վերածնված Եկեղեցին ուժեղացնելու, զորացնելու, որպեսզի մենք կարենանք հանդարտ խղճով կենալ պատմության դատաստանին առջև:

Ես չեմ ուզում ավելի երկարել իմ խոսքը այս երեկո, բայց կուզենամ ձեզ շնորհավորել, որ դուք Օդեսայի այս քաղաքում, ծովեզրյա այս քաղաքում, հավատարիմ Ուկրաինացի այս իշխանության, դուք ձեր հայության շքեղ փառքն եք տանում՝ եկեղեցի կառուցելով և ասելով բոլոր Ուկրաինացի պետական և ժողովրդական շրջանակներին, որ հայը կառուցող ազգ է և ոչ թե քանդող: Եվ այս խոսքը, որ ասեցիք ձեր գործովը, դա կլինի ձեր գերագույն ուխտը, իսկական պատիվ բերող ժառանգությունը մեր Եկեղեցուն: Ես իմացա մի բան, որ ինձ շատ ուրախացրեց. այս եկեղեցին, որ գացի անցաշրջոն կերպով, տեսա այսօր, սքանչելի կառուցված է, սքանչելի դիրքի վրա: Այդ եկեղեցին շինված է ձեր բոլորի համատեղ գործակցությամբ: Դա իսկական եկեղեցաշինության գործ է: Մի անձի գործ չէ, այլ տեղի հայու-

թյուն է բարերարը, և ասում նկատելի կրոնքս ժողովրդի բարերարը: Ուրբաթ կրոնքս բարերարվում, իսկ նկատելի կրոնքս բարերար: Այս է խորհուրդը, որ սիրտ ասրելը վատը, կիրակի օրը, և ես նկատ եմ, որ այս խորհուրդը ձեզ ևս վիրավոր ասրել ևսրեզ Աստված Ասրելի: Ասում ես ասած չհոգնելով ձեզ բոլորիդ, այս հոգևոր ասրը ես սիրտ կոչով ուզում ներկայացնել, արտրաստությամբ գիշեր վատը մեծ ուրախություն, որ նրանք ներկայացնում են ամենի ասրելի ասրելի: Ես ուզում եմ ներկայացնել ձեզ Ասրելի Ասրելի Ասրելի, որ ասրելի ասրելի ասրելի

Վեհափառ Հայրապետը Օղակաձի վիտրտրիտի հին

Երկրաշարժի զոհերին նվիրված պատրաստվող խաչքարի մոտ

ցիչ պարոն Լիտվինենկոն, Ուկրաինայի արտաքին գործերի նախարարության ԱՊՀ երկրների վարչության պետ Ալեքսանդր Բաչկոն, Ուկրաինայի Նախարարների խորհրդի կրոնական գործերի պետական կոմիտեի փոխնախագահ պարոն Սերեդան, Ղրիմի Գերագույն խորհրդի նախագահ պարոն Սուպրունյուկը, Օդեսա նահանգի և քաղաքի իշխանությունների ներկայացուցիչներ, Օդեսայի և Իզմայիլի մետրոպոլիտ Ագաֆանգելը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, մտավորականներ և բարձրաստիճան հյուրեր:

Սուրբ պատարագի ընթացքում հավուր պատշաճի քարոզ խոսեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ը:

ՎԵՀԱՓԱՌԻ ՔԱՐՈԶԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Դու ես վեմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ»: Դու ես ժայռը և այդ ժայռի վրա ես պիտի կառուցեմ իմ եկեղեցին:

Այսպես ասաց մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, և Իր առաքյալներից մեկը՝ Սուրբ Պետրոսը, Իրեն դարձավ և ասաց. «Դու ես Որդի Աստուծոյ կենդանւոյ»:

Մի օր Հիսուս, շրջապատված 12 առաքյալներով, նրանց դարձավ և ասաց. «Ի՞նչ են ասում մարդիկ ինձ համար, ո՞վ են կարծում, որ ես եմ»: Մեկն ասաց, որ ժողովրդի մի մասը ասում է, թե դու մարգարե ես, մյուս մասն ասում է, թե դու Եղիան ես, ուրիշ մեկն էլ, թե դու Մովսեսն ես, որ եկել ես վերստին: Հիսուս դարձավ և իր առաքյալներին ասաց. «Դուք ի՞նչ եք ասում, թե ես ով եմ»: **Այն ժամանակ առաքյալներից մեկը՝ Սուրբ Պետրոսը, դարձավ և ասաց.** «Դու Որդի Աստուծոյ կենդանւոյ ես» (Դու կենդանի Աստուծո Որդին ես): **Եվ այն ատեն Հիսուս ասաց.** «Նա է ժայռը, որի վրա պիտի կառուցեմ եկեղեցին»: **Հավատքն է, այն հավատքը, որով մենք ճանաչում ենք Հիսուս Քրիստոսին, որպես Աստուծո Որդուն, և Նրա քարոզածները մենք ապրում ենք մեր կյանքով, դրանով ենք դառնում քրիստոնյա: Հետևաբար այսօր մենք ունենք շատ հիմնական մի պարտականություն. ճանաչել, թե մենք ով ենք, իբրև Հայ Եկեղեցու զավակներ: Ես ողջունում եմ այս պահը, այս գեղեցկագույն պահը Օդեսայի մեր ժողովրդի կյանքի:**

Առաջին անգամն է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գալիս է մեր բոլորի Սրբություն Սրբոց ճանաչված, մեր բոլորի հոգևոր մայրը եղող Ս. Էջմիածնից և այսօր ձեր եկեղեցին օծում է հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու:

Այսօր դուք պատմական մի օր եք ապրում, անմոռանալի օր, որ ձեր կյանքի մեջ պիտի դառնա խմոր, որ շաղախե, ներշնչե ձեր 365 օրերը տարվա և գալիք տարիները ձեր կյանքի: Այսօր դուք շնորհավորելի ժողովուրդ եք: Շնորհավորելի նրա համար, որ ձեր հավատքով շարժած ձեռքերով կառուցեցիք այս եկեղեցին: Դրսից մեկը չեկավ և ձեզ համար չկառուցեց: Մի հոգի չեկավ և չկառուցեց: Դուք բոլորդ միասին կառուցեցիք: Ապրեք, ժողովուրդ հայոց: Այս է եկեղեցի կառուցելու ճշմարիտ, վավերական եղանակը Հայաստանյայց Եկեղեցու ըմբռնումով: Մտովի պատկերացնում եմ, դուք էլ երևակայությամբ գնացեք 1700 տարի առաջ, երբ Գրիգոր Լուսավորիչը մի տեսիլք տեսավ, Աստուծո Որդին լուսեղեն ամպերի մեջից եկավ, ոսկի ուռ-

ևակը ձեռքին, մուրճը ձեռքին, բախեց գետինը Հայաստանի և այնտեղ կառուցվեց Սուրբ Էջմիածինը: Միածինը իջավ՝ Էջ Միածինը:

Այսօր դուք Էջմիածնի մի փոքրիկ կայծ եք այստեղ վառում այս եկեղեցիով: Այդ Մայր եկեղեցուց քանի տասնյակ-հազարավոր եկեղեցիներ շինվեցին:

Սիրելինե՛ր, թշնամիներ եկան, քանդեցին եկեղեցիները, քանի հարյուրավոր, եթե ոչ հազարավոր եկեղեցիներ քանդվեցին: Ուրիշներ եկան, փակեցին եկեղեցիները, աքսորեցին հոգևորականներին, արգիլեցին կրոնքի ուսուցումը, բայց էլի այն եկեղեցին չքանդվեց, որ հոգիներու մեջ էր շինված: Քարեղեն եկեղեցին կքանդվի, քարի տեղ նոր քարը կգա, եթե այդ ներքին, կենդանի եկեղեցին, ապրող եկեղեցին, մեր հոգիների մեջ անքակտելի, անխորտակելի հավատքը մնա կենդանի: Եվ այսօր այդ հավատքն է, որ կառուցեց այս եկեղեցին: Այս պատճառով է, որ ես ասում եմ սուրբ, ողջունելի և շնորհավորելի ժողովուրդ եք, որ այսպես գիտցաք մեր Ուկրաինայի ազատ թյան և անկախության և Հայաստանի անկախության այս նոր շրջանին, այս լուսավոր շրջանին այսպիսի վկայություն տալ Աստծուն և ասել, «Հավատքը մեր մեջ կենդանի է, վերստածնված և անավասիկ այդ հավատքի ճառագայթն է այս եկեղեցին»:

Բայց, սիրելիներ, այսօր իմ պատգամի մեջ ես ուզում եմ ձեզ մի շատ կարևոր խոսք ասել: Եվ բոլոր մյուս խոսքերը եթե մոռանաք, այս մեկը երբեք չմոռանաք: Եկեղեցի շինելը դյուրին է, եկեղեցի պահելն է կարևոր, եկեղեցին կենդանացնելն է կարևոր: Այս եկեղեցին պահելով եկեղեցի չեք, ձեզմով եկեղեցի եք: Երբ դուք լցնեք այս եկեղեցին, եկեղեցին կյանք կդառնա ձեր գավակների մեջ: Եկեղեցին այն է, որ մենք իրար կգանք հավատքով և կաղոթենք, իրար կողջունենք սիրով և մեր քրիստոնեական հավատքը և մեր ազգային ինքնությունը կապրենք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մեջ: Եթե այսօր, օծման այս հանդիսավոր առիթով, տոնական օրերին, Սուրբ Ծննդյան տոնին և կամ Զատկի տոնին պիտի գաք և մյուս կիրակիները այս եկեղեցին պարապ պիտի մնա, վա՜յ եկել է ձեզ: Այն ատեն շնորհավորելի ժողովուրդ չեմ ասեր, պատժելի ժողովուրդ կասեմ: Այն ատեն դուք ձեր հավատքի մեջ թուլացած կլինեք, և ինչ ուրախությամբ ես այստեղ ողջունում եմ երեք սերունդները, մեր հայրերի և մայրերի սերունդը, նրանք, ովքեր ճերմակը հագել են գյուխներին, նրանք, ովքեր տեսել են մեր ժողովրդի տառապանքը, շարդը, ցեղասպանությունը, տեսակ-տեսակ ճեղքությունները և այսօր, այդ սերունդի մեր ավագ հայրերն ու մայրերը թող ուրախանան և փառք տան Աստծուն, որ իրենց ազգը վերանորոգվել է, առանձին անկախ պետություն է դարձել, և անավասիկ հավատքի շունչը սկզբամ մը ևս տարածված է մեր ժողովրդի կյանքում: Մխիթարվեք, գորացեք, ուրախացեք, ավագ սերունդի հայրեր և մայրեր:

Երկրորդ, ես տեսնում եմ միջին սերունդի, չափահաս սերունդի մեծ չափով ներկայացուցիչները այստեղ, որոնք իրենք են կանգնեցրել այս եկեղեցին, իրենց ամբողջական աշխատանքով: Այդ միջին սերունդը կազմե իր հայրերի և կիսխանցի իր գավակներին: Եվ այդ սերունդը, որ իր քրտինքով, իր զոհողությամբ, ամեն տեղ իր բաժինը բերելով այս եկեղեցին կառուցեց: Ես շնորհավորում եմ այդ միջին սերունդին և ասում եմ՝ հառաջ գնացեք, Աստված մեկի տեղ տասը տա ձեզ, հող բռնեք՝ դառնա ոսկի, ուրիկին իսկ եք դուք՝ երիտասարդներ, պատանիներ, փոքրիկներ:

Երեկ տեսա ձեզանից ոմանք կիրակնօրյա վարժարանի բեմի վրա և հայոց հոգին գարնան շունչի պես ծաղկում էր և պիտ արև գա մեր հայոց աշխարհի նոր սերնդի կյանքում: Հետևաբար, դուք երեխաներ, դուք պիտի գաք եկեղեցի, պիտի բռնեք ձեր հայրերի և մայրերի ձեռքերից, պիտի ասեք՝ գնանք եկեղեցի, դուք եթե գաք, իրենք անպայման կգան:

Ծնողներ, այս երեխաների զարգացման համար ոչինչ մի խնայեք, սիրելի եղբայրներ և քույրեր, նրանք են մեր ապագային բացված աչքերը: Մենք անցյալին չենք նայիր միայն, այլ մենք կնայինք դեպի հայոց ապագան: Այդ իմաստով ես ողջունում եմ այս պատմական օրը և պիտի ասեմ՝ ամբողջ Օդեսա քաղաքին մեջ այսօր հայությունը կենտրոնական ուշադրության առարկա դարձավ, և դա դուք պետք է արժեցնեք ձեր հառաջիկայի կյանքով և պիտի այս եկեղեցին միշտ լեցուն լինի, որպեսզի մեր սիրելի բարեկամները՝ Ուկրաինացյի ազգի զավակները հարգեն մեզ, սիրեն մեզ և գործակցեն մեզ հետ:

Այսօր ես սրտի պարտք եմ զգում իմ խոր գնահատանքը հայտնել Ուկրաինայի մեր հայոց թեմի առաջնորդին՝ Գերապատիվ Տ. Նաթան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանին, որ սիրավառիկ իր առաջնորդության օրերին տեսավ այս եկեղեցու կառուցումը: Ասված տա, որ ուրիշ եկեղեցիներ ևս հետևեն, և մեր թեմը Ուկրաինայի օրհնյալ հոգի վրա առավել ևս ծաղկի: Ես շնորհավորում եմ և գնահատում եմ բոլոր նրանց, ովքեր, հոգևորական թե աշխարհական, լայն չափով թե քիչ չափով, բոլորը բերին իրենց մասնակցությունը այս եկեղեցու կառուցմանը: Թող իրենց հավատքը դառնա ուժի աղբյուր: Ես ցանկանում եմ այս առիթով իմ խոր եղբայրական սիրո ողջույնն ուղղել Ռուս Ուղղափառ Եկեղեցու միտրոպոլիտին և իրենց հոգևորականներին, բոլոր եկեղեցականներին, բոլոր հոգևորականներին, ովքեր մեր հոգևոր ուրախությունը բաժնեցին, և սա դարձավ համաքրիստոնեական ամբողջական մեկ վերածնության առիթ Օդեսա քաղաքում:

Ես այս բարձունքից դիտում էի ծովը, և ի՞նչ գեղեցիկ բնություն: Աստված տա, որ մեր հայրերի իբրև հավատքի կոթող, իբրև անլռելի զանգակատուն, որից հավատքն է տարածվում ամբողջ Օդեսա քաղաքի վրա: Ես իմ գնահատության խոսքն եմ ուղղում Օդեսայի կառավարիչին, որ այնքան հոգատար վերաբերումով գնահատում է մեր ժողովրդի զավակներին ամբողջ Օդեսայի հանրության մեջ: Ես իրեն այցելեցի երեկ և տեսա, թե ինչ համակրանք ունի, ինչ վստահություն ունի մեր ժողովրդի վրա: Ապրեք, որ դուք այդ գաղափարը և ներշնչումը տվել եք իրեն ձեր պարկեշտ կյանքով, քաղաքացիական բարձր գիտակցությամբ:

Ես ողջունում եմ նաև այն գեղեցիկ արարքը, որ Ուկրաինայի վսեմաշուք նախագահը իր առանձին ներկայացուցիչն է ուղարկել, որ այսօրվան մեր ուրախությունը բաժանի, Կիևից է եկել, և մենք հարգանք ենք ընծայում նրա իմաստությանը, նրա նվիրվածությանը, Ուկրաինայի Հանրապետության գարգացման, ամրացման և պողաբերման համար: Ասված աջողություն տա նրան, որպեսզի նա երկար շարունակի պահել խաղաղության մեջ բարգավաճության ընթացող Ուկրաինայի այս մեծ, պատմական հանրապետությունը:

Նաև մեր գնահատանքն ենք հայտնում, որ Կիևից եկել է Նախարարաց խորհրդի ներկայացուցիչը, և նա էլ կառավարության ուրախությունը և մասնակցությունն է բերում մեզի:

Սիրելիներ, այսպիսի աճուն շահելը պատիվ է ձեզ համար: Եվ մենք գիտենանք մեր շինարար գործով և ներքեւից շինարարությամբ և ազգային, քաղաքական, մշակութային, ընտերային, դրական գործերով այս վստահությունը արժեցնել Ուկրաինայի Հանրապետությանը:

Եվ ի՜նչ գեղեցիկ էր երեկ ինձ համար ողջունել այստեղ նաև Ղրիմի մեր այնտեղի Խորհրդարանի նախագահին և նրա փոխնախագահին, որ հայ ազգի մի զավակ է: Նրանք եկել են այսօր և Ղրիմի մասնակցությունն են բերում մեր ուրախությանը, ճոխացնում մեր ուրախությունը՝ համահայկական տարածք տալով նրան: Կգնահատեմ նաև իրենց մեծ արարքը:

Սիրելի եղբայրներ, մեզի հետ են և մեր Հայաստանի պետության ներկայացուցիչները, մեր Հայաստանի Հանրապետության հարգարժան դեսպանը և նաև ավագ փոխքաղաքապետը Երևանի, որ երեկ եկավ այստեղ, ստորագրեց Օդեսայի քաղաքապետի հետ միասին եղբայրական լծակցության և գործակցության մի համաձայնագիր, որի շնորհիվ, ես կկարծեմ, ավելի ամուր հարաբերություններ պիտի մշակվեն երկու քաղաքների միջև, և վայ ձեզի, եթե դուք Հայաստան չգաք: Եկեք, ախր եկեք այնտեղ, և ապա Արարատի տեսքը, Սուրբ Էջմիածնի օրհնությունը թող ձեզ լցնի, և գաք այստեղ, ձեր գավակներին բաշխեք այդ բոլորը: Ես պարտականություն եմ դնում մեր դեսպանի վրա, որ ինքը դյուրին միջոցներ ստեղծի, որ հաճախ գաք, և այս կամուրջը ոսկի կամուրջը դառնա Հայաստանի և Ուկրաինայի և Օդեսայի ու Երևանի միջև, նաև Սուրբ Էջմիածնի օրհնությունը տարածվի ձեր բոլորի վրա:

Անհավասիկ, թե ինչ ապրումներով այսօր մենք գերագույն ուրախության օր ենք ճանաչում այս օրը: Եվ այնպես, 26 նոյեմբերից հետո, դուք չեք կարող լինել այն, ինչ որ էիք 26 նոյեմբերից առաջ: Եթե այս եկեղեցիի օծումը արժեք ունի, կնշանակի, որ ձեր մեջ մի բան պիտի փոխվի դեպի լավը, դեպի բարին, դեպի ավելի ազնիվը, դեպի նվիրում, դեպի հավատք: Ամեն մեկը այստեղ կուգա, կուրախանա, բայց ուրախությունից հետո պարտականություն ունի: Եվ իր պարտականությունը կատարելով՝ առավել ևս պիտի ուրախացնի գալիք սերունդներին, մեր մատղաշ և նոր սերունդին:

Սուրբ հավատքի վրա, ժայռի վրա շինված եկեղեցին թող հավատքի ժայռ դառնա ձեր բոլորի մեջ, թող դառնա մի ժայռ, որպեսզի նրանից պտուղ գա հոգևոր, ազգային: Ինչպես Լևոն-Զավեն Սյուրմելյանն է ասում. «Մեռելներին իբրև խաչ ես այս ծառը տնկեցի»: Խաչի տեղ ծառ տնկեց, որ նոր կյանք տա մեր ժողովրդին: Մեր նահատակներին իբրև խաչ դուք Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին կառուցեցիք: Թող հավատքի աղբյուր դառնա, երկնքի ներկայությունը լինի ձեր կյանքի մեջ և թող Մայր Հայաստանի և Սուրբ Էջմիածնի ու ձեր եկեղեցիի միջև այն աբանչելի երկնակամարը, որ կա, միշտ լույս դառնա և դուք լույս առնեք և ուժ տաք ձեր հայությանը Աստուծո փառքի և Եկեղեցու պայծառության և մեր ազգի շենության և մեր պետության ամրացման համար հավիտյանս հավիտենից: Ամեն:

Հավարտ սույրբ և անմահ պատարագի, նորաօծ եկեղեցու բակում կատարվեց խաչքարի օրհնության հանդիսավոր արարողություն, որի ժամանակ ներկաներին իր հայրական պատգամ-խորհուրդը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը:

«Այս խաչքարը ընդունեցեք որպես ձեր երկրաշարժից վնասված մեր Գյումրի քաղաքի հայերի կողմից: Մենք գնահատում ենք նրանց այս հայտարարությունը և քրիստոնեավաճել արարքը, որ իրենց Օդեսայի եղբայրներին միանում են քրիստոնեական մեր հավատքի մեջ և իրենք էլ մասնակցում են Հայաստանի տուֆ քարի վրա գեղեցկորեն, արվեստի բարձր գիտակցությամբ և զգացողությամբ քանդակված խաչքարը ընծայելով, և ես վստահ եմ, որ դուք պիտի գաք եկեղեցի ամեն կիրակի, պիտի տեսնեք այս խաչը և խաչ պիտի հանեք և փառք պիտի տաք Աստծուն, որ այսպիսի ժողովրդի մեջ միշտ կենդանի է պահում մեր քրիստոնեական հավատքը: Ես ցանկանում եմ, որ նաև այս շրջափակը, որ այժմ դատարկ է, վաղը մշակութային կենտրոն լինի, ձեր երեխաների համար դպրոցական հարկ ստեղծվի, և հայերեն լեզուն միշտ հնչի այս բարձունքից: Այս ապաստմով, հույսով ես այժմ կատարում եմ հոգևորական իմ եղբայրների հետ միասին բացումը, օրհնությունը այս նվիրական խաչքարի»:

Խաչքարի օրհնության արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետն ընդունելությունների տան իր հարկաբաժնում պատասխանեց թղթակիցների հարցերին:

Մամլո ասուլիսից հետո, ժամը 15-ին, ընդունելությունների ընդարձակ սրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի տրված ճաշկերույթի, ներկա-300 հրավիրյալների մեջ էին տեղական իշխանության ներկայացուցիչներ, դեսպաններ, մտավորականներ, բարերարներ և այլ պատվարժան հյուրեր:

Հանուն Ուկրաինայի Հանրապետության նախագահ պարոն Կուչմայի, Վեհափառ Հայրապետին և հայ համայնքին ուղղված շնորհավորական խոսք ասաց նախագահի ներկայացուցիչ պարոն Լիտվինենկոն:

Վերջում Վեհափառ Հայրապետը, իր շնորհաբաշխ օրհնությունները բաժանելով ներկաներին, շնորհակալություն հայտնեց Ուկրաինայի պետության նախագահին, Օդեսայի նահանգի և քաղաքի պետական իշխանություններին՝ ազնիվ ու հարգալիր ընդունելության համար՝ մաղթելով հառաջադիմություն և բարգավաճում ազատ ու անկախ Ուկրաինայի Հանրապետությանը:

ՎԵՀԱՓԱՌԻ ԽՈՍՔԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԸ

Սիրելի հոգևոր եղբայրներ և թանկագին բարեկամներ, հայրենակիցներ, սեղանակիցներ,

Ես այս իրիկուն, այս սեղանի շուրջը բոլորված բարեկամների հետ պաշտոնական խոսքի, հրապարակային արտահայտության առիթ չէ, որ կունենամ, այլ մտերմիկ խոսքի, զրույցի պահ թող ունենանք:

Երեկ ես առիթ ունեցա պետական անձնավորությանց՝ նահանգապետին և քաղաքապետին այցելելու և իմ պաշտոնական խոսքը ասելու, նաև խոսեցի մեր ժողովրդի հետ, Օդեսայի մշակույթի տան սրահի մեջ: Եվ այսօր էլ իմ հայրապետական խոսքս ուղղեցի մեր ժողովրդին: Երբ հավաքված ենք այստեղ, սեղանի մը շուրջը, ես կհիշեմ առաջին քրիստոնյաները պատարագեն ետքը և այդ շերը, որ միասին կընեին բոլոր քրիստոնյաները պատարագեն ետքը և այդ ճաշը կկոչեին սիրո ճաշ՝ ագապե: Այդ ճաշը այնքան երկար չէր տևեր, որքան մեր այսօրվան ճաշը: Ասկե ետքը ոչ մեկը թող այլևս իրավունք չունենա գանգատվելու մեր եկեղեցական արարողության երկար լինելու համար;

Մեր եկեղեցական արարողության գոնե վեր կկենանք ոտքի, ապա կընստինք, իսկ այստեղ երեք ժամ է, ճստել եմ և ձեզ մտիկ կընեմ: Կեցցեք, որ այսքան երկար տոկալ գիտեք: Օր մը Ամերիկայի մեջ դարձյալ հավաքույթ մը կար, և խոսողներու շարքը բավական երկար գնաց, և հետո կամաց-կամաց ժողովուրդը դո րս գնաց: Մնաց, մինչև վերջին մարդը խոսի: Մեկ հոգի մնացել էր ամբողջ սրահին մեջ: Խոսողը կդառնա ճառողին և կհարցնե.

— Դու ինչո՞ւ մնացիր սրահին մեջ:

Անիկա կըսե՝ ես հաջորդ խոսողն եմ:

Հիմա դուք այսքան տոկացիք: Այդ ինչ ես կնկատեմ ձեր սիրտ և կապվածության արտահայտությունը հանդեպ մեր Եկեղեցվո, Ուկրաինայի և Օդեսա քաղաքին: Ես կուզեի իմ խոսքիս մեջ մի անգամ ևս իմ շնորհակալությունները հայտնել մեր Եկեղեցու անունով, ամբողջ Հայ Եկեղեցու անունով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անունով բոլոր այն անձնավորություններին, ովքեր այստեղ կներկայացնեին ուկրաինական և եկեղեցական իշխանությունները և ովքեր ազնվություն ունեցան իրենց այնքան արտաքուստ արտահայտությունները ունենալու այս հանդիսավոր առիթով: Բնականորեն ես եթե բոլորի համար ճվերներ բերած ըլլայի, հավանաբար Հայաստանը սնանկության կմատնվեր: Բայց երեկ ես ճվերներ տվի թե՛ նահանգապետին և թե՛ քաղաքապետին, և որովհետև այսօր մեր մեջ կգտնվի Ուկրաինո նախագահին ներկայացուցիչը, կուզեմ իրեն տալ այն, ինչ որ մեր Եկեղեցու ամենեն թանկագին գանձերն են՝ «Էջմիածնի գանձերը» գիրքը: Կուզեի կառավարության ներկայացուցչին մի փոքրիկ հիշատակ թողուլ, որ երբ ոչ երթա Կիև, իրեն կառավարությանը ներկայանա, ըսե, որ եթե օր մը Հայաստան այցելեն, ավելի մեծ բաներ կտեսնեն:

Մնացածները հետո կտամ:

Սիրելի սեղանակիցներ, ես այսօր ինքզինքս հարստացած կզգամ: Երբ որ վերադառնամ Էջմիածին, ավելի զորացած պիտի զգամ ինքզինքս ձեզմով:

Երբ այստեղ կուգայի, ուզեցի քիչ մը պատմությունը ուսումնասիրել՝ տեսնելու համար, թե ինչ են եղած մեր հայրերը այստեղ՝ Օդեսայի մեջ: Եվ մանավանդ, թե ինչ է եղած Էջմիածնի կաթողիկոսներուն և Օդեսայի հայության կապը: Մեկ դրվագ միայն գտա, այն է, որ 1893-ի սեպտեմբերի 21-ին այս ճավահանգիստը իջած է Խրիմյան Հայրիկը, մեր ամենեն մեծ հայրենասեր ճվիրյալ Կաթողիկոսը: Երուսաղեմեն կուգար և Էջմիածին կերթար՝ այնտեղ կաթողիկոս օծվելու համար: Առտուն եկավ և երեկոյին թողեց գնաց, այստեղ չկրցավ գիշերել նույնիսկ: Եվ այն բառերը, որ այստեղ խոսեց 103 տարիներ առաջ, այդ բառերն է, որ հիմա պիտի խոսիմ ձեզի և պիտի զգաք, թե ժամանակը և աշխարհագրությունը ոչինչ կփոխե հոգիի զորության մեջ: Ո՞ւր են այն մարդիկը, որ այն ատեն Կաթողիկոսը դիմավորեցին: Անպայման երկինքին մեջն են:

Այն ատեն Խրիմյան Հայրիկը այդ փոքրաթիվ Օդեսայի հայերին ըսել էր.

«Դուք կիմեք իմ կենաց, այդքան «կեցցե»-ներ կկանչեք, ես էլ կառաջարկեմ խմել հայ ժողովրդին կենաց: Հայրիկ առանց ժողովրդի Հայրիկ չէ. Ես ձեզմով կապրեմ. Հայրիկի կյանք ժողովրդինն է»:

Բարեկամներ, ես ուրիշ ավելի ուժեղ բառեր չեմ կրնալ գտնել՝ զգացումները այս իրիկուն արտահայտելու համար: Իմ սիրելի եղբայրը՝ Ագաֆանգել մետրոպոլիտը, և բոլոր եկեղեցական իմ բարեկամները գիտեն, որ եկեղեցի կնշանակե «հավաքատեղի»: Ժողովուրդը, եկեղեցին Աստուծո ստեղծած

մարդերուն հավատքով միությունն է: Հետևաբար, պատմությունը երկու գիծով կանցնի, մեկը, որ կերթա դեպի հավիտենականություն և վերջ չի գըտներ, և մյուսը, որ ժամանակի ընթացքին կուգա և կերթա: Ես եկա, պիտի երթամ: Հայրիկը եկավ, գնաց: Ձեր հայրերը եկան, գացին: Դուք ալ եկած եք և պիտի երթաք օր մը, բայց հոգին պիտի մնա, ազգը պիտի մնա, եկեղեցին պիտի մնա: Այսօր 26 նոյեմբերին Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցու օծումը հայոց պատմության մեջ անցավ որպես հավիտենական մեկ հանգրվան՝ անցյալեն մեզ դեպի ապագան կապող, որին օղակները կըկոտրվին, կավելնան, կպակսին, բայց շղթային թելն է կարևորը, որ օղակները իրար կկապե: Այդ հոգին է, հանդիսական այդ սիրտն է, այդ հայրենիքն է, ադիկա պետություն է, որ մեզ օղակներու նման կկապե և այդ գործությունը այդ կապին մեջ է: Հանեցեք կապը, չկա շղթան:

Ես կհավատամ, որ մենք կանցնինք մեր պատմության ամենեն վըճռական, ամենեն բախտորոշ մեկ ժամանակին մեջեն և ադոր մեջ յուրաքանչյուր հայ, որ երկնքի տակ ալ որ ապրի, Հայաստանին երկնքի տակ կամ արտասահմանի որևէ անկյունին մեջ, ամեն մեկը ինքզինքը այդ շղթային, անմահության շղթային օղակը զգա:

Ես կուզեի հետևյալն ասել ձեզ. այն, ինչ որ մեզ կմնա, այն չէ, ինչ որ ենք և ինչ որ ունինք: Աստված տված է մեզի, մենք անոր տերը չենք, մենք անոր տնտեսն ենք: Ինչ որ մենք Աստուծո մեզի տվածեն կընենք և իրեն կվերադարձնենք, այդ է մերը: Այսինքն՝ պարզ խոսքով խոսիմ, թե ինչ կարողություն ունինք, ատիկա Աստված է հեղինակը: Եթե Աստված մեզի աչողջություն չտա, կյանք չտա, միջոց չստեղծե, ժամանակ չտա, հող չտա, ստեղծագործությունը չըներ, մենք ինչ պիտի կարենայինք ընել, ոչինչ: Ամեն ինչ իրեն կպարտինք: Աստված գիտե, թե ինչ ենք և ինչ ունինք և օր մը մեզի չպիտի կանչե Աստված և ըսե. «Տո՛ւր, ինչ որ ես քեզի տված էի», այլ պիտի ըսե. «Տո՛ւր այն հաշիվը, զոր դուն ըրիր իմ տվածիս միջոցավ: Ես քեզի մեկ տվի, դուն տասը ըրիր, ապրի՛ս ,ծառա, ես քեզի մեկ տվի, հինգ ըրիր, ապրիս, ծառա»: Իսկ մեկը, որ ըսե՝ ով Տեր, ինձի մեկ տված էիր, պահեցի, անվավասիկ քեզի կվերադարձնեմ, պիտի ըսի՝ անպետք ծառս, դուն որ չէիրցար քեզի տվածս իրականացնել, արժեցնել, դուն արքայության չես կրնար մտնել: Ավետարանին խոսքն է ասիկա:

Հետևաբար, դուք այսօր եկեղեցի շինեցիք: Ձեր եղածեն, ձեր ունեցածեն Աստուծո ընծայեցիք: Այն է, որ ձեզի պիտի անմահացնե, թե ինչ հագեր եք, թե ինչ խմեր եք, թե ինչ կերեր եք, թե ինչ տուն ունեցեր եք, ատիկա ի՞նչ արժեք ունի, ո՞վ կմտածե այսօր, թե Գրիգոր Լուսավորիչը ինչ կուտեր, ինչ կհագներ: Ո՞վ կմտածեր, թե Մեսրոպ Մաշտոցը ինչ կալվածք ուներ, ինչ տուն ուներ: Ո՞վ կմտածե այսօր, թե Տրդատ արքան ինչ ուժ ուներ, ինչ բանակ ուներ: Ինչ որ տվավ անմահության, այնպիսի արժեքներու, որ վերջ չունի, իրենք անոնցմով հարստացան: Ըսե ինձի, ինչ բանի դրամ կուտաս, ըսեմ քեզի ով ես դու: Ինչպես ըսված է՝ ըսե ինձի՝ ով է ընկերդ, ըսեմ քեզի՝ ով ես դուն: Այնպես ալ կըսեմ ես՝ ըսե ինձի՝ ինչ բանի արժեք կուտաս, դուն անոր մեջն ես, ավետարանական խոսքն է. «Զի ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին»: Հոն, ուր գանձ կտեսնեք, հոն է ձեր սիրտը: Եվ այսօր փակեմ իմ խոսքս, սիրելի եղբայրներս և քույրերս, օդեսաբնակ հայերու ընելով հետևյալը՝ վահան Թեքեյանի բառերը գործածելով.

Ի՜նչ մնաց, կյանքեն ինձի ի՞նչ մնաց,
Ինչ որ տվի ուրիշին, տարօրինակ, այն միայն:

Իմ ուսուցիչներս ինձ հոգի տվին, իրենք ինձմով ապրեցին, իմ հայրն ու մայրը ինձի գաղափար տվին, անով ապրեցան: Ինչ որ կուտան, տվածին մեջ կապրին: Ազնիվ բանի տուր, որպեսզի ազնիվ մնաս: Հավիտենական բանին տուր, որ հավիտենական մնաս: Երբ որ մահը գա քեզի, և տանի իր գիրկը և չկարենա տանիլ այն, ինչ որ տարվելի չէ, որոնք հոգեկան արժեքներն են՝ Եկեղեցին, ազգը, մշակույթը, գիրքը, հայրենիքը, մեկ խոսքով՝ անոնք, որոնք պատմությունը կկերտեն մեզ նման:

Հետևաբար, կշնորհավորեմ ձեզ, որ այս Եկեղեցին կառուցիք և հայոց պատմության գնացքին մեջ քայլ մը դրիք: Ես կսպասեմ ձեզմե, որ ամեն մեկդ ինքզինքը արժեցնե, չվատնե իր կարողությունը, իր շահը, իր քրտինքը չվատնե, արժեցնե իր կարողությունը՝ տալով: Ի՞նչ կնշանակե մեկը լավ ձայն ունենա երգելու համար և ըսե՝ ես չեմ երգեր: Մեկը խելք ունենա և ըսե՝ ես չեմ խոսիր: Մեկը տաղանդ ունենա գրական և ըսե՝ ես չեմ գրեր: Մեկը քաջություն ունենա և չնրթա հայրենիքը պաշտպանե: Թքել եմ իր և իր կարողության վրա էլ: Կվերջացնեմ՝ ըսելով. Աստված ձեզմե հաշիվ չպիտի պահանջե իր տվածին համար: Աստված ձեզմե հաշիվ պիտի պահանջե ձեր իրեն տվածի համար, իր տվածին վրա ձեր ըրածին համար:

Խաղաղ ապրիք, հազար ապրիք, եթե այսպես կապրիք՝ եկեղեցի շինելով, դպրոց բանալով, մշակույթի կենտրոն ստեղծելով, լեզուն պահելով և Ուկրաինական հայրենիքին ձեր հայրենիքին բաժինը բերելով:

* * *

Ավարտելով հովվապետական իր այս այցելությունը, նոյեմբերի 27-ին, տեղական ժամանակով ժամը 14.00-ին, Վեհափառ Հայրապետը Օդեսայից, իր շքախմբի հետ միասին, վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՒԵՐ ԱՅՑԼ ԱՐԱՐԱՏՑԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Հայրենիքում գործող Հայրենակցական միությունների ընդհանուր խորհրդի խնդրանքով դեկտեմբերի 17-ին քաղաքամայր Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում մատուցվեց հոգեհանգստի ս. պատարագ՝ Օսմանյան Թուրքիայի կողմից Առաջին աշխարհամարտի ժամանակ իրագործված ցեղասպանութ.ան զոհ մեր ժողովրդի զավակների հիշատակին:

Մարդաշատ էր Ս. Սարգիս եկեղեցին այդ օրը: Հոգևոր մխիթարության զգացումը պարուրել էր ամենքին, քանզի եպիսկոպոսական այդ պատարագին մասնակից հավատավոր մեր զավակներին իր բարեհաճ այցին արժանացրեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Սուրբ պատարագը մատուցում էր Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը, որը «Տերունական աղոթք»-ից առաջ թեմի հովվապետական ընտանիքի անունից բարիգալստյան ու որդիական երախտիքի խոսքեր ուղղեց Հայոց Հորը շնորհարեր այցի համար և, դիմելով հավատացյալ ժողովրդին, հորդորեց աղոթք հղել առ Արարիչն Ամենած՝ վասն Վեհափառի կենաց արևշատության և ձեռնց բոլոր գործերի հաջողության:

Այնուհետև Սրբազան Հայրը հրավիրեց Վեհափառ Հորը և խնդրեց իր Հայրական օրհնություն ու Հայրապետական պատգամը տալու հավաքվածներին:

Վեհափառը գոհունակության ու գնահատանքի խոսքեր ուղղեց Հայրենակցական միության խորհրդին՝ նմանօրինակ միջոցառումներ կազմակերպելու և ցեղասպանության 80-ամյա տարելիցի ավարտի այս օրերին հայ ժողովրդի հարության հրաշալի խորհուրդը մեր անեռակեաց առջև դնելու համար, ողջունեց նաև Արարատյան հայրապետական թեմին՝ այս իրադարձության հյուրընկալը լինելու կապակցությամբ: Նորին Սուրբ Օծությունը նշեց, որ ինքը հնարավորություն չունեցավ մասնակցելու Հայրենակցական

միությունների կազմակերպած բոլոր տոնակատարություններին, որոնք բացառապես ձվիրված էին իրենց կորսված հայրենիքի հիշատակին ու նոր հայրենիքի վերածննդին: Բայց այսօրվա պատասխանատու պահին «ցանկանալով ցանկացավ» ներկա գտնվել ու բաժանել բոլորիս ապրումները, որոնք «հոգեկան կյանքի բարձրակետը լինելու կոչված ապրումներն են»: Կարևորելով, որ մենք համախմբվել ենք ոգեկոչելու հիշատակը ավելի քան 1,5 մլն. մեր զոհերի, հավաքվել ենք հիշելու նրանց, Վեհափառը շարունակեց, որ «մենք պարտ ենք ոչ միայն լոկ մտաբերել, այլ նաև հաղորդվել նրանց» և, նոր ուժ ու մղում ստանալով, «անցյալը ներկա դարձնել», մեր այսօրն ապրելու դասը սովորել», «քանզի նրանք ներկա են ապրողներիս մեջ, ու թեև մեռան, սակայն չկորան»: Սա է խորհուրդը «հիշել» գաղափարի, ընդգծեց Վեհափառ Հայրապետը:

Այնուհետև Հա՛յոց Հայրապետն ավելացրեց, որ ինչպես հին մյուռոնը, լցվելով նորի վրա, նոր կյանք է տալիս մեզ բոլորիս, այնպես էլ մեր նահատակների սուրբ հիշատակը, անցյալից գալով, շաղախվելով ու խմորվելով մեր մեջ, ուժ ու կորով է հաղորդում մեզ: Մենք տևտես ենք այս աշխարհում ու պարտավորություններ ունենք Աստծո, Եկեղեցու և ազգի, մշակույթի ու մարդկության առաջ: Ու երբ մի որևէ պարտականություն ենք կատարում, հիշենք Ավետարանի պատգամն ու ասենք. «Մենք անպիտան ծառաներ ենք, ինչ պարտ էինք անել, արեցինք ո՛չ թե մեր փառքի, ո՛չ թե մեր անունի կամ շահի համար, այլ առ Աստված մեր պարտականության համար», և շատ էլ չխոսենք իրավունքի մասին, որը միայն Աստծունն է, այլ մտածենք մեր պարտավորությունների մասին, քանզի «պարտականության միջից է միայն, որ մենք իրավունք կունենանք իրավունք ունենալու», և հիշենք, որ մեր հայրերն իրենց կյանքով իրենց պարտքը վճարեցին Աստծուն:

Վերջում Վեհափառ Հայրապետը փառք տվեց Աստծուն, որ ձախողվեց թշնամու «Հայաստանն առանց հայի» թողնելու ծրագիրը: ...Այսօր, փակելով ցեղասպանության 80-ամյակի տարին, մահվան միջից կյանքի պատգամն ու հարության շունչը, մահվան դեմ հաղթանակի ու կյանքի հավերժության շունչն է փոխանցվում մեր ժողովրդին: Առաջ գնանք՝ դեպի կյանք, ու կ՚անքով պատասխանենք ցեղասպանությանը, քանզի ազատ ու անկախ Հայաստանն այսօր ցեղասպանության պատասխանն է:

Նորին Սուրբ Օծությունը, ավարտելով իր խոսքը, հորդորեց նոր պետականության պայմաններում նորոգվել և ուխտել. «Ցեղասպանությունից նոր ուժ քաղել, նոր կյանքով լցվել», ու վա՜յ մեզ, եթե չնորոգվենք ու չվերափոխվենք, հույսի, լույսի մեր այս հայրենիքում չդառնանք հոգու ժողովուրդ: Հայոց Հայրապետը պատգամեց՝ չվախենալ դժվարություններից ու նայել ապագային՝ «վասն Աստծո փառքի, վասն շինության մեր Հայրենիքի, վասն անսասանության մեր պետության և վասն պայծառության Եկեղեցվուս Հայաստանյայց»:

ՍՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ
Արարատյան հայրապետական թեմի
Քարոզչական կենտրոն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՌՉԱԿԵԼՈՒ 1700-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայոց դարձի 1700-ամյակը թե՛ մեր կյանքում արժևորելու ու արժեցնելու և թե՛ միջազգային հնչեղությամբ նշելու աշխատանքները համակարգելու, ծրագրյալ հունի մեջ դնելու և որոշակի ժամանակացույցով հաստակորեն իրականացնելու համար 1995 թ. սեպտեմբերի 27—29-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի ժողովների փոքր դահլիճում, գումարվեց «Հայաստանում Քրիստոնեության պետական կրոն հռչակման Հայ Եկեղեցու Կենտրոնական Հանձնաժողովի» առաջին ժողովը՝ նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն. Ս. Օ. Տ. Տ. Սրամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, ատենապետությամբ Ն. Ա. Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Ն. Ա. Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանի, ատենադպրությամբ Տ. Եզնիկ ծայրագույն վրդ. Պետրոսյանի և Տ. Վարուժան ծայրագույն վրդ. Հերկելյանի:

Կենտրոնական հանձնաժողովի կազմում, բացի Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների չորս գահակալներից, ընտրված էին. Ամենայն Հայոց Կաթողիկոսությունից՝ 12, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից՝ 8, Երուսաղեմի Պատրիարքությունից՝ 2, Կ. Պոլսի Պատրիարքությունից՝ 2, հոգևորական և աշխարհական հետևյալ անդամները.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյան
Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյան
Գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյան
Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Արիստակեսյան
Գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Գըլըճյան
Հոգեշնորհ Տ. Եզնիկ ծ. վարդապետ Պետրոսյան

Հոգեշնորհ Տ. Միքայել ծ. վարդապետ Աջապահյան
Արժանապատիվ Տ. Ներսես քահանա Ներսեսյան
Պրն. Պիոն Հակոբյան
Պրն. Հակոբ Փափազյան
Պրն. Գրիգոր Խանջյան
Պրն. Վլադիմիր Բարխուդարյան

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Գերաշնորհ Տ. Արտակ արքեպիսկոպոս Մանուկյան
Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան
Գերաշնորհ Տ. Կորյուն արքեպիսկոպոս Պապյան
Գերաշնորհ Տ. Զարեհ արքեպիսկոպոս Ազնավորյան
Գերաշնորհ Տ. Օշական եպիսկոպոս Չոլոյան
Հոգեշնորհ Տ. Վարուժան ծ. վարդապետ Հերկելյան
Մեթր Խաչիկ Պապիկյան
Պրն. Ոսկեբերան Արզումանյան

ԵՐՈՒՆԱԼԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԻՑ

Գերաշնորհ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյան
Գերաշնորհ Տ. Սևան եպիսկոպոս Ղարիբյան

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԻՑ

Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյան
Պրն. Պարույր Մուրադյան

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Հոգեշնորհ Տ. Գրիգոր վրդ. Մաքսուդյան:

Ժողովը սկսվեց Տերունական աղոթքով և «Որք զարդարեցին տնօրինաբար» Սրբոց Թարգմանչաց ձվիրված շարականով:

Վեհափառ Հայրապետը տարբեր առիթներով բազմիցս շեշտել է, որ 1700-ամյակի նշումը հպարտության, ինքնափառավորման փոխարեն պետք է դառնա 1700-ամյա մեր քրիստոնեական ժառանգությունը լուսարձակի ներքո դնելու մի սքանչելի պատեհություն, որ այդ ժառանգության հոգևոր արժեքների վերակենդանացումը լինելու է մի նոր ոոոգում, նոր ջրոուք մեր այսօրվա և վաղվա կյանքում, իսկ հետադարձ նայվածքը անցյալին պետք է վերածվի առաջահայաց մղումի, զարգացման, զրպացման՝ վերանորոգության շարժումի փոխակերպելով տոնակատարությունների շրջագծում գտնվող մեր բոլոր աշելիքները: Այս իրողությունը մեկ անգամ ևս ընդգծեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը ժողովի բացման խոսքում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆԸ

Հոգևոր եղբայրներ, հարգարժան աշխարհական ազգայիններ,

Կխորհիմ, որ բոլորիս համար այս պահը կզգացվի որպես կարևորագույն պահերեն մեկը մեր այս տարվան և նաև գալիք տարիներու կյանքին մեջ, ոչ թե անհատական մեր կյանքերուն մեջ միայն, այլ նաև մեր Եկեղեցվո և ազգի, հայրենիքի կյանքին մեջ:

Անհավասիկ կգտնվինք պատմական պահի դիմաց: Ավելի քան տարիներ ի վեր բոլորիս մտքին մեջ ներկայություն դարձած է մեր Եկեղեցվո պաշտոնական հիմնարկության կամ քրիստոնեական կրոնի, որպես ազգային կրոն հռչակման, պետական հռչակման 1700-ամյակի գաղափարը: Այս կապակցությամբ թե՛ բերանացի և թե՛ գրավոր արտահայտությամբ եղան տեսակետներու, ծրագրերու, հասաջիկայի տեսիլքներու, անելիքներու մասին արտահայտություններ, գրվեցան գրքույկներ, հրատարակվեցան հոդվածներ, և մենք անցյալ տարի մայիսին Ամենայն Հայոց Կաթողիկոս երջանկահիշատակ Վազգեն Առաջինի, Կիլիկիո Կաթողիկոսի, երկու Պատրիարքներու հետ ունեցանք խորհրդակցություն մը և այդ խորհրդակցության մեջ հիմնաքանորեն ճշտելով մեր ընդհանուր ընելիքը իբրև Եկեղեցի Հայոց, այն ատեն հանձն առինք, որ կազմվի մեկ հանձնախումբ՝ Հայ Եկեղեցին իր 1700-ամյակի առիթով ընելիքները ճշտելու և գործադրելու առաքելությամբ: Դժբախտաբար Վազգեն Առաջին Վեհափառ Հայրապետի առողջական ծանր վիճակը մայիսեն մինչև օգոստոս և ապա ի Տեր փոխվելը, առժամանակ հետաձգեց այս աշխատանքը:

Անհավասիկ մեր ընտրութենեն ետքը որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս պարտք համարեցինք գործակցաբար Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի Պատրիարքներուն հարմար նկատեցինք, որ սկսինք և գործի ու կյանքի կոչենք այն կենտրոնական հանձնախումբը, որուն կառուցվածքը արդեն նկատի առնված էր մեր անցնող տարվան մայիսից: Եվ ուրախ եմ անհունորեն և երախտապարտ եմ Աստուծո, որ մեզի տվավ կարելիությունը այս ժողովը գումարելու Ս. Էջմիածնի Մայր Աթոռին մեջ, մեր բոլորիս ցանկության համապատասխան տարողության, լրջության և պատասխանատվության: Անհավասիկ կգտնվինք այն հանգրվանին վրա, որ մեր ժողովուրդը այս օրերին մեզ կնային հոս, թե ինչ պիտի անի Հայոց Եկեղեցին այս քացառիկ առիթով, որովհետև ոչ մեկ ուրիշ Եկեղեցիի, կազմակերպյալ Եկեղեցիի տրված չէ այս մեհաշնորհը, այս րախտը Աստուծմե՝ կարենալ 1700-ամյակ տոնել: Մեզի կնային նաև օտար Եկեղեցիներեն և օտար ազգերեն, և ասիկա տեսակ մը փորձաքար պիտի ըլլա մեր Հայոց Եկեղեցիին իր ինքնությունը, առանձնահատկությունները, առաքելությունը և ամբողջ պատմական ժառանգության հարատևությունը վերակենդանացնելու, վերարժևորելու, որպեսզի կարենանք մենք ևս ըսել, որ Քրիստոս մեզ վստահած է իր առաքյալներուն և մեր առաքելությունը, որ Քրիստոս մեզ վստահած է իր առաքյալներուն և մեր առաքելությունը, այդ առնքելությունը ի գլուխ հասցնել նոր Լուսավորչի միջոցով, այդ առնքելությունը ի գլուխ արդյունավետ կերպով, արդյունավետից կերպով և մեր ժողովրդի բարձրագույն ատենաշրջանի օգտաշատ եղանակով:

Անհավասիկ մեր ընտրութենեն ետքը որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս պարտք համարեցինք գործակցաբար Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի Պատրիարքներուն հարմար նկատեցինք, որ սկսինք և գործի ու կյանքի կոչենք այն կենտրոնական հանձնախումբը, որուն կառուցվածքը արդեն նկատի առնված էր մեր անցնող տարվան մայիսից: Եվ ուրախ եմ անհունորեն և երախտապարտ եմ Աստուծո, որ մեզի տվավ կարելիությունը այս ժողովը գումարելու Ս. Էջմիածնի Մայր Աթոռին մեջ, մեր բոլորիս ցանկության համապատասխան տարողության, լրջության և պատասխանատվության: Անհավասիկ կգտնվինք այն հանգրվանին վրա, որ մեր ժողովուրդը այս օրերին մեզ կնային հոս, թե ինչ պիտի անի Հայոց Եկեղեցին այս քացառիկ առիթով, որովհետև ոչ մեկ ուրիշ Եկեղեցիի, կազմակերպյալ Եկեղեցիի տրված չէ այս մեհաշնորհը, այս րախտը Աստուծմե՝ կարենալ 1700-ամյակ տոնել: Մեզի կնային նաև օտար Եկեղեցիներեն և օտար ազգերեն, և ասիկա տեսակ մը փորձաքար պիտի ըլլա մեր Հայոց Եկեղեցիին իր ինքնությունը, առանձնահատկությունները, առաքելությունը և ամբողջ պատմական ժառանգության հարատևությունը վերակենդանացնելու, վերարժևորելու, որպեսզի կարենանք մենք ևս ըսել, որ Քրիստոս մեզ վստահած է իր առաքյալներուն և մեր առաքելությունը, որ Քրիստոս մեզ վստահած է իր առաքյալներուն և մեր առաքելությունը, այդ առնքելությունը ի գլուխ հասցնել նոր Լուսավորչի միջոցով, այդ առնքելությունը ի գլուխ արդյունավետ կերպով, արդյունավետից կերպով և մեր ժողովրդի բարձրագույն ատենաշրջանի օգտաշատ եղանակով:

Ես պիտի չուզեմ իմ խոսքս երկարեմ, կուզեմ միայն հիմնականորեն երկու էական կետերու անդրադառնալ: Այս ժողովին առաքելությունը իմ ըմբռնումովս բացատրելու շատ հակիրճ և գործով:

Ի՞նչ է մեր բուն նպատակը, ի՞նչ է մեր սևեռակետը, ինչպես մեր Հայաստան աշխարհի մեջ շատ են գործածում այս բառը՝ կիզակետը: Ի՞նչ է, որ մենք կփնտրենք այս բոլորով: Ես պիտի ուզեի, որ այս հարցը դառնա առաջին նյութը մեր խոսակցության, ինչպես օրակարգի մեջ ալ առաջարկվեց: Մեր ժողովրդի վերազարթնումը քրիստոնեական հավատքին մեջ, մեր ժողովրդի ներքին կյանքի վերապրում, հոգևոր կյանքի վերազարթնում, մեկ խոսքով՝ 1700-ամյակը ինչպես պիտի թարգմանվի, ապրվի մեր ժողովրդի կյանքին մեջ, մեր Եկեղեցվո հավատացյալներու կյանքին մեջ: Ակնթի պարզ և կտրուկ ձևով ըսեմ: Բա՛ն մը պիտի փոխենք Եկեղեցիի, ժողովրդի կյանքի մեջ դեպի լավ, դեպի ավելի ուժական, դեպի ավելի բարերար: Ահավասիկ առաջին հարցը, որ կդնեմ:

Երկրորդ, այս առնչությամբ, թե ինչպես պիտի աշխարհը ըմբռնե մեր 1700-ամյա ջանը: Երրորդ, թե Հայաստանը ինչպես իր քրիստոնեական նըկարագիրը պիտի դրսևորե այս առիթով: Այս երկրի մեջ դուք ալ ինձի չափ, և եթե ձեզմե շատերը ինձմեից լավ գիտեն, ո՛ր կողմը որ դառնանք, քրիստոնեության ներկայությունն է, բայց այդ ներկայությունը կա՞ աշխարհի ազգերու, Եկեղեցիներու գիտակցության մեջ: Մասնագետներու՝ այո, բայց մասնագետները Եկեղեցու պատմության, աստվածաբանության, արվեստի, մշակույթի, անոնք չեն, որ մենք ունինք մեր մտքերու մեջ, այլ պետությունները, ժողովուրդները, հաստատությունները, պարզ խոսքով՝ աշխարհը այնտեղ, ուր ինքզինքը կարտահայտե իր լավագույն եղանակներովը:

Երկրորդ հարցը, որու մասին պետք է արտահայտվինք, եթե հաստակորեն ըմբռնենք այս նպատակը. ի՞նչ պետք է անենք այդ նպատակի իրագործման համար, բովանդակությունը մեր ընելիքի, ի՞նչ ուեսակ ձեռնարկումներ, շարունակական աշխատանքներ, որոշել մեր ընելիքը, բովանդակությունը տոնակատարության: Եվ երրորդ, պետք է անդրադառնամ այն իրողության, թե ինչ միջոցով կրնանք ընել այն, ինչ որ կծրագրենք հասցնելու համար այն նպատակին, ինչ որ կառաջադրենք: Երրորդ շրջագիծը, որու մեջ պետք է խոսինք, ադիկա կառուցվածքային եղանակ գտնել, գործնական մտքով, թե ինչպես կրնանք մեր ծրագրած անելիքները իրականացնել: Վերջապես, պետք է նաև մտածենք, որ մեր այս ճիգը պետք է լինի զուտ հայկական ճիգ, թե նաև պետք է ունենա համաշխարհային տարողություն:

Մենք բախտավոր ազգ մըն ենք այն տեսակետով, որ ոչ միայն հայրենիք ունինք, այլ նաև Սիյոնք ունինք, արտասահման: Ես Վրաստանին շատ կդառնամ, և վրացիները կնախանձին կրնամ ըսել, չակերտներու մեջ դնելով բառը, ըսելով, թե դուք այդքան հզոր ներկայություն մը ունիք աշխարհի մեջ, որ կկոչենք Սիյոնք: Եվ հետևաբար, մենք այս մեր 1700-ամյակի նշման մեջ ինքնահիպարտության, պանծացման այդ սովորական և փորձիչ մտածողություններեն դուրս գանք և տեսնենք, թե ինչպես կրնանք օտար Եկեղեցիները, օտար պետությունները, օտար ժողովուրդները, օտար ակադեմական, մշակութային, մտավորական կազմակերպությունները ներառնել և մասնակից դարձնել մեր այս համազգային, համահայկական ճիգին:

Հետևաբար, բառը եթե երբեք օտար չհնչի, էկյումենիկ տարողություն պետք է տանք և ոչ թե որիշները մենք ըմբռնենք իրրև հանդիսատես, հետևող, շատ-շատ՝ մասնակցող, բայց լուսանցքային: Ինչպես կրնանք գիտակով այս 1700 տարվան մեր հավատարմության միջոցավ, ստեղծագործականության միջոցավ՝ հակառակ մարտիրոսության հասնող մեր ժողո-

վըրդյան: Ասիկա ամբողջ աշխարհի ուրախությունը պետք է ըլլա: Ոչ թե միայն դիտեն, այլ նաև իրենք ալ մասնակից դառնան այս մեծ ճիգին:

Անավասիկ, եղբայրներ և բարեկամներ, թե ինչ մտածումներով ես կոչված բացված հայտարարել աչս մեր առաջին նիստը, և քիչ ետքը կբաժնվի ձեզի նաև ժամանակացույցը:

Իր ողջույնի խոսքի մեջ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն շեշտեց, որ 1700-ամյակը լավագույն առիթն է ինքնաքննության, վերանորոգման, միասնականության և օտար ազգերին լավապես ներկայանալու:

Ողջույնի խոսք ուղղեցին նաև Տ. Թորգոմ և Տ. Գարեգին Պատրիարքները:

Ստորև ներկայացվող օրակարգով չորս նիստերով ժողովը քննեց տոնակատարության հիմնական նպատակը, բովանդակությունը, կազմակերպչական հարցեր:

1. **Տոնակատարության հիմնական նպատակը.**

ա) Հայց. Առաքելական Եկեղեցու ներքին կյանքի վերանորոգում, հոգևոր վերազարթոնք.

բ) Հայց. Եկեղեցու 1700-ամյա ժառանգության ճանաչում արտաքին աշխարհին.

գ) Հայաստան աշխարհի քրիստոնեական երկիր լինելու նկարագրի պատկերացում:

2. **Տոնակատարության բովանդակությունը.** ի՞նչ ձեռնարկներ կատարել՝ հասնելու համար վերը նշված նպատակներին:

3. **Ինչպե՞ս կազմակերպել և գործնականացնել կատարելի աշխատանքները** թե՛ հայ ժողովրդի կյանքի և թե՛ համաշխարհային մակարդակների վրա:

4. **Ուրիշ Եկեղեցիների և ազգերի ու միջազգային, միջեկեղեցական և մշակութային կազմակերպությունների ներառում և մասնակցության ապահովում տոնակատարության ծրագրումի և կատարումի հանգրվանների վրա:**

Ա նիստին քննարկվեց օրակարգի առաջին բաժինը իր երեք կետերով: Արվեցին հետևյալ առաջարկությունները.

1) Հայց. Առաքելական Եկեղեցու ներքին կյանքի վերանորոգում, հոգևոր վերազարթոնք.

Ժողովուրդը կարիք ունի կրոնական գիտելիքների: Առ այդ առաջարկվեց.

ա.—հրատարակել գիտահանրամատչելի կրոնական գրականություն Հայ Եկեղեցու պատմության, ծեսի, վարդապետության, գրական ժառանգության և այլնի վերաբերյալ՝ 3 մակարդակներով.

— մանուկների համար,

— երիտասարդների համար և

— մեծահասակների համար:

բ.—կազմակերպել ժողովրդային և աշակերտական լսարաններ.
գ.—հոգ տանել քարոզխոսության՝ Ս. Գրքի կիրակնօրյա ընթերցումներով և Ս. Խորհուրդների բացատրություններով.
դ.—կրոնի դասագրքերի պատրաստում:
Հոգևորական առողջ և գիտնական սերունդի պատրաստում:

1700-ամյակը, տոնակատարություն լինելով հանդերձ, պետք է ունենա ինքնաքննադատական վերաբժեւորում, Ներքին Ավետարանչության վերաարթնացում, վերադարձ մեր Եկեղեցու ճշմարիտ արմատներին և առաքելության, քահանա-ժողովուրդ հարաբերությանց սերտացում, ընկերային ծառայության կազմակերպում:

2) Հայց. Եկեղեցու 1700-ամյա ժառանգության ծանոթացում արտաքին աշխարհին.

Օտարներին և ոչ հայախոս հայերին ծանոթացնել մեր Եկեղեցու 1700-ամյա գրական, մատենագրական, արվեստաբանական, քարոզչական, ընկերային ծառայության ժառանգությունը:

Այս աշխատանքին մասնակից դարձնել օտարներին, որպեսզի 1700-ամյակը ոչ միայն Հայ Եկեղեցու, այլ նաև ողջ քրիստոնեության տոնը լինի:

Շեշտել մեր էկումենիկ ոգին պատմության մեջ: Թարգմանել օտար լեզուներով և հրատարակել այնպիսի էկումենիկ և հանդուրժողական ոգով գրված միջնադարյան հայ դավանաբանական հուշարձաններ, ինչպիսիք են, օրինակ, Մխիթար Գոշի «Առ Վիրս», Լամբրոնացու «Ատենաբանությունը» և այլն:

Եվրոպական որևէ լեզվով հրատարակել հայ աստվածաբանական պարբերական:

1700-ամյակի հիմնական տոնակատարությունները հանատեսել 2001 թվականին:

Նկատի ունենալ 3 հանգրվան.
ա.—Նախապատրաստական շրջան,
բ.—1 տարվա հանդիսությունների շրջան և
գ.—Հետտոնակատարությունների շրջան:

Ո՞րը պիտի լինի մեր Եկեղեցու նպաստը էկումենիկ շարժմանը:

Նաև թեմերի մեջ, օտար Եկեղեցիների և հաստատությունների մասնակցությամբ կազմակերպել համապատասխան ծրագրեր և ձեռնարկներ:

3) Հայաստան աշխարհի քրիստոնեական երկիր լինելու նկարագրի պատկերացում:

«Հուշարձան» վանքերն ու եկեղեցիները վերածել «Կյանքի վկայություններ»:

Վերածանկեցնել Ս. Թադեոսի և Ս. Բարթուղիմեոսի վանքերը՝ ի հանվաստումն Հայ Եկեղեցու առաքելության:

Բ հիսուը տեղի ունեցավ սեպտեմբերի 27-ին, ժամը 18—20-ը:

Գերաշնորհ Տ. Զարեհ արքեպս. Սազնավորյանը ժողովականներին ներկայացրեց «Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմե Առաջարկներ» գրությունը: Այնուհետև Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը ներկայացրեց 1700-ամյակի տոնակատարությանց մի ծրագիր, առաջարկված

Երջանկահիշատակ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի օրոք, նախկին Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից:

Ինչպես Ա նիստում արտահայտված առաջարկությունների, այնպես էլ վերոհիշյալ երկու գրությունների լույսի ներքո Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը առաջարկեց 4 բաժիններից բաղկացած հետևյալ ծրագիրը.

Ա. Հրատարակչական և Լսա-տեսային

ա.—Հրատարակչական

Հրատարակությունների պարագային պետք է նկատի ունենալ երեք շրջանակ.

1. գիտական.
2. ժողովրդական—պատկերազարդ.
3. օտար լեզուներով:

Իբրև նյութ կենտրոնանալ հետևյալների վրա.

1. Հայ Եկեղեցու պատմության համապարփակ մի հատոր, կամ բազմահատորյակ,
2. Հայ Եկեղեցու աստվածաբանության վերլուծական մի հատոր,
3. Ծաղկաքաղ Հաց Աստվածաբանական մտքի, ըստ նյութերի դասակարգված,
4. Վարք Սրբոց, սրբերի վարքերի մի շարք ժամանակակից շարադրումով,
5. Աստվածաշնչի Գրաբար թարգմանության գիտական հրատարակությունը:

Բ. Լսա-տեսային

Պատրաստել եռամաս մի ֆիլմ.

1-ին մաս—Հայոց Դարձը 301 թվականին.

2-րդ մաս—Հայ Եկեղեցու պատմությունը 301 թվականից հետո.

3-րդ մաս—Հայ Եկեղեցին այսօր իր ամբողջության մեջ:

4. Վերահաստատել Երևանում Մայր տաճարի կառուցման ծրագիրը.

Բ. Կաթողային

1. Վերահաստատել Երևանում Մայր տաճարի կառուցման ծրագիրը.
2. Կիլիկիո Կաթողիկոսության նորաշեն թանգարանը ձոնել 1700-ամյակին:

Ժողովը հաստատեց նաև, որ վերոհիշյալ առաջարկությունները վերաբերում են Կենտրոնական Հանձնաժողովին, մինչ յուրաքանչյուր հովիտապետական Աթոռ և թեմ կարող է մշակել և իրացնել իր ուրույն ծրագիրը:

Գ նիստը գումարվեց սեպտեմբերի 28-ին, առավոտյան ժամը 11—13-ը, իսկ վերջին՝ Դ նիստը՝ սեպտեմբերի 29-ին, առավոտյան ժամը 10.30—12.00-ը:

Այլ Եկեղեցիների և միջազգային, միջեկեղեցական, միջկրոնական ու մշակութային կազմակերպությունների մասնակցության ապահովման հարցը քննարկելիս, առաջարկվեցին.

— Կատարել անհրաժեշտ աշխատանքներ՝ կազմակերպելու գիտաժողովներ, սիմպոզիումներ և այլ միջոցառումներ WCC, CEC, NCCC, MECC-ի շրջանակներում և կազմակերպություններում:

— Կազմակերպել հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերություններին նվիրված մի գիտաժողով:

— Կազմակերպել Արևելյան քույր Եկեղեցիների միջև գիտաժողով:

Այնուհետև նվիրապետական 4 Աթոռների գահակալների կողմից նշանակվեց Գործադիր մարմին՝ հետևյալ կազմով.

Ս. Էջմիածնից
Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյան
Տ. Հովնան արքեպս. Տերտերյան
Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյան
Տ. Ներսես քհն. Ներսիսյան
Պրն. Գրիգոր Խանջյան
Պրն. Վլադիմիր Բարխուդարյան

Անթիլիասից
Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյան
Տ. Օշական եպս. Չոլոյան
Մեթր Խաչիկ Պապիկյան

Երուսաղեմից
Տ. Սևան եպս. Ղարիբյան

Կ. Պոլսից
Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյան:

Ժողովն անհրաժեշտ համարեց ստեղծել մի գրասենյակ՝ վարիչ-տնօրենով և աշխատակազմով:

Ժողովը Գործադիր մարմնին հանձնարարեց նաև 1996 թ. գարնանը Եվրոպայում կազմակերպել մի խորհրդակցական ժողով՝ հրավիրելով օտար գիտնականների և կազմակերպությունների՝ լսելու իրենց առաջարկները 1700-ամյակի կապակցությամբ:

Սեպտեմբերի 28-ին, ժամը 15-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ 1700-ամյակի Հայաստանի Հանրապետության և Հայ Եկեղեցու Կենտրոնական հանձնաժողովների խորհրդակցական հանդիպումը:

24-անդամյա պետական հանձնաժողովի նախագահ, ՀՀ փոխնախագահ պրն. Գագիկ Հարությունյանը ներկայացրեց պետական հանձնաժողովի ծրագրերը և արդեն կատարված աշխատանքները:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծանոթացրեց Հայ Եկեղեցու Կենտրոնական հանձնաժողովի ընդունած ծրագրին: Շեշտվեց, որ երկու հանձնաժողովների Գործադիր մարմինները պետք է համագործակցեն ծրագրերի իրականացման ճանապարհին:

Չորրորդ նիստի ավարտին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը Կենտրոնական հանձնաժողովին հրավիրեց՝ հաջորդ նիստը անցկացնելու Անթիլիասում, 1996 թ. աշնանը:

Փակման խոսքի մեջ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց, որ ահա այսպես Հայ Եկեղեցին գործում է իբրև մի ամբողջություն՝ իր նվիրապետական չորս Աթոռներով, որ լավագույն նվերն է մեր ժողովրդին:

Ժողովը փակվեց սեպտեմբերի 29-ին, ժամը 13-ին, Մայր տաճարում մատուցված պաշտամունքով:

* * *

Քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված կենտրոնական հանձնախմբի ժողովին մասնակցելու առիթով, սեպտեմբերի 26-ին, ժամը 18.00-ին, Հայաստան ժամանեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Սրամ Ա-ը՝ ուղեկցությամբ Կոր.ոն արքեպս. Պապյանի, Զարեհ եպս. Ազնավուրյանի, Օշական եպս. Զոլոյանի, Վարուժան ծ. վրդ. Հերկելյանի, Վրույր աբղ. Դեմիրճյանի, Մեթր Խաչիկ Պապիկյանի և Ոսկեբերան Արզումանյանի:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին և իրեն ուղեկցող անձանց դիմավորում և բարի գալուստ են մաղթում Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը, Մայր Աթոռի միաբանության, ինչպես նաև պետական և քաղաքական իշխանության ներկայացուցիչներ, Կրոնական գործերի նախագահի պաշտոնակատար Տիար Լազր Սուջյանը, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրեն Մանուշակ Պետրոսյանը և ուրիշներ:

Օդանավակայանում Նորին Սրբությունը, պատասխանելով լրագրողների հարցերին, շեշտեց, որ պետք է լծվել համատեղ աշխատանքի, և հավաստիացրեց, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունն ու միաբանությունը պատրաստ են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ ձեռք-ձեռքի տրված իբրև մեկ Եկեղեցի ծառայել Աստծուն և ժողովրդին ու նորանկախ պետության բարգավաճմանն ու շինությանը:

Մայր Աթոռում Սրամ Վեհափառին և նրա հետ ժամանած պատվիրակությանը, Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, դիմավորեց ողջ միաբանությունն ու պաշտոնեությունը: Իջման Սուրբ Սեղանի առջև եղբայրական ջերմ ողջագուրումից հետո, երկու Հայրապետները վկայեցին որպես Մեկ Եկեղեցի գործելու և ապրելու հրամայականը:

ՍՐԱՄ Ա-Ը ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Պատմական օրեր է ապրում Հայ Առաքելական Եկեղեցին: Անհավասիկ, զարգացման մի նոր փուլ են թևակոխել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության փոխհարաբերությունները:

Վերը հիշվածի խոսում վկան է այս օրերին Սուրբ Էջմիածնում գտնվող Անթիլիասից ժամանած պատվիրակությունը իր հոգևորական և աշխարհական անդամներով, բարձր նախագահությամբ Կիլիկյան Աթոռի նորընտիր գահակալ Ն. Ս. Օ. Տ. Տ. Սրսում Ա Կաթողիկոսի:

Սրամ Ա Հայրապետը, չնայած իր բազմազբաղ լինելուն և ամենաուռաթեր մակարդակի բազմաթիվ հանդիպումներին, սիրով ընդունեց հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի՝ ճեմարան այցելելու հրավերը:

«Ուրախ լեր» շարականի քաղցրահունչ մեղեդու ներքո ուսանողները հանդիսավորությամբ դիմավորեցին Վեհափառ Հայրապետին, որից հետո երգվեց Ճեմարանի քայլերգը:

Նորին Սուրբ Օծությանը ուղեկցում էին Զարեհ եպս. Ազնավուրյանը, Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Օշական եպս. Զոլոյանը, Ասողիկ եպս. Արիամոակեսյանը և Մայր Աթոռի ու Կիլիկյան միաբանության անդամներ:

Հայր Հայկազունի բարիգալստյան խոսքից հետո, Եկեղեցու ապագա ապաստավորներին իր պատգամը և օրհնությունը տվեց Արամ Ա Վեհափառը:

«Սիրելի դասախոսական կազմ, սիրելի աշակերտներ և սիրելի տեսուչ Հայր Սուրբ: Ես կուզեմ առաջին հերթին իմ անհուն ուրախությունս հայտնել, սա պահուն ըլլալով այս նվիրական հաստատութենեն ներս՝ ձեզի հետ: Ճիշտ է, տեսուչ Հայր Սուրբը հրավիրեց գիս այստեղ գալու, բայց եթե նույնիսկ ինքն հրավիրած չըլլար, ես անձամբ պիտի ուզեի այստեղ գալ՝ ձեզի հետ ըլլալ պահ մը, որովհետև դպրեվանքը իմ և ինձ նման բոլոր միաբանների՝ էջմիածնական, անթիլիասական կամ երուսաղեմական, սրտին մոտ հաստատություն մը եղած է և կմնա: Ես կուզեմ այս առիթը օգտագործել և իմ գնահատանքս ու շնորհավորանքս հայտնել ձեր նոր տեսուչ Հայր Սուրբին, զոր ճանչցած եմ դպրեվանքի տեսուչ ըլլալե առաջ, հատկապես Ամերիկայի մեջ: Վստահ եմ, որ Ամերիկայի հովվական, փոխհարաբերական, միջեկեղեցական մարզերեն ներս ձեռք ձգած փորձառությունը լավագույն կերպով պիտի օգտագործե այստեղ ի խնդիր այս հաստատության վերելքի:

Կրսեի, դպրեվանքը իմ սրտին մոտ եղած է ու կմնա այդպես, որովհետև ես և բոլոր միաբանները դպրեվանեցի եղած ենք: Հոս ըլլալե առաջ մենք նախ հոն եղած ենք: Այս աթոռներեն, գրասեղաններեն, դասարաններեն՝ այլ խոսքով, դպրեվանքեն անցած ենք: Այստեղ հասնելու ճամփան դպրեվանքն է: Անհավասիկ, կզգաք, թե որքան վճռական, կենսական դերակատարություն ունի դպրեվանքը եկեղեցականի մը կյանքի մեջ ևընդհանրապես Հայ Եկեղեցվո կյանքին մեջ: Դպրեվանքը պարզ վարժարան մը չէ: Դպրեվանքը այլ դպրոցներու նման բնական դպրոց մը չէ, ուր մարդիկ կուգան բան սորվելու համար, ուր մարդիկ կուգան գիտություն ամբարելու համար: Դպրեվանքը այդ չէ, հոգևոր ճեմարանը այդ չէ: Այն ավելին է: Այստեղ աշակերտներ կուգան ոչ թե բան մը սորվելու համար, իրենց գիտությունը ընդլայնելու՝ նոր գիտելիքներ ամբարելու համար, այլ կուգան այստեղ մարդակերտումի և հայակերտումի ընթացքի մեջ հոգեպես, հոգևորապես կազմավորվելու ու ապա եկեղեցական դառնալու, ծառայելու համար մեր ժողովուրդին: Ես պիտի ուզեի, որ այսպես հասկանայիք այս հաստատության դերակատարությունը և նաև ձեր դերակատարությունը այս հաստատութենեն ներս: Դուք այստեղ եկած եք ոչ թե բան մը սորվելու համար, այլ կազմավորվելու որպես մարդ, որպես հայ, ու մանավանդ, որպես եկեղեցական: Եվ պատմությունը ցույց տված է ու մեր փորձառությունը վկայած է, թե այն եկեղեցականները, որոնք դպրեվանքեն չեն անցած, իրենց մեջ միշտ պակաս բան մը եղած է: Դպրեվանքի մեջն է, որ կկազմավորվինք, մեր հայությունը կզորանա, կհարստանա: Որպես մարդ կբացվինք գիտության, ու մանավանդ որպես եկեղեցական կթրծվինք մեր հոգեմտավոր արժեքներով: Դպրեվանքին մեջն է, որ մենք կբացվինք հայոց պատմության, Հայաստանյայց Եկեղեցվո անցյալի կյանքին, հոգևոր հարստության, Հայաստանյայց Եկեղեցվո առաքելության: Կթրծվինք այդ բոլորով ու կդառնանք լավ հայ ու լավ եկեղեցական: Ահա թե ինչու դպրեվանքը կարևոր առաքելության է կոչված մեր Եկեղեցու կյանքի մեջ: Դուք այստեղ ունիք հոգևոր ճեմարանը, մենք ունինք դպրեվանք, Երուսաղեմն ունի ժառանգավորաց, ունինք ուրիշ դպրեվանքներ ևս: Այս բոլոր դպրեվանքները պետք է իրար հետ գործակցին, ինչպես տեսուչ Հայր Սուրբը

ըսավ: Երբ կխոսինք մեր ճվիրապետական Աթոռների միջև գործակցության մասին, այդ գործակցությունը տեսական չէ, այլ այն պետք է կոնկրետ արտահայտություն ստանա: Այդ գործակցությունը պետք է բոլոր բնագավառներեն ներս ըլլա, բոլոր մակարդակներուն վրա ըլլա: Անհավասիկ, դպրեվանքը կարևոր բնագավառ մըն է գործակցության ու պետք է ինչպես ըսվեցավ աշակերտներու փոխանակում, փոխհարաբերություն դպրեվանքների ուսուցչական կազմերու, ծրագիրներու: Այս փոխադարձ հարաբերությունը դպրեվանքները ավելի կզորացնե, կկազմակերպե ու կհարստացնե: Ես չեմ ուզեր խոսքս ավելի երկարել և ձեզի կմաղթեմ ամբողջական հաջողություն ձեր առաքելության մեջ: Կընդգծեմ բառը՝ առաքելություն: Դուք կպատրաստվիք առաքելության մը համար: Այս եկեղեցին մեզի համար կառույց չէ: Այն մեզի համար եկեղեցի կդառնա ժողովուրդով: Եվ այդ ժողովուրդը եկեղեցի բերողը և եկեղեցին ժողովուրդին տանողը եկեղեցականն է: Եվ եկեղեցականը իր կյանքը պետք է ըմբռնե որպես առաքելություն: Դուք առաքելության մը համար կպատրաստվիք: Դպրեվանքը աշխարհ մըն է, ուր մարդիկ կպատրաստվին որպես առաքյալներ այն մեծ աշխարհին համար, որ մեր ժողովուրդն է, մեր Եկեղեցին է: Դուք պիտի դառնաք մեր ժողովուրդի վաղվա հոգևոր մշակները, հոգևոր առաքյալները:

Ես պիտի ուզեի, հետևաբար, որ այս գիտակցությամբ դուք պատրաստվիք, այս գիտակցությամբ ձեր դասերը սորվիք, այս գիտակցությամբ այստեղ դուք զձեզ իրագործեք ու արժևորեք՝ օր մը ըլլալու համար մեր ժողովուրդի կյանքին մեջ առաքյալներ, մեր ժողովուրդի ու մեր Եկեղեցվո ծառայության ի սպաս»:

Հանդիպման վերջում անկաշկանդ ու մտերմիկ մթնոլորտում, ուսանողների և ներկաների հարցերին պատասխանեցին Վեհափառը և Զարեհ Սրբազանը:

Ճեմարանականներիս հիշողության միջից երբեք չի ջնջվի աշնանային բովանդակալից ու իմաստուն խորհուրդներով լի այդ առավոտը: Վեհափառի հայրական անկեղծ հորդորները մի նոր խթան հանդիսացան մեզ համար՝ առաջ ընթանալու և Աստված փնտրելու ճանապարհին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԱԽՍԱԳԱՀԻՆ

Սեպտեմբերի 29-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն իր նստավայրում ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ին, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ին: Հանդիպման ընթացքում Լևոն Տեր-Պետրոսյանը ողջունեց հյուրերին՝ մաղթելով հաջողություն հանուն մեր Եկեղեցու միասնության և ժողովրդի հոգևոր նորոգման: Նա գոհունակություն հայտնեց նաև, որ Հայոց պետությունն ու Եկեղեցին, միասնաբար գործի լծված, իրականացնում են հայ ժողովրդի վաղեմի երազանքը՝ իրողություն դարձնում Հայ Եկեղեցու, հայրենիքի և Սփյուռքի միասնությունը, որը մեր ազգային քաղաքականությունն է:

Խոսելով Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի տոնակատարության մասին, նախագահը նշեց, որ այն կլինի մեր պետությունը, մեր մշակույթը աշխարհին ներկայացնելու լավագույն առիթը:

Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի և Եկեղեցու խնդիրների վերաբերյալ իրենց նկատառումներն արտահայտեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ն, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն և Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

Հանդիպման ավարտին Գարեգին Վեհափառը շնորհակալություն հայտնեց նախագահին հանգամանալից զրույցի համար:

ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՎԱՐԱԳԱ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՏՈՆԻՆ

Հոկտեմբերի 1-ին, կիրակի, Վարագա Ս. Խաչի տոնին, Արամ Ա Վեհափառը Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, մատուցեց ս. պատարագ և «Հայր մեր»-ից առաջ բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

Հայաստանյայց Եկեղեցվո Սրբազան Հայրապետներուն, սուրբերուն ու նահատակներուն հավատքով ու շնչով թրծված այս աստվածակերտ տաճարին մեջ կանգնած իմ առաջին բառերս կուղեմ Աստուծո ընելով. **«ՓԱՌՔ ՔԵԶ ԱՍՏՈՒԱԾ. ՓԱՌՔ ՔԵԶ, ՅԱՂԱԳՍ ԱՄԵՆԱՅՆԻ ՏԷՐ ՓԱՌՔ ՔԵԶ»:**

Փառք քեզ Աստված, որ արժանի ըրիր անպիտան ծառադ բարձրանալու այս խորանը սուրբ, ուր դարե՜ր, դարե՜ր շարունակ բարձրացան Քեզի հետ խոսելու մեր եռամեծ վարդապետներն ու Սրբազան Հայրապետները:

Փառք Քեզ, Աստված, որ անգամ մը ևս բախտը ընծայեցիր ինձի ըլլալու Քո այս օրհնյալ հողիդ վրա, այն հողին, ուր դարեր առաջ Քու Միածին Որդին վերամարդեղացավ ու Իր Աստվածային լույսով լուսավորեց աշխարհն Հայոց:

Աստուծո այս խորանին վրա կանգնած հոգեկան անհուն ուրախությամբ և եղբայրական ջերմ սիրով կողջունեմ Ամենայն Հայոց Հայրապետը՝ Նորին Սուրբ Օծություն **Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոս**, և այս հոգեպարար ու հանդիսավոր պահուն անգամ մը ևս կհաստատեմ իմ, որպես ընդրկտիր Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո և մեր դարավոր Աթոռին հանձնառությունը անվերապահ ու ամբողջական գործակցության Սուրբ Էջմիածնի նախամեծար Աթոռին հետ, նույն և մեկ Հայաստանյայց Եկեղեցվո առաքելության համփուն վրա: Այս առիթով անգամ մը ևս կհայտնեմ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին անվերապահ գործակցությունը Երուսաղեմի առաքելական Աթոռի Պատրիարքին և Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարքին, Հայաստանյայց Եկեղեցվո ծառայության բնագավառեն ներս իրենց տրված յուրահատուկ դերակատարության:

Այսօր, հավատացյալ ժողովուրդ, տոն է Վարագա Սրբո Խաչին և Հայաստանյայց Եկեղեցին շարականներու, աղոթքներու ճամփով անգամ մը ևս լուսարձակի տակ կբերե Խաչին իմաստը ու դերը քրիստոնեական կյանքին մեջ: Հետևաբար, եկե՛ք սա պահուն բացվինք Խաչին խորհուրդին ցոյց մեզ ապաւէն Տէր Յիսուս»: Բառե՜ր, աղոթասաց բառե՜ր, հոգեթափ բառե՜ր, որոնց մեջ է խտացած Խաչին խորհուրդը ու իմաստը մարդ-

կային կյանքին մեջ: Արդարև, առանց Խաչին, առանց Խաչեն ճառագայթող լույսին գորությաւն դառարկ է մարդկային կյանքը, աղքատ է ու անիմաստ մարդու կյանքը: Առանց Խաչին մարդկային կյանքը երկրավոր պայքար մըն է միայն՝ առանց խորքի ու առանց նպատակի: Այսպես եղավ Խաչը Մեծ Խաչյալին՝ Քրիստոսի կյանքին մեջ: Նազովրեցի Հիսուսին կյանքը գուճավորող, անոր կյանքին ընթացք ու նպատակ տվող, անոր խոսքն ու գործը արժևորող, աստվածային ներկայություն եղող Խաչը Քրիստոսի կյանքին մեջ, Բեթղեհեմեն մինչև Նազարեթ, Երուսաղեմեն մինչև Գողգոթա: Խաչը դարձավ ամբողջական զոհողություն, գիտակից հանձնառություն: Խաչը Քրիստոսի կյանքին մեջ եղավ ճանապարհ առավել կյանքի, ճանապարհ հրաշագործ Հարության: Աստված մեղքի ու մահվան գիրաւնեերուն մեջ տըվայտող մարդուն համար եկած էր, մարդուն փորձության համար եկած էր: Աստված Իր աստվածային պատկերը կերտած մարդը վերամարդացնելու համար երկնքեն երկիր իջած էր: Այս սրբազան նպատակին իրագործման համար Աստված ոչ միայն Իր աստվածային բարձրութենեն խոնարհեցավ, ծառայի կերպարանք առավ, Ինքզինք նույնացուց մարդուն հետ, այլ նույնիսկ կամավորապես Խաչ բարձրացավ Իր արյունով փրկելու համար մարդը: Խաչը՝ մահվան անարգանքի գործիքը, Քրիստոսով դարձավ Հարության, Հաղթության աղբյուր:

Սիրելի հավատացյալներ, պատմության մեծ իրագործումները կատարված են ամբողջական հանձնառությամբ, գիտակից զոհողությամբ: Աստված Իր արյունը թափեց մարդը փրկելու համար: Գրիգոր Լուսավորիչ Խոր Վիրապ իջավ խավարը նվաճելու ու Հայաստանյայց աշխարհը աստվածային լույսով լուսավորելու համար: Ղևոնդ ու Վարդան Ավարայրի դաշտ գացին իմացյալ մահով անմահություն կերտելու համար: Մեսրոպ Մաշտոց տառապեցավ ու ճգնեցավ կատարելու համար Հայաստանյայց Եկեղեցվո ու Հայոց պատմության մեծագույն հրաշագործությունը: Արդ, քրիստոնյա ըլլալ, կնշանակե Խաչը ունենալ կյանքի առանցքը: Քրիստոնյա ըլլալ, կնշանակե Խաչի կյանքը ապրիլ: Խաչը կյանքի մեջ կյանքով թարգմանել: Դառարկ է մարդու կյանքը առանց Խաչին: Մարդու կյանքը նյութով ու ժամանակով պայմանավոր գնացող իրականություն մըն է, երբ որ չկա Խաչը, իսկ երբ կա՝ զոհողություն, հանձնառություն ու ինքնընծայում: Միթե այսպես չեղավ կյանքը Նազովրեցի Հիսուսին, Մեծ Խաչյալին, միթե այսպես չեղավ կյանքը Մեծ Խաչյալին առաջին հետևող խաչապաշտ ժողովրդին՝ հայ ժողովրդին: Վկա մեր արյունոտ պատմությունը: Խաչը Քրիստոսին մենք առինք մեր կյանքին մեջ, մեր կյանքով շաղախեցինք ու հավատարմորեն քայլեցինք Խաչի ճանապարհեն, Խաչը մեր կյանքի մեջ եղավ կյանքի ճանապարհ՝ Հարության աղբյուր:

Սիրելի հավատացյալներ, այսօր ևս մեր կյանքը նույնպես Խաչի ճանապարհ է, մեր կյանքի ճանապարհը Խաչի ճանապարհ է: Խաչի կյանք է իր ինքնորոշված արդար իրավունքի ձեռքբերման համար ազատագրական պայքարի մեջ գետված Արցախի ժողովրդի կյանքը: Արցախի մեր ժողովուրդը շիտակորեն ամեն օր կխաչվի ի խնդիր արդարության, ի խնդիր ազգային արժանապատվության: Բայց պատմությունը վկա Խաչյալին մահ չկա: Խաչյալի ճամփան Հարության ճամփան է: Խաչյալի կյանք է, սիրելի ժողովուրդ, Հայոց հայրենակերտումի ու ազգակերտումի ճվիրական առաքելության լծված հայրենաբնակ մեր ժողովուրդին կյանքը: Մեր ժողովուրդը բարձրագույն աստիճանի գիտակցությամբ ընտրած է այս կյանքը այն քաջ

հավատքով, որ ազգ ու հայրենիք պիտի կերտի միայն ու միայն ամբողջական զոհողությամբ ու ամբողջական հանձնառությամբ: Վերջապես, Խաչի կյանք է Սիյոնքի օտար ու օտարացնող ճամփաներուն վրա իր գոյապայքարը մղող, իր հայությունը պահող Սիյոնքի հայության կյանքը, բայց, սիրելի հավատացյալներ, Աստված մեզի մեծ Խաչ տվավ, մեր ժողովուրդը պատմության ընթացքին Քրիստոսի տված Խաչը միասնաբար շալկեց ու հավատարմորեն ու քաջորեն քալեց իմացյալ մահվան ուղիով: Այսօր ալ մեկ է մեր Խաչը, որովհետև մենք մեկ ազգ ենք հայրենիքով ու Սիյոնքով: Մենք այս գիտակցությամբ պետք է ապրինք, այս գիտակցությամբ շալկենք մեր Խաչը ու քալենք Խաչի ճանապարհեն: Վայ մեզի, հազար անգամ վայ մեզ, երբ բաժան-բաժան ապրինք, երբ բաժան-բաժան գործենք: Մենք մեկ ազգ ենք, մեկ հայրենիքով: Հայրենի ժողովուրդին կյանքը՝ Սիյոնքին տատապանքն է: Հայրենի ժողովուրդին հաջողությունն ու ուրախությունը ընՍիյոնքինն է և փոխադարձաբար: Ահա այսօր Խաչեն կուգա մեզ մեծ պատգամ՝ միասնաբար քալել, հավատարմորեն քալել Խաչին նույն ճանապարհեն:

Հետևաբար, եթե մենք զմեզ կնկատենք արժանի զավակները իմացյալ մահով անմահություն կերտած մեր սրբազան պապերուն, եթե մենք զմեզ կդավանինք հարազատ ժառանգները թշնամիի յաթաղանին տակեն անցած, Տեր-Զորի ավազներու մեջեն քալած, բայց չմեռած ու չմեռնող ժողովուրդին, ահա՝ այն ատեն մենք միասնաբար պիտի քալենք Խաչի ճանապարհեն՝ ըսելով Աստուծուն. Խաչ Քո եղիցի մեզ ապավեն, Տեր Հիսուս:

Սիրելի հավատացյալներ, եկե՛ք քալենք միասնաբար Խաչի ճանապարհեն, որովհետև Խաչի ճանապարհը սիրո, միության, հավատարմության ճանապարհ է, Խաչի ճանապարհը հաղթության ու հրաշափառ հարության ճանապարհ է այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

Ս. պատարագի ավարտին Մայր տաճարի երգչախումբը կատարեց «Կիլիկիա» հոգեհույզ երգը:

Մայր Հայրենիքում գտնվելու շրջ մեկշաբաթյա ժամանակահատվածում Արամ Վեհափառը այցելեց «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կենտրոնատեղի, Եռաբլուր՝ զոհված ազատամարտիկների շիրիմներին, ինչպես նաև Մեծ եղեռնի զոհերի հիշատակն անմահացնող Ծիծեռնակաբերդի երկնաքերծ բարձունքի հավերժահամալիր և Մատենադարան:

ԽՕՍՔ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ 180-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

Սրտի անհուն գոհունակութեամբ իմացանք Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Տիրան Արքեպիսկոպոս Կիւրեղեանից որ Դեկտեմբերի 12-ին արժանավայել հանդիսութեամբ նշուելու է Մոսկուայի հոչակաւոր ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ հիմնադրութեան 180-ամեակը:

Մեզ համար սրտի քաղցր պարտք է անձնապէս և յանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, Հայաստանեայց Եկեղեցու Մայր Աթոռի՝ Ս. Էջմիածնի ողջունել այս բարեբաստիկ և հպարտանքի տօնակատարութիւնը, որ վստահաբար պիտի լինի ողջ Մոսկուայի մեր հայ սիրեցեալ ու հաւատարիմ հայ զաւակներին համար հոգեկան ցնծութեան և հոգևոր ու ազգային վերածնութեան և վերանորոգութեան մի աքսանչելի առիթ:

Մենք քաջատեղեակ ենք այն փառաւոր անցեալի ժառանգութեանը, որ նուիրական թողօնն ու կոթողն է ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ հիմնադիր Լազարեանների գերդաստանին և Ճեմարանի կեանքն ու գործունէութիւնը այնքան շքեղօրէն մարմնաւորած ու կենսաւորած մեծ մտաւորականներին՝ Տրդատ Օրէնեաններին, Ուսուցչապետներին և Ուսանողներին: Մեր ԺԹ. և Ի. դարերի պատմութիւնը Լազարեան Ճեմարանով նոր լոյս և առաւել ճոխութիւն ստացաւ: Արևելեան գիտութեանց շրջագծի մէջ Լազարեան Ճեմարանը կարևորեց և արժևորեց հայ ժողովրդի լեզուի, կրօնի, գրականութեան, արուեստի, մշակոյթի պատմութիւնը: Նա չեղաւ նեղ իմաստով մի ակադեմական հաստատութիւն՝ ամփոփուած հայութեան կեանքի սահմաններում: Ռուսական մեծ մշակոյթի և այլ մշակոյթների բնագաւառներից նա քաղեց մեծ արժէքներ և նրանք կենսաւորեց մեր ժողովրդի մշակութային կեանքի անդաստաններում:

Լազարեան Ճեմարանը այսօր մեր ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան կեդրոնատեղին է և միանգամայն հայ մշակոյթի ծաւալման և զարգացման օջախներից մէկը Մոսկուայում:

180-ամեակի առիթով վստահաբար մեծ հպարտութեամբ պիտի նշուեն անցեալի իրագործումները: Դա բնական է և արդար: Բայց ոչ քաւարար: Մեր հայրական յորդորն է որ 180-ամեակը դառնայ վերանորոգման, վերաշխուժացման մի աքսանչելի առիթ մեր ժողովրդի համար ի Մոսկուա և ի հանդերձ Դաշնային Պետութիւնն Ռուսաստանի: Անցեալի փառքը իր ամբողջու-

ջական իմաստը կը գտնի ներկայի և ապագա՛ի նորանոր իրագործումներով և ներդրումներով:

Սիրելիք, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում աղօթում եւիք Ձեզ համար և կոչ եւիք անում որ նորոգեալ սիրով և յաւելեալ նուիրումով արժեցնէք այս պատուաբեր ծօնակատարութիւնը որպէսզի առաւել ևս պայծառանայ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ անունը մեր նոր պատմութեան մէջ:

Ողջ լերուք ի Տէր, գօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 6 Դեկտեմբերի 1995 թ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՍԻՏՆԻԻ «ԱՐՇԱԿ ԵԻ ՍՈՖԻ ԳԱԼՍՏԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք որ արժանավայել շուքով պիտի նշուի Սիտնիի «ԱՐՇԱԿ ԵԻ ՍՈՖԻ ԳԱԼՍՏԱՆ» հայկական դպրոցի տասնամեակը:

Մենք մօտէն ծանօթ ենք դպրոցի հիմնադրութեան եւ զարգացման հանգրուաններուն եւ անձամբ Մեր ամբողջական աջակցութիւնն ու քաջալերանքը յայտնած ենք սիրոր կենսական եւ ազգակերտական առաքելութեան երբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գահակալն էինք:

Այսօր, Մաղր Սթոռ Ս. Էջմիածնէն, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան այս արբանեակ-կեդրոնէն անհուն սիրով եւ հաղորդական հոգածութեամբ Ձեզի կ'ուղղենք Հայրապետական Օրհնութեան այս Գիրը նախ Մեր ուրախութիւնը յայտնելու տասնամեակի այս բարեբաստիկ առիթով: Քաջալերանք եւ յոյս ներշնչող տասը տարիներու ընդեակ ենք այն պայծառ իրողութեան որ անցնող տասը տարիներու ընթացքին Համազգայինի Մշակութային եւ Կրթական Ընկերակցութեան հովանիին եւ հսկողութեան ներքեւ գործող «ԱՐՇԱԿ ԵԻ ՍՈՖԻ ԳԱԼՍՏԱՆ» վարժարանը նոր շունչ, թարմութիւն եւ ոգեւորութիւն բերաւ Աւստրալիոյ հայ գաղութի կեանքին մէջ, յատկապէս Սիտնիի հայութեան ծոցին մէջ:

Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք դպրոցի բարերար Տէր եւ Տիկին Արշակ եւ Սոֆի Գալուստաններուն, որոնց սրտալից կապուածութիւնը մեր Հայց. Առաքելականին Ս. Եկեղեցիին եւ մեր ազգին ու մշակոյթին անմար ձամբ ծանօթ է Մեզի Մեր երկար տարիներու բարեկամութեան մէջէն: Թող Բարձրեալն Աստուած իրենց շնորհէ երկար կեանք որպէսզի արդարօրէն եւ լիուլիս վայելեն իրենց սիրոյն եւ զոհողութեան բարի եւ ազնիւ արդիւնքները:

Մեր գնահատական խօսքը «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»-ի տարած մշակութասէր երախտարժան գործունէութեան, որուն իրազեկ ենք եղած Մեր վարդապետութեան օրերէն: Թող Ամենակալն Աստուած զօրացնէ Հայ Գիրին ու դպրութեան օրերէն: Թող Ամենակալն Աստուած զօրացնէ Հայ Գիրին ու դպրոցին, հայ դպրութեան եւ մշակոյթին նուիրուած բոլոր անդամները այս մեծ կազմակերպութեան:

Սիրելի՛ք,

Դպրոց հիմնելը բաւարար չէ դպրոց ունենալու համար: Դպրոց պահելը, դպրոցը շէնցնելը, դպրոցական կեանքը ծաղկեցնելն է որ կը շինէ հայկական արժէքը դպրոցին: Աւստրալիոյ թեմի մեր սիրեցեալ զաւակները եւ

կեղեցիին կողքին իրենց գործունեութեան առաքելոյ պէտք է դարձնեն հայ դպրոցը, մեր հայեցի ինքնութեան գիտակցական կազմաւորման այդ վսեմ օճախը:

Ս. Էջմիածինը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը, քրիստոնէական հաւատքի հայկական օճախը, քաղցրագոյն սիրով կ'ողջունէ Սիսնիի հայ դպրոցի տասնամեակը: Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած որ Իր երկնային օրհնութիւնը առատօրէն հեղու «ԱՐՇԱԿ ԵԻ ՍՈՖԻ ԳԱԼՍՏԱՆ» դպրոցին վրայ, զօրացնէ Խնամակալ Մարմինը, Տնօրէնութիւնը, Ուսուցչական կազմը եւ յատկապէս շնորհներով ծաղկեցնէ դպրոցական աշակերտները որպէսզի անոնք սնանին եւ մեծնան Ս. Մեսրոպ Մաշտոցի այգիին հոգեկից ու հոգեշէն պտղաբերութեամբ: Թող տասնամեակը դառնայ մղիչ ոյժ յառաջիկայ նորանոր եւ յարատեւ նուաճումներու:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս օրհնութեան
ի 21 Սեպտեմբեր 1995 թ.
ի Մայր Աթոռ Սրբոյ Էջմիածնի

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄ

Երևանի պետական համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհվել է ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում: Որոշումը Նորին Սրբությանը հանձնելու համար դեկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ացելեց ԵՊՀ ռեկտոր, Գիտական խորհրդի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը՝ պրոռեկտորներ Է. Զուբարյանի, Ռ. Մաթևոսյանի, Է. Ղազարյանի, Ռ. Ծալիկյանի, Ա. Ալեքսանյանի, ԵՊՀ աստուածաբանության ֆակուլտետի դեկան Շահե արքեպս. Աճեմյանի, ԵՊՀ գիտնական քարտուղար Հ. Ավետիսյանի ուղեկցությամբ:

Որոշման մեջ ասված է. «Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին գիտությանն ասպարեզում ձեռք բերած ակնառու ձեռքբերումների և հասարակական-հայրենասիրական բեղուն գործունեության համար շնորհել պատվավոր դոկտորի կոչում»:

Վեհափառ Հայրապետն իր երախտագիտություն ու շնորհակալությունը հայտնեց որոշման կապակցությամբ՝ նշելով, որ նոր հազարամյակի շեմին առանձնակի կարևորվում է մարդկության արժեքների գնահատման, մեր երիտասարդներին հայ քրիստոնյայի ոգով դաստիարակելու խնդիրները:

Զրույցի ընթացքում Գարեգին Ա Կաթողիկոսը անդրադարձավ հանրապետության համալսարաններում քրիստոնյա երիտասարդների միությունների ստեղծելու խնդրին, որը ավելի կամրապնդի կապը Եկեղեցու և երիտասարդության միջև:

Նորին Սրբությանը պատվավոր դոկտորի դիպլոմի հանձնման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա Երևանի պետական համալսարանում:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ձերդ Սրբություն,

Ես խորապես երախտապարտ եմ Ձեզ՝ ինձ ուղղված շնորհավորանքի, ջերմ խոսքերի և Ձեր աղոթքների համար՝ ի բարօրություն վրաց ժողովըրդի: Ինձ համար հիշարժան են մեր սեպտեմբերյան հանդիպումները և անչափ թանկ՝ Ձեզ հետ հաղորդակցվելը:

Կասկած չկա, որ մեր երկու եղբայր ժողովուրդների Եկեղեցիները մեծ ձեռքբերումներ ունեն խաղաղության և փոխադարձ աջակցության սուրբ գործին աստվածահաճո ծառայության մեջ: Եվ դրան անձնապես Ձեր կողմից ցույց է տրվել վեհ օրինակ:

Երախտագիտությամբ և խոր հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՁԵ

2 նոյեմբեր 1995 թ.

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 12-ին, կիրակի օրը, բազմահարյուր հավատացյալների ներկայությամբ, ս. պատարագի ընթացքում, քահանայական սրբազան ձեռնադրություն և օծում ստացան հոգևոր ճեմարանի շրջանավարտ չորս շնորհալի սարկավագներ՝ Միքայել սրկ. Սալբյան, Արծվի սրկ. Դավթյան, Անդրանիկ սրկ. Ժամկոչյան և Գրիգոր սրկ. Աշուրյան, ձեռամբ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի, խարտավիլակ՝ Տ. Սեպուհ վրդ. Զուլջյան:

Նորընծաները Մայր տաճարի աստիճաններով ծնրադիր բարձրանում են Ավագ խորան և, խոնարհում բազմությանը դառնալով, բարձրացնում իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման:

Հնչում է «Աստուածային և երկնային շնորհ» շարականը: Հավատացյալ ժողովուրդը, հոգեպես միաձուլվելով արարողությանը, համոզումով և գոհունակությամբ ասում է. «Արժանի են», որից հետո նորընծաները շրջվում են դեպի Ավագ խորան, և ձեռնադրող Սրբազան Հայրը, իր ձեռքերը խաչաձև դնելով նորընծաներից յուրաքանչյուրի գլխին, ասում է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա, և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»: Այնուհետև նորընծաները ստանում են քահանայական փիլոն և պատարագիչի զգեստներ:

Հանդիսավոր արարողությունը հասնում է իր հոգևոր բարձունքին, երբ ձեռնադրող Սրբազանը չորս նորընծաների ճակատն ու ձեռքերը օծում է Սուրբ Մյուռոնով և նրանց վերանվանում նոր անուններով. այսպես՝ Միքայել սարկավագը վերանվանվում է Տ. ԲԱԲԿԵՆ քահանա, Արծվի սարկավագը՝ Տ. ԴԵՐԵՆԻԿ քահանա, Անդրանիկ սարկավագը՝ Տ. ԱՆՈՒՇԱՎԱՆ քահանա, և Գրիգոր սարկավագը՝ Տ. ՊԱՐԹԵՎ քահանա:

Հավարտ սրբազան ձեռնադրության Վեհափառ Հայրապետն իր հայրական պատգամն է տալիս նորընծաներին՝ գնահատելով նրանց ինքնըն-

ծայման այդ գեղեցիկ արարքը, շնորհավորում հոգևոր ճեմարանին՝ իր պըտղաբերման համար, և կոչ անում հայ երիտասարդ սերնդին, որ բարձր գիտակցությամբ ապրեն իրենց կյանքը՝ ցանկանալով նրանց տեսնել մեր Ս. Եկեղեցին պայծառացնող սպասավորների շարքում:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում են «Օրհնություն աբեղայի» կամ «Օրհնություն վեղարի» կարգերը՝ ներկայությամբ Վեհափառ Հայրապետի:

Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը հանում է նորընծա **Տ. Բաբկեն, Տ. Դերենիկ** և **Տ. Անուշավան** քահանաների գլխներից սարկավագական ջրբրոնը (գդակ)՝ այն փոխարինելով կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարով՝ ասելով. «Հանցէ Աստուած զհին մարդն գործովք իւրովք: Աստուած զգեցուցէ քեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ և սրբութեամբ»:

Արարողությունից հետո Մայր Աթոռի միաբանությունն ու նորընծաները, թափոր կազմած, Վեհափառ Հայրապետին ուղեկցում են Վեհարան, որ Նորին Սրբությունը ևս մեկ անգամ իր հայրական օրհնությունն ու խրատներն է բաշխում նորընծաներին ու ցանկանում նրանց տեսնել Հայ Եկեղեցու արժանավոր սպասավորների շարքերում՝ որպես **«մշակք առանց ամօթոյ»:**

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Առ Աստված գոհության և փառաբանության զգացումներով կողջունեմ այս պահը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այսօրվան կյանքին մեջ և առաքելության հավերժագնաց ճանապարհին վրա: Անհավասիկ նոր ընծայումներ առ Աստված, առ ժողովուրդն հայոց և առ հայրենիքն մեր Հայաստան: Այսօր բոլորիս սրտերը ուրախության, հոգևոր ցնծության ապրումներով գերազվարճ պահեր ապրեցան ի տես չորս երիտասարդ ընծայյալներու ինքնանվիրումին Աստուծո սուրբ խորանին, մեր ժողովուրդի ծառայության և Մայր Աթոռո առաքելության: Առաջին հերթին ես կաղոթեմ առ Աստված, որ այս ընծայումը ըլլա աստվածահաճո և ժողովուրդին համար բարիքներու մի նոր աղբյուր:

Փառք Քեզ, Տեր, որ այս տարվան ընթացքին երեք անգամ շնորհեցիր մեր ժողովուրդին տեսնելու այս ինքնընծայումի Մայր Աթոռո պատմական խորանին բեմին վրա: Երեք անգամներ երիտասարդներ հրաժարվեցին աշխարհից՝ աշխարհը բերելու և վերստին մոտեցնելու համար Աստուծո, որովհետև նրանք, ովքեր աշխարհից հրաժարվում են, աշխարհը չէ, որ թողնում են, այլ աշխարհի մեջ աշխարհայինը, որպեսզի աշխարհը իրենց ծառայությամբ, Աստուծո օրհնությամբ լինի միշտ Աստուծո ստեղծած աշխարհը և ոչ թե մարդոց՝ այդ աշխարհից ստեղծած և մեղքով աճած վիրավոր աշխարհ:

Փառք Քեզ, Տեր, որ այս օրերին մեր երիտասարդների հոգիների մեջ կոչումի և ծառայության այս կամքը առողջ և առույգ պահեցիր: Առաջին հերթին ես պարտք կզգամ իմ գնահատականը տալու մեր Մայր Աթոռի սիրտը հանդիսացող հոգևոր ճեմարանին: Դուք ճեմարանի մտավոր, իմացական, հոգևոր ավազանից ծնունք երթալու համար մեր ժողովուրդին: Ես շնորհավորում եմ ճեմարանի տեսչությանը, ուսուցչական կազմը և ճեմա-

բանը կանգուն և գործուն պահող բոլոր ավիրյաչները, բարերարները և ծառայողները:

Իմ գնահատանքի երկրորդ խոսքը այսօր ուղղում եմ ձեր ծնողներին՝ ձեր հայրերին և մայրերին, ձեր ընտանիքի բոլոր անդամներին, և նրանց այսօր ուզում եմ ասել, որ չմտածեք այնպես, թե զրկվեցիք ձեր զավակներից: Ո՛չ, հարստացա՛ք ձեր զավակներով. ազգին ծառայելու մեջ պատի՛վ գզացեք, և նրանց ծառայությունը թող ձեր ընտանիքների մեջ դառնա ուրախության և հպարտության առիթ, արդա՛ր հպարտության, ոչ թե գոռոզության, ինքնագովության, այլ Աստծուն և ազգին մի զավակ ընծայած լինելու հոգեկան այն բավարարության, որ մարդոց ապրումներուն ամենեն ազնիվներեն մեկն է:

Ես իմ երրորդ խոսքը ուղղում եմ մեր Մայր Աթոռո ավիրյալ միաբանության բոլոր անդամներին՝ եպիսկոպոս, վարդապետ, սարկավագ աստիճանների վրա գտնվող իմ սիրելի հոգևոր եղբայրներին, և նրանց բոլորի անունով ես այսօր ասում եմ ձեզ. բարո՛վ եկաք, հազա՛ր բարով, մեր Մայր Աթոռո միաբանական ուխտի կազմի մեջ: Այսօր մեր միաբանական ուխտը զորացավ ձեզմով, բայց ես ուզում եմ այստեղ մի անգամ ևս անդրադառնալ, որ թիվը չէ, որ մեծ արժեք ունի, այլ թիվին որակ տվողը, արժեք տվողը որակն է կյանքի, եղանակն է կյանքի, ոգին է կյանքի, ձևն է ծառայության, մեկ խոսքով՝ այն, ինչ որ դուք պիտի լինեք, ա՛յդ պիտի լինի ձեր քարոզը, ա՛յդ պիտի լինի ձեր գործը մեր ժողովրդի ծառայության: Վերջապես չորրորդ. ես ողջունում եմ մեր ամբողջ ժողովրդին, մանավանդ Հայաստանում, այժմ, երբ անցնում ենք մի կրոնական վերազարթոնքի առողջ հանգրվանի միջից: Վերանկախացավ մեր հայրենիքը. փա՛ռք Աստծուն և պատիվ բոլոր նրանց, որոնք այդ անկախության ձեռքբերման համար ոչինչ խնայեցին և այսօր ծառայում են այդ անկախության զարգացման, ամրացման համար:

Այս նոր շրջանին վերապայծառակերպվեց մեր սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Այսօր մեր հոգևոր այգիին, մեր հոգևոր պարտեզին մեջ, անհավասիկ չորս նորատունկ ծառեր, որոնք իրենց պտղաբերությամբ պիտի արժեցնեն այս ցանքը մեր Մայր Աթոռի հոգևոր անդաստանում: Որքա՛ն, որքա՛ն մեր ժողովուրդը այսօր և՛ Հայաստանում, և՛ Արցախում, և՛ ուրիշ երկրներում՝ արտասահմանում, առօրյա հացի պես պետքն ունի այնպիսի սպասավորներու, որոնք իրենց կյանքը հաց ընեն մեր ժողովուրդի հոգևոր կյանքի առողջացմանը, վերաբյուրեղացմանը, բարոյական վերածնմանը, քրիստոնեական առողջարար սկզբունքների վերածաղկմանը, վերաներգործությանը մեր առօրյա կյանքում, որպեսզի վերստին առողջանանք իբրև մարդ, իբրև ազգ, իբրև հայրենիք՝ Եկեղեցու սպասավորության ճանապարհով: Այսօր, սիրելի հավատացյալներ, բանալով Ավետարանի այն հատվածը, որ մեր հայրերը սահմանել են մեզ համար այսօրվան ընթերցումի համար, դա գտնվում է Ղուկասու Ավետարանի 8-րդ գլխի մեջ,— այնտեղ կկարդանք Հայրոս անունով մի հրեա իշխանավորի Հիսուսին մոտենալու մասին: Նա երրայեցի ժողովրդի հեղինակավոր դասակարգին էր պատկանում: Նա սինագոգի պետն էր և մեկ աղջիկ ուներ, և աղջիկը հիվանդացավ մահացու հիվանդությամբ:

Հակառակ այն իրողության, որ ինքը պաշտոնապես Հիսուսի առաքելության դեմ էր իբրև հրեա ժողովրդի կրոնական, ազգային իշխանության մաս կազմող անձնավորություն, բայց հավատաց իր մեջ իր քայլերն առաջնորդեց դեպի Հիսուս, և գնաց, Հիսուսին ասաց. «Աղջիկս մահանում է, ե՛կ և փրկի՛ր

ցրաց»: Երբ Հիսուս շրջապատված էր ժողովրդով, խոսում էր ցրանց հետ, և շատերը մոտենում էին իրեն, հանկարծ Հայրոս իշխանապետի տնից եկաև ասացին. «Աննահանգիստ մի՛ արա վարդապետին, աղջիկդ մահացավ»: Հիսուս դարձավ Հայրոսին և ասաց. «Մի՛ երկնչիր, միայն հավատա՛, մի՛ վախեցար, հավա՛տք ունեցիր, և պիտի ապրի»: Գնաց տունը և մեռած աղջկան բոլորտիքը գտնվող անձերին, ընտանիքի անդամներին դարձավ, ասաց. «Մի՛ վախեցաք, ննջում է»: «Վե՛ր կաց»,—ասաց, և աղջիկը կյանքին վերադարձավ:

Սիրելի հավատացյալներ, հավատքը մարդու մեջ այնպիսի մի ուժ է, որին ոչ ոք չի կարող հաղթել:

Քանի՞ հարվածներ եկան մեր պատմության մեջ՝ մեր հավատքը ապականելու, սպանելու մեր մեջ, սակայն չկարողացան: Այդ հավատքն էր, որ կենդանի պահեց այս ճվիրակաևագույն, սրբագույն կեդրոնը Հայ Եկեղեցիին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Եթե այդ հավատքը չլիներ, ինչպե՞ս մենք պիտի դիմանայինք պատմության մեջ, հարց եմ տալիս, մեր բանակներո՞վ, մեր զինական ուժո՞վ, մեր տնտեսական միջոցներո՞վ, մեր երկրի հանքերո՞վ, ինչո՞վ պիտի դիմանայինք մենք. այն ուժեղ հավատքով, որ լեռներն անգամ կարող է տեղից հանել, ինչպես ասում է Ավետարանը: Այդ հավատքն է մեզ ապրեցրել: «Եկեղեցին հայկական մեն մի քարի տակ գետնի գաղտնի ճամբա մը ունի»: Այդ ճամփան հավատքի ճամփան է:

Մեր թշնամիները բոլոր ճանապարհները գտան և գոցեցին մեր առաջ, բայց չկարողացան այդ գաղտնի ճամփան գտնել: Այդ ճամփան անցնում է մեր հոգիներից, մեր սրտերից, մեր խորագույն էությունից: Դա քրիստոնեական հավատքն է՝ առաքյալներով Քրիստոսից ճառագայթած մեր երկրում, Գրիգոր Լուսավորչով, Տրդատ արքայով հռչակված այստեղ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որտեղից այն ճառագայթում է՝ նույնիսկ երբ մարդկանց աչքերը փակ են այդ ճառագայթների լույսի առաջ: Այդ հավատքի վերակենդանության այս շրջանին, ո՛վ երկնավոր Հայր, այնպե՛ս արա, որ այսպիսի երիտասարդներ այդ հավատքի նոր կենդանության վկաները դառնան, միանգամայն գործողները այդ հավատքի տարածման համար մեր ժողովրդի կյանքում:

Այսօր հարկավոր է դա՛րձ՝ դա՛րձ դեպի մեր հայրերի սուրբ հոգին՝ ժամանակ, աշխարհագրական սահմանում չճանչցող այդ հոգին, Աստուծո պաշտամունքը ունեցող այդ հոգին, հայոց հողի պաշտպանության նախանձախնդրությունը ունեցող հոգին, մեկ խոսքով՝ մշակույթի ճվիրված այդ հոգին, մշակույթով ներթափանցված և հարստացած այդ հոգին և անմահացնող հոգին: Այդ հոգու սովը նյութական հացի սովից ավելի վատ է: Եվ դրա համար ես այսօր ձեր այս ընծայումը, սիրելի հայր Բարկեն, հայր Գերեգին, հայր Անուշավան և տեր Պարթև, ես ձեր այս ինքնընծայումը Աստուծո՝ անձին մոռացումով, Աստծուն հիշելով և ազգին ծառայելով, ընդունում եմ որպես մի փոքրիկ ովասիս աշխարհով անապատացող մեր կյանքին մեջ:

Եղեք միշտ կանաչ, եղեք միշտ ջրառատ և այնպես եղեք, որ երբ մարդիկ ձեզ նայեն, ձեր խոսքերի միջից ձե՛զ չտեսնեն, այլ տեսնեն Քրիստոսը, տեսնեն Լուսավորիչը, տեսնեն Մեսրոպ Մաշտոցը, տեսնեն այն սուրբերը և հերոսները, որոնք իրենց կյանքը մատաղ ըրին, որպեսզի ազգին կյանքը միշտ փառավոր մնա, և դուք լինեք «մշակք առանց ամօթոյ», լինեք տանձար Աստուծո և ունենաք այնպիսի ծառայություն, որ մեր Մայր Աթոռի հոգևոր ճառագայթումը առավել ուժեղացնի մեր ողջ ժողովրդի կյանքում հավիտյանս. ամեն:

Տ. ԲԱԲԿԵՆ ԱԲԵՂԱ ՍԱԼԲԻՑԱՆ

Ծնվել է 1965 թ. Երևան քաղաքում, ավազանի անունը՝ Միքայել:

1972-82 թթ. ընդունվել և ավարտել է Երևանի հմր. 133 միջնակարգ դպրոցը:

1983-85 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1986-88 թթ. աշխատել է ագրոքիմիայի ինստիտուտում:

1989-90 թթ. սովորել է Հաղպատավանքի դպրանոցում:

1991 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1992 թ. հունվարի 18-ին Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանքում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1995 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Ներսես արքեպս. Մելիք-Թանգյանի կյանքն ու գործունեությունը» թեմայով, և արժանացել «լավ» գնահատականի:

1995 թ. նոյեմբերի 12-ին Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի:

Տ. ԴԵՐԵՆԻԿ ԱՔԵՂԱ ԴԱՎԹՅԱՆ

Ծնվել է Կապան քաղաքում 1966 թ. ապրիլի 23-ին, ավագանի անունը՝ Արծվի:

1973-83 թթ. սովորել և ավարտել է տեղի հմր. 6 միջնակարգ դպրոցը:

1983-85 թթ. ընդունվել և ավարտել է Երևանի հմր. 8 Գեղարվեստի ուսումնարանը:

1986-88 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1988-91 թթ. ծառայել է Կապանի շրջանի Գեղանուշ գյուղի Ս. Հռիփսիմե եկեղեցում, որպես դպիր:

1991 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1992 թ. հունվարի 18-ին Էջմիածնի Ս. Հռիփսիմե վանքում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1995 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Սյունյաց եպիսկոպոսական Աթոռի պայքարը ունիթոռների դեմ 14-15-րդ դդ.» թեմայով, և արժանացել «լավ» գնահատականի:

1995 թ. նոյեմբերի 12-ին Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի:

Տ. ԱՆՈՒՇԱՎԱՆ ԱԲԵՂԱ ԺԱՄԿՈՉՑԱՆ

Ծնվել է 1971 թ. նոյեմբերի 12-ին Էջմիածին քաղաքում, ավագանի անունը՝ Անդրանիկ:

1978-88 թթ. սովորել և ավարտել է տեղի Վահան Ռշտունու անվան հմր. 11 միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1993 թ. Ս. Գայանե վանքում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

1995 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը: Պաշտպանել է ավարտաճառ՝ Մովսես Ջուղայեցու «Ժողովածու ի պէտս բանասիրաց» թեմայով, և արժանացել «լավ» գնահատականի:

1995 թ. նոյեմբերի 12-ին Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի:

Տ. ՊԱՐԹԵՎ ՔԱՀԱՆԱ ԱԾՈՒՐՑԱՆ

Ծնվել է Էջմիածին քաղաքում 1971 թ. հուլիսի 21-ին, ավազանի անունը՝ Գրիգոր:

1978-88 թթ. սովորել և ավարտել է տեղի Ռաֆայել Պատկանյանի անվան հմր. 9 միջնակարգ դպրոցը:

1988-90 թթ. ծառայել է Ս. Գայանե եկեղեցում:

1990-93 թթ. ընդունվել և ավարտել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայից լսարանը:

1993 թ. Ս. Աստվածածին եկեղեցում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանի, և անցել ծառայության Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իբրև լուսարար:

1995 թ. նոյեմբերի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ ձեռամբ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի:

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

«Զի ոդիդ են ճանապարհք Տեառն,
եւ արդարք գնասցեն ընդ նոսա, եւ
ամբարիշտք տկարասցին ի նոսա»:
(Ձեռնադրության Մաշտոց)

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Գարեգին Ա. Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ սույն թվականի հոկտեմբերի 21 և 22, շաբաթ և կիրակի օրերը, ևս մեկ անգամ հոգևոր ուրախության և միխթարության պահեր եղան մեր Եկեղեցու հավատացյալների համար: Հանդիսավոր պատարագի արարողության ընթացքում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ինը շրջանավարտներ՝ **Սամվել Հովակիմյանը, Արամ Հովհաննիսյանը, Հովհաննես Մարտիրոսյանը, Մուշեղ Ժորժյանը, Գարուն Մնացականյանը, Եսայի Գաբրիելյանը, Արմեն Խաչատրյանը, Արամ Վարդանյանը, Հարություն Փիլավչյանը,** ձեռամբ իրենց նախկին տեսուչ, Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Գերաշնորհ Տ. Անանիա եպս. Ալթաքյանի, առացան սարկավագական աստիճան:

Համաձայն մեր Եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցի, նախորդ շաբաթ օրը, երեկոյան, կիրակամուտի ժամերգության ավարտին, սարկավագության կոչվածները առացան կիսասարկավագության կարգ՝ ձեռամբ Անանիա եպիսկոպոսի և խարտավիլակությամբ Ռոկրահիայի հայոց առաջնորդական փոխանորդ Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանի:

Սարկավագական ձեռնադրության ընթացքում խարտավիլակ Հայր Սուրբը Մաշտոցի համաձայն վկա՛ում է նորընծաների հոգևոր բարեմասնությունները և ձեռնադրության արժանի լինելը՝ ասելով. «...գիտեմք եւ վկայեմք զսուսա արժանաւոր գոլ սա ի բանալ զլուծ աստիճանաց ունկով արբեմութիւն եւ իմաստութիւն»: Այս վկայության հիման վրա ձեռնադրող Սրբազան Հայրը «Ողորհիօք Աստուծոյ Հօր եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» նորո ձեռնադրյալներին դպրության աստիճանից հրավիրում է սարկավագության պաշտոնի:

Նորընծա սարկավագները, խարտավիլակի առաջնորդությամբ, ձախակողմյան աստիճանով ծնրադիր բարձրանում են Ավագ խորան, ապա, դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը, ձեռամբարձ **«Աստուածային եւ երկնային շնորհ...»** շարականի երգեցողությամբ հրաժարվում են աշխարհից՝ կոչվելու համար «ի սպասաւորութիւն Սրբոյ եկեղեցւոյ»: Նորընծաները բոլորվում են ձեռնադրող Սրբազան Հոր շուրջ, իսկ Սրբազանն իր աջը նրանց գլխին դնելով արտասանում է. «Տէր Աստուած ամենակալ ձգեա զաւերելոյթ աջ քո եւ օրհնեա զսոսա արժանաւոր լինել կոչման սպասաւորութեան Ս. Եկեղեցւոյ» աղոթքը: Ձեռնադրող Սրբազանը մեկ առ մեկ նրնծայլալների ձեռքերում է դնում Ս. Ավետարանը՝ իշխանություն տալով նրանց եկեղեցում Ս. Ավետարանը հանդիսավորապես ընթերցելու: Ապա բուրվառ է տալիս նրանց ձեռքերը և իշխանություն՝ խնկարկելու եկեղեցում հրնթացս ծիսական արարողությանց:

Հավարտ ձեռնադրության արարողության, Վեհափառ Հայրապետն իր ոգեշունչ հայրական խոսքն է ուղղում նորընծա սարկավագներին: Իր օրհնությունը բաշխելով՝ Վեհափառը հույս է հայտնում, որ իրենք հետ այսու առավել բարձր կպահեն հայ հոգևորականի սուրբ և նվիրական կոչումը և իրենց գործունեությամբ առավել ևս կարժևորեն Մայր Եկեղեցու և հայրենիքի ծառայության իրենց բաժինը:

Ապա Վեհափառ Հայրապետը, ողջունելով, իր խոսքը ուղղում է համայն Սփյուռքից Ս. Էջմիածին ուխտի եկած և ս. պատարագին ներկա գտնվող Հաճնցիների Հայրենակցական Միության անդամներին: Վեհափառը՝ բարձր գնահատելով Հաճնի պաշտպանության համար զոհված հայորդիների հայրենասիրությունն ու անձնազոհությունը՝ անձամբ նախագահեց հոգեհանգստյան արարողությանը, որ կատարվեց հավարտ ս. պատարագի՝ ի հիշատակ Հաճնում զոհվածների:

Ս. պատարագի ավարտին նորընծա սարկավագներին Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը, իր հայրական թելադրություններն արեց նորընծաների հառաջիկայի կյանքի և գործի բարվոք պողաբերման համար:

ԱՐՏԱԿ ԱԲՂ. ՏԻԳՐԱՆՅԱՆ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ՝ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԻՆ

«ԱՅՍՕՐ ԵԿԵԼ ԵՆՔ ՈՒԽՏԻ ԵՎ ԱՄԵՆ ՏԱՐԻ ՊԻՏԻ ԳԱՆՔ»

Հոկտեմբերի 14-ի առավոտյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ Մայր Աթոռի միաբանության, բարձրաստիճան հոգևորականների և պատվարժան հյուրերի, ուղևորվեց դեպի Օշական, որտեղ Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում մատուցվեց պատարագ՝ ձվիրված հիշատակին Սրբոց Վարդապետաց Թարգմանչաց մերոց: Ամենայն Հայոց Հայրապետի այցը ջերմ խանդավառություն էր առաջ բերել հավատացյալ հայորդիների հոծ բազմության մեջ, որ եկեղեցի տանող ճանապարհը ողողել էր ծաղիկներով, արտաբուխ երգ ու պարով:

Պատարագի հոգեպարար արարողությունը, որը մատուցեց Հոգեշնորհ Տ. Գրիգոր վրդ. Չիֆթչյանը, պսակվեց Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի Հայրապետական Պատգամով, որ խոսք էր՝ ուղղված մեր սուրբ վարդապետների հոգիներին ու գործին:

«Այս պահը մեր կյանքի ամենեն ներշնչողական օրերից մեկն է: Սովորական օրերից բոլորովին տարբեր, եզական նշանակություն ունեցող մի պահ: Այսօր մեր եկեղեցական հայրերի տոնակարգի համաձայն պանծացնում ենք հիշատակը, առաքելությունն այն բացառիկ անձանց, որ Աստվածը թարգմանեցին իրենց արյունով: Այսօր Սրբոց Թարգմանչաց Վարդապետաց Տոնն է: Թարգմանությունը ձվիրական բառն է հայոց բառարանի: Այն չի նշանակում մի բնագիր այլ բնագրի թարգմանել: Նշանակում է Աստծո սերը մարդոց կյանքի մեջ ապրեցնել այդ ժողովրդի ավանդություններով: Այսօր եկել ենք ուխտի և ամեն տարի պիտի գանք»:

Վեհափառ Հայրապետը պատգամեց, որ այս օրը պիտի վերածենք ժամադրության հայ գրի մեծ ձվիրյալների հետ և նրանց շարքում առաջինը Ս. Մեսրոպ Մաշտոցի հոգու հետ.

«Հարգանք Քեզ, ճգնակյաց վարդապետ: Եղար լույս ու բարիք, որ մեզ տեսար Աստծո հոգիով: Հարգանք Քեզ, գրասեր վարդապետ, որ Քո ժողովրդի տառապանքը Քո հոգու մեջ ապրեցիր: Հայության դիմագիծը ձկարեցիր Քո Այբ, Բեն, Գիմ-ով:

Հարգանք Քեզ, Թարգմանիչ վարդապետ: Աստծո շունչը թափանցեց Քո գրով հայ մարդու շնչին մեջ:

Հարգանք Քեզ, ամենաքրիստոնյա վարդապետ: Դու ոչ միայն Աստվածաշունչը տվեցիր մեզ Քո գրով, այլ ողջ հայ գրականությունը: Մեր ոսկեդարյա գրականությունը Քո երկունքի ծնունդն է: Մեր ամբողջ հոգևոր ժառանգության Հայրն ես Դու, Մեսրոպ Մաշտոց»:

Ավարտելով Պատգամը, Հայոց Հայրապետը հոգևոր հայրերի և Աշտարակի շրջանի ղեկավարության ուղեկցությամբ դուրս եկավ եկեղեցու շրջափակ, որտեղ Նորին Սրբություն օրհնությամբ կատարվեց Գավազան-սյան հուշակոթողի բացման հանդիսավոր արարողությունը, որ կանգնեցվել էր ի հիշատակ Ս. Մեսրոպի շիրիմին Գարեգին Ա Կաթողիկոսի առաջին այցելության: Վեհափառ Հայրապետը շնորհակալության խոսք ուղղեց հուշակոթողի հեղինակներին, շրջանի և գյուղի ղեկավարներին և այն բարերարներին, որոնց միջոցներով իրականացվել էր Գավազան-սյան կառուցումը:

Ներկաների առաջ ելույթ ունեցան նաև Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Նավասարդ վրդ. Կճոյանը, Աշտարակի շրջգործկոմի նախագահ Ժ. Գևորգյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Պ. Հակոբյանը՝ մեկնելով Տոնը որպես հոգևոր վերազարթոնք:

Հանդիսության ավարտին երգով ու պարով, ավանդական գունավոր հնչյունների ուղեկցությամբ օշականցիները ճանապարհեցին Ամենայն Հայոց Հայրապետին:

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂՈՍՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԳՅՈՒՏ ԽԱՉԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
(28 հոկտեմբեր 1995 թ.)

«Յաւուն Հօր և Որդւոյ և հոգւոյն Սրբոյ, ամէն»:
«Որ փափագելի տեսչմամբ եկեալ ի քաղաքն Երուսաղէմ
աստուածասէր դշխոյն, խնդրէր զփայտ խաչին...»:

Ինչպիսի տեսչալի փափագով Երուսաղեմ քաղաք էր եկել աստվածասեր դշխոն՝ փնտրելու մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խաչափայտը:

Այսօր, սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, Հայաստանյայց Եկեղեցին տոնակատարում է հիշատակը խաչի գյուտի: Մեր բոլոր եկեղեցիներում այսօր տոնակատարություն է՝ ննիրված խաչի՝ չորրորդ դարում գտնվելու իրադարձությանը: Գյուտ խաչի տոնը պատմական իրադարձության հետ է առնչվում: Բյուզանդիայի Կոստանդիանոս կայսեր մայրը՝ Հելենե, 327 թվականին հատուկ առաքելությամբ եկավ Երուսաղեմ: Նրա այցի նպատակն էր մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խաչափայտը գտնել և գնծություն ու ուրախություն պատճառել բոլոր քրիստոնյաներին: Նա եկավ Երուսաղեմ և սկսեց հարցուփորձ անել, թե որտե՞ղ է թաքցված Հիսուսի խաչափայտը: Խաչափայտը դժվարությամբ գտան: Հուդա անունով մի ծերուկի հայտնեց Քրիստոսի խաչափայտի տեղը: Երկար պրպտումներից հետո, Գողգոթայի սարոտում գտնվող աղբյուրների միջից որոնողները գտան երեք խաչեր: Նրանք, որպեսզի հասկզվեն, թե այդ խաչերից ո՞րն է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խաչափայտը, այդ պահին անցնող մի մեռելակառք կանգնեցրեցին: Այնտեղից մի մեռած պատանու դիակ մոտեցրեցին խաչափայտերին: Կրկին անգամ հրաշք տեղի ունեցավ՝ մեռյալ պատանին վերակենդանացավ՝ Հիսուսի խաչափայտին հպվելով: Այդպիսով հայտնագործեցին Հիսուսով սրբագործված խաչափայտը: Այս պատմական դրվագն, այն ժամանակ Երուսաղեմում գտնվող եպիսկոպոսին՝ Կյուահավասիկ, մեծ ուրախություն պատճառեց: Նա խաչը վեր բարձրացրեց ի տես բոլորի, մեծ ուրախություն պատճառեց: Նա խաչը վեր բարձրացրեց ի տես ժողովրդին: Այդպիսով քաղաքի բոլոր քրիստոնյաները և այսօր էլ մենք բոլորս այդ խաչին ենք ապավինում, աղոթում ենք Աստծուն և խնդրում փրկարար խաչի շնորհները:

Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը՝ Հակոբոս Տեառնեղբայրը, վախենում էր իր ապրած ժամանակաշրջանում Հիսուսի խաչափայտը փնտրել՝ ոչ

գտնել և այն մարդկանց ներկայացնելու իր մտադրությունն իրագործել, որովհետև դրանով հրեաների զայրույթը կգրգռվեր քրիստոնյաների հանդեպ: Այդ ժամանակ նա խաչի նմանակը բարձրացնելով ի տես ժողովրդի, մի գեղեցիկ հոգևոր երգ էր հորինել. «Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք և զսուրբ թաղումդ քո փառաւորեմք... եկայք հաւատացեալք երկրպագեցուք աստուածային սուրբ նշանիս» բառերով:

Սիրելի հավատացյալներ, այժմ խոսենք այն մասին, թե ի՞նչ է խաչի նշանակությունը մեզ համար:

Հին աշխարհը ապրապիտ էր խաչից, որովհետև խաչը մահվան գործիք էր: Մահվան դատապարտվածները իրենց հոգին էին ավանդում խաչի վրա և այդպիսով վերջ գտնում: Այդ պատճառով մարդիկ ապրապիտ էին այդ երկու փայտերից, որոնք մահվան դատապարտության նշան էին: Հին աշխարհը վախենում էր խաչից, որովհետև խաչը վերջ էր մեղավորի համար: Սակայն տարօրինակ կերպով այդ նույն մահվան գործիքը Քրիստոսի խաչելությամբ, Հիսուսի անմեղ արյան հեղումով իր վրա, բոլորովին իմաստը փոխեց: Խաչը մահվան, վախի, ապրապիի առարկա լինելուց դարձավ փառքի առարկա, հաղթության նշան, և իսկապես քրիստոնյաները իրենց կյանքի բոլոր հաջողությունների ժամանակ խաչն են փառաբանել և խաչի տված զորությանն են ապավինել: Նույն իմաստով մենք այսօր մեր կրծքին ենք կրում այն, մեր եկեղեցիների ճակատին և գմբեթներին ենք դնում այն, որովհետև նրանից այլևս մահ չի բուրում, այլ, ընդհակառակը, նրանից նոր կյանք է ծագում, կյանքի քաղցր, իմաստալից բուրմունքն է նրա միջից տարածվում: Մենք՝ քրիստոնյաներս, այլևս խաչից չենք ապրապիում, ընդհակառակը՝ խաչը մեզ համար տեր և պահապան է դարձել: Շատ հաճախ երբ որևէ բանից ապրապիում և վախենում ենք, խաչակնքում ենք մեր երեսները՝ ասելով. «Ո՜վ Տեր, քո խաչով մեզ պատսպարիր, թող քո սուրբ խաչը ամրության վահան լինի մեզ համար, մեզ պաշտպանի, պահի և պահպանի չարից և նրա հրեշտակներից»:

Այսօր ևս, սիրելի հավատացյալներ, այդ խաչը խորը իմաստ ունի մեզ համար: Սովորական երկու փայտեր չեն դրանք իրար ագուցված, և խաչը պարզապես մի հորիզոնական և ուղղաձիգ նշան չէ մեզ համար: Խաչի երկրնքից երկիր իջնող ուղղաձիգ թևը ցույց է տալիս Աստծու էջքը և շնորհը աշխարհին ու մարդկությանը բերված: Այն խորհրդանշում է Աստծու սերը՝ որպես նշան ու գրավական մարդկությանը տրված Իր Որդու միջոցով և նրա էջքով աշխարհ: Իսկ խաչի հորիզոնական թևը խորհրդանշում է Աստծուն ճանաչելու մարդկության նկրտումներն ու ձգտումները՝ ողջ մարդկության ձգտումը բոլոր ժամանակների ընթացքում: Երկնքից էջքը աշխարհ Աստվածորդու և Աստծուն ճանաչելու մարդկության ձգտումը կազմում են այն գեղեցիկ խաչը, որ մարդկության փրկության միջոցը պիտի լիներ և հաղթանակի խորհրդանիշը մեր կյանքում:

Անվախճան խաչի նշանի մեջ ի՜նչ խորհուրդ է բովանդակվում: Աստված երկնքից երկիր է իջնում, իսկ մարդիկ երկրից ուզում են բարձրանալ երկինք, հասնելու Աստծուն: Հորիզոնական գծով հնարավոր չէր բարձրանալ երկինք, ուստի Աստված գալիս է երկնքից երկիր, այսպիսով խաչի նշանն է կազմվում: Այդ խաչը մեզ զորացնում է, որ կյանքում երբեք չվախենանք չարից, հավատանք խաչի զորությանը, խաչի պահպանությանը, խաչի անխաչակնքում ամեն օր, հատկապես ամեն առավոտ և երեկո աղոթելիս:

խաչի նշանը մեզ համար վահան, զորություն և ամրոց է և մեզ պահպանում է բոլոր տեսակի վտանգներից: Խաչը արգելում է, որ չարն ու սատանան մեզ մերձենան:

Սիրելի հավատացյալներ, խաչի զորության գիտակցությունը գեղեցիկ և հուսադրող մի գիտակցություն է: Ամեն մարդ կյանքում իր պարտականության հանդեպ ունեցած պատասխանատվության գիտակցությանն չափով իր խաչն է կրում: Ժողովուրդն իզուր չի ասում. «Ամեն քրիստոնյա և ամեն մարդ իր խաչն ունի այս աշխարհում»: Ամեն ոք իր խաչը տանում է դեպի Golgotha, որտեղ իր կյանքով և մահվամբ, իր զոհողությամբ պիտի կարողանա արդարանալ, արժվել և արժանանալ տառապածային հավիտենական փառքին և լուսեղեն տեսությանը:

Ամեն անհատ այս կյանքում իր պարտականությունը և պարտավորությունն ունի: Այսինքն ամեն մարդ իր խաչն ունի իր ընտանիքի, իր սիրելիների, իր Եկեղեցու, իր ազգի, իր հողի, իր հարեւանիքի և ամբողջ մարդկության հանդեպ: Ով որ այս գիտակցությունը հասկանում է առնեւատարածական, առնեւաբովանդակալից իմաստով, նրա ուսին դրված խաչը խիստ ծանր է: Այս առումով նաև ծանր է մեր ժողովրդի առաջնորդների ուսին դրված խաչը, որը պետք է թեթևացնենք մեր աղոթքներով և բարի մաղթանքներով: Միաժամանակ պետք է խնդրենք մեր Տիրոջից, որ մեր առաջնորդներին զորավիգ կանգնի, հատկապես կյանքի այս ծանր տարիներին և նրանց խաչը թեթևացնի:

Եկեք սրտեռանդն աղոթենք միմյանց համար, միմյանց օգնենք, մեկս մյուսի խաչը վերցնենք, որպեսզի Աստված բոլորիս օգնի և մեր խաչերը թեթևացնի:

Այսօր հիշատակն ենք կատարում խաչի գյուտի, աղբյուրներից վերսին նրա հանման, այն Քրիստոսակիր խաչի, որ եղավ մարդկության փրկության լաստը: Այսօր նաև մեր կյանքի ճղճիմ մտահոգությունները և անարժեք մտատանջությունները, ընչաքաղցության մեր սին հրազները մոռանանք, թող մեր հավատի, հույսի դռները բաց մնան, ճանաչենք մեր կոչումն ու պարտքը մարդկության հանդեպ: Վեր հանենք մեր մտահոգությունների տակ թաղված խաչը և ճանաչենք նրա զորությունը մեր կյանքում: Թող շարականագրի նման երգենք ու ասենք. «Փառք սուրբ խաչիդ, ալելուիա, խաչելությանդ, ալելուիա, սուրբ հարությանդ, ալելուիա»:

Սիրելի հավատացյալներ, թող Քրիստոսի փրկարար խաչը տեր ու պահապան լինի մեզ, մեր ազգին, ամբողջ քրիստոնյա մարդկությանը այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻՄ

Նոյեմբերի 26-ին Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագի ընթացքում, ձեռամբ թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, քահանայական արբազան ձեռնադրություն և օծում ստացան Վալերիկ սարկավագ Մարտիրոսյանը և Հովիկ սարկավագ Հայրապետյանը:

Նոյեմբերի 25-ին, երեկոյան ժամերգության ընթացքում, տեղի ունեցավ «Ցերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտավիրականությամբ Տ. Բարսեղ քահանա Ղազարյանի, որը վկայեց նորընծաների հոգեկան ու մտավոր պատրաստվածության ու արժանիքների մասին: Ապա նորընծաները խոստացան «յանձն առնուլ եւ կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն եւ հայրապետացն եւ կալ ըստ կանոնաց նոցա», «ամենայն պատրաստութեամբ եւ առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ» և պահել «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդ սուրբ Հայրապետսն ըստ երից սուրբ ժողովոց»:

Կոչման արարողության ավարտին նորընծաները հրապարակորեն արտասանեցին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւնը»-ը՝ ըստ Գրիգոր Տաթևացու սահմանած բանաձևի:

Հաջորդ օրը, հինգշաբթի ս. պատարագի, տեղի ունեցավ նորընծաների ձեռնադրությունը: Պատարագիչ Սրբազան Հայրը արարողությանը մեռոնով օծեց նորընծաների ճակատն ու ձեռքերը՝ վերանվանելով նրանց նոր անուններով՝ Վալերիկ սարկավագ Մարտիրոսյանը անվանակոչվեց Տ. Միհրան քահանա, Հովիկ սարկավագ Հայրապետյանը՝ Տ. Շահե քահանա: Ս. պատարագին ներկա էր Շահե արքեպիսկոպոս Ահեմյանը, ի պատիվ որի էլ նորընծաներից վերջինս ստացավ նրա անունը:

Այնուհետև Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը նորընծաներին տվեց «զսկիհ եւ զմաղզմայն», ի նշան պատարագ մատուցելու իշխանության: Նորընծաները, դառնալով ժողովրդին, տվեցին իրենց առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Ապա Գարեգին Սրբազանը շնորհավորական ու խրախուսական քարոզով դիմեց նորընծաներին՝ մաղթելով նրանց հավատքի ուժ և կարողություն՝ գործելու ի փառս Աստուծո, ի պայծառություն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո:

ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՍԱՑՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

«ՏՕՆ ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԱՑՆ ՄԵՐՈՑ ԹԱԴԷՈՍԻ ԵՒ ԲԱՐԹՈԼՈՄԷՈՍԻ»

«Հուլիք բազում են, եւ մշակք սակաւ.
Արդ աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ
մշակս ի հունձս իւր»:
(ՄԱՏԹ. Թ 37—38)

Երախտագիտության, խոնարհության և անմարելի սիրո զգացումն էր դեկտեմբերի 2-ի շաբաթ օրը հավատացյալ ժողովրդին ի մի բերել Հայաստանյայց Եկեղեցիների, զի տոն էր ողջ հայության համար, տոն՝ աշխարհի բոլոր եկեղեցիներում, զի տոն էր ողջ հայության համար, տոն՝ Սրբոց Առաքելոցն և առաջին լուսավորչացն մերոց Թադեոսի և Բարթողիմեոսի:

Հետևելով, համբառնալուց առաջ տասնեկուսին ուղղած, մեր Տիրոջ պատգամին, թե «**Գնացեք ... և բոլոր մարդկանց քարոզեցեք Ավետարանը**» (ՄԱՐԿ. ԺԶ 16), Ս. Թադեոսն ու Ս. Բարթողիմեոսն իրենց հավատքի ու սիրո սերմերը ցանեցին հայոց հողում՝ դառնալով Հայաստանյայց Եկեղեցու հավերժահաստատ սյուներն ու հայ ժողովրդի հավիտենական կյանքի ոսկի վիրաններն:

Լեփ-լեցուն էր Էջմիածնի Մայրավանքը: Օրվա պատարագիչն էր Հոգեշնորհ Տ. Բագրատ արեղա Գալստյանը: Սուրբ և անմահ պատարագին ներկա էին նաև քրիստոնեական կրոնի ուսուցիչների պատրաստման լսարանների ունկնդիրներ և կիրակնօրյա դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիներ:

Հավատո պատարագի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանի հանդիսությունների դահլիճում,Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինի նախագահությամբ, տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված քրիստոնեական դաստիարակության և կրթության օրվան:

Հանդիսությանը ներկա էին Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ Հայր Սուրբեր, Բարեշնորհ ասրկավագներ, ՀՀ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատար Վ. Գևորգին, ՀՀ կրոնի գործերի պետական խորհրդի

ռթղի ճանապարհի պաշտոնյանդ է, Սուքիա, 45 Ազգային ժողովի պատգամավոր, վարչապետի խորհրդական Ռուբեն Ռուբինյանը, Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, Ազգային ժողովի պատգամավոր Ռուբեն Հայրապետյանը, Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Ոսկանյանը, Ազգային ժողովի պատգամավոր Արտակ Զաքարյանը, Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Ռուստամյանը, Ազգային ժողովի պատգամավոր Արամ Սարգսյանը, Ազգային ժողովի պատգամավոր Արամ Վարդումյանը, Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Աշոտ

ԱՂՋԻԿԻ ՀԱՑՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՐ

Թառը Քեզ, Հայր երկնավոր, որ պարգև տվիր մեր ազգին։
Երկրի կայքերից մարդկային աչքերի չհասնող, մութ պահարանների մեջ պահված ես Դու մեր ազգի հոգին, երկրի ոտքերից տարուբերվող ձեր աչքերը քար անելով Թող Թառը և Երգողները։

Ծովի վրայ ջանում ձեռներ անիծի իջած դիպուկ,
Արտիկս, որ ի խաչ էր կիսա՛ լուսը առած,
Ի խաչին տակը լուսե ու ճառագ, գառ գրեց ի գաշտ լուսին
Հարցում,

Ձեռներ իջած դիպուկ, Ծովի վրայով։

Այիշգուցի ան ողկերով լույս տվեր մեր իմ աչքերը՝ տեսնելու մեր ազգի ինչպես ձեռքերով ձգվող ոտքերը, որ ամեն մեկը իր տեղն ունենար ազգի մեջ, ինչպես մատները ձեռքի վրա։ Ես տեսնում եմ, որ ոտքերը ազգի մեջ ամենից շատ են, ամենից ուժեղ են, ամենից շատ են աշխատում, ամենից շատ են տանջվում, ամենից շատ են ծռվում, ամենից շատ են ճանապարհ գնում, ամենից շատ են ցեխոտվում, ամենից շատ են ծակվում, ամենից շատ են ցավում, ամենից շատ են կաղում, ամենից շատ են ընկնում, ամենից շատ են վիրավորվում, ամենից շատ են ուռչում, ամենից շատ են ճաքում, ամենից շատ են կոտրվում, ամենից շատ են ոտնակոխ լինում։

Երևակայիր, որ տեսար իր գործերից ինչ ես հիշում, ազգս, ինչ ես հիշում, ազգս, երևակայիր ինձ հետ։ Ես, քարավանի ձիերից ետ մնացած, ինչ ես հիշում, ազգս, ինչ ես հիշում, ազգս, ինչ ես հիշում, ազգս

ցիր այդ մասին: Ես իմ մասին եմ խոսում, որ ես իմ ասածի տերն եմ:

Առաջին այլասերը, որ տանից հայց պահանջեցին տատիկիս ամուսինը, ասաց, թե նրան հայ կին պետք չէ: Ամենուրեք: Ես տեսել եմ մի քանի հարյուր մարդ տանը, բայց Ասլանի նման գեղեցիկ չեմ հանդիպել: Նա ամեն մի կնոջ հետ կարող էր ընկերանալ: Ամեն օր ես նրան տեսնում էի նոր ընկերուհու հետ, ամեն անգամ նա ինձ համար նոր խաղալիք էր գնում: Ես այդ ամենը հասկանում էի, բայց չէի կարող նրան ասել, որ ինձ համար ամենից թանկ նա է: Ես ամաչում էի: Ես ամաչում էի նաև նրանից, որ նա ինձ համար ամենից թանկ մարդն է: Ես ամաչում էի նաև նրանից, որ ես ամաչում եմ:

Հարևանուհիս, իմ տարիքի մի փոքր մեծ աղջիկ, ամեն անգամ ինձ տեսնելիս ասում էր. «Ասլանամայրը եւ մի միայն քեզ հարցաքննում ու խոսում նրա հետ: Ես ատում եմ նրան: Ես ատում եմ նրան, որովհետև նա ինձ համար ամենից թանկ մարդն է: Ես ատում եմ նրան, որովհետև նա ինձ համար ամենից թանկ մարդն է: Ես ատում եմ նրան, որովհետև նա ինձ համար ամենից թանկ մարդն է:

Հարևանուհիս մեր տան հետ կապված ամեն ինչ գիտեր: Նրա հայրը Հասան աղան էր, որ

պետի, զաւակ իմէի»։ Եւ կնքամարդի գիրքսաւոր մեծին քահանայապետի կամքին մէջ, իմչպես գիրքսաւոր ինք գնացած մեծին հետ ամենայն ազգաց իր քահանայապետութեան մէջէն, և սա՝ առաքելութեան գործոցն մեծ չէ երեսից, որ էտեղ մտա կիսովին։ Ոչ թե մեր, այլոցն սուտ, պարտութիւնից մեծ է քահանայապետութեան, որ էտեղ չէ մեր կամքի, իսկ մեր՝ ամենայն ազգաց։ Ուր թե մեր ազգն ամենայն ազգաց մէջ, ամենայն ազգաց մէջ ամենայն ազգաց մէջ։

Եւսեբիոս եպիսկոպոսն, որ գրէ մեզ մեծ մեծ պատմութիւն, որ է, որ էտեղ չէ երեսից, իմչպես գրէ մեզ մեծ պատմութիւն և ոչ թե պատմութիւն։ Այս ուրեմն պատմութեան մէջ է մեծ մեծ մեծ

Պողոս Առաքյալն էլ ասում է, թե վասն Քրիստոսի պատգամավոր ենք, Աստված մեզմով կխոսի, մենք ամբասատորներն են, պատգամավորներն ենք Քրիստոսի: Ինչպես մի դեսպան մի երկրում կլինի ներկայացուցիչը այդ երկրի պետին, այնպես էլ մենք Աստուծո, Քրիստոսի դեսպաններն ենք աշխարհում: Ու տեսեք դուք այն մյուս տողը, ուր Պողոս առաքյալ ինքը կնկատագրի իր սեփական առաքելությունը Գաղատացվոց թղթի առաջին գլխում: Նա ասում է. «Հայտնում եմ ձեզ եղբայրներ, թե այն Ավետարանը, որ ես ձեզ ավետարանեցի, մարդկային ավետարան չէ, քանզի ես մարդուց չառա այն, որևէ մեկից չսովորեցի, այլ Հիսուս Քրիստոսի մի հայտնությունից: Արդարև, դուք լսած կլինեք, թե հրեության մեջ եղած ժամանակս երբեմնի իմ ընթացքի մասին, թե ինչպես էի հալածում Աստուծո Եկեղեցին, քանդում էի այն և հրեության մեջ ավելի առաջ էի գնացել, քան իմ շատ հասակակիցները, որոնք իմ սերնդից էին: Շատ ավելի նախանձախնդիր էի իմ հայրենի ավանդություններին» (Գաղ. Ա 11—14):

Այսինքն՝ հալածում էր ինքը քրիստոնյաներին, որոնց մեջ տեսնում էր հրեական կրոնքի քանդարարներ: Դուք գիտեք այդ բոլորը, ասում է, որքան անկեղծորեն: Այնուհետև շարունակում է. «Բայց երբ կամեցավ Աստված հայտնել ինձանով իր Որդուն, որպեսզի ավետարանեմ նրան հեթանոսների մեջ, այն ժամանակ, իսկույն, ոչ մեկի խորհրդին չդիմեցի, ոչ էլ Երուսաղեմ բարձրացա նրանց մոտ, որ՝ ինձնից առաջ առաքյալներ էին, այլ գնացի Արաբիա և վերադարձա Դամասկոս: Ապա երեք տարի հետո եկա Երուսաղեմ՝ տեսնելու Պետրոսին և 15 օր նրա մոտ մնացի: Առաքյալներից ոչ ոքի չտեսա, բացի Հակոբոսից՝ Տիրոջ եղբորից: Եվ ինչ որ գրում եմ ձեզ, ահավասիկ, Աստուծո առաջ եմ ասում, չեմ ստում, ապա եկա Ասորիք, գնացի Կիլիկիայի կողմերը, և ես անձնապես անծանոթ էի եկեղեցիների հավատացյալներին, որոնք լսած էին, թե՝ «նա, ով մեզ այն ժամանակ հալածում էր՝ այժմ քարոզում է այն հավատը, որ մի ժամանակ քանդում էր: Եվ ինձնով փառավորում էին Աստծուն» (Գաղ. Ա 15—24):

Խորունկ միտք է: Սողոմոն դարձել էր Պողոս: Մի կերպարանափոխություն էր անցել նրա անձի միջից: Հալածիչը դարձել էր տարածիչ: Այն, որ թշնամի էր, դարձել էր բարեկամ, նա, ով հակառակորդն էր, այժմ դարձել էր հավատավորը, նա, որ քանդարարն էր, այժմ դարձել էր ինքը առաքյալ:

Առաքյալ լինել կնշանակի անձդ զգալ նրա մեջ, ով քեզ առաքում է: Ինչ որ անում ես, նա է փառավորվում քո անձի միջից: Շատ որիշ տեղեր կարդալ է վկայակոչել առաքելական թղթերի և Ավետարանների մեջ: Ես ուզում եմ մի քանիսն ընտրել, որովհետև չեմ ուզում ընդհանուր խոսք ասել, դրվատական, ներբողալից արտահայտություններ ունենալ: Ուզում եմ, որ մենք ճշգրիտ հասկանանք Աստուծո միտքը առաքյալի մասին, այնպես, ինչպես որ դա նկարագրվում է, պարզվում է, պարզաբանվում է Սուրբ Գրքին մեջ:

Պողոս առաքյալն ինքն իր առաքելությունը ստացել էր Հիսուսից, երբ Դամասկոսի ճամփու վրա երևաց Փրկիչը տեսիլքի մեջ իրեն: Նրա հարությունը իր առաքելության ուժն է: Եվ ինքն ասում է, որ հարուցյալ Փրկչին, որին ես մարմնապես, ֆիզիկապես չեմ աշակերտել, բայց Նա ինձ հանդիպեց, հանդիպեց ինձ և տվեց այս առաքելությունը: Հետևաբար, առաքյալ լինելու համար անհրաժեշտ էր Հիսուսին անձամբ տեսած և աշակերտած լինել: Ինքն ասում է՝ ոչ: Եթե ֆիզիկական Նրա մարմնատեսիլ կերպարանքին դու չես հանդիպել, դա չի նշանակի, որ Նրան չես հանդիպել: Եթե Նա քեզ քո հոգու մեջ հանդիպել է, կնշանակի քեզ նշանակել է հավատքի:

Շատերն այսօր Պողոս առաքյալի օրինակը չարաշահում են: Եվ ես պիտի գամ դրան քիչ ետքը, երբ ասեմ, թե ո՞վ է ճշմարիտ և վավերական առաքյալը: Հիմա մեր հայացքը սևեռենք Ավետարաններին: Հիսուս Ինք Իրեն ներկայացնում է որպես առաքյալ, զոր «Աստուած առաքեաց»: Թերևս հիշում եք մի օր, երբ առաքյալներն ուզում էին Իրեն հարց տալ, ասեցին, որ անոթի ես, մի ամբողջ օր չես ճաշել: Թողեք, ասեց, այդ կերակուրը, «Իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս այնորիկ, որ առաքեացն զիս, և կատարեցից զգործն նորա» (Հովհ. Դ 34): Իմ կերակուրս, իմ գոյության անունդն այն է, իմ գոյության իմաստն այն է, որ ես կատարեմ կամքն անոր, որ զիս ուղարկեց: Եվ պիտի կատարեմ Նրա գործը՝ զգործն Նորա, ոչ իմ գործը: Եվ քանի անգամ և ավելի ուժեղ ձևով Հիսուս ասեց. «Ոչ կարեմ ես յանձնել առնել և ոչինչ, այլ որպէս լսեմ՝ դատիմ և դատաստան իմ արդար է» (Հովհ. Ե 30): Ինչո՞ւ արդար է Իր դատաստանը. «Զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս» (Հովհ. Ե 30): Ու տեսեք այս մյուս խոսքը. «Այս է գործն Աստուծոյ, զի հաւատասջիք զայն, զոր առաքեացն նա» (Հովհ. Զ 30): Հիսուս ասում է, թե երկնքից իջա ոչ թե իմ կամքս կատարելու համար, այլ նրա, ով ինձ ուղարկեց: Եվ ով ինձ ուղարկեց, ճշմարիտ է, և ես զոր լուայ ի նմանէ՝ այն, ինչ որ ես նրանից լսեցի, այն է, որ ես խոսում եմ աշխարհին:

Մի օր հրեաները Հիսուսին մոտեցան և ասացին. «Դու մեր հայրերի հավատքին դավաճանում ես»: Եվ սկսեցին հալածել: Ասաց. «Իմ ո՞ր մեկ արած գործի համար ինձ հալածում եք»: «Մենք քեզ քո արած գործերի համար չենք հալածում,—ասացին,—մենք քեզ հալածում ենք քո այն խոսքերի համար, որոնք հայհոյություն են: Դու մարդ ես և քեզ Աստված ես ներկայացնում: Դրա համար ենք մենք քեզ հալածում: Դա հայհոյություն է: Դու չես կարող մարդ լինել և Աստված լինել»: Ինք դարձավ և նրանց ասաց. «Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի հաւատայք ինձ (եթե ես իմ Հոր գործերը չեմ կատարում, ինձ մի հավատաք), ապա թէ գործեմ (և եթե ես գործում եմ նրա գործերը), (նոյնիսկ) թէ եւ ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք», որպեսզի գիտնաք և իմանաք, թե Հայրը իմ մեջ է, և ես Հոր մեջ եմ (Հովհ. Ժ 37—38): Այս էր Հիսուսի ուժը: Ուրեմն, առաքելության ուժը Աստուծո մեր մեջ լինելուն և մեր անձի միջից ժողովրդին պաշտվելու իրողության մեջ կկայանա:

Հիսուս, երբ Ղազարոսի գերեզմանի առջև կանգնել էր, աչքերը դեպի երկինք բարձրացրեց և ասեց. «Հայր, գոհանում զքէն, զի լուար զիս»՝ «գոհություն եմ տալիս քեզ, Աստված, որ ինձ լսեցիր, ես իմանում էի, որ ամեն ժամ ինձ լսում ես դու, բայց այս ասում եմ ժողովրդի համար, որ իմ շուրջը կան, որպեսզի նրանք էլ հավատան, թե դու ես, որ ինձ ես առաքել» (Հովհ. ԺԱ 41—42): Եվ այն ատեն ասում է. «Ղազարոս, ե՛լ, արտաքս»: Եվ Աստված Ղազարոսին դուրս է բերում գերեզմանից:

Բարեկամներ, այնքան գեղեցիկ հատվածներ կան, որ ես էլ շվարել եմ, թե ո՞ր մեկը մեջ բերեմ ձեզ համար: Կցանկանայի հիշել հատկապես այն վերջին աղոթքը, Հովհաննու Ավետարանի 17-րդ գլուխը: Այդ գլուխը ամենն վերջին աղոթքն է: Մի օր կարդացվելիք գլուխն է, այդ գլուխը Հիսուսի գերագույն աղոթքն է: Մի որոշ հանգերգային ոճով գրված բանաստեղծություն կա նրա մեջ: Հիսուս ասում է. «Ով Հայր, ես Քո անունը հայտնեցի մարդկանց, որոնց Դու ինձ տվեցիր այս աշխարհից, նրանք Քոնն էին և ինձ տվեցիր նրանց, և նրանք Քո խոսքը պահեցին: Հիմա իմացան, որ ամենը, ինչ ինձ տվիր, ես նրանց

տվեցի, ինչ որ Դու ինձ տվիր, ես նրանց տվեցի: Եվ նրանք ընդունեցին և ճշմարտությամբ ճանաչեցին, որ ես Քո մոտից ելա և նրանք հավատացին, որ Դու առաքեցեր զիս: Արդ, ես նրանց համար եմ աղաչում: Ես չեմ աղաչում աշխարհի համար, այլ նրանց համար, որոնց ինձ Դու տվեցիր, որովհետև նրանք Քոնն են: Ինչ որ իմն է, բոլորը Քոնն է, և ինչ որ Քոնն է, այն իմն է, և ես նրանց մեջ եմ փառավորված:

Ինչպես Դու ինձ ուղարկեցիր աշխարհ, ես էլ նրանց ուղարկեցի աշխարհ: Ես ինձ սրբացնում եմ նրանց համար, որպեսզի նրանք էլ սրբացվեն ճշմարտությամբ, ինչպես Դու, Հայր իմ, իմ մեջ և ես Քո մեջ, որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն, որպեսզի աշխարհն էլ հավատա, թե Դու առաքեցիր զիս: Եվ դու առաքեցիր զիս հինգ անգամ կրկնված է հանգերգի պես, որ երբ ես Քո մեջ լինեմ, և Դու իմ մեջ լինես, երբ զգամ, որ իմ միջից Աստված է խոսում, այն ատեն պիտի հավատան, որ Դու ես ինձ առաքել»:

Այսպիսի ուժեղ պատկերացումներով ենք մենք տեսնում Քրիստոսի հայեցողությունը առաքելության մասին: Ի՞նչ եզրակացության ենք հանգում այս բոլոր ընթերցվածներից: Առաջին եզրակացություն՝ առաքելությունը կապված է Աստծուն: Նրա բնականորեն հաստատված, Նրա կողմից հաստատված գլխավոր ներկայացուցիչը Եկեղեցին է: Բնականորեն ամեն մարդ կոչված է քրիստոնեությունը քարոզելու իր կյանքով, իր խոսքով և իր գործով, բայց հեղինակությամբ խոսելու իշխանությունը առաքյալներին է տրված և նրանց միջոցով՝ Եկեղեցուն: Փաստը՝ անհավասիկ: Վերջին պահն է երկրի վրա հարուցյալ Փրկչի: Եվ տասնմեկ աշակերտները, որովհետև տասներկուերորդը՝ Հուդան, հեռացել էր, տասնմեկ աշակերտները գնացին Գալիլիա, այն տեղը, ուր Հիսուս նրանց հետ ժամադրվել էր: Երբ Նրան տեսան, երկրպագեցին Նրան, և ոմանք երկմտեցին, տատամսեցին, կասկածեցին: Հիսուս մոտենալով՝ խոսեց նրանց և ասաց. «Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա, ինչպես Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացեք, ուրեմն, աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցեք հանուն Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո: Ուսուցանեցեք նրանց պահել այն բոլորը, ինչ որ պատվիրեցի ձեզ և ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում, մինչև աշխարհի վերջը» (Մատթ. ԻԸ 18—20):

Բարեկամներ, եթե մենք առնենք Հիսուսի ասածները մյուս Ավետարանների մեջ, այնտեղ կտեսնենք դուք, թե ինչպես Հիսուս Իր առաքյալներին իշխանություն կտա, որ իրենք էլ իշխանությունը փոխանցեն իրենց հաջորդներին: Ոչ թե սոսկ պատվեր կտա, ոչ թե հանձնարարություն, ոչ թե թելադրություն, այլ իշխանություն՝ ինչ որ կապեք երկրի վրա, կապված լինի երկնքի մեջ, ինչ որ քակեք երկրի վրա, քակված լինի երկնքում:

Հիսուսի բազում վկայությունների միջից ես ընտրում եմ հետևյալ մեկ հատվածը գոնե, որպեսզի մենք այդ հատվածը կարդալով, հասկանանք, թե Հիսուս ինչ է ուզում ասել Իր առաքյալներին՝ առաքելության սահմանումի տեսակետից: Իր մոտ կանչելով Իր տասներկու աշակերտներին, նրանց իշխանություն տվեց, տեսեք, պատվեր տվեց չի ասում, իշխանություն, հեղինակություն տվեց պիղծ դևերի վրա, հանելու դրանք և բժշկելու ամեն տո տասներկուսին Հիսուս ուղարկեց և նրանց ասաց. «Հեթանոսների շրջաններով չգնաք և սամարացիների որևէ քաղաքը չմտնեք, այլ ավելի շուտ գնացեք Իսրայելի տան կորած ոչխարների համար: Երկրորդ՝ երբ գնաք, քարոզեցեք և ասացեք. «Երկնքի Արքայությունը մոտեցել է»: Երրորդ՝ հի-

վանդներին բժշկեցեք, բորոտներին մաքրեցեք, դևերին հանեցեք, ձրի առեք և ձրի տվեք: Մի ունեցեք ոսկի, ո՛չ արծաթ և ո՛չ էլ պղինձ դրամ ձեր գոտիների մեջ, ո՛չ պարկ ճանապարհի համար, ո՛չ երկու զգեստ, ո՛չ կոշիկներ և ո՛չ էլ ցուպ, որովհետև մշակն արժանի է իր կերակրին: Ո՛ր քաղաքը, ո՛ր գյուղը մտնեք, հարցրեք, թե ով է այնտեղ արժանավորը և այնտեղ մնացեք, մինչև այդտեղից դուրս գաք: Ողջույն տվեք և ասացեք՝ «Ողջույն այս տանը»: Եթե տունը արժանի է, ձեր ողջույնը նրա վրա թող իջնի, եթե արժանի չէ, ձեր ողջույնը ձեզ կվերադառնա» (Մատթ. ժ 5—13): Նրանից մի ամբողջ ծրագիր տվեց:

Հիսուս ոչ թե առաքելությունը այսպես բարեպաշտական զգացումի իբրև արտահայտություն տվեց Իր առաքյալներին, այլ Իրենից հետո Իր առաքյալները ինչ պիտի անեին, նրանց ուղեգիծը ճշտեց և բազմաթիվ ուրիշ, ուրիշ վկայություններ, հատկապես այս մեկը. «Որ ձեզ լսէ, ինձ լսէ, եւ որ զձեզ անարգէ, զիս անարգէ, և որ զիս անարգէ, զառաքիչն իմ անարգէ, և որ ինձ լսէ, լսէ այնմիկ, որ զիս զառաքեաց» (Ղուկ. ժ 16): Նրանից, առաքյալն ո՞վ է: Այն, որին երբ որ լսենք, լսած կլինենք Քրիստոսին, իսկ եթե առաքյալին անարգենք, անարգած կլինենք Քրիստոսին՝ եթե Քրիստոսին անարգենք, Հայր Աստծուն անարգած կլինենք, և ես իմ կողմից պիտի ավելացնեմ, եթե Աստծուն անարգում ես, դու քեզ անարգում ես, դու քեզ ժխտում ես, որովհետև դու նրա արարածն ես: Այսպիսի խորությամբ Հիսուս ընդգծել է առաքելության գաղափարը, տիպարը և, մանավանդ, առաքելության ուղին է գծել մեր բոլոր գալիք առաքյալների համար: Հետևաբար, Հիսուս առաքելությունը տվել է որպես իշխանություն, ոչ թե միայն իբրև պարտականություն:

Այն քարոզիչները, որոնք այժմ ասում են, նաև դարերի ընթացքում շատերն էլ գտնվեր են, որ նման բաներ ասել են, թե մենք Աստծուց ենք ուղարկվել, թե ես գիտեմ, որ Սուրբ Հոգին է ինձ ուղարկել: Գրեթե բոլոր աղանդավորները այսպես են ասում: Նրանց մի պատասխան կա. քարոզչության իշխանությունը Աստծուց է գալիս և Աստված դա տվել է Քրիստոսին, Քրիստոսը դա տվել է Իր Եկեղեցուն, առաքյալների միջոցով փոխանցվել է Եկեղեցուն: Արդ, ամեն մարդ քրիստոնյա է, առաքյալ է, եթե պիտի տարածի և ոչ թե հեղինակություն պիտի տա ինք իրեն եկեղեցի հիմնել: Դա իր իրավունքը չէ: Դա առաքյալների մեզ թողած ժառանգությունն է:

Պողոս առաքյալը իր թղթերում հաճախ դատապարտում է ուրիշ առաքյալներին, չակերտների մեջ դրված առաքյալներին: Սուտ մարգարեներ են, սուտ առաքյալներ են: Ինչո՞ւ սուտ են: Որովհետև Եկեղեցուց չեն ստացած իրենց իշխանությունը: Այսպես, հիմա, օրինակի համար, ես կարող եմ գնալ ծխից, իմ գրադարանից բացել մի գիրք և ասել ձեզ՝ «Ընթերցուածս ի Թովմասու Աւետարանէն»: Կլլա՞: Թովմասու Ավետարան կա, բայց ինչո՞ւ չենք կարող, որովհետև Եկեղեցին ասել է, որ չորս Ավետարան կա և դրանից դուրս մյուսներն անվավեր են: Այսպես մենք կընկնենք մի անիշխանական վիճակի մեջ: Հիսուսի անունով շատերն էին խոսում, և Եկեղեցին՝ Քրիստոսի հաստատած մարմինը, նա էր, որ ասեց, թե այս է Հիսուսի խոսքը: Ամեն մեկս առաքյալ ենք, եթե ապրենք քրիստոնեությունը և ճառագայթենք: Բայց առաքյալը նա է, որ նշանակված է Քրիստոսի Ավետարանն իբրև Եկեղեցի, սերմ տարածելու համար:

Բարեկամներ, Եկեղեցու պատմության մեջ քարոզությունը հառաջացավ, առաքյալները, աշակերտները, նրանց հետևողները, առաջին դարից սկսյալ, տարածվեցին աշխարհի չորս ծագերը, նախ Միջերկրական ծովի շուրջը և ապա դեպի Արևելք, դեպի Միջին Արևելք, դեպի Եվրոպա, հատկապես Հռոմի անկումից հետո, հինգերորդ դարին, երբ բարբարոս ցեղերը Արևմուտքում քրիստոնյա դարձան: Առաքյալների տարածումը գիտնականների կողմից հաճախ թվում է առասպելական: Ես տակավին նոր եմ կարդացել մի գրություն, այսպես կոչված՝ գիտական, որ ասում է, թե 12 առաքյալներին վերագրել որոշ աշխարհներ, օրինակի համար՝ Հնդկաստանը Թովմաս առաքյալի քարոզության դաշտը, Եգիպտոսը Մարկոս առաքյալի քարոզության դաշտը, Երովպիան Փիլիպպոս առաքյալի քարոզության դաշտը, Հայաստանը Թադեոս և Բարթողիմեոս առաքյալների քարոզության դաշտը, առասպել է: Ընդունենք ճիշտ չէ, առաքյալները մնացին Երուսաղեմ, և ես հարց եմ տալիս. բոլոր այս ազգերի գրականությունը կեղծիքի վրա՞ է հիմնվել: Դա անըմբռնելի է, անհասկանալի:

Երբ մեր առաքյալները եկան Հայաստան և քարոզեցին, բնականորեն, մենք այդ օրվանից մնացած փաստեր չունենք, որովհետև մենք գիր և գրականություն չունեինք այդ ժամանակ: Բայց նշանները: Եվ այդ քարոզությունը ոչ մի ձևով չի կարելի ուրանալ, առաքյալների կողմից եղած քարոզությունը: Դա ինքնահասկանալի է ինձ համար, գիտնականների համար, որոնք ավելի կուզեն գիտնական երևնալ, քան գիտնական ըլլալ: Ես առաջին դարերի քրիստոնեության համար պիտի ասեմ հետևյալ չորս գլխավոր երևույթները: Չպիտի մոռանաք, դա առաքելության հետ կապված երևույթ է: Առաջին՝ առաջին դարերի քրիստոնյաների խանդալից կյանք՝ էնտուզիազմ: Նոր էին տակավին Հիսուսի հիշատակները իրենց մեջ արձագանքել, և այնպիսի ուժականությամբ նրանք քարոզում էին, որ ամեն մարդ զարմանում էր: Ի՜նչ համարձակություն: Ներքին հոգեկան եռացող վիճակ մը ունեին: Ինչպես Պողոս առաքյալն ասում է՝ հոգվով եռացեք (Հռոմ. ԺԲ 11):

Երկրորդ՝ հոգևոր գկարագիր ուներ քարոզությունը: Այսինքն, բյուրեղ է, այն կրոնական ապրումն է, որ Աստված մարդուն կկապե: Չունեին տակավին այն հետագա դարերի քարոզության գկարագիրը, որով մարդիկ քարոզում էին դիրք, աստիճան, հեղինակություն, իշխանություն, երկիր գրավելու իմաստով: Զ-Քրիստոս թարգմանի՝ իմ հավատս չեմ կարող իմ մեջ պահել, հավատքս ինձ մղում է: Այդ է գիտակցությունը: Եվ լատիներեն մի առած կա, կըսե մեկ անձով քրիստոնյա ըլլալը քրիստոնյա ըլլալ չէ: Ուրիշին չես կարող քրիստոնյա անել, քու լինելդ ինքնաբավորեն ճիշտ չի: Այս էր նրանց հասկացողությունը:

Երրորդ՝ արյան վկայություն: 2—3-րդ դարու ափրիկյան Եկեղեցու մեծագույն դեմքերից Տերտուղիանոսը մի խոսք է ասել. արյունը քրիստոնեից սերն է քրիստոնեի՝ քրիստոնյայի արյունը սերն է քրիստոնեության տարածման համար: Արդ, քրիստոնյաները քարոզում էին իրենց քարոզության ճշմարտությունը հաղորդելու համար, մինչև իսկ իրենց կյանքը տալու գնով: Եթե դու քո գաղափարի համար զոհվել չգիտես, ես քո գաղափարը ինչու հարգեմ: Վասն ինչի՞ եկա, եթե ոչ կյանքի համար: Հետևաբար այն ուժ է, անդիմադրելի ուժ է: Ո՛չ կայսեր բանակը, ո՛չ հռոմեական լեգեոնականները կարողացան այս ուժը խորտակել: Հռոմեական Կայսրության կրկեսների մեջ, երբ քրիստոնյաներին նետում էին, երբ գալիս էին առյուծ, վագր և ուրիշ կենդանիներ, հոշոտում էին նրանց մարմինները, և ժողովուրդը նստա-

բաների վրա ճաոած հրճվում էր, երբ կայսրը այդ տեսարաններով ժողովրդին գոհացում էր տալիս, որ քաղաքական հարցերով չզբաղվեն, այդ բոլոր երևույթների հետին մի չտեսնվող երևույթ կար: Ճաոն-շաոները, երբ տուն էին վերադառնում, իրենք իրենց ասում էին՝ այս ի՞նչ բան է, որ մարդ կարող է նույնիսկ գազանի բերնի մեջ հոշոտվել և այդ հավատը չուրանալ:

Եկեղեցական հայրերից Իգնատիոս Անտիոքացին, որ գրվում է Իգնատիոս Աստվածապգյաց, Աստված իր վրա հագած, ճաո ասում է, երբ ինքն էլ արտրվեց և կտարվեր կրկես, որովհետև եպիսկոպոսն էր ինքը և շատերն ազեցին ինք ազատել: Ոչ, ասաց, մի փորձեք գիս ազատել: Ես պետք է գոբեկի նման գազանի բերնին մեջ աղորիք դառնամ, որպեսզի դուք հաց ուտենաք: Ինչպես ցորենը ջրաղացին աղորիքի մեջ կաղացվի, այլուր կդառնա և այրուից հաց կթխեն, այնպես էլ իմ մարմինը գազանի բերնին մեջ աղորիքի պես պետք է որ փշրվի, պետք է որ աղացվի, որպեսզի դուք կարենաք հոգևոր հաց ուտենաք: Այս բոլորն այնքան ազդեցին, որ Հռոմի իշխանությունները կամ իշխանները, որոնք քրիստոնյա կամ քրիստոնեության դարձան, ոչ թե առաքյալների խոսած խոսքերից հետո միայն դարձան, այլ այդ քրիստոնյաների վկայությամբը, վկայություն, որ ես ուզում եմ կոչել արյան վկայություն, վկայություն ոչ խոսքով, ոչ արարքով, այլ կյանքը տալով, արյունով:

Բարեկամներ, չորրորդ դարին սկիզբը, քրիստոնեական քարոզչության, եղել է քրիստոնեական ջատագովական գրականությունը, երբ քրիստոնյա հայրերը պաշտպանում էին քրիստոնեությունը, քրիստոնեությունը ժխտող գրություների հեղինակներից՝ կայսրերից, փիլիսոփաներից, հրեաներից և հեթանոսներից:

Հատկապես 19-րդ դարում քրիստոնեությունը տարածվեց Աֆրիկայում, Ասիայում: Այն ատեն, սակայն, երբ բոլոր քրիստոնյա Եկեղեցիները տարածվեցին Հնդկաստանում, Ծայրագույն Արևելքում, Ափրիկեում, Հարավային Ամերիկայում և ուրիշ երկրներում, այնտեղ ապրողները տեսան, որ մեկ քրիստոնյան մյուսից տարբեր բան է ասում և մեկը մյուսին հակառակ բան է ասում: Եվ եղավ մի օր, երբ հինդիկ քրիստոնյաներ, ճորտադարձ, հատկապես երկու եղբայրներ, քրիստոնյա դարձեր էին: Մեկ եղբայրը Դելլի քաղաքն էր ապրում և եղբորը գրեց, որ մի այլ ճահանգի մեջ էր ապրում, ասաց. «Եղբայր, ես գտա մի կրոնք, որ ինձ երջանկություն է տալիս, քրիստոնյա դարձա: Ուզում եմ, որ դու էլ փնտրես, գտնես այս կրոնքը»: Եղբայրն իրեն կպատասխանի. «Աննոգ կաց, եղբայր, ես էլ քրիստոնյա դարձեր եմ»:

Երբ երկու եղբայրները քով-քովի եկեր են, որ տոնեն իրենց այդ երջանկության աղբյուրին գյուտը և տեսել են, որ իրար հետ եղբայր չեն այլևս, որովհետև մեկը կաթոլիկ էր, մյուսը՝ բողոքական: Եվ նրանք միաձայնաբար մի ճամակ գրեցին: 1910 թվին Էդինբուրգ քաղաքին մեջ միջազգային մի ժողով եղավ միսիոներական կազմակերպությունների: Այնտեղ ասացին՝ մենք ինչի՞ համար գնացինք Հնդկաստան, Աֆրիկա, ուրիշ երկրներ: Անջատվածներին միացնելու և եղբայրացնելո՞ւ, թե եղբայրներին քաժանելու և պառակտելու: Մենք ի՞նչ ենք անում: Մենք Աստծուն ենք դավաճանում, որովհետև մենք զմեզ ենք առաքյալներ կարծում և ոչ թե Աստուծո առաքյալները: Դա էր, որ խիղճը ցնցեց ամբողջ քրիստոնյա եկեղեցիներին և այդ թվականը, 1910-ը դարձակետ եղավ և կազմվեց «Միջազգային առաքելության խորհուրդ» կազմակերպությունը, որ ջանաց համադրել այս բոլորը:

Ինձ համար երջանկագույն պահերից մեկն էր իմ կյանքի, երբ 1961 թվին Դելլի քաղաքն էի և Համաշխարհային Եկեղեցիների Խորհրդի երկ-

որդ սիեզերական ժողովն էր գումարվում ու երեք հազարից ավելի քրիստոնյաներ ներկա էին այնտեղ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը և Միսիոնարությունների Համաշխարհային Խորհուրդը իրար միացան, իրար մերվեցին և Միջազգային Միսիոներական ասոցիացիան՝ միջազգային միսիոներական կազմակերպությունը դարձավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի մեկ բաժանմունք: Այնու առաքելությունը չնկատվեց այսինչ մարդին, այսինչ կազմակերպության գործ, Եկեղեցու գործ: Միսիոնը վերստին Եկեղեցու էության և Եկեղեցու կատարած գործի սրտի մեջ տեղավորվեց, որովհետև 19-րդ դարին ինչ պատահել էր՝ մարդիկ եկեր էին, ընկերություններ կազմեր էին, դրամ հավաքեր էին և մեյշընըրի սոսայըթիզ կասեն, միսիոներական ընկերակցություններ, միսիոներու հատուկ խորհուրդներ նազմեր էին, և իրենք էին առաքում միսիոներներին, իրենք էին տալիս դրամ: Եկեղեցու հետ կապ չունեին: Ուրեմն միսիոնը ազատվեց Եկեղեցու առաքելությունից և դա է, որ միսիոնը վերածեց կտոր-կտոր գործերի և Եկեղեցու հոգուց դուրս բերեց այդ ամբողջ գործունեությունը և ահավասիկ 1961 թվին էր, որ այդ միացումը եղավ և նոր ճանապարհ բացվեց Եկեղեցիների և առաքելությունների համար:

Այսօր Եկեղեցին գտնվում է լուրջ հարցի առաջ:

Ի՞նչ է առաքելությունը: Եվ այսօր վերադառնում ենք 19 րդ դարի այդ պատկերված վիճակով առաքելությանը: Եվ դրանք նոր անուններն են, այն աղանդավորների անունները, որոնց մասին խոսվում է, որովհետև նրանք իրենք իրենց Եկեղեցի չեն զգում: Նրանք Եկեղեցու հետ կապ չունեն: Նրանք անհատներ են, որոնք ինչ-ինչ նկատումներով, ունենք թերևս որոշ անկեղծությամբ Սուրբ Գիրքը կարդալով իրենց մտքի մեջ տեղավորում են մի գաղափար և այդ գաղափարն ուզում են տարածել և դրանով Եկեղեցի հիմնել: Դրա իրավունքը չունեն: Ուրիշներ ուրիշ պատճառով են անում: Բայց այսօր իմ կարևորագույն պատգամներից մեկը ձեզ հետևյալն է՝ այնու շատ մի խոսեք աղանդավորների մասին, մենք է, որ նրանց պրոպագանդն ենք անում մեր եկեղեցիների բեմերից, մեր կրոնական թերթերից: Կարծեք թե ամբողջ Հայաստանը ողողվել է մի քանի, թերևս տասնյակ հազար հաշվով անձերից:

Ի՞նչ է միսիոն և երկու տեսակ միսիոն կա՝ առաքելություն. ա) ներքին առաքելություն և բ) արտաքին առաքելություն: Բայց սրանք իրարից բաժանված չեն: Օրինակի համար, այսօր մեր արածն առաքելություն է: Մեր Եկեղեցու ներքին զորացման համար է, մեր քրիստոնեական հավատքի ջրդեղման, ոռոգման, զորացման համար է: Եվ սա այնքան առաքելություն է, որքան ուրիշին երթալ, ոչ քրիստոնյային քրիստոնեություն քարոզել: Եվրոպայում, Ամերիկայում, Արևմտյան աշխարհում, կամ ուրիշ տեղերում և նաև վստահ եմ, որ այստեղ՝ Հայաստանում ո՞վ ասեց, որ մենք բոլորս էլ քրիստոնեաբար ապրում ենք: Ո՞վ ասեց, որ Ավետարանի ճշմարտությունը մենք գործադրում ենք: Մենք մեր հավատացյալներին պետք է վերստին քրիստոնեությունը կյանքի բերենք, ուժականության վերածենք, համոզումի վերածենք, կյանքի ապրելակերպի վերածենք այս առաքելությունը: Առաքելություն չի նշանակեր միայն ուրիշին, ոչ քրիստոնյային ձևականորեն, անունով, մկրտությամբ քրիստոնյա դարձնել կյանքում:

Երկու բառեր կան, որոնք շատ են գործածվում հիմա Եվրոպայի մեջ, կամ արտաքին աշխարհում՝ դիքրիսչընայզեյշընն և հիմա ռիքրիսչընայզեյշընն: Քրիստոնյա Արևմուտքի մեջ հեթանոսություն կա կյանքի եղանակին հետ: Բարո-

յակաևությունը բայբայվում է: Ո՞վ ասեց, որ քրիստոնյա ամուսնը կրողն ամպայման քրիստոնեաբար է ապրում: Եթե երբեք ապաքրիստոնեացյալ ընկերություն կա, վերաքրիստոնեացյալ ընկերություն ստեղծելը առաքելություն է: Դրա համար, օրինակ, ես երբ ուսանող էի Անգլիայում, Անգլիո Եկեղեցու պետը գալիս էր, մի շաբաթ ամբողջ համալսարանում միշտը ուիք (առաքելության շաբաթ) էր հռչակում և ամեն օր քարոզություններ էր տալիս: Բոլորն էլ քրիստոնյա էին: Բոլորն էլ անգլիացի էին, բայց պետք ունեին խորանալու, բյուրեղանալու, հզորանալու իրենց հավատքի և կենցաղի մեջ:

Մի օր Անգլիայում հանդիպեցի մի ռուս եպիսկոպոսի, դասախոսություն էր տալիս, ասեց՝ հեթանոսություններ է ոչ թե միայն իր հին իմաստով, այսինքն ոչ քրիստոնյա ազգերին հեթանոս ենք ասում, այլ նաև այսօր նոր իմաստով հեթանոսաբար ենք ապրում: Մենք մեզ պետք է փրկենք՝ ուրիշի մասին մոռանալե առաջ: Եթե մենք ապրենք իբրև քրիստոնյա, դիմացինը արդեն տեսնելով, մեզ հետ կամաց-կամաց կքյուրեղանա և քրիստոնեաբար կպատրաստվի:

Բարեկամներ, մենք ներկայումս մեր Հայաստան աշխարհի մեջ այնպես դադարենք միայն մեր անցյալի, մեր հայրերի կատարած գործերը գովաբանելու, նրանց մեծացմանն, նրանց փառավորմանն, նրանցով մխիթարվելու հոգեբանությունից: Ես տեսնում եմ, ամեն տեղ, ուր գնում եմ, թե մեր հայրերի թողած հետքերը մեզ համար ներշնչման աղբյուր են: Այո: Բայց ներշնչում ի՞նչ կնշանակե: Ճնչարգելություն, թե նաև արտաշնչողություն: Կներշնչվես, շունչը մեջդ պահելու համա՞ր, ինքզինքդ խեղդելո՞ւ համար՝ հպարտության զգացումներով, թե արտաշնչելու, այդ շունչը տալու նոր սերունդին, մեր նոր կյանքին, նոր հայրենիքին, նոր Հայաստանին: Եթե այս չլինի, ի՞նչ է մեր Եկեղեցու առաքելությունը, ասեք: Ի՞նչ է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությունը, ասեք ինձ: Որ մի եվրոպացին, կամ ամերիկացին, կամ չինացին գա և տեսնի այս գեղեցիկ նկարները և ասի, որ հայերը այսպես եղե՞ր են, թե՞ լսե մեր շարականները, տեսնի մեր ժողովրդի կյանքը քրիստոնեական և հպարտանա ոչ թե մեր հայրերի մեզի թողածով, այլ մեր հարգանքով, մեր արածի միջից մեր հայրերին և մեր պարտականությամբը մեր գալիք սերունդին: Այստեղ է մեր գործը: Եվ այնես մնացյալն ամբողջ դատարկ խոսքեր են:

«Զի Աստուած այնքան սիրեաց զաշխարհ, մինչեւ որ զՈրդին իւր Միածին ետ, զի ամա, որ հաւատայ ի նմա, ընկալցի զկեանս յաւիտենականս» (Աստված այնչափ սիրեց աշխարհը, որ մինչև անգամ Իր Որդին տվեց, որպեսզի նա, ով այդ Որդուն հավատա, հավիտենական կյանք ունենա): Մեր հայրերն ունեցան այդ հավիտենական կյանքը, ու այդ հավիտենական կյանքի ճանապարհորդության մեջն ենք այսօր մենք՝ ներկա ճանապարհորդներս: Ճանապարհն անցյալ չէ միայն: Ճանապարհը նաև հառաջդիմություն է դեպի ապագան:

Այստեղ իմ խոսքն ավարտում եմ այն խոսքով, որ Հիսուս մի օր ասեց Իր առաքյալներին, որ եթե այդ մանուկները և այդ ժողովուրդը լռեն, քարերը պիտի աղաղակեն (Ղուկ. ԺԹ 40): Ո՛վ Տեր, այս համագումարին առիթով, այս Քո ևվիրյալ ուսուցիչներին ու ուսուցչուհիներին իմ խոսքն ուղղելուց հետո, վերջին խոսքս Քեզ եմ առաքում: Թույլ տուր ինձ, Տեր Աստված, որ փոխեմ բառերն Ավետարանի, ներիր ինձ, եթե այդ փոփոխությունը կատարեմ և ասեմ, Ո՛վ Տեր, տուր որ քարերը լռեն այլևս և մարդիկ աղաղակեն Հայաստանի մեջ: Եվ ոչ թե միայն մարդիկը աղաղակեն, այլ քարերի արձա-

գանքը հրանց մեջ վերակենդանանա, և մենք դառնանք ոչ թե հին Եկեղեցի, այլ միշտ նորոգյալ հոգիով այն Եկեղեցին, որ ոչ հին ունի և ոչ նոր, որովհետև հավիտենական է և այդ հավիտենականության միախառնումը մեր քսաներորդ դարու վերջին այս տարիների և այդ հավիտենականության միաշաղախումը բացվելիք երրորդ հազարամյակին թող լինի Քո ընծան մեր Ժողովրդին և թող լինի խունկը հայության Քո այդ մեծ ընծային: Ամեն:

Հավարտ Նորին Սրբության պատգամ-դասախոսության, հնչում է **«Եկեղեցին Հայկական»** երգը:

Հանդիսությունն ավարտվում է **«Պահպանիչ»**-ով: Այնուհետև Վեհարանի հյուրասրահներում տրվում է սիրո ճաշ:

Հայաստան աշխարհի տարբեր քաղաքներից ի մի եկած ուսուցիչ-ուսուցչուհիները հրաժեշտ են տալիս Ամենայն Հայոց Հայրապետին և եկեղեցու մյուս նվիրյալներին:

Օրն իր խորհրդով ավարտվում է: Սակայն ավարտվում է միայն ժամանակի տվյալ պահի պարագրելիության առումով: Իսկ ներկաների հոգիներում այն դեռ երկար, շատ երկար է շարունակվելու: Բարին ընդ ձեզ, ուսուցիչնե՛ր, թող ձեր անցնելիք ուղին լուսավորվի Տիրոջ պատգամներով, որպեսզի կարողանաք այդ լույս խոսքերն ու անսքող ճշմարտությունները նույն սիրով ու նվիրումով ջամբել ձեր սաներին, ինչպես մեր Տերն Իր Առաքյալներին և նրանց միջոցով նաև մեզ՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատավոր զավակներիս... Ամեն:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ





ԿՐՈՆԻՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲԱՑՈՒՄԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

«Տէր, ուղղեա եւ առաջնորդեա,
գնալ յարդարութեան ճանապարհն
եւ ի կեանսն յաւիտենից...»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի նախաձեռնությամբ Արարատյան հայրապետական թեմում բացվեց կրոնից ուսուցիչների պատրաստման հերթական երկամյա դասընթացը:

Բացման հանդիսավոր արարողությունն անձամբ նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջինը: Ներկա էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը, Մայր Աթոռիս հոգևոր ճեմարանի վերատեսուչ Հոգեշնորհ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը, հոգևոր ճեմարանի դասախոս Հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Չիֆթչյանը, Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Վազգեն արեղա Միրզախանյանը, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կիրակնօրյա դպրոցի տնօրեն Հոգեշնորհ Տ. Բագրատ արեղա Գալստյանը, Արժանապատիվ Տեր Հայրեր, Բարեշնորհ սարկավագներ, հյուրեր:

Տերունական աղոթքից հետո, բացման խոսքով հանդես եկավ Հոգեշնորհ Տ. Վազգեն արեղա Միրզախանյանը: Նա հանգամանալից բացատրեց դասընթացի գաղափարն ու նպատակը և տվեց գործնական ցուցումներ՝ արձանագրվել ցանկացողների համար:

Կրոնի ապագա ուսուցիչներին իր սրտի ու բարեմաղթանքի խոսքերն հղեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը՝ միաժամանակ խորին

շնորհակալություն հայտնելով ազգիս Վեհափառ Հորը՝ մեծագույն հարգանքի և այդ պահին այնտեղ ներկա գտնվելու առիթով:

Այնուհետև ներկաներին իր հայրական պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Խոսելով մանկան հոգեկան ներաշխարհի, նրան հետաքրքրող երևույթների, կենդանի ու առողջ մանկավարժությունից պահանջվող առանձին խնդիրների, ինչպես նաև աճող սերնդի հոգևոր ու կրոնական դաստիարակության կարևորության մասին, Նորին Սրբությունը մեկ անգամ ևս ներկաներին հիշեցրեց, որ մանկանը կրթելու ամենակարևոր գործոնը սերն է և սեփական անձը որպես դասագիրք ունենալը: Իր հոգում սեր չունեցող ուսուցիչը երբեք չի կարող լավ մանկավարժ լինել և ըստ այդմ էլ անկարող է հաստատության համար պիտանի մարդ դաստիարակել: Իր համառոտ, սակայն այնքան կարևոր ու արժևորող խոսքը Վեհափառ Տերը որակեց որպես առաջին դաս կամ դասախոսություն՝ իր իսկ բառով ասած: Նա շեշտեց նաև, որ մանկավարժությունը երբեք չի կարելի ուսուցանել: Վերջինս նման է Աստծուց տրված շնորհին: Ամեն մի ուսուցիչ, որ հանձն է առնում կրոն դասավանդել, պետք է այն համեմի կյանքով: Ցանկացած մի խոսք կամ արտահայտություն, որ վերցվում է Աստվածաշունչ մատյանից, նախ և առաջ պետք է երեխան հասկանա կյանքում եղող որևէ միջադեպի զուգակցումով: Այլապես դրանք զուտ գաղափարներ կմնան երեխայի համար, որոնք նա պարտավորված պիտի լինի գոց հիշել:

Հաջողություն մաղթելով Աստվածային խոսքի ներմանման դժվարին, բայց քաղցր ու անկրկնելի ուղին ընտրած 150 դիմորդներին, Վեհափառ Հայրապետը խոստացավ պարբերաբար այցելել նրանց, ծանոթանալ ձեռք բերած գիտելիքների մակարդակին, ինչու չէ, նաև ինքն էլ դասախոսել, եթե ժամանակը ների:

Մեկ անգամ ևս դիմելով ապագա ներմնացաններին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության բաժանմունքի վարիչ-տնօրեն Հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանը հիշեցրեց, որ հաջորդ շաբաթ, երբ պաշտոնապես հավաքվեն առաջին դասին, ոչ ոք թող չմոռանա օրվա հետ առնչվող մեծ խորհուրդը, քանզի հենց այդ օրը տոնվելու է մեր թարգմանիչ հայրերի սրբալույս հիշատակը, այսինքն՝ Թարգմանչաց գեղեցիկ ու իմաստալից տոնը:

«Պահպանիչ»-ով և «Հայրապետական մաղթերգ»-ով վերջակետվեց անդրանիկ դասախոսությունը, որը նաև լսարանի բացման երկար սպասված արտառուչ հանդիսություն էր:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԼՍԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄՆ ԱՐՏԱՇԱՏՈՒՄ ԵՎ ԱՊԱՐԱՆՈՒՄ

«Փութասջիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեան:
(Բ ՏԻՄ. Բ 15)

Վեհափառ Հայրապետը 1995 թ. նոյեմբերի 12-ին այցելեց Արտաշատ՝ մասնակցելու քրիստոնեական կրոնի ուսուցիչների պատրաստման լսարանի բացմանը:

Մեծահարգ ընդունելություններ սկսվեց հենց քաղաքի մուտքից, ուր Ամենայն Հաց.ոց Հայրապետ, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա-ին, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանին, Նորին Սրբության ուղեկցող Հոգեշնորհ Հայր Սուրբերին, Բարեշնորհ ասրկավագներին և մյուսներին դիմավորեցին ավանդական աղ ու հացով, երգ ու պարով:

Մշակույթի տան մուտքի առջև Վեհափառ Հայրապետը բարեողջույնի խոսքեր ուղղեց Արտաշատ քաղաքի բնակչությանը, ովքեր այդ պահին եկել էին իրենց խորին հարգանքը մատուցելու Ամենայն Հայոց Հորը՝ անդրանիկ այցելության կապակցությամբ:

Այնուհետև Մշակույթի տան դահլիճում տեղի ունեցավ դասընթացների երկամյա կուրսի բացման հանդիսավոր արարողությունը, որը նախագահում էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Բացման խոսքով ներկաներին դիմեց Քրիստոնեական քարոզչության և դաստիարակության կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանը:

Ծնորհավորանքի և քաջալերական խոսքեր ասաց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը:

Ներկաներին հակիրճ ողջերթի խոսքեր ուղղեց նաև Արտաշատ քաղաքի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ Հովիկ Աբրահամյանը:

«Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» և «Որք զարդարեցին» շարականների երգեցողությունից հետո, Ավետարանից ընթերցվեց Սերմնացանի առակը, որն առավել էր պատշաճում օրվա հանդիսությանը:

Այնուհետև առաջին դասը վարելու պատվավոր իրավունքը տրվեց Ամենայն Հայոց Հայրապետին: Խոսելով մանկավարժության, առավել ևս կրոնից ուսուցիչների կարևոր դերի ու նշանակության մասին, Նորին Սրբությունը, սակայն, մարդկային հոգում վերստին կարևորեց ուսուցչի կոչման վեհությունը, որն այսօր ասես թե մի տեսակ խամրել է, արժեզրկվել: Նյութականի նեղ ու անձուկ սահմանների դիտակետից է ուսուցիչը երևում ամեն քին: Սակայն ո՛չ հագուստը, ո՛չ գեղեցիկ արդ ու զարդը, ասաց Վեհափառը, չեն կարող ուսուցչից խլել իր առաքելությունը: Մանկավարժությունն արհեստ չէ: Այն անկրկնելի մի կոչում է, որ շատ քչերին է տրվում: Ուսուցչին համեմատելով քաղցրահամ աղբյուրի հետ, Նորին Սրբությունը հիշեցրեց, որ ամեն մի աշակերտ պետք է նրան մոտենա՝ ըմպելու վերջինիս հոգու աղբյուրից: Որքան մաքուր ու անապատ լինի այդ աղբյուրը, որքան սառն ու զուլալ ջուր բխի նրանից, այնքան անարատ ու մաքրամաքուր կլինի նաև այնտեղից անհագուրդ ջուր ըմպողի հոգին:

Առաջին դասախոսություն-պատգամն ավարտվեց «Պահպանիչ»-ով: Ամեն մի մասնակից դահլիճից հեռացավ՝ ասես իր հետ տանելով ինչ-որ մի թանկագին բան, ինչ-որ անսովոր մի ջերմություն, որն ստ այսօր ինքն ուներ, սակայն չէր զգում, փոխանցում էր ուրիշին, բայց չէր գիտակցում, իսկ եթե չէր էլ փոխանցում, ապա հեռացավ այն համոզումով, որ շուտով ինքը պիտի քրիստոնեական հավատի՝ «դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամփով» առաջնորդի բոլոր մանուկներին, նրանց, ովքեր դեռ նոր են ճաշակելու աստվածային ճշմարիտ խոսքի գիտության երջանկությունը:

* * *

Ապարանում, Հայոց աշխարհի գեղատեսիլ վայրերից մեկում, սույն թվականի նոյեմբերի 13-ին հավաքվել էին քրիստոնեական կրոնի դասավանդման ապագա ուսուցիչները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժամանած հյուրերին դիմավորեցին Ապարանի տեղական իշխանությունների ներկայացուցիչները, հավատավոր հայ ժողովրդի զավակները:

Քրիստոնեական ուսուցիչների երկամյա դասընթացների բացման հանդիսավոր արարողության առաջին խոսքի իրավունքը տրվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական քարոզչության և քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Վազգեն արեղա Միրզախանյանին:

Դիմելով ներկաներին և հատկապես դասընթացներում ուսանելու ցանկություն հայտնած 40 դիմորդներին, Հայր Սուրբը մեկ անգամ ևս նշեց մեր նախնյաց հավատի նոր արժևորման կարևորությունը ժամանակային առումով, ինչպես նաև դասընթացների նպատակը, որն իր մեջ է ներառում հե-

տևյալ երեք կարևոր կետերը. քրիստոնեական կրոն դասավանդող ուսուցիչների պատրաստում՝ կիրակնօրյա և հաւրրակրթական դպրոցներում դասավանդելու համար, կիրակնօրյա դպրոցների բացում, քարոզչական գործունեության ծավալում, որին որպես բաղկացուցիչ մաս լրացնելու են կազմակերպվելիք երիտասարդաց միությունները: Երիտասարդաց միությունների կարևոր խնդիրը պիտի լինի՝ մերձեցնել երիտասարդությանը Մայր Եկեղեցուն և մեր հայրերի սրբագույն ավանդներին:

Ապարանի տեղական իշխանությունների անունից շնորհակալության, երախտիքի և ողջույնի խոսք ասաց ժողկրթության բաժնի վարիչ տիար Մակարյանը:

Այնուհետև Հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Չիֆթչյանը ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի հայրական պատգամն ու օրհնանքի խոսքը: Մեջբերելով Ամենայն Հայոց Հայրիկի խոսքերը, Հայր Սուրբը ներկաներին հաղորդեց ոչ միայն նրանցից բխող ջերմությունը, այլև հիշեցրեց, որ եթե իր փոխարեն խոսելու լիներ Նորին Սրբությունը, ապա հենց այս խոսքերն անշուշտ պիտի ասեր. «Հայրական սիրո ջերմ զգացումներով կողջունենք ձեզ ամենքդ, ովքեր եկած եք այստեղ: Երբեք մի՛ մոռանաք, որ քրիստոնեական հավատքի, Ավետարանի ճշմարտությունների փոխանցումը և շաղախումը մեր ժողովուրդին կյանքին մեջ բացառիկ նշանակություն ունեցող առաքելություն մըն է: Մեր ժողովուրդի կազմավորման մեջ որոշադրիչ կարևորություն ունի մատղաշ սերունդի և երիտասարդության դաստիարակությունը: Դուք կոչված եք առավել նվիրվածությամբ և կազմակերպական ծրագրյալ աշխատանքով հայ մանուկներուն ջամբել Քրիստոսի սուրբ հավատքին անունդը: Հետևաբար ձեզի ուղեկից ունեցեք առաքյալի աստվածային ներշնչմամբ տրված այս պատգամը. **«Կրթեա՛ զանձն քո յաստուածպաշտութիւն»,** որը նա կհիմնավորե հետևյալ ճշմարտությամբ. **«զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է, իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է»** (Ա ՏԻՄ. Դ 7)»:

Այնուհետև Հայր Գրիգորը հավաքվածներին փոխանցեց նաև Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի ողջույնի խոսքը:

Բնաբան ընտրելով մեր Տիրոջ խոսքերը՝ «Թոյլ տուք մանկտուդ և մի՛ արգելուք գդոսա գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից» (ՄԱՏԹ. ԺԹ 14), Հայր Գրիգորը կրկին անգամ հիշեցրեց Ավետարանի ապագա սերմնացաններին՝ մանուկներին ուսուցանելու բարդ ու դժվարին խնդիրը, ցանկացավ, որ Հայաստան աշխարհի ամեն մի շրջանում բացվող քրիստոնեական կրոնի պատրաստման դասընթացների ցանկացած մասնակից չխուսափի որպես օրինակ ունենալ Սիյոնի 65-ամյա պատմություն ունեցող դպրոցների փորձը:

Ավետարանից ընթերցված Սերմնացանի առակը որպես Հայր Սուրբի խոսքի լրացում և գեղեցիկ ամփոփում ընկալվեց հանդիսավոր արարողության մասնակիցների կողմից:

Այնուհետև երգվեցին «Ուրախ լեր» և «Էջ Միածին ի Հօրէ» շարականները:

Հանդիսություն ավարտվեց «Պահպանիչ»-ով և «Տերունական աղոթք»-ի երգեցողությամբ:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

1995 թ. հոկտեմբերի 12-ից 14-ը Թբիլիսի այցելեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ ղեկավարությամբ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանի: Պատվիրակությանը Թբիլիսիի օդանավակայանում դիմավորեցին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերապդարյանը՝ հոգևոր դասի ուղեկցությամբ, Թեմական խորհրդի քարտուղար Վիլլի Գրիգորյանը, Վրաստանի իշխանության ներկայացուցիչներ՝ պաղատմենտի խոսնակ պրն. Վախթանգ Գոգուաձեի գլխավորությամբ:

Ժամանելով Թբիլիսի, հյուրերն այցելեցին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ին և Ս. Սիոն Մայր տաճար: Նույն օրը հյուրերը հանդիպում ունեցան Վրաստանի պաղատմենտի խոսնակ պրն. Վախթանգ Գոգուաձեի և պաշտոնական այլ անձանց հետ, որից հետո հյուրերին ընդունեց Վրաստանի Հանրապետության ղեկավար Էդուարդ Շևարդնաձեն:

Երեկոյան հյուրերը հրավիրված էին Պետրոս Ադամյանի անվան հայկական թատրոն, ուր տեղի ունեցավ հանդիպում հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որտեղ բոլոր հավաքվածներին օրհնության իր խոսքը բերեց Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերապդարյանը: Այսպա հայկական պատվիրակությունը հրավիրվեց Կրծանիսի կառավարական առանձնատուն՝ հանդիսավոր ընդունելության և ընթրիքի, որը կազմակերպված էր պրն. Վ. Գոգուաձեի կողմից:

Հոկտեմբերի 14-ին հյուրերն այցելեցին Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցի և հանդիպում ունեցան առաջնորդ Տ. Գևորգ արքեպիսկոպոսի հետ, այնուհետև այցելեցին Պալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական թատրոն, ուր տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում՝ նվիրված հայ-վրացական դարավոր բարեկամությանը:

Միջոցառման հանդիսավոր մասում ելույթ ունեցավ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերապդարյանը՝ անդրադառնալով երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը, և մաղթեց, որ հետագայում շարունակվի այդ բարեկամությունը:

Հայաստան վերադառնալուց առաջ, ի պատիվ պատվիրակության, պաղատմենտի խոսնակ պրն. Գոգուաձեի կողմից տրվեց հրաժեշտի մեծ ճաշ-

ԴԻՎԱՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ «ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեծանուն հայագետ Հրաչյա Աճառյանն իր «Կյանքիս հուշերից» գրքում գրում է, որ իրենց ընտանիքը Նոր Նախիջևանում ապրել է մինչև 1918 թ., ընդամենը՝ 11 տարի[1]: Նա «Տաճկահայոց հարցի պատմությունը» փոքրածավալ գրքույկը (78 էջ) գրել է հենց Նոր Նախիջևանում, որտեղի թեմական դպրոցում էլ աշխատել է որպես Հայոց պատմության ուսուցիչ: Նա Նոր Նախիջևանի դումայի դահլիճում համանուն թեմայով կարդացել է դասախոսություններ:

Հրաչյա Աճառյանի գրած աշխատություն իր ժամանակին (տպագրվել է 1915 թվականին) ամբողջացրել է արևմտահայերի պատմությունը՝ սկսելով 1870 թ. և հասցրել է մինչև 1915 թ. Հայկական Մեծ եղեռնը: Եվ ինչպես իրավացիորեն հեղինակն է նկատում, «տառապյալ հայության վերջին հիսուն տարվա արյան և արցունքի պատմություն է» (էջ 2): Դա համառոտ ուրվագիծ է Արևմտյան Հայաստանի դիվանագիտության պատմության համար: Հրաչյա Աճառյանն այս պատմությունը գրելիս ներկայացնում է Արևմտյան Հայաստանի դժնդակ ժամանակները, որտեղ գործում էին տիրողների և նվաճյալների հարաբերությունները, և ուր տիրում էր թուրքական բռնությունները հայերի և մյուս քրիստոնյա ազգերի նկատմամբ: Նկարագրում է Արևմտյան Հայաստանում հայերի դժոխային վիճակը. «...քրիստոնյա հայը այս աշխարհի վրա պիտի տառապի, իբրև Քրիստոսի աշակերտ պիտի կրե նրա ծանր խաչը՝ հանդերձյալ կյանքի մեջ միայն սպասելով իր վարձատրությանը» (էջ 2):

Հրաչյա Աճառյանը Հայոց ազգային զարթոնք է համարում ԺԸ դարը՝ դպրոցի և գրականության զարգացման շնորհիվ: Այդ շրջանում Եվրոպայում

---

[1] **Հրաչյա Աճառյան,** Կյանքիս հուշերից, Եր., 1967, էջ 338:

իրենց ծաղկումն ապրեցին հայկական գաղթօջախները, հիմք դրվեց հայոց տպագրությանը Ամստերդամ, Վենետիկ, Մարսել, Վիեննա և հետո՝ Արևելքի երկրներում (Հնդկաստան և այլուր): Պոլիսը նույնպես դառնում է արևմտահայության վարչական, կրթական և մշակութային կենտրոնը: Նույն ժամանակ էլ սկսում են գործել հայոց ազգային դպրոցները Պոլսում, 1838 թվականից բացվում է Իսկյուտարի ճեմարանը: Եվ դրանցով ազգությունը գալիս է լուսավորության և ինքնագիտակցման:

Նա Տաճկահայոց հարցի պատմությունը բաժանում է 7 շրջանի և մեկ առ մեկ ներկայացնում այդ շրջանների բնորոշ առանձնահատկությունները:

Հրաչյա Աճառյանը հայոց ազգային շարժման առաջին վերելքը համարում է Ազգային սահմանադրության ընդունումը: Հայ երիտասարդները, ուսանելով Փարիզում, յուրացնում են ֆրանսիական ազատական գաղափարները: Դրանց առաջին տարածողներն էին Նահապետ Ռուսինյանը, Նիկողայոս Պալյանը, Գրիգոր Օտյանը և ուրիշներ: Սակայն որքան Պոլիսը լուսավորյալ էր, նույնքան գավառը խարխափում էր խավարի մեջ:

Այս գրքույկում փորձ է արվում մատուցել սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակել, միաժամանակ, նկարագրելով անցյալի պատմության դաժան ժամանակները՝ հեղինակը ձգտում է այդ պատմությունից օգտակար դասեր քաղել:

Հրաչյա Աճառյանը հայոց շարժումը դիտում է համընդհանուր քաղաքական պատմության կապերի մեջ:

1875 թվականին թուրքական բռնապետության դեմ ապստամբում են Բոսնիան և Հերցոգովինան, այնուհետև Սերբիան և Չեռնոգորիան: 1876-ին ապստամբում է նաև Բուլղարիան:

Թուրքական բանակները պարտության են մատնում սերբ-չերնագորական բանակներին, անասելի գազանություններ են կատարում Բուլղարիայում, որն արձագանք է գտնում ամբողջ աշխարհում և մասնավորապես Անգլիայում: Անգլիայի լիբերալների կառավարության ղեկավար Ուիլյամ Գլադստոնը կրակոտ ելույթներ է ունենում և դատապարտում թուրքերի ոճրագործությունները Բուլղարիայում: Բուլղարիային օգնության է հասնում իր եղբայրակից Ռուսաստանը: Սկսվում է 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, որի արդյունքը Բուլղարիայի ազատագրումն էր թուրքական լծից: Հրաչյա Աճառյանը հարց է տալիս. «Իսկ ի՞նչ էին անում հայերը այս ժամանակ»: Եվ ինքն էլ պատասխանում է, որ այդ շրջանում Հայկական հարցի նոր վերելք սկսվեց:

Հեղինակը առանձնապես մեծ սիրով է գրում ազգանվեր Մկրտիչ Խրիմյանի մասին և բարձր գնահատում նրա գործունեությունը: Մկրտիչ Խրիմյանն իր Պոլսի պատրիարքության շրջանում և դրանից առաջ, մոտիկից ծանոթ լինելով հայության առանցքակետերին, մի ծրագիր է կազմում և ներկայացնում թուրքական կառավարության քննարկմանը: Այդ տեղեկագիր-ծրագրի հետ համահավասար: Նա նաև պետք է պաշտոն ստանա իր ապրած վայրում, և այդ ուղիով հնարավոր է բարեկարգել երկիրը: Որքան էլ թուրքական կառավարությունը Մկրտիչ Խրիմյանին խոստացավ կատարել իր ուզածը, սակայն թուրքական բռնապետության շրջանում նրա ծրագիրը մնաց ձայն բարբառո հանապատի:

Ռուս-թուրքական պատերազմի շրջանում Արևմտյան Հայաստանում իր

ֆոտը ղեկավարում էր Պոլսի Ներսես արքեպիսկոպոսը, իսկ Արևելյան Հայաստանում՝ Գևորգ Կաթողիկոսը:

Պատերազմի ժամանակ ռուսների հետ միասին կռվում էին հայազգի զորավարներ Լորիս-Մելիքյանը, Լազարյանը, Տեր-Ղուկասյանը, Շիլկովնիկյանը և մյուսները, որոնք օգնում էին ռուսական բանակներին հաղթանակ ռանելու գործում: Պատերազմի ավարտից հետո սկսվեց Բեռլինի վեհաժողովը, որտեղ Տաոյան գերդաստանի ամառանոցում Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինվեց 61-ով, որը ևս ոչինչ չտվեց հայերին: Հայկական հարցը, ավելի ճիշտ Արևմտյան Հայաստանի հարցը հենց այս ժամանակից դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման հարց: Հրաչյա Աճառյանը քննարկում է մեծ պետությունների՝ Անգլիայի ու Ռուսաստանի հակամարտությունը, Գերմանիայի և Ֆրանսիայի բռնած դիրքը հայկական հարցի վերաբերյալ:

Հրաչյա Աճառյանը գրում է, որ հենց այդ ժամանակ էր, որ Պոլսի Ներսես Պատրիարքի ջանքերով կազմվեց երկու պատվիրակություն՝ Մկրտիչ Խրիմյանի և Խորեն եպիսկոպոս Նարպեյի գլխավորությամբ: Մկրտիչ Խրիմյանն իր թարգման Միհաս Չերազի հետ այցելեց Հռոմ, Վիեննա, Փարիզ և Լոնդոն, իսկ Խորեն Նարպեյը ուղևորվեց Ռուսաց մայրաքաղաք՝ Ս. Պետերբուրգ: Նրանց նպատակն էր Արևմտյան Հայաստանին տալ տեղական ինքնավարություն, բարեկարգումներ անցկացնել այդ հատվածում և հայերին անվտանգ ապրելու չերքեզների ու քրդերի շրջանում երաշխիք տալ: Այս երկու պատվիրակությունների գործունեությունը սկսվեց ապարդյուն: Պոլիս վերադառնալուց հետո պատրիարքարանի բեմից Մկրտիչ Խրիմյանն արտասանեց իր նշանավոր ճառը ընդհանուր կաթսայից հարիսա բաժանելու վերաբերյալ: «Գնացիք Բեռլին,—ասում էր նա,—տեսանք մի մեծ կաթսա դրած՝ հերիսա կը բաժնեն. բոլորը իրենց երկաթե շերեփները առած եկան հերիսա առնելու. սերբը եկավ առավ. ղարադաղցին եկավ առավ. բուլղարը առավ. բոլորն ալ առին. մենք ալ մոտեցանք որ առնենք. կաթսային քով կանգնած պահապանը հարցուց. «Ո՞ւր է ձեր շերեփը». մե՛նք շերեփ չունինք. մենք մեր ձեռքը մի կտոր թուղթ միայն ունեինք. «Չէ՛, ասաց պահապանը, շերեփ չունեցողը հերիսա չի առանար. տեսեք մյուսները՝ ի՛նչպիսի երկար երկաթյա շերեփներ ունին»: Նայեցա տեսա սերբիացուն, ղարադաղցուն ու բուլղարին եսև մեկ մեկ կտրիճ կանգնած, որոնց թուրերեն արյուն կը կաթեր: Եսիս դարձա. «Ա՞խ, ո՞ւր եք, ասացի, իմ գեյթուցի և սասունցի կտրիճներս»: Բայց անոնք չկային: Թուղթս ալ ձեռքես ինկավ կաթսային մեջ՝ լորճեցավ: «Դե՛հ, ասաց պահապանը, հիմա գնա՛, մեյ մ'ալ եթե հերիսա բաժնվի, պատրաստ կեցիր, երկաթե շերեփդ չմոռնաս» (էջ 12—13):

Հայ ժողովրդի մեծ մտածողներ Գրիգոր Արծրունին, Ռաֆայել Պատկանյանը, Րաֆֆին, Մկրտիչ Փորթուգալյանը և ուրիշներ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, տեսնելով, որ բալկանյան ժողովուրդները ապստամբելով միայն ազատագրվեցին թուրքական բռնապետական լծից, իրենք ևս որոշեցին հայերին կոչ անել ապստամբելու: Հրաչյա Աճառյանը ցույց է տալիս, որ որքան հայերը դիմում էին ապստամբության, թուրքական կառավարությունը օգտագործում էր է'լ ավելի դաժան միջոցներ. **հայ** ազգ և **Հայաստան** բառերը արգելվեցին, դպրոցները պատրիարքարանի իրավասության տակից հանվեցին, վերացվեց հայերեն գրքերի տպագրությունը, փակվեցին հայկական թերթերը: Հրաչյա Աճառյանը նշում է, որ թուր-

քական գրաքննությունը 300 արգելված բառի ցուցակ ուներ, որոնք այլևս չէին կարող օգտագործել հայ հասարակական գործիչները:

Հայկական կոտորածները կարծես թե նույն շղթայի օղակներն էին կազմում, երբ մի տեղում ավարտվում էր, ապա մյուսում՝ նոր սկսվում: Զեյթունում ավարտվեց, իսկ Սուեդիայում և Վանում վերսկսվեցին: Բայց բոլորըն էլ անարդյունք:

Հրաչյա Աճառյանը անդրադարձել է հայ ժողովրդի ողբերգական այն ժամանակներին, երբ հայերը, դժգոհ լինելով բռնապետական քաղաքականությունից, ապստամբում էին օսմանյան կառավարության վարած դաժանությունների դեմ: Նա այս գրքույկում նկարագրել է բոլոր արժանահիշատակ դեպքերը, որոնք բախտորոշ և ճակատագրական նշանակություն են ունեցել հայերի կյանքում: Այնուամենայնիվ հեղինակը արևմտահայերի հարցի պատմությունը քննարկելիս մտադիր չի եղել բոլոր մանրամասները նկարագրել: Սակայն ներկայացրած փաստերը շատ պատկերավոր են հատկապես թուրքական վայրագությունների վերաբերյալ, որը հնարավոր չէ ջնջել ժողովրդի հիշողությունից: Բերենք Հրաչյա Աճառյանի գրքույկից օրինակներ մեր ասածները հաստատելու համար: Գիտնականը հիշատակում է Ադանայի (Կիլիկիա) 1909 թ. հայկական կոտորածի սարսափները, որոնք գերազանցեցին մինչ այդ կատարվածներին: «Մի թուրք կին,—գրում է Հրաչյա Աճառյանը,—երիտասարդ հայ օրիորդների արյունից լողարան շինեց ու լողացավ: Մի հայ տիկնոջ խաչեցին, ամուսնուն մորթեցին. հետո ստինքները կտրատեցին և զավակների ձեռքը տվին, ու նրա աչքի առաջ բոլորին էլ մեկիկ մեկիկ մեռցրին և նրա ցավը ծաղրելով՝ երեսին գոչում էին «Իջի՛ր խաչից, զավակներդ ազատի՛ր»: Մի ուրիշ կնոջ ձեռքը դանակ դրին և այդ անկար ձեռքը իրենց մագիլների մեջ բռնած ստիպեցին իր զավակներին խողխողելու» (էջ 59): Այդ նույնը շարունակվում էր 1915—1922 թթ. հայկական Եղեռնի օրերին:

Թե՛ հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության 6-րդ հատորում (Եր., 1938[1]) և թե՛ բուհական դասագրքերում պարզորոշ չէր ներկայացվում Ադանայի հայության կոտորածի իսկական պատճառը: Հրաչյա Աճառյանը բացում է այդ փակագծերը:

Ադանայի 1909 թ. հայերի կոտորածը ներկայացնելիս հեղինակը ցույց է տալիս, թե այդ դեպքերը ինչո՞վ սկսվեցին և պատճառը ի՞նչն էր: Նա բացատրում է, որ Ադանայում ապրող հայերը ձեռներեց էին, որոնք զբաղվում էին արհեստներով (արհեստավորների 85 տոկոսը հայեր էին, մնացածները թուրքեր և հույներ) ու առևտրով: Երկիրն էլ շատ պտղաբեր էր, իսկ հայերը գյուղատնտեսության մեջ նույնպես առաջատար դիրքեր էին գրավել, այդ առումով հույների և թուրքերի նախանձն էին շարժել: Երբ Թուրքիայում սկսվեց Սահմանադրական շարժումը, հայերը չկարողանալով զսպել իրենց զգացմունքները, ոգևորվելով դրանից, սկսեցին «անմեղ» ցույցեր ու ներկայացումներ տալ, երբեմն ներկայացնում էին ազգի հին հերոսների պատկերները, փողոցներում հայ հեղափոխական երգեր էին կատարում: Մոլեռանդ թուրքերը և հոգևորականները հանդես եկան հայերի արարքների դեմ և է՛լ ավելի գրգռեցին թորքերին՝ պատճառաբանելով, որ Սահմանադրությունը շարիաթին հակառակ է, և դա ստեղծված է հայերի համար: Իրանից մահմեդականները օգուտ չեն քաղելու և այլն և այլն: Թուրքերը կարծում էին նաև, որ Կիլիկիան գտնվում է ծովեզրում և հայերին անպայման օգնության կգան եվրոպացիները: Այդ օրերին «Լուրեր էին պտտվում, թե

հայերը, իբր, ձգտում են Կիլիկիայում հաստկական անկախ, օջախ հիմնել» (Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Եր., 1981, էջ 497): Բացի այդ, կար նաև քաղաքական նկատառումը, որ որդեգրել էին թուրքերը: Նրանց ցանկությունն էր՝ հայերին ջնջել Արևմտյան Հայաստանից, պահելով միայն թուրքալեզու տարրին, յուրացնելով նրանց ստեղծած հոգևոր և մշակութային արժեքները: Դա պանթուրքիստական նրանց ձգտումներն էր: Այդ մասին շատ պատկերավոր է գրել ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը. «Օսմանցիները հավաքեցին մյուս ժողովուրդների աշխատության պտուղները, նրանք օգտագործեցին դարերի ընթացքում դիզված հարստությունը, որոնք ժառանգել էին այն ազգություններից, ովքեր կառուցել էին Բյուզանդիա կոչված քաղաքակրթության վեհապանծ տաճարը: Թուրքերի և՛ ռազմական փառքը, և՛ տիրապետությունը անհնարին կլինեին, եթե չլիներ երկրի դրամական հարստությունը և չլիներ արտադրողական ուժերը, որոնք ներկայացնում էր նրա բնիկ քրիստոնյա ազգաբնակչությունը»[2]:

Ադանայի հայերի կոտորածը սկսվեց մարտի 31-ին, գիշերով: Հազարի չափ փաթթոցավորներ նախ հարձակվեցին շուկայի վրա, որտեղ հայերը առևտուր էին անում: Այդ ժամանակ մի քանի հոգի սպանվեցին, շուկան կրակի համաճարակ դարձավ, իսկ հայերի խանութները փակվեցին: Հաջորդ օրը, ապրիլի 1-ին, թուրք վաճին խոստացավ պատասխանատվությունը իր վրա վերցնել: Եվ երբ հայերի խանութները բացվեցին, նորից սկսվեց կոտորածները: Հայերից ընդամենը 100 հոգի դիմադրեցին թուրքերին: Նրանք շատ թուրք սպանեցին: Իսկ թուրքական կառավարությունը բացեց զենքի պահեստները, գինեց 20000 բուրդ ավազակների ու թուրք խուժանին: Երեք օր կռվելուց հետո, հայերի զենքը սպառվեց և անձնատուր եղան: 90 օր հետո նորից շարունակվեց կոտորածը, որին զոհ գնացին հազարավոր մարդիկ: Ադանայի մեջ հայի տուն չմնաց, որ չկողոպտվեր, այրվեր ու թալանվեր:

Կոտորածները շարունակվեցին նաև Մերսինում, Իսկենդերունում, Մահսում, Սելևկիայում, Սիսում և այլուր: Այս կոտորածների ժամանակ Երիտթուրքերը «չքմեղ» ձևանալով մեղքը բարդեցին սուլթան Աբդուլ-Համիդի վրա: Սակայն հայերի կոտորածների ժամանակ հավասարապես մեղավոր էին թե՛ սուլթանը և թե՛ Երիտթուրքերը: Դրանից հետո հայկական Կիլիկիան աստիճանաբար սկսեց դատարկվել: Հայերից շատերը գաղթեցին Կիպրոս, Եգիպտոս, Խուսաստան և այլուր:

Մի հանդրդման մեջ մանրամասնորեն հնարավոր չէ անդրադառնալ այն բոլոր հանգուցային հարցերին, որոնց մասին գրել է Հրաչյա Աճառյանը: Փորձենք մեկ-երկու կարևոր հարցադրման ևս անդրադառնալ: Սասուն և Զեյթուն: Սասունի դիմադրությունը 1890-ական թվականներին, հաջորդիվ Զեյթունի շարժումը, թուրքերի կողմից Սեմալի, Գելեգուզանի և այլ վայրերի կոտորածները: Երբ Սասունը լռում էր, ապա ռազմի թմբուկը նորից հնչում էր Զեյթունում: Այս երկու վայրերը հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագներն են բնորոշում:

Հրաչյա Աճառյանը, այնուամենայնիվ, չի գրում Զեյթունի 1862 թ. ապրստամբության մասին, որը ոգևորիչ քիչ օրինակներ չտվեց հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման համար:

Հրաչյա Աճառյանը բարձր է գնահատել նաև հայ քաղաքական կուսակցությունների առաջացումը և նրանց դերը հայ հասարակական մտքի զար-

---

[2] **Նիկողայոս Ադոնց,** Հայկական հարցի լուծման շուրջ, Եր., 1989, էջ 51—52:

գացման պատմության մեջ: Նա գրում է արմենականների, հնչակյան և դաշնակցական կուսակցությունների հիմնադրման մասին, որոնք ևս ոգևորում ու համախմբում էին ժողովրդին:

Հրաչյա Աճառյանն այս աշխատությունը գրելիս օգտագործել է հայկական, ֆրանսիական («Դեղին գիրք») և թուրքական աղբյուրներ:

Հրաչյա Աճառյանը 19-րդ դարի 90-ական թվականների կոտորածների վերաբերյալ բերում է ճշգրիտ թվեր, թե հայկական ազգագրական ո՛ր հատվածում քանիսը կոտորվեցին. Բաբերդում՝ 1400 հոգի, Քղի՝ 1000, Եդեսիա՝ 7000, Ճապին-Գարահիսար՝ 5000, Սեբաստիա՝ 1500, Կյուրին՝ 1200, Բալու՝ 1200, Սկի՝ 4000, Արաբկիր՝ 2800, Մալաթիա՝ 3000, Տիգրանակերտ՝ 1200, Հալեպ՝ 1000, Մարաշ՝ 1400, Կեսարիա՝ 1000, Այնթապ՝ 1000 և այլն (էջ 31):

Հրաչյա Աճառյանը շատ բարձր էր գնահատում Սասունում և Զեյթունում ծավալված հայ ազգային-ազատագրական շարժումը: «Հայաստանի մեջ երկու տեղ կա, ուր հայերը զինված են ու ճառած ամուր դիրքերի վրա. դրանք են Սասունն ու Զեյթունը (էջ 33): Ներկայացնում է այնտեղ կռվող հայդուկներին, հատկապես Անդրանիկի գլխավորությամբ: «Այս րոպեիս հայ կամավորների քաջարի խմբերը կռվում են անգլիական, ֆրանսիական և մանավանդ Ռուսական զորքի շարքերում: Հերոս Անդրանիկը անցել է այս խմբերի գլուխը. նրա անունը ոգևորում է բոլորին. նրան թև ու թիկունք են Դերոն, Համազասպը, Քեռին, Սեպուհը, Օհանեսը, Խեչոն և այլն և այլն, բոլորն էլ ոգևորված են մի, ընդհանուր և անսասան գաղափարով. Տաճկահայաստանի ինքնավարությունը Ռուսական հովանավորության տակ» (էջ 78):

Գրեթե նույն հարցադրմանն է նվիրված Լեոյի «Թյուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատությունը, հրատարակել է 1934 թ.: Երկու հեղինակների աշխատություններում որոշակի առնչություններ և ընդհանրություններ կան այն առումով, քանի որ երկու գիտնականներն էլ անդրադառնում են նույն հարցերին:

Հրաչյա Աճառյանի և Լեոյի տեսակետները գրեթե համընկնում են Մկրտիչ Խրիմյանին, հայ քաղաքական կուսակցությունների գնահատման հարցերում: Այսպես Մ. Խրիմյանի մասին Լեոն գրում է. «Երբ նրան (Մ. Խրիմյանին—Հ. Ա.) հարցրին, թե՝ ինչպես պիտի կատարե այդ դիվանագիտական շրջագայությունը, քանի որ եվրոպական ոչ մի լեզու չգիտե, նա պատասխանեց. «Պիտի խոսեմ լեզու մը, որ համաշխարհային է, տասպանքի լեզուն է միևնույն ժամանակ, այսինքն պիտի լամ (**Լեո,** Թյուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Փարիզ, 1934, էջ 85): Կամ Մ. Խրիմյանը լավ էր հասկացել ուժեղների օրենքը. «Այս քաղաքակիրթ աշխարհիս մեջ մարդագելներ պիտի ուտեն Թուրքահայաստանի մեծ կտոր միսերը, գրկյալ հայուն գեթ կտորիկ մի ոսկոր պիտի թողուն: Սորա համար կարդարանա խորագետ Պիզմարքին խոսքը, թե այս աշխարհիս վրա իրավունքը հզորինն է» (Տե՛ս նույն տեղում, էջ 87): Երկու հեղինակների մոտ ընդհանրություններ կարելի է գտնել թեմայի ընտրության հարցում: Եթե Հրաչյա Աճառյանը իր գրքույկն սկսում է 1877—1878 թթ. շրջանից և հասցնում է մինչև 1915 թվականի հայկական Մեծ եղեռնը, ապա Լեոն իր աշխատությունը սկսում է 19-րդ դարի 60-ականներից, Զեյթունի հերոսական ապստամբությունից, և հասցնում մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, որ վերջինիս կարծիքով՝ «... այս ապստամբության փոթորկալից շարժման վերջնական «լուծմանն» հանգեց, ինչպես հայտնի է, 1914—1918

թթ. իմպերիալիստական պատերազմի ընթացքում, ամբողջ թուրքահայ ժողովրդի բնաջնջմամբ, Թուրքաց Հայաստանի ամբողջ մակերեսից իսպառ անհետացմամբ» (**Լեո,** նույն տեղում, էջ 5): Լեոն կարևորում է իր ուսումնասիրության հարցի արժեքը, որ անուշադրության երբեք չպիտի մատնվի, «քննական մեթոդով՝ ամենայն դրամայի իսկական պատճառները վավերագրերով պարզելու և լույսի մեջ դնելու համար» (**Լեո,** նույն տեղում, էջ 5):

Այսպիսով, Հրաչյա Ամատունու «Տաճկահայոց հարցի պատմությունը» արժեքավոր աշխատությունը մեր օրերում ևս չի կորցրել իր արդիականությունը:

ՀՐԱՉՅԱ ԱԾՈՏԻ ԱՍՄԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՆԻՐՀՈՂ ԵՎ ԱՐԹՆԱՑՈՂ ՄԵՂԵԴԻ
(Ավ. Իսահակյանի «Բինգյոլ» բանաստեղծության ակունքները)

Բարձր Հայքի և Տարոնի միջև, ճիշտ Հայոց աշխարհի կենտրոնում, վեր է խոյանում մի վիթխարի լեռնային զանգված: Այնքան բարձր չէ, որ ծածկված լինի հավերժական ձյունով, և ոչ էլ բնական պայմաններն այնպիսին են, որ պատած լինի անտառներով, բայց դրանց հակառակ՝ գարուն ու ամառ չի չորանում նրա վրայից խոտն ու բուսականությունը, լեռնաշխարհը բուրում է անմահական ծաղիկներով, և գագաթին ու լանջերին կան բազում ու բազմապիսի աղբյուրներ: Դրանից էլ զանգվածի ազգային անվանումը՝ Բյուրակն լեռներ, որ այս բնաշխարհ ներխուժած վաչկատուն ցեղերը թարգմանել են Բինգյոլ դաղ, այսինքն՝ հազարավոր աղբյուրների կամ լճակների սար:

Հայերի համար նվիրական է այս լեռը, որովհետև այստեղից են սկիզբ առնում Հայաստանի երկու մեծ գետերը՝ Արաքսը հյուսիսում, որ, անցնելով Արարատյան աշխարհի միջով, թափվում է Կասպից ծով, և Եփրատը՝ արևմուտքում, որը, յուրատեսակ սահմանագիծ դառնալով պատմական Մեծ Հայքի ու հարևան երկրների միջև, հոսում է դեպի հարավ, կտրում-անցնում է Միջագետքը և թափվում Պարսից ծոց: Երկուսն էլ առատորեն վարձատրում են իրենց անցած ճանապարհի երկայնքով սփռված հայկական գյուղերի ու ավանների աշխատասեր բնակիչներին՝ նրանց արտն ու անդաստանը, հունդն ու այգին լցնելով բյուր բարիքներով:

Բինգյոլի մասին Հայաստան աշխարհում, անցած ժամանակներում, հյուսվել են շատ երգեր ու զրույցներ, սակայն նրանցից փշրանքներ են միայն հասել մեզ, այն էլ, ցավոք, օտար, թուրքի լեզվով, որովհետև տեղաբնակ հայը, աստիճանաբար հալածվելով ու արտաքսվելով բնօրրանից, իր գյուղն ու արտը, սարն ու ձորը, երգն ու զրույցը, խոսքն ու ասքը թողել է եկվոր վաչկատուններին՝ քրդերին ու թուրքերին, որոնք և, ալլափոխելով կամ վերաձևելով, պատմել են նաև երգերն ու ավանդությունները՝ հետագայում դրանց հերոսներ դարձնելով արդեն իրենց, որ այս երկրամասում նոր մարդիկ էին և ոչ մի կերպ չէին կարող առնչվել զրույցներում ու ավանդություններում արտացոլված հնօրյա անցուդարձերի հետ:

Ավելի քան մեկ դար առաջ այս իրողությունը նկատել և խորիմաստ ձևվով բնութագրել է բազմաշխատ բանագետ Գարեգին Սրվանձտյանցը. «Շատ քրդերեն ու տաճկերեն լեզվով ասացվածքներ՝ թե երգ և թե զրուցատրություն, և թե բառեր ու բառերու հարմարական առուգաբանություններ կան, և

ադոնց հեղինակ Հայ եղած են անշուշտ. բայց երբ շատ անգամ հայերը գաղթեր ու փախչեր են, կամ կրոնափոխ եղեր են, ասոնց տեղը գրավող բրդերը իրենց լսածը իրենց լեզվով սկսեր են պահել ու պատմել, կամ կրոնքն ու լեզուն փոխող հայերը այս վեպերն ալ իրենց լեզվին հետ փոխած են: Ո՞րչափ խաղեր կան բրդերեն ու տաճկերեն լեզվով, բայց, ըստ որում, անոնց նյութը հայոց տեղեր, հայոց դեպքեր և անձինք կը հերկայացընեն, անոնց հորինողներն հայ եղած են, սակայն օտար լեզվով հորինած, ինչպես որ մինչև ցայսօր ալ հորինողներ կան: Նույնիսկ բրդերու և տաճկաց կյանքին վերաբերյալ խաղերեն ալ շատը կը հորինեն հայեր» (Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, ծրագրյաց Գ. Վ. Սրվանձտյանց, Կ. Պոլիս, 1874, էջ 87—88):

Այդ երգերից մեկի մասին, որ անմիջականորեն կապված է մեր քննելիք հարցի հետ, հայրենի ազգագրության նախակարապետ Գ. Սրվանձտյանցը հետևյալ թանկարժեք տեղեկությունն է հաղորդում. «Տաճկերեն լեզվով գովասանք տեստեն խաղ մը կա Բինգյոլի վրա, զոր շատ գավառներու բնակիչներ գիտեն և սրտագին ու մխիթար եղանակավ մը կ'երգեն, որոն սկիզբն է **«Ազալ բահար աչըլտի...»**, և նագարաթն է, **«Ախար կիտեր Բինգեօլի...»**: Սքանչելի նկարագիր և դիմառնական ոճ մը ունի այս խաղը, որով լերան բարեվայելչությունը կը գովե երգիչը, և արարածները կը հրավիրե հոն Աստուծո սքանչելիքը տեսնել, վայելել, կյանք առնուլ, և թե ինչպես անմահական ջուրեր կը բաշխե երկրին և այլն» (նույն տեղում, էջ 85):

Փորձելով բնութագրել Բյուրակնյա լեռների մասին հյուսված այդ և ուրիշ հին երգերը և կապելով դրանք անմիջականորեն լեռան բնաշխարհագրական առանձնահատկությունների հետ, նույն Սրվանձտյանցն ասում է մի ուշագրավ նկատողություն ևս. «Բինգյոլը դժնդակ տարտարոս մ'է ձմեռվան եղանակին, և դրախտ բացյալ՝ ի գարնան և ամրան: Բինգյոլը վեհ և աճավոր չէ, այլ սիրուն. թագավորի չի նմանիր, այլ՝ թագուհվո. քնքուշ է և փափուկ: Կույս մ'է՝ պճնազարդ և փափկասուն. շնորհաց լյառն է, քան թե քաջաց և դյուցազանց: Ասոր համար յուր վրա եղած վեպերը ո՛չ ազնվուրի, ո՛չ դևի, ո՛չ հաղթողի և ո՛չ զինվորի ու թագավորի են, այլ սիրո, գրվարճության, առողջության, գեղո և զարդու, անուշության, պարարտության, գուսանության: Որովհետև ասոր բյուրաղբերաց և հազար ականց բոլորը բնուր տեսակ բուսոց և ծաղկանց փոված են: Զրարբի մարգեր, ամենատարբեր բանջարներ և խոտեր իրենց արմատներով ուտելու, բուժելու, գույնգույն ներկելու կը գործածեն. յուր վայրի կենդանիները առյուծ և վագր չեն, այլ եղնիկ և այծյամն» (և. տ., էջ 83—84):

Նվիրական լեռան մասին հայերեն լեզվով հորինված երգերից և ո՛չ մեկը, ցավոք, չի պահպանվել ու հասել մեզ, բայց, այնուհանդերձ, ծանոթ են հայ միջավայրում գրի առնված ավանդական զրույցներ, որոնք հիշտ որ աչքի են ընկնում իրենց ազգային ոգով ու շնչով, և շնորհակալ պիտի լինել նախախնամությանը, որ ավելի քան մեկ ու կես դար առաջ տարագիր հպատության հետ հին հայրենիքից փոխադրվելով նոր հորիզոններ՝ Բարձր Հայքից Ախլցխայի ու Ախլքալակի գավառներ, վերապատմվել են այստեղ ու անմոռաց մնացել...

Համաձայն մեկի՝ մի կույր աղջիկ եղբոր հետ ոշխար է արածեցնում այս սարերում, ու մի օր, երբ խարխափելով դեգերում է այս ու այն կողմ, հանսարերում, ու մի օր, երբ խարխափելով դեգերում է այս ու այն կողմ, հանդիպում է ինչ-որ աղբյուրի, լվացվում է, և աչքերն անմիջապես սկսում են տեսնել: Ուրախությունից թողնում է ամեն ինչ և վազում է տուն՝ անապատե-

լի լուրն ավետելու ծնողներին: Երբ հայրն ու մայրը զարմացած հարցնում են, թե այդ ինչպե՞ս եղավ, աղջիկը պատասխանում է. «Սարի գլխին մի աղբյուր կա, լվացվեցի, աչքերս բացվեցին»: Բոլորը միասին վազում են սարի գլուխ և տեսնում, որ այնտեղ մեկի փոխարեն հազար գլգլան աղբյուր կա: Այդ օրից սարի անունը դնում են Բիլգյոլ:

Ըստ մեկ այլ ավանդության՝ մի թուրք փաշա բարձրանում է Բիլգյոլ՝ քեֆ անելու. նրա ծառան մի աղավնի է ապանում և տանում է աղբյուրի մեջ լվանալու: Բայց հազիվ ջրի մեջ թաթախած՝ աղավնին վերակենդանանում է, դուրս է պրծնում նրա ձեռքից և սավառնում դեպի երկինք: Նրա թևերից ջրի կաթիլները թափթփվում են լեռան այս ու այն կողմերում, և որ ընկնում են, նույն տեղից զուլալ աղբյուրներ են բխում:

Աղավնու կերպարի առկայությունն այս ավանդության մեջ ուշագրավ իրողություն է: Աղավնին սուրբ թռչուն է, ածևավորումը Սուրբ Հոգու, իսկ Սուրբ Հոգին, հաճախ, աղավնու կերպարանքով է երկնքից իջնում երկիր՝ մարդկանց ավետիս տալու: Մահմեդական թուրքը, որ տվյալ դեպքում չարի մարմնացումն է, փորձում է ապացել ամենաբարի էությունը, բայց որքան էլ բիրտ ու անողոք լինի բռնակալ ուժը, այնուհանդերձ անկարող է հաղթել Բարուն (Ավանդությունների բնագրերը տե՛ս «Զավախքի բարմունք», հավաքեց **Ե. Լալայանց,** Թիֆլիս, 1892, էջ 59, նույնը, **Ե. Լալայան,** Երկեր, հ. I, Ե., 1983, էջ 405—406):

Բիլգյոլի շուրջ թևածող ավանդական զրույցների մեջ, կարծես, ոգիացած շնչում է մի զարմանալի էություն, որն ինչքան զգաստ, ուշադիր, ընդառաջող ու շոայլ է բնաշխարհի իսկական տերերի՝ հայերի հանդեպ, նույնքան զուսպ, ժլատ ու անբարյացակամ է օտարների հանդեպ: Թունավոր գեղումների, օձերի նկատմամբ անգամ Բիլգյոլը չի խնայում իր բուժիչ ծաղիկներն ու ջրերը, բա.ց երբ նրանց է երկարում իր ձեռքը քոսով վարակված քուրդը, կարծես կախարդական գավազանով՝ հրաշք ծաղիկն ու ջուրը կորցնում են իրենց զորությունը և խառնվելով իրենց նման հազարավորների հետ՝ դառնում անճանաչելի:

Ժամանակին Գ. Սրվանձտ.ացը Բիլգյոլի շրջակայքում ապրող քրդերից լսել է նման մի ավանդություն, որը թեև մի որոշ վերապահությամբ օգտագործել է լեռան անվանակոչության գաղտնիքը բացահայտելու համար, բայց, ինչպես ավանդության բովանդակություն է ցույց տալիս, նրա խորհուրդը բոլորովին այլ է: Այստեղ ևս ականատես ենք դառնում նույն երևույթին, ինչ բուն ազգային, էպիկական պատումների մեջ, երբ հարեւնի բնությունը, գրեթե միշտ, մասնակից է իր զավակների կյանքին ու ճակատագրին, նրանց վշտին ու ուրախությանը, և անգիջում ու դաժան է օտարի հանդեպ: Ահա՛ այդ պատումը.

«Մի քյուրդ հովիվ Բիլգյոլի լեռը գառներ կ'արածա եղեր. օր մը կը տեսնե, որ մեկ վիրավորված, մեկ ջախջախված և մեկ ալ քոսոտած երեք օձեր կու գան ջրերու ակունքներեն մեկին ափը, ծաղիկե մը մեկ-մեկ թերթ կը փրցընեն, կ'ուտեն և մտնելով այն ջուրին մեջ կը լողանան՝ բավական միջոց մնալով ի ջուր: Հովիվը, որ անթարթ աչոք կը նայեր անոնց, հանկարծ կը տեսնա, որ երեքը մեկեն առողջ, առույգ և աշխույժ սողալով դուրս կ'ելլեն ջրեն՝ ապաքինած և արագ-արագ կը սահին կ'անցնին հովվի աչքեն անհետ: Այս հովվի տերը երևելի հարուստ մի քյուրդ է եղեր, երկար ժամանակե հետե քոսոտած, ախտացած. կը վազե հովիվը և յուր տեսածը պատմելով՝ կը վերցընեն տերը, կը բերեն այնտեղ, բայց անհնարին կը լինի հովվին

ճանաչել, թե ո՞րն էր այն ծաղիկն և այն ակն: Եվ որովհետև մեկ չէ, հապաղ չէ աղբյուրն ու ծաղիկն այն տեղին, որ փոթի համար ուտեր և խմեր, ու միանգամայն թունավոր լինելև ալ կասկած ընելով՝ խեղճ բռնուր քյուրդը կը ճեղանա հովվին, թե ինչո՞ւ չէ կրցեր նշանել, միտ պահել ծաղիկն ու ակն: Հովիվը կը պատասխանե. «Բյուր ակն, հազար ակն, ես ի՞նչ գիտեմ որ այն ակն»: Եվ այս է եղեր, իբր թե, տեղվույն անվանակոչության սկիզբը, ըստ պատմելո ոմանց») («Գրոց ու բրոց», էջ 86—87):

Այնուամենայնիվ, ավանդության գործածության ոլորտն ու նշանակությունն ուրիշ է, երգինը՝ ուրիշ: Երգը խոսում է մարդու սրտի ու նվիրական զգացումների հետո, հաճախ առանց բառերի ու միայն իր մեղեդիով, որի կյանքն ավելի երկար է, քան բառերինը. վերջիններս կարող են թարգմանվել, աղավաղվել, այլափոխվել, բայց մեղեդին շարունակում է պահել այն, կարոտն ու տենչանքը, որ մարդ ձգտում է արտահայտել տվյալ երգով:

Հին երգի առաջին տողն է միայն պահպանվել, այն էլ թուրքաց լեզվով, որի վերջնական վերծանությունը մեզանից տևական ժամանակ է խլել: Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցում» բանաստեղծական տողը տպագրված է նոտր գրերով, իսկ ըստ վերջինի, մի շարք տառերի գծագրությունը գրեթե նույնն է: Երգի առաջին բառը կարելի է կարդալ և՛ **ազալ,** և՛ **աղալ,** իսկ մենք, չլինելով թուրքագետ և Երևանում էլ չգտնելով պատշաճ խորհրդատու, մեծ դժվարություն ապրեցինք այդ բառերի ընտրության խնդրում: Վերջնական վճռի համար հարկադրված եղանք դիմել Կոստանդնուպոլիս, հայտնի բանաստեր Գևորգ Եմինյանին, որն իր հերթին խորհրդակցելով թուրք մասնագետների հետո, 1994 թ. նոյեմբերի 12-ին գրում է ինձ, որ այդ տողում գործածված է թուրքերեն ազալ բառը, «որ կը նշանակե աճնկիզը», իսկ սովյալ կոնտեքստում՝ «մշտնջենավոր, տևական»: Այսպիսով՝ երգի առաջին տողն է. **«Ազալ բահար աչըտի...»,** որի մոտավոր հայերեն թարգմանությունը բառացի կլինի. **«Մշտնջենավոր գարուն բացվեց...»,** իսկ վերջինիս բանաստեղծական փոխակերպությունը՝ **«Մշտականաչ գարուն բացվեց...»:** Թե բանաստեղծ-ժողովուրդը հետագա տողերի ու տների մեջ ո-րոշակիորեն ի՞նչ է ասել, չենք ուզում գուշակել՝ բավարարվելով Սրվանձտյանցի այդ առթիվ արած նկատողությամբ: Նշենք նաև, որ Սրվանձտյանցը մեջ է բերել երգի կրկնակը կամ յուրաքանչյուր տան եզրափակիչ չորրորդ տողը. «Ախար կիտեր Բինգեօլի...», որի հայերեն փոխադրությունը կլինի. «Հոսում-գնում է Բինգյոլը...»՝ դրանով ինչ-որ ձևով ամբողջացնելով այդ ուշագրավ ու հին երգը, որն երևի թե առավել գրավիչ է եղել իր մեղեդու շնորհիվ:

2

Անցյալ դարի 70-ական թթ. Բինգ.ոլի մասին թուրքերեն այդ երգը դեռ կենդանի էր ու հնչում էր Կարինում և մերձակա գավառներում, թուրք, բուրդ և հայ շրջաններում, բայց, ինչպես նախորոշված է այդ ու նման շատ երգեր, երկու-երեք տասնամյակ անց այն դուրս է մղվում հայ շրջաններից, որոնք արդեն նոր երգեր էին երգում, օրինակ՝ «Մայր Արաքսի ափերով»-ը, իսկ Բինգյոլի տերերը մնում են միայն թուրքերն ու քրդերը: Այդ առումով կարևոր վկայություն ենք գտնում պոլսահայ մանկավարժ Սիմոն Գաբա-յճյանի հայրենագիտական ընթերցարանի մեջ. «Երբ Բինգյոլին մոտեցան,

ջորեպանը սկսավ երգել Բինգյոլի վրա շինված ծանոթ երգը, **Ազալ բահար աչըլտի, Ախար կիտեր Բինգյոլի.** իսկ Գամեր այս լեռան կողերեն բղխող հայկական գետին՝ ըմբոստ Երասխի վրա շինված երգը կ'երգեր. **«Մայր Արաքսի ափերով...» (Ս. Գաբամաճյան,** Գամեր, Կ. Պոլիս, 1911, էջ 23): Այսպիսով՝ հայերը քայլ առ քայլ մոռանում ու կորցնում են իրենց ազգային երգը, իսկ նրա մեղեդին անթեղվելով նիրհում է նրանց հիշողության ամենախորին ծալքերում:

Այն տարիներին կային հայեր, որոնք լավ էին ըմբռնում այդ երգի ու նրա մեղեդու արժեքն ու նշանակությունը և ջանք չխնայելով՝ փորձ էին անում փրկել դրանք կորստից և վերջինիս ոգուն համապատասխան նոր բառեր հորինելով վերստին տարածել հայ միջավայրում: Այդ ուղղությամբ որոշ արդյունքի է հասնում միայն աշուղ Ջիվանին, որն, ի դեպ, իր ստեղծագործական կյանքում հայացրել է թուրքերենով երգվող ու պատմվող շատ սիրավեպեր, հեքիաթներ ու երգեր: Բեկված կյանքը, սակայն, իր որոշակի կնիքն է թողնում Ջիվանու որոնումների վրա և մասամբ էլ շեղում բուն հունից՝ զրկելով նոր հորինվածքը ժողովրդական ոգուց: Բացատրենք մեր միտքը. անցյալ դարի 70—80-ական թթ. հայ միջավայրում ծնունդ է առնում երգերի մի նոր ոճ կամ ուղղություն՝ կապված ազգային կյանքի, գաղափախոսության և ազատագրական որոնումների մեջ տեղի ունեցած արմատական տեղաշարժերի հետ: Նույն Բարձր Հայքում հիմնադրվում է առաջին հայրենասիրական գաղտնի կազմակերպությունը՝ «Պաշտպան հայրենյացը», իսկ կարճ ժամանակ անց ողջ Հայաստանով մեկ տարածվում են Կարինից եկող մարտաշունչ երգի դողանջները, որոնք թափանցում են հայության մտքի ու հոգու մեջ՝ այսօր էլ անտարբեր չթողնելով ունկնդրին.

Զայն մը հնչեց Էրզրումի Հայոց լեռներեն,
Թունդ-թունդ եկաւ Հայոց արտեր զենքի շաչյունեն:

Հայ գյուղացին դարուց ի վեր սուր զենք չը տեսած,
Դաշտը թողեց, սուր, հրացան բահին տեղն առավ:

Ցնծա՛, մայր մեր, ո՜վ Հայաստան, որդիքդ միացան,
Ութ դարերու սուգ ու թախիծ քեզնից վերացան:

Ուրախացավ Մա՛յր Հայաստան, եկավ կանգնեցավ,
Հին դարերու սուգ, տառապանք մի քիչ մեղմացավ:

Այսպիսի պարագայում Ջիվանին կանգնած էր երկընտրանքի առջև. ի՞նչ ոճով ու բովանդակությամբ պիտի հորիներ իր նոր երգը՝ հարմարեցնելու համար այն Բինգյոլի եղանակին և այդ ձևով անմեռ պահելու թովիչ մեղեդին. պարզապես թուրքերենը թարգմանելո՞ւ, սիրո երգի՞, թե՞ ռազմաշունչ կոչի... Նա ընտրում է միջին ճանապարհ, թեպետ ավելի քան հմայվում է Բինգյոլի գրավչությամբ ու թովչանքներով, որովհետև ցարական գրաքննությունը նույնպես թույլ չէր տա նրան բացորոշ հայդուկային երգ հորինել կամ ազգային-հայրենասիրական իդեալներ ներբողել: Հին երգի ոճի և բովանդակության շատ տարրեր նա պահպանել է՝ պարզապես դրանք թարգմանելով հայերեն, միայն մի արտահայտությամբ զգացնել տալով, որ իր ուշադրությունից դուրս չէ նաև նոր հեղափոխական շարժումը

գովերգելը, երգի առաջին տաղ եզրափակիչ չորրորդ տողը՝ «Շարժվում են բանակներդ, հայրենիք», այդ է վկայում: Բաց միայն այդքանը, մնացածը ներթող է Բինգյոլին, նրա անմահական վայրերին, ծաղիկներին ու եղնիկներին, հովերին ու աղբյուրներին, նրա աշխատասեր մշակներին, և խորին ցավ ու ափսոսանք, որ այդ դրախտային աշխարհն այսօր թափուր է մնացել իր հայ բնակիչներից: Ի վերջո, նման եզրակացությունը ևս ներքուստ հղի էր քաղաքական բովանդակությամբ:

Ջիվանու երգը հետևյալն է.

«ԲԻՆԳՅՈԼԻ» ԵՂԱՆԱԿՈՎ

Երբոր լինի գարնանամուտ, նոր գարուն,
Կը բազմանան վտակներդ, հա՛յրենի՛ք.
Շարիշար ցնծությամբ-երգով զվարթուն,
Շարժվում են բանակներդ, հայրենի՛ք:

Օդլդ սիրուն, ջուրդ սիրուն, դու սիրուն,
Պես-պես գունով ծաղիկներդ գալարուն.
Չեն դադարիր աշխատելուց օրն ի բուն—
Քո հարազատ մշակներդ, հայրենի՛ք:

Մարդիկ կուգան քո սարերդ մաճ գալու,
Իբր որսորդ՝ եղնիկներդ որսալու.
Ե՞րբ կը փոխեն երգը ուրախ կարդալու—
Քո սգազգեաց սոխակներդ, հայրենի՛ք:

Դու դրախտն ես, քեզի սուրբ գիրքը վկա,
Քո միջիցդ անմահության հուռ կուգա.
Հազար ափսո՜ս, մարդուց թափուր են հիմա—
Խնամ բազմամարդ վիճակներդ, հայրենի՛ք:

Հոչակավոր աշուղի ստեղծագործությունների մասնավոր հետազոտությամբ չենք զբաղվել, հետևաբար դժվարանում ենք ասել, թե առաջին անգամ ե՞րբ կամ այնուհետև որտե՞ղ է հրատարակվել խնդրո առարկա երգը և ի՞նչ հաջողություն ունեցել: Անձամբ մեզ ծանոթ է միայն մեկ տպագրություն. գումրեցի բանահավաք Աղեքսանդր Միսիթարյանի «Տաղեր և խաղեր» ժողովածուում ընդգրկված բնագիրը, որ լույս է տեսել Ալեքսանդրապոլում, 1900 թ. (տե՛ս Էջ 43—44): Վերջապես, չգիտենք նաև, թե ուրիշներն ևս երգե՞լ են այս խաղը, ե՞րբ և ո՞րտեղ, բայց որ առաջին տարիներին այդ միանգամայն հնարավոր էր, չենք տարակուսում, որովհետև Ա. Միսիթարյանի խոստովանությամբ՝ նա հավաքել է միայն իր երիտասարդության օրերին ժողովրդի շրջանում տարածված ու սիրված երգեր՝ փրկելու համար կորստից: Նշանակում է՝ Ջիվանու «Բինգյոլի» տարածումը հայ կյանքում համընկնում է անցյալ դարի 80—90-ական թթ., երբ արդեն ծրնկվել ու բանաստեղծական առաջին քայլերն էր անում նրա վերջին սիրահարը՝ հայոց ազգային մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը:

Հոգ տանելով նոր խոսքեր հորինելու միջոցով պահպանել «Բինգյոլի» մեղեդին և հակառակով ինքն իրեն՝ Չիվանին իր հորինած երգի մեջ խուսափել է «Բինգյոլ» տեղանունից և փոխարենն ամենուր գործածել «Հայրենիք»՝ չնայած տարողունակ, բայց մեղեդու ոճին ու կոլորիտին անհարիր բառը, դրանով իսկ, իր կամքին հակառակ, արգելք հարուցելով նրա հետագա տարածմանը, ավելի ճիշտ՝ նպաստելով նրա շուտափույթ մոռացմանը, որին և արժանանում է «Բինգյոլի եղանակով» խաղը*:

3

«Տաղեր ու խաղերի» հրատարակումից հետո, որքանով թույլ են տալիս ենթադրել նախահեղափոխական երգարանները ու ազգագրական ժողովածուները, Չիվանու երգն աստիճանաբար մոռացվում է, իսկ նրա մեղեդին՝ վերատին անթեղված մնում ժողովրդի հիշողության մեջ, և այսպես շարունակվում շուրջ քառասուն տարի, երբ հայ աշխարհում կատարվում են աներևակայելի տեղաշարժեր ու ոճիրներ. կոտորվում և իր պատմական հայրենիքից վտարվում է արևմտահայությունը, որի հրաշքով փրկված բեկորները ցրվում են աշխարհով մեկ: Արևելյան Հայաստանում հաստատվում են Խորհրդային կարգեր, որոնց տիրապետության տասնամյակներին թույլատրելի չէին խոսել ու դատողություններ անել հայոց եղեռնի, կորցրած հայրենիքի և հայ ժողովրդի պատմական իրավունքների մասին, հանցանք էր համարվում մինչև իսկ կարոտ ու բաղձանք արտահայտելը թուրք ջարդարարների լծի տակ մնացած բնօրրանի մասին: Համարձակներն, իբրև ազգայնամոլներ, ենթարկվում էին խստագույն պատժի՝ հետապընդման, հալածանքի, դատի, աքսորի, գնդակահարության:

1939 թ. կեսերից սկսեց փոքր-ինչ հալվել դաժան տասնամյակը. այդ տարի նախ հանդիսավորությամբ նշվեց հայ ժողովրդական էպոս «Սասունցի Դավթի» հազարամյակը, որն ուղեկցվեց ժողովրդական վեպի հնամահնավաք բնագրի հյուսմամբ ու հրատարակմամբ, տոնական հանդիսություններով ու զանազան ուշագրավ հրապարակումներով, ինչպես նաև այդ ու հաջորդ տարի լույս տեսան Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին», Մ. Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմանությունը, Րաֆֆու «Սամվելն» ու «Դավիթ Բեկը», Ծերենցի «Երկունքը», Մուրացանի «Գևորգ Մարզպետունին», պատմական Հայաստանի մասին ինչ-որ չափով հնարավորություններ ստեղծվեցին խոսել ու խորհել, որովհետև դրանց ուղղակի ազդակներն արդեն տալիս էին այս գրքերը:

Հիշատակված ստեղծագործություններում գործողությունները ծավալվում էին առավելապես Հայաստան աշխարհի արևմտյան գավառներում՝ Սասունում ու Մոկսում, Տարոնում ու Վասպուրականում, Անիում ու Կարսում, բնաշխարհներ ու քաղաքներ, որոնք հայերը կորցրել էին ընդմիշտ

---

* Հիշեցնե՛նք ընթերցողներին, որ Չիվանու խաղն, այնուամենայնիվ, հրատարակվել է խորհրդային շրջանում, հոչակավոր աշուղի ստեղծագործությունների վերջին երկու ստվար ժողովածուներում («Չիվանու քնարը», Ե., 1959, էջ 41, և «Չիվանի», Ե., 1988, էջ 62), բայց երկուսում էլ այն խորագրված է «Հայրենիք»: Հին վերնագիրը (կամ ենթավերնագիրը՝ «Բինգյոլի» եղանակով) կրճատված է, իսկ հորինման ազդակի մասին որևէ ծանոթություն չի տրված: Դրա հետևանքով՝ վարագուրվել է խաղի ստեղծման հավաստի պատմությունը և անորսալի դարձել բուն խորհուրդը:

երկու տասնմյակ առաջ, և որոնց հետ կապված նրանց հիշողությունները դեռ վառ էին ու անմարելի: «Վերքն», օրինակ, պարզորոշ թելադրում էր յուրաքանչյուր գիտակից հայի մոռածել հայոց հոգևոր արարումների բարձրակետ Անի քաղաքի վերաշինման աբովյանական երազանքի մասին, միաժամանակ յուրաքանչյուրի հոգում արթուն պահելով զավթված հողերն ազատագրելու և հայոց կորցրած պետականությունը վերականգնելու գաղափարը.

Հող ունինք՝ խլած, կյանք ունինք՝ մեռած,
Ախ, թրի, կրակի մենք եսիր դառած.
Ոչ երկինքն տեսնի մեր սուգն ու լացն,
Ոչ երկիրն պատռվի, մեզ տանի ցած...

Ախ, մեր սիրտն էապես ընչի՞ հուվացել,
Արինը ցամաքել, մեր կուռը թուլացել.
Երաբ կտեսնի՞մ, ախ, ես մեկ օր էլ,
Մեր սուրբ երկիրը թշնամուցն ազատիլ:

(«Վերք Հայաստանի», 1981 թ. հրատ., էջ 268—269): Վեպի կենտրոնական հերոս Աղասու այս տվայտանքը շատ ու շատ հայերի ներքին ցվիրական բաղձանքն էր, որի մասին, սակայն, նրանք չէին համարձակվում ազատորեն իրենց մտքերը կիսել անգամ մտերիմների հետ:

Իսկական գրողներն աշխատեցին օգտվել այս առերևույթ բարեպատեհ առիթից և իրենց այլաբանական խոհերն ու երազանքներն արտահայտել կորցրած հայրենիքի ու նրա փրկության մասին: Դեմիրճյանը գրեց «Երկիր հայրենի» պատմական դրաման, Ավ. Իսահակյանը բավականաչափ տևած դեգերումներից հետո հյուսեց իր քնարական թովիչ այլաբանությունը՝ «Բինգյոլ» բանաստեղծությունը, որը լույս տեսնելուց շատ չանցած՝ դարձավ համաժողովրդական երգ: Ո՞վ հորինեց նրա մեղեդին և որտեղի՞ց ու ի՞նչ հրաշքով ծնվեց այն. շատերի համար մինչև այսօր էլ հանելուկ է, մինչդեռ՝ Իսահակյանի բանաստեղծության և նրա խոսքերով հորինված ժողովրդական երգի ակունքները շատ խորն են և կարոտ հանգամանալից քննության:

Բինգյոլն Իսահակյանի ստեղծագործական երևակայության մեջ առաջին անգամ փայլատակել է 1893 թ., երբ նա որպես ազատ ունկնդիր դասեր էր լսում գերմանական համալսարաններում և մի որոշ ժամանակ կանգ էր առել Վիեննայում: Շատ էր կարդում նա այդ ընթացքում գրքեր Արևելքի ազգագրության ու բանահյուսության վերաբերյալ: Այս ընթերցումների պահերին էլ, թվում է, ծնվում է Բինգյոլի մասին լեգենդի տարազով ռոմանտիկ պատում հյուսելու գաղափարը:

Բինգյոլի լանջերից շնկշնկալով փչում է հովը, գոչգոչալով նրա խոր ձորերն են վազում առվակները, Հորուս-Մորուս ծաղկանց ծովում, լճակի մեջ լողանում է Շուխիկ-Հուրին: Երկնի հրեշտակը հավերժահարսի գեղեցկությունից գյութված ու ապշած՝ իրեն չեւում է վար, Բինգյոլի գիրկը՝ երկրային վայելչությունները գերադասելով դրախտային հավիտենականությունից: Երկինքը չընդունելով կատարվածի էությունը՝ կարեկցում է հրեշտահ

— «Ա՜խ, երնե՜կ քո մատաղ կյանքին,
Որ պիտ ծաղկի Բինգյոլում»:

Վառ աևուրջում ուղխև է մնչում,
Ծփում են սեզ ու արոտ,
Բլբուլների հույլքն է շնչում,
Շնչում է սե՛ր ու կարո՛տ:

Անո՜ւշ-անո՜ւշ հովն է փչում
Ջով Բինգյոլի լանջերից,
Ոլոր-մոլոր ուղխն է փախչում
Խոր Բինգյոլի ձորերից...

Այս բանաստեղծությունն առաջին անգամ լույս է տեսել «Արաքս» հանդեսում, նույն 1893 թ. (Գիրք Բ, էջ 54—55), «Հայ ժողովրդական առասպել» խորագրով: 1897—98 թթ. «Երգեր ու վերքեր» ժողովածուի հրատարակության տարիներին բանաստեղծությունն անփոփոխ ընդգրկվում է նաև վերջինիս մեջ, միայն թե ստանում է նոր վերնագիր՝ «Բինգ֊ոլ», իսկ «Հայ ժողովրդական առասպելը» դառնում է ենթավերնագիր՝ դրվելով փակագծերի մեջ (էջ 37—38): Իսահակյանի երկերի առաջին ծավալուն ժողովածուի՝ «Բանաստեղծությունների» մեջ (Երևան, 1930, էջ 269—270), կրկին հանդիպում ենք նույն բանաստեղծությանը, միայն թե առանց ենթավերնագրի, որից պիտի ենթադրել, թե Իսահակյանն ինքն էլ զգացել է, որ հայկական նման առասպել կամ ավանդություն չկա, և ընթերցողին մատուցածը սեփական հորինվածքն է, իր երևակայության ծնունդը կամ էլ արձագանքը կյանքում երբեմն պատահող շատ սովորական դիպվածի, որ դարձյալ ճանապարհագրական հետևանք է պատանեկան ցնորքների:

Որ երևակայական հավերժահարսերը կանչում են պատանիներին հզոր թովչանքով, և վերջիններս, անկարող լինելով դիմադրել նրանց կախարդանքին, իրենց նետում են գետը (ջուրը) և խեղդվում, ինձ ծանոթ է ադպիսի մի դեպք իմ հայրենի գյուղից՝ կատարված 1940-ական թթ. վերջերին: Անհավանական չէ, որ Բինգյոլի հիմքում ևս նման մի դեպք է ընկած, և Իսահակյանը բանաստեղծորեն գունազարդել և այլափոխել է այն: Այս «Բինգյոլը», սակայն, որևէ առնչություն չունի այն «Բինգյոլի» հետ, որի ծնունդը նախապատրաստվում էր Իսահակյանի ստեղծագործական երևակայության մեջ շատ տարիներ, և որը կապված էր Սրվանձտյանցի հիշատակած երգի հետ:

1900—10-ական թթ. Իսահակյանի միտքը կլանված էր Սասնա Մհերի կերպարով և ժողովրդական վեպի հնամապատասխան ճյուղի մշակման բարդ ու բազմակնճիռ հարցերով, որի պարտադրանքով նա ոչ միայն գրի է առնում ժողովրդական վեպի անծանոթ տարբերակներ, այլև հանգամանորեն քննում և ուսումնասիրում է արդեն հրատարակվածները: Այդ դեգերումների ընթացքում Իսահակյանը չէր կարող շրջանցել գլխավոր սկզբնաղբյուրը՝ Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռը», ուր վեպի միջավայրի մանրամասն նկարագրության ու, թերևս, ամենաանպարտ պատումի հետ միասին տեղ է գտել նաև Բինգյոլի մասին հորինված ժողովրդական երգը, ավելի ճիշտ՝ երգից միայն երկու տող, բայց և բովանդակության հատուկտոր շարադրանքը:

1900—10-ական թթ. Իսահակյանի միտքը կլանված էր Սասնա Մհերի կերպարով և ժողովրդական վեպի հնամապատասխան ճյուղի մշակման բարդ ու բազմակնճիռ հարցերով, որի պարտադրանքով նա ոչ միայն գրի է առնում ժողովրդական վեպի անծանոթ տարբերակներ, այլև հանգամանորեն քննում և ուսումնասիրում է արդեն հրատարակվածները: Այդ դեգերումների ընթացքում Իսահակյանը չէր կարող շրջանցել գլխավոր սկզբնաղբյուրը՝ Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռը», ուր վեպի միջավայրի մանրամասն նկարագրության ու, թերևս, ամենաանպարտ պատումի հետ միասին տեղ է գտել նաև Բինգյոլի մասին հորինված ժողովրդական երգը, ավելի ճիշտ՝ երգից միայն երկու տող, բայց և բովանդակության հատուկտոր շարադրանքը:

Երկու-երեք տասնամյակ անց, 30-ական թթ., երբ տոնվում էր «Սասունցի Դավթի» հազարամյա հոբելյանն, իսկ Իսահակյանն էլ պատրաստում էր իր գիտական հետազոտությունը՝ «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին», միաժամանակ հրատարակության պատրաստելով «Սասմա Մհեր» վիպերգի վերջնական տարբերակը, չէր կարող անհրաժեշտություն չզգալ վել կրկին ուշադիր կարդալու Սրվանձտյանցի մեծարժեք աշխատությունը, ու այն էլ ո՛չ մեկ անգամ, դարձյալ առիթ ունենալով անդրադառնալու նաև Բինգյոլին նվիրված էջերին:

Այդ տարիներն իզուր չեն անցնում: Իսահակյանի ստեղծագործական երևակայության մեջ հաստատուն տեղ է գրավում «Բինգյոլն» իր մոռացված բանաստեղծական տողերով և անթեղված մեղեդիով, որոնք շատ հետաքրքրվոր է, որ երիտասարդական տարիներին լսած լիներ ինքն անձամբ՝ Արևելյան և Արևմտյան Հայաստանում շրջագայությունների ժամանակ, թափառիկ գուսաններից՝ պարտադրելով հարություն տալու իրենց: Եվ քանի որ բարենպաստ իրադրություններ էին ստեղծվել, գեթ վարագուրված, կարոտ ու բաղձանք արտահայտելու ազգային կորուստների և մեծ ու անհամոք կարոտների մասին, հին երգը բանաստեղծի համար ստանում է նոր իմաստ ու բովանդակություն, դառնում խորհրդանիշն ընդհանրապես կորած հայրենիքի և հաղության խորտակված պատրանքների:

Իսահակյանը, թվում է, նորից պահ մի տարակուսում է՝ չի համարձակվում իր մտորումներն անմիջապես թղթին հանձնելու: Նրա ձեռագրերում «Բինգյոլին» վերաբերող որևէ ծրագրային նշում, անուգրություն կամ այլ կարգի պատառիկ չի մնացել: Չենք կասկածում, որ այդպիսիք եղել են ու բավականաչափ շատ, բայց նա զգուշության համար ոչնչացրել է՝ գերադասելով բանաստեղծությունն առավելապես հիշել մտքում, տող առ տող, տուն առ տուն, իսկ երբ ներկայացել է հարմար առիթ, արդեն որոշակի ձև ու չափ ստացած մտահղացումը հանձնել է թղթին: Գրականագետ Ա. Ինճիկյանը «Բինգյոլի» գրության առնչությամբ հետևյալն է հաղորդում. «Նախապես մտահղացված այս բանաստեղծությունը Իսահակյանը գրի է առել 1941 թ., հունվարի 19-ին, Ստ. Զորյանի բնակարանում: Ինքնագիրը, որ բանաստեղծը, որպես հիշատակ այդ օրվա, նվիրել է ականավոր արձակագրին, աջ անկյունում ունի հետևյալ մակագրությունը. «19/I, 41, Երևան, Ստ. Զորյանի տանը»: Առաջին անգամ տպագրվել է՝ «Սովետական գրականություն», 1941, հունվար, № 1, էջ 7, ապա՝ «Հատընտիր», 1943, էջ 99—100» **(Ա.վ. Իսահակյան,** Երկերի ժողովածու վեց հատորով, հ. I, Ե., 1973, էջ 438): Այս հաղորդումն, ինչ խոսք, խիստ ժլատ է և գրեթե բաց չի անում ընթերցողի առջև Իսահակյանի ստեղծագործական գաղտնարանի դռները, բայց ուրիշ իսահակյանագետներ այդ էլ չեն ասում:

Ստեփան Զորյանը, սակայն, փոքր-ինչ ընդարձակում է մեր պատկերացումները բանաստեղծության առաջին տարբերակի գրության ուղեկցող իրադրությունների մասին՝ իր հուշերում հաղորդելով հետևյալ մանրամասները. «Մի անգամ իմ տանը, նրա 65-ամյա հոբելյանի սոթիվ հավաքվել էինք ճաշի. Իսահակյանը հենց այդտեղ, սեղանի վրա, մատիտով գրի առավ «Բինգյոլը»: Չնայած որ բոլորս հավաներեցինք, նա, այնուամենայնիվ, ուզեց կարծիքներ իմանալ, թե ի՞նչ թերություններ են տեսնում, և ներկաները հայտնեցին իրենց կարծիքները, որ վերաբերում էին մի բառի, մի անվանի կամ ոիթմի: Սիրով լսում էր ամենքին: Երբ հերթը հասավ ինձ, ես դիտեցի միայն, որ բանաստեղծության ժողովրդական ընդհանուր ոճին չի

հարմարում «Քնար դառան աղբյուրները...». **քնար** բառը **չկա** ժողովրդի բառարանում, և ժողովուրդը կամ ժողովրդի մարդը հազիվ թե աղբյուրը նմանեցնի քնարի, հետևաբար ցանկալի է դա փոխարինել ուրիշ բառով:

Անցողակի ասած այս դիտողությունից բավական ժամանակ անց ևս մի օր ասաց ինձ.

— Գիտե՛ս, էն որ ասում էիր, թե «Քնար դառան աղբյուրները...» ժողովրդական պատկերացում չի, ինձ զբաղեցնում է. իսկական ժողովրդականը դեռ չեմ գտել: Բայց կարծում եմ, կգտնեմ մի օր» («Հուշերի գիրք», Ե., 1991, էջ 123—124):

Բարեբախտաբար, պահպանվել է Ստ. Զորյանի տանը Ավ. Իսահակյանի՝ մատիտով գրի առած «Բինգյոլը»: Ավելին, ձեռագրի վերին լուսանցքում նաև այն ծանոթությունը, որ հիշում է Ա. Ինճիկյանը (միայն ոչ **Ստ. Զորյան,** այլ՝ **Ս. Զորյան**): Ահա՛ այն.

* * *

Երբ բաց եղան գարնան կանաչ դռները,
Քնար դառան աղբյուրները Բինգյոլի.
Շարվե՛ շարան անցան գութքված ուղտերը,
Յարս էլ գնաց յայլաները Բինգյոլի:

Անգին յարիս լու՛ս-երեսին կարոտ եմ,
Նազուկ մեջքին, ծով-ծամերին կարոտ եմ.
Քաղցր լեզվին, անուշ հոտին կարոտ եմ,
Սև աչքերով էն եղնիկին Բինգյոլի:

Պա՛ղ-պա՛ղ ջրեր,—պապակ շուրթըս չի բացվի,
Ծո՛ւփ-ծո՛ւփ ծաղկունք,—լացող աչքս չի բացվի.
Դեռ չքնեսած յարիս,—սիրտըս չի բացվի.
Թո՛ղ չորանան վարդն ու վոսկ Բինգյոլի:

Մոլորվել եմ, էս տեղերին ծանոթ չե՛մ,
Բյուր լճերին, գետ ու քարին ծանոթ չե՛մ,
Ես պանդուխտ եմ, ասր ու ձորին ծանոթ չե՛մ,
Քույրի՛կ, ասա՛, ո՞րն է ճամբան Բինգյոլի:

(Ինքնագրի նմանահանությունը տե՛ս **Ստ. Զորյան,** Հուշերի գիրք, վրկայակոչված հրատ., 256—257 էջերի միջև տեղադրված նկարազարդումների շարքում, որից և կատարել ենք սույն վերծանությունը):

Նախ՝ լեզվական մի քանի դիտողություն. բանաստեղծության առաջին տողի («Երբ բաց եղան գարնան կանաչ դռները...») նախավերջին բանեթադրել է տալիս, թե Իսահակյանը, գուցե և ապոց խորհրդով, հիշյալ տողը սահմանելուց հետո **կանաչ** բառը մտադրվել է գործել ժողովրդախոսքը և հաստատորեն նախապատվությունը տվել բառի գրական տարբերակին:

Երրորդ տողում («Ծարվե շարան անցան զուրկած ուղտերը...») առկա է անուշադրության սխալ՝ հեղինակը, կարծես, վերստին տուրք է տվել խոսակցական ձևերին և **զուգված** բառը գրել **ք**-ով, երբ գրական հայնրենի ուղղագրության կանոնների համաձայն պահանջվում էր **գ** (զուգված):

Երկրորդ տան երկրորդ տողում, «ծով-ծամերին» բառակապակցության մեջ, որոշիչը որոշյալի հետ միացված է գծիկով, գրության մի եղանակ, որ Իսահակյանը գործածում էր դեռ «Երգեր ու վերքեր» ժողովածուում. օրինակ՝ «Մով-մանուշակ մենակ սիրե...» (էջ 5), «Ես ունեի ան-ժա՛ռի տակ...» (էջ 16), «Պապակ-արտիս, փափաք-արտիս...», «Արտիդ կպնիմ վառ-կարոտով...» (էջ 20), «Ալ-թշերիդ, լալ-շրթերիդ...» (էջ 24) և այլն: Միևչդեռ նշված բոլոր բառակապակցություններում գծիկի անհրաժեշտություն բնավ չի զգացվում, որովհետև գործ ունենք սովորական որոշիչների կամ մակդիրների հետ:

Վերջապես՝ երրորդ տան առաջին և երկրորդ տողերում կոչականները բուն նախադասությունից անջատված են առորակետ-գծիկով. «Պա՛ղ-պա՛ղ ջրեր,—պապակ շուրթըս չի բացվի, /Ծո՛ւփ-ծո՛ւփ ծաղկունք,—լացող աչքս չի բացվի...», միևչդեռ տվյալ դեպքում, որպես որոհման նշան, պահանջվում էր գործածել միայն առորակետ:

Այժմ՝ բնագրագիտական բնույթի նկատողություններ. բանաստեղծությունը խորագրված չէ, և փոխարենը դրված են երեք աստղանիշ: Հեղինակի համար, հարկավ, նախապես ընտրված է եղել վերնագիրը, որ անուղղակիորեն հետևում է Ստ. Զորյանի հուշերից, բայց հիշյալ արտագրության մեջ գերադասել է շրջանցել այն:

Առաջին տողը՝ «Երբ բաց եղան գալնան կանաչ դռները...», որոշակիորեն հուշում է, որ Իսահակյանը թարգմանել է Բինգյոլի մասին Գ. Սրվանձտյանցի հիշատակած ժողովրդական երգի հենց առաջին տողը. «Ազալ բահար աչըլտի...», իսկ 2-րդ-ից 11-րդ տողերը յուրօրինակ արձագանքը կամ բանաստեղծական վերաշարադրանքն են նույն Սրվանձտյանցի ակնարկած թուրքերեն «Բինգյոլ» երգի, որի մեղմ բովանդակություն արդեն տեսանք վերևում. «...լերան բարեվայելչությունը կը գովե երգիչը, և արտքածները կը հրավիրե հոն Աստուծո աքանչելիքը տեսնել վայելել, կյանք առնուլ, թե ինչպես անմահական ջուրեր կը բաշխե երկրին և այլն» («Գրոց ու բրոց», էջ 85):

Անհասկանալի է 12-րդ տողն ամբողջությամբ՝ «Թո՛ղ չորանան վարդն ու վտակ Բինգյոլի...», որ ընդհանուր ոչինչ չունի Սրվանձտյանցի հիշատակած երգի բովանդակության և Իսահակյանի սույն բանաստեղծության հետ: Այդ տողն ավելի շուտ հեղինակի երբեմնի անհատապաշտականության ժխտողական տրամադրությունների վերապրուկն է, որի օրինակներն առատ են «Աբու-Լալա Մահարի» պոեմում և զանազան բանաստեղծություններում:

Վերջապես՝ լուրջ խորհրդածության տեղիք են տալիս եզրափակիչ 13-րդ—16-րդ տողերը: Դրանք, ըստ էության, Իսահակյանի հավելումներն են և ամբողջի հետ հակասության մեջ են: Բինգյոլի մասին ներբող ասող մեկը, որի ընկալումներին ու բաղձանքներին ընթերցողը հաղորդակից է դառնում բանաստեղծության առաջին մասում, որոնք շա՛տ են առարկայական, գունագեղ ու հիացական, անկարելի է, որ լիներ նույն վայրերին միանգամայն անծանոթ անձնավորություն՝ հարկադրված լինելով խորհրդավոր Քույրիկին Բինգյոլի ճամփաների մասին հարցումներ ուղղել:

Անբացատրելի է նաև այդ «Քույրիկի» բանաստեղծական կերպարը, որը չգիտես, որտեղի՞ց է հայտնվում և ո՞վ է, մանավանդ որ Բինգյոլն իր շրջակայքով հայաթափվել էր դեռևս 19-րդ դարում, իսկ մերձակայքի հատուկենտ հայ գյուղերի բնակչությանը թուրքերը կոտորեցին ու տարագրեցին Մեծ եղեռնի տարիներին: Ենթադրել, որ արևելյան հեքիաթներին բնորոշ հավիտենական բարի պառա՞վ է Քույրիկը, որը ճանապարհ է ցույց տալիս մոլորված ուղևորին, այդ դեպքում ավելորդ էր նրան Քույրիկ կոչելը: Մտածել, որ խոսքը Մեծ եղեռնի օրերին հարազատների գրկից հափշտակված, թուրքաց տներում ու հարեմներում արգելափակված, ապա և մահմեդականացված այն հայ կանանց ու աղջիկների՞ն է վերաբերում, որոնք չէին մոռանում իրենց մայրենի լեզուն, կրոնը և, քուն թե հարթմնի, երազների մեջ մշտապես դեգերում էին հայրենի բնօրրանի ճամփաներով... այսպիսի կանայք այսօր էլ հանդիպում են օտար ափերից Արևմտյան Հայաստան վերադարձող հայ զբոսաշրջիկների ճանապարհներին, բա՛ց «Բինգյոլի» գրության օրերին Արևմտյան Հայաստանն արգելյալ գոտի էր բոլոր հայերի համար:

Ամփոփենք. «Բինգյոլի» եզրափակիչ տողերի մեջ, թվում է, խոսքը հայության անմարելի բաղձանքի մասին է, որը երևակայության մեջ վերադառնալով վաղուց հեռուներում թողած ու մոռացած հայրենիքը, որքան առաջանում էր ժամանակը, այնքան կարիք էր զգում բանիմաց խորհրդատուի ու առաջնորդի, որպեսզի վերջինս, մանկան պես, բռնելով արդեն այլ հորիզոններում ծնված ու հասակ առած զավակների ձեռքերը, տաներ նրանց դեպի Հայաստան աշխարհի դրախտային ու ճվիրական վայրերը, օգներ, որ կարողանային անարգել կորել-անցնել հավետ ծաղկուն լեռներով ու անդնդախոր ձորերով: Ինչևէ, «Քույրիկը», երևի թե, հրաշքով հայտնված Ոգի Հայաստանին է՝ հավիտենապես բարի, սիրող ու կարեկցող, մշտապես տագնապած երկրի ու ժողովրդի կյանքով ու ճակատագրով:

Իսահակյանի «Բինգյոլն» ակնհայտ հոգեհարազատություն ունի Չիվանու երգի հետ նույնպես: Վերջինիս գոնե առաջին երեք տողերի զուգահեռները դժվար չէ նշմարել այստեղ: Չիվանին գրել է. **«Երբոր լինի գարնանամուտ, նոր գարուն...»,** Իսահակյանի բանաստեղծության առաջին տողն ևս գրեթե նույնն է. «Երբ բաց եղան գարնան կանաչ դռները...», և երկուսն էլ, ըստ էության, թարգմանել են թուրքերեն երգը: Չիվանին այնուհետև ավելացրել է.

Կըբազմանան վտակներդ, հայրենիք.
Շարիշար ցնծությամբ-երգով զվարթուն,
Շարժըվում են բանակներդ, հայրենիք:

Իսահակյանն աչքի առաջ ունենալով Չիվանու այս տողերը, նաև մերձենալով ավանդական երգի ոճին ու ոգուն, իր բանաստեղծությունը շարունակել է հետևյալ տողերով.

Քնար դառան աղբյուրները Բինգյոլի.
Շարվե շարան անցան գուգված ուղտերը,
Յարս էլ գնաց յայլաները Բինգյոլի...

Նմանություններ կան նաև Զիվանու և Իսահակյանի հիշյալ ստեղծագործությունների հետագա տողերի միջև, բայց հարկ ենք համարում մեր նկատառություններն այսքանով ավարտել՝ ընդգծելով միայն, որ Զիվանու երգը է եղել հարատևողն ավանդական մեղեդու և ստեղծագործական ազդակներից մեկը Իսահակյանի «Բինգ֊ոլ» բանաստեղծության:

«Բինգյոլի» առաջին տարբերակը թղթին հանձնելուց շատ չանցած, թերևս ուկնդրելով գրչակից ընկերների ու մտերիմների նկատողություններին կամ անձնական որոնումներից հետո, Իսահակյանը պատրաստեց բանաստեղծության երկրորդ և վերջնական տարբերակը, որն այնուհետև հանձնեց տպագրության «Խորհրդային գրականություն» հանդեսին, ամենայն հավանականությամբ՝ 1941 թ. փետրվարի առաջին տասնօրյակին: Խմբագիրը «Բինգյոլը» գետեղեց ամսագրի արդեն տպագրության հանձնված № 1-ում (էջ 7), ուր տեղ էր գտել նաև կուսակցական բանաստեղծ Նաիրի Զարյանի համանման բովանդակությամբ մեկ այլ բանաստեղծություն՝ «Հայրենի տուն» («Այս գիշեր տեսա մի անուշ երազ, /Ես հայրենի տունն էի նորոգում...»): Ամսագրի հիշյալ համարը ստորագրվեց տպագրության 1941 թ. փետրվարի 25-ին և լույս տեսավ երկու հազար տպաքանակով:

Իսահակյանի բանաստեղծության տակ դրված էր գրության թվականը՝ 19/I 41, չնայած, իրականում, տվյալ ստեղծագործության առաջին տարբերակը գրի առնելու ամսաթիվն է այդ և ո՛չ հղացման կամ հորինման և կամ, որ ավելի ճիշտ կլիներ, վերջնական տարբերակի խմբագրման: Իսկ այդ ծանր աշխատանքը կատարվել է հունվարի 19-ից ո՛չ շատ հետո, չնայած, ըստ Զոր֊ի անունդակի հավաստիացումների՝ առաջին ընթերցումից «բավական ժամանակ անց» դեռ վերջնական տարբերակը պատրաստ չէր, և հեղինակն էլ չէր պատրաստվում այն տպագրելու, որ, ինչ խոսք, չի հաստատվում առկա տվյալներով:

Որովհետև այս խմբագրմամբ հիմնականում սահմանվում է բանաստեղծության վերջնական բնագիրը, հարկ ենք համարում ստորև ամբողջությամբ մեջ բերել այն՝ միաժամանակ հնարավորություն տալով հետաքրքրասերներին անձամբ բաղդատել ու տեսնել այն բոլոր փոփոխությունները, որ կատարել է հեղինակը երկու տարբերակների միջև ընկած ժամանակամիջոցում, որ, մեր համոզմամբ, 20—25 օրից չի անցել.

ԲԻՆԳՅՈԼ

Երբ բաց եղան գարնան կանաչ դռները,
Քնար դառան աղբյուրները Բինգյոլի.
Շարվե շարան անցան գուգված ուղտերը,
Յարս էլ գնաց յայլաձերը Բինգ֊ոլի:

Անգին յարիս լույս երեսին կարոտ եմ,
Դազուկ մեջքին, ծով-ծամերին կարոտ եմ.
Քաղցր լեզվին, անուշ հոտին կարոտ եմ,
Սև աչքերով էն եղնիկին Բինգյոլի:

Պա՛ղ-պա՛ղ ջրեր, պապակ շուրթըս չի բացվի,
Ծուխ-ծուխ ծաղկունք, լացող աչքս չի բացվի.

Դեռ չտեսած յարիս,—սիրտըս չի բացվի,
Ինձ ի՞նչ, ավա՜ղ, բլբուլները Բինգյոլի:

Մոլորվել եմ, ճամբաներին ծանոթ չեմ,
Բյուր լճերին, գետ ու քարին ծանոթ չեմ.
Ես պանդուխտ եմ, էս տեղերին ծանոթ չեմ,
Քույրիկ, ասա, ո՞րն է ճամբան Բինգյոլի:

Երևան
19 I 41

Նախ՝ վերացված են խորագրի անարտահայտիչ աստղանիշերը, և ուղղակիորեն նշված է վերնագիրը՝ «Բինգյոլ», որին քնարական ստեղծագործությունների մեջ սակավ դեպքերում են դիմում հեղինակները: Այնուհետև՝ վերացված են առաջին և երրորդ տողերում ուղղա-խոսակցական ձևերը, դրանով նաև կանոնավորելով վերևում հիշված բառերի ուղղագրությունը (կանաչ, զուգված): Կոչականները հնախոսության մնացած անդամներից անջատված են պարզ առորակետերով: Վերափոխված է բանաստեղծության ոգուն անհարիր «Թո՛ղ չորանան...» և այլն տողը՝ փոխարինելով այն անչափ հաջող ու քնարական բաղձանքով «Ինձ ի՞նչ, ավա՜ղ, բլբուլները Բինգյոլի...»: Խմբագրված է նաև չորրորդ տունը՝ տեղաշարժելով որոշ բառեր. «...Էս տեղերին ծանոթ չեմ» արտահայտության փոխարեն՝ «...ճամբաներին ծանոթ չեմ», «...ասա ու ձորին ծանոթ չեմ»-ի փոխարեն՝ «...Էս տեղերին ծանոթ չեմ»:

«Սովետական գրականություն» ամսագրի հունվարյան համարը վաճառքի հանվեց մարտ-ապրիլին: Մայիսին շատ-շատերն արդեն անգիր գիտեին Իսահակյանի նոր բանաստեղծությունը, իսկ կարճ ժամանակ անց սկսեցին երգել:

Ու ծագեց մեծ հանելուկը. ո՞վ հորինեց երգն ու եղանակը: Ոչ ոք չէր կարողանում պատասխանել այս խորհրդավոր հարցին, մինչդեռ հարություն էր առել Բինգյոլի մասին հյուսված, վաղուց մոռացված, բայց նիրհող հին մեղեդին:

Ամեն բնաշխարհի բանահյուսություն հատկանշվում է իր ավանդական երգերով ու մեղեդիներով, որոնցից ընտիրները գալիս են դարերի խորքից և թարգմանն են սերունդների նվիրական զգացումների ու անհագ կարոտների: Բնավորությամբ դրանք խորապես ազգային հորինվածքներ են և երբեք չեն հնանում ու մոռացվում: Լինում են ժամանակներ, երբ մեղեդին՝ պարուրված լինելով ցանկալի ձևի մեջ, գտնում է լայն ճանաչում, տարածվում անգամ հարևան ազգերի շրջանում՝ աստիճանաբար փոխելով տարազը և թարգմանվելով օտարի լեզվով: Բայց գալիս են նաև ժամանակներ, երբ ծանր օրհասը կասեցնում է ազգության քաղաքական ու հոգևոր առաջընթացը, և երգն ու մեղեդին ևս բաժանում են ժողովրդի ճակատագիրը, աստիճանաբար հեռանում են ասպարեզից ու կամաց-կամաց մոռացվում: Բայց այդ մոռացումն այլ բնույթ ունի, ավելի շուտ, երևութական է. մեղեդին չի մեռնում, նա անթեղվում է ժողովրդի պատմական հիշողության մեջ և սպասում բարենպաստ հանգամանքների՝ անսպասելի արթնանալու, գտնելու

համար իր նոր ձևը և վերստին դառնալու համազգային, համաժողովրդական երգ, եթե այդ նոր ձևը դաշն է ավանդական ոգու հետ:

Նիրհող ու հարություն առնող մեղեդիների գաղտնիքն այս է, և Իսահակյանի «Բինգյոլի» մեղեդին այս ճանապարհով գտավ իր նոր ձևը, որի հետ զարմանալիորեն ներդաշնակ է:

ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Օգոստոս, 1995

ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԸ*

Հին Հայոց Նաւասարդի տօնը, որպէս կարեւոր մշակութային իրողութիւն, տեւապէս եղել է քննութեան առարկայ շատ հետազօտողների համար: Եւ դա բնական էլ է, զի տօնը (այն էլ՝ գլխաւոր տօնը), որպէս ազգային մշակոյթի խտացուած դրսեւորում, իր մէջ պիտի ընդգրկէր հայ մշակոյթի համարեա բոլոր ճիւղերը և պատմական վայրուվերումների կնիքը: Այդուհանդերձ, ինչպէս հայ մշակոյթի շատ այլ ասպարէզներում, այնպէս եւ այստեղ, բազմաթիւ հարցեր տակաւին վիճայարոյց են, եւ շատ հարցեր էլ պարզապէս բաց են, ընդհանրապէս չեն քննուած:

Տարիներ առաջ, շարքիս մի յօդուածում աստղագիտական եւ տոմարական քննութեամբ փորձել էի հիմնաւորել այն, որ հին Հայոց Նաւասարդի տօնը եղել է ամառնամուտի շրջանում, արեւադարձից մի շաբաթ առաջ (արդի օրացոյցի հաշուարկով՝ յունիսի 14-ին): Արդ փորձենք այս տեսանկիւնից քննել Նաւասարդի տօնը, և ըստ կարելւոյն պարզել, թէ ինչ տօն է դա եղել (դրա իմաստը, ծէսերը, խորհուրդները, մնացորդները եւն):

Ինչպէս ժամանակին ցոյց էր տրուել[1], Հայոց Բուն օրացոյցը սկզբնաւորուել է Ն. Ք. 2341 թ. յուլիսի 4-ին (ըստ Յուլեան տոմարի հաշուարկի), Հայկն հաստատեղութեան գլխաւոր աստղի արեգակնային ամբարձման եւ Նաւասարդ անսի մէկի զուգադիպութեան օրը: Այդ նոյն աստղագիտական երեւոյթով (այդ աստղի արեգակնային ամբարձումով) էլ, անկախ ամիսամսաթուից, որոշուել է Հայոց գլխաւոր անշարժ տօնը խնդրոյ առարկայ ժամանակներում:

---

* Այս շարքի նախորդ յօդուածի («Էջմիածին», 1995, թ Ա, էջ 48) նկարների մակագրութիւններն են. Ձախից աջ, վերից վար. Հայկն (Օրիոն) աստեղատունը Ալեսսանդրո Պիկկոլոմինիի «Անշարժ աստղերի մասին» ատլասից. 1540 թ.: Օձակիր (Օձակալ) հաստատեղութիւնը եւ իր շրջակայքը ըստ Մխիթար Սեբաստացու «Աստղալից երկինք» քարտէզի (1749 թ.): Այստեղ պատկերները տրուած են «հայելային»՝ այնպէս, ինչպէս կ'երեւայ երկնոլորտը դրսից դիտողին: Հայկն հաստատեղութիւնը եւ իր շրջակայքը ըստ Մ. Սեբաստացու «Աստղալից երկինք» քարտէզի (1749 թ.): Հին չինական եւ շումեր-աքքադական Նետաղեղ հաստատեղութիւնը Մեծ Շուն աստեղատան տեղում:

[1] Գրիգոր Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Հայոց Բուն թուական, «Էջմիածին», 1985, թ Ա, էջ 51—57, թ Բ—Գ, էջ 72—80:

Ն. Ք. 2341 թուականին ամառային արեւադարձը եղել է Յուլեան տոմարով յուլիսի 12-ին[2]: Այս ամսաթիւը միայն ութ օրով է տարբերւում Նաւասարդի տօնի օրուայ համար ստացուած օրից: Պատահակա՞ն է այսպիսի առնչութիւնը ամառնամուտի օրուայ եւ Նաւասարդի օրուայ միջեւ: Անշուշտ, կարելի է փորձել այդ ութօրեայ տարբերութիւնը բացատրել կամ պարզ զուգադիպութեամբ եւ կամ՝ որպէս արդիւնք սխալի: Իսկ սխալը կարող էր բխել հէնց խնդրի բնոյթից (կախուած «ծագման պահի» հասկացութեան անհամաձայնութիւնից, դիտման եղանակից, տեղանքի մակերեւութային ու մթնոլորտային առանձնայատկութիւններից և այլ գործօններից): Սակայն նկատի առնելով, թէ խնդրոյ առարկայ ժամանակներում որքան մեծ կարեւորութիւն պիտի ունեցած լինէին եա՛ւ աստղի արեգակնային ամբարձման դիտումները, եա՛ւ էլ արեւադարձի օրուայ աստղագիտական-դիտողական որոշումը (երկուսն էլ՝ կապուած հաւատքի, պաշտամունքի հետ), շատ քիչ հաւանական պիտի համարել, որ այդ օրերը որոշուէին ութօրեայ սխալով: Նկատենք, որ նշուած ժամանակներից (եւ աւելի վաղ շրջանից) մեզ հասած բազմաթիւ ժայռապատկերները, խեցիէ եւ բրոնզէ տարբեր գտածոները վկայում են, որ այդ ժամանակներում Հայկական Լեռնաշխարհում եղել է բաւական բարձր աստղագիտական մշակոյթ, մեծ ճշգրտութեամբ իմացել են արեւադարձային տարուայ, լուսնային ամսուայ տեւողութիւնները: Շատ աւելի հաւանական է, որ այդ ութօրեայ տարբերութիւնը լինի հետեւանք ոչ թէ ոեւէ սխալի, այլ բոլորովին տարբեր իրողութեան:

Յիշենք, որ հնուց եկող աւանդոյթի համաձայն, մեր օրերում եւս գլխաւոր (քրիստոնէական) տօներին նախորդում են դրանց շաբաթապահքերը, որ տեւում են եօթն օր եւ սկսւում են տուեալ տօնի (պահքի) **Բարեկենդանով:** Զատիկին էլ նախորդում է Մեծ Պահքը, որ տեւում է եօթ շաբաթ եւ սկսւում է Հուն Բարեկենդանով: Այսինքն, ունենք տօնից 7 (կամ 7×7) օր առաջ տօնին նախապատրաստուելու, տօնը, փաստօրէն, եօթն օր առաջ սկսելու երեւոյթը: Սրան աւելացնենք եւ այն, որ շատ վաղ ժամանակներից աւանդուած է բացառիկ վերաբերմունք եօթ թուի նկատմամբ: Այդ է վկայում նաեւ այն, որ «7» նշանակող բառը (Sep[h]t[h]m) մայր հնդեւրոպական լեզուն փոխ է առել սեմական լեզուից[3]: Եւ այս թուի նկատմամբ այդ բացառիկ վերաբերմունքն էլ կարելի է բացատրել (ամենայն հաւանականութեամբ) միայն հաւատի, աշխարհայեացքի հետ կապուած նկատառումներով:

Արդ, նկատի առնելով սա, կարելի է աստ առկայ 8-օրեայ տարբերութիւնը համարել ոչ թէ 8, այլ 7-օրեայ, ընդունելով, որ կատարուել է միայն մէկ օրուայ սխալ: Այսինքն կարելի է համարել, որ Նաւասարդի տօնի օրուայ համար մեր ստացած ամսաթիւը ամառային արեւադարձից առաջ է եղել հէնց **7 օրով:** Իսկ մէկօրեայ սխալը, յատկապէս արեւադարձի օրը որոշելու հարցում, աւելի քան հաւանական է, նկատի առնելով քննարկուող ժամանակները: Այնպէս որ, սա բացառիկ լաւ համընկում է (միայն մէկ օրուայ սխալով, որ լիովին անտեսելի է, նկատի առնելով դարաշրջանը), եւ **այս տեսակ զուգադիպումը պատահական համարել չենք կարող:** Ուրեմն,

---

[2] Ginzel F. Handbuch der matematischen und technischen Chronologie, bd. 1—3, Leipzig 1906—1914 (նմանատիպ աշխատութիւնը՝ **Leipzig, 1958**), հ. 1, էջ 101:

[3] Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и Индоевропейцы, Тбилиси, 1984, ст. 875.

առանց սխալուելու վախի, կարող ենք մեր առացած ամսաթուից եզրակացնել, որ Հայոց Նաւասարդի տօնը եղել է ամառային արեւադարձին, եւ տօնակատարութիւնն էլ սկսուել է արեւադարձից 7 օր առաջ, Հայկի աստղի արեգակնային ամբարձման հետ (արդի օրացոյցով՝ յունիսի 14-ին):

Նաւասարդի տօնը ամառային արեւադարձին

Աստղագիտական եւ տոմարական եղանակներով առացուած ամսաթիւը յուշում է, որ Նաւասարդի տօնը իր բովանդակութեամբ եւ խորհուրդներով եւս պիտի կապուած լինի ամառնամուտին, եւ որոշ իմաստով լինի հէնց ամառնամուտի տօն: Նայենք, թէ ինչ այլ տուեալներ կարելի է գտնել ի հաստատումն այս եզրակացութեան:

Նախ նկատենք, որ պատմագրութեան՝ մեզ ընձեռած տուեալները հնարաւորութիւն չեն տալիս անմիջականօրէն աստղագ որոշելու, թէ հնում երբ է նշուել Հայոց Նաւասարդի տօնը (որպէս անշարժ տօն): Չկայ ուղղակի վկայութիւն այն մասին, թէ տարուայ որ օրերին էին տօնում Նաւասարդը: Եթէ Նաւասարդի տօնը համարենք կապուած Նաւասարդ ամսի մէկին, որ շրջիկ է, եւ առկայ պատմական վկայութիւնները քննենք ա՛յդ տեսանկիւնից, ապա բոլոր դէպքերում էլ կը ստանանք տաք ժամանակ, որ լիովին ընդունելի է Հայաստանի պայմաններում համաժողովրդական մեծահանդէս տօն կատարելու համար: Այդպէս է եւ Գրիգոր Լուսաւորչի ձեռքով Հայոց արքունիքի, զօրքի եւ ժողովրդի մկրտութեան պարագայում, որ ըստ Ագաթանգեղոսի, եղել է Նաւասարդի տօնի ժամանակ (Ագաթանգեղոս, ՃԺԸ): Ըստ ընդունուած ժամանակագրութեան, Հայոց դարձը եղել է 301 թուականին, երբ Նաւասարդի ամսի մէկը համընկել է Յուլեան սեպտեմբերի 12-ին, որ ամառ է:

Նոյնն է եւ Գնելի սպանութեան մասին Փաւստոս Բիւզանդի պատմածի պարագայում: Այս դեպքում էլ, ըստ Փաւստոսի, Գնելի սպանութիւնը եղել է Նաւասարդի տօնին, երբ արքունիքն ու զօրքը մեծ հանդիսութեամբ տօնում էին ազգային տօնը: Գնելի սպանութեան ժամանակ (~350 թ.) Նաւասարդի ամսի մէկը համընկել է Յուլեան օգոստոսի 30-ին:

Նաւասարդի տօնի մասին մի այլ (անուղղակի) վկայութիւն էլ պահպանուել է Գրիգոր Մագիստրոսի մի նամակում մէջբերուած՝ Արտաշիսեան վէպի կարճ հատուածում. «Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի...»: Կասկածից վեր է, որ այս հատուածում խօսքը Նաւասարդեան տօնի եւ դրա ծէսերի մասին է:[4]: Այստեղ էլ վէպը կապում է Հայոց Արտաշէս Պարթեւ արքայի հետ: Դժուար է հիմա միանշանակ պնդել, թէ որ Արտաշէս արքան է դա: Ըստ այսօրուայ պաշտօնական մօտեցման, խօսքը վերաբերում է նախկինում Անտիոքոս Գ-ի ստրատեգ Արտաշէսին (Զարեհի որդուն), որ Ն. Ք. 189-ին Հայաստանի մեծ մասում հնքնիշխան թագաւորութիւն հաստատեց եւ մահացել է Ն. Ք. 160-ին: Իսկ ըստ Մ. Խորենացու (եւ այլ աղբիւրների) ուշադիր քննութեան Լ. Շահինեանի կազմած ժամանակագրութեան, սա պէտք է լինի Արտաշէս Ա Տիեզերակալը, որ Հայոց

---

[4] Այդ մասին մանրամասն տե՛ս Գրիգոր Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Գրիգոր Մագիստրոսի տոմարական հաւելուկն ու Արտաշիսեան վէպի հատուածը, «Էջմիածին» 1992 թ., թ. Դ—Ե, էջ 95—118;

գաւին եղել է Ն. Ք. 99—74 թթ.[5]: Եթէ առաջնորդութեան տարբերակով ,ապա վիպական հաւատքը, որով եւ Նաւասարդի տօնի մասին այն վկայութիւնը պիտի վերաբերի Ն. Ք. 160 թուին (ըստ Գր. Մագիստրոսի, այն հաւատքն էր Արտաշէս արքայի մահուան ժամանակի մասին է.): Ն. Ք. 160 թուականի Նաւասարդ ամսի 1-ը համապատասխանել է Յուլեան յուլիսի 5-ին, որ խոր ձմեռ է: Իսկ ըստ Մ. Խորենացւոյ կազմուած ժամանակագրութիւնն ընդունելու դէպքում, Արտաշէս Ա-ի մահը Ն. Ք. 74-ին է, եւ այդ ժամանակ էլ Նաւասարդի մէկը հաւասար է դեկտեմբերի 15-ին, որ ընդամենը 9 օր է առաջ ձմեռնամուտից (որ այդ ժամանակ եղել է դեկտեմբերի 24-ին): Երկու դէպքում էլ ժամանակը խիստ անընդունելի է համաժողովրդական տօնախմբութեան համար, իսկ զանգուածային ջրախաղերի համար՝ նոյնիսկ բացառելի: Այսինքն, եթէ ընդունենք, որ այն վիպական հաւատքը վերաբերում է Արտաշէս արքայի ժամանակ տօնուած Նաւասարդի տօնին, ապա պիտի եզրակացնենք, որ **այդ ժամանակ Նաւասարդի տօնը Նաւասարդ ամսի հետ կապուած չի եղել:** Ուրեմն, ունեցել է տարուայ մէջ իր կայուն տեղը: Իսկ, թէ երբ, տարուայ որ մասում է եղել այդ կայուն տեղը, այս մասին մատենագիր սկզբնաղբիւրները **ուղղակի** տեղեկութիւն չեն յայտնում: Միակ եզրակացութիւնը, որ կարելի է անել այդ տուեալների հիման վրայ, այն է, որ Նաւասարդի տօնը պիտի եղած լինի տարուայ տաք եղանակին:

Արդ նայենք, թէ ինչ կողմնակի, անուղղակի տուեալներ ունենք այս տօնի դիրքը որոշելու համար:

Սկսենք ամենահին վկայութիւնից, որ Ագաթանգեղոսինն է: Նա այս տօնի մասին գրում է. «եւ զյիշատակս վկայից բերելոց ժամադրեաց ի տօն մեծ հոչակել անուանեացն պաշտամանն ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին, հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին յուրախութեան նաւասարդ աւուր» (Ագաթանգեղոս 836): Ուրեմն, Նաւասարդի օրը (կամ օրերին) տօնուել է ամենաբեր նոր պտղաց դիցն տօնը: Իսկ նոր պտղոց դիցն տօնը, բնականաբար, պիտի տօնուէր հէնց այդ նոր պտղոց ի յայտ գալու ժամանակ: Այսինքն, Նաւասարդի տօնի ժամանակը պիտի կապուած լինի նոր պտղոց **բերքահաւաքի ժամանակի** հետ: Արդ, ե՞րբ է Հայաստանում լինում այդ բերքահաւաքը:

Ներկայումս շատ տարածուած մօտեցում է բերքահաւաքի ժամանակ սեպել աշունը, աշնանային գիշերահաւասարի շրջանը: Այս մօտեցումը քարոզում է հանրամատչելի տարաբնոյթ գրականութեան մէջ եւ նոյնիսկ՝ դրպրոցական դասագրքերում: Նկատենք սակայն, որ **դա չի համապատասխանում իրականութեանը:** Ամեն դէպքում, Հայաստանի պայմանների համար **աշունը բերքահաւաքի ժամանակ չէ,** այլ ընդամենը տարեկան **բերքահաւաքի աւարտն է, ամփոփումը:** Աշնանը վերջանում է ամեն տեսակ բերքը, եւ, բնականաբար, աւարտւում է բերքահաւաքը: Եւ աշնանային բերքահաւաքն էլ վերաբերում է հիմնականում բանջարեղէնին եւ որոշ մրգերին (խնձոր, տանձ, խաղող եւն): Ի դէպ, խաղողի բերքահաւաքն էլ առանձին անունով կոչուել է այգեկութ, որով եւ զատուել է միւս մշակաբոյսերի բերքահաւաքից: Միեւնոյն ժամանակ նկատի առնենք, որ երկրագործի բարե-

---

[5] Լեւոն Շանթեան, Հայաստանը եւ Առաջին Արշակունիները, «Լոյս», Երեւան, 1993, էջ 406, եւն:

կեցութեան հիմքը ևախ եւ առաջ **հացն է** եւ ոչ այլ բան: Այսինքն, բերքի տօնը պիտի նշանակի ևախ եւ առաջ **հացի բերքի տօն, որեմն՝ ցորենի եւ գարու:**

Ընդհանրապէս հացաբոյսի (ցորենի եւ գարու) մշակութիւնը բացառիկ մեծ նշանակութիւն է ունեցել: Յապացոյց դրան մեզ են հասել հացի արարման տարբեր փուլերին վերաբերող աշխատանքային բազմաթիւ երգեր. վարի (գութանի) երգեր, ցանքսի, ցանքսը վատ եղանակից պաշտպանելու, քաղհանի, հնձի, հունձքը կրելու (սայլի երգ), կալի, աղացի եւ հացթխման երգեր: Եւ չմոռանանք, որ հացի արարման ծէսն էլ, ինքն ամբողջովին արբագործուած է. սկիզբը՝ վարը սկսում է «Օրհնեալ է Աստուած...» խօսքերով: Վարը, որպէս զուտ արական զբաղում, երկրի բեղմնաւորման խորհուրդն ունի, իսկ աւարտն էլ՝ հացաթխումը թոնիրի մէջ դարձեալ արբագործուած (զուտ իգական) զբաղում է: Թոնիրն ինքը արբութիւն է եւ կրում է երկրի որովայնի-արգանդի խորհուրդ[6]: Այսինքն, հացի արարումը իր բոլոր փուլերով սկզբից մինչեւ վերջ կանոնականացուած-արբագործուած է եղել եւ դիտուել է մարդու աշխարհ գալուն զուգահեռ:

Հայաստանում աւանդաբար կիրառուել (եւ կիրառւում) է հացաբոյսերի մշակութեան երկու տարբերակ. աշնանացան եւ գարնանացան: Գարնանացան ցորենի հասունացումը տեւում է ~115 օր, եւ բերքը հասունանում է ամառուայ կէսերին, իսկ աշնանացանը հասունանում է հէնց ամառային արեւադարձի շրջանում (կան տարբերութիւններ, կախուած ցանքսի վայրի բարձրութիւնից)[7]: Ուշագրաւ է, որ աշնանացան ցորենի հասունացումը տեւում է 270 օր, որ մօտ հնձ ամիս է, եւ շատ մօտ է մարդու սաղմի զարգացման տեւողութեանը (շուրջ 280 օր): Այսինքն, այս առումով եւս հացի արարումը զուգահեռ է մարդու աշխարհ գալուն եւ ըստ այդմ, պէտք է նկատի ունենալ հէնց աշնանացան ցորենը:

Արդ, տեսնում ենք, որ հացաբոյսի (ցորենի) հասունացումը, բերքահաւաքը խորհրդանշել է մարդու արարումը-ծնունդը (գուցէ եւ ընդհանրապէս Աշխարհի արարումը), որով եւ դրա աւարտը, կատարումը պիտի լինէր գլխաւոր տօն՝ տօն արարչագործութեան, ուստիեւ՝ գլխաւոր աստծու-Արարչի տօն: Որեմն, գլխաւոր տօնի ժամանակը պիտի համընկնի հացի բերքահաւաքին:

Ցորենի մշակութեան ունեցած բացառիկ կարեւորութիւնը հնագոյն ժամանակներից «վկայուած» է նաեւ երկնքում: Ի թիւս այլ համաստեղութիւնների, ունենք մի շարք պայծառ համաստեղութիւններ, որոնք սերտօրէն կապուած են հացի մշակութեան հետ: Երկնքի հիւսիսային կիսագնդում իրար մօտ դասաւորուած են **Սայլ** (Մեծ Արջ), **Միւս Սայլ** (Փոքր Արջ), **Եզող** (Եզնարած, Սայլապան) համաստեղութիւնները: Եզողի տակ, կենդանաշրջանի վրայ **Կոյս** կենդանակերպն է, որ աւանդաբար պատկերւում է ցորենի հասկը ձեռքին: Սայլը հացի արարման կարեւոր փուլերից մէկի (խըր-

---

[6] Թոնիրն իր խորհուրդով զուգահեռ է մկրտութեան աւազանին: Հայաստանում դեռ մեր դարի սկզբներում էլ թոնրի վրայ մկրտութեան ծէս էր արւում (նաեւ երդման), իսկ աւազանը, որ եկեղեցու հիւսիսային կողմում է, խորհրդանշում է եկեղեցու արգանդը, որից ծնւում է քրիստոնէան:

[7] Մինչեւ հիմա էլ Հայաստանի շատ վայրերում մարդիկ յիշում են, որ 1941-ին, երբ պատերազմը սկսուեց յունիսի 22-ին (արեւադարձի օրը), շատ շրջաններում գիւղերի տղամարդիկ դաշտերում էին՝ ցորենի բերքահաւաքի:

ձերը կրելու) նշանակն է (յիշենք սայլի երգերը), իսկ Եզոդն էլ, փաստորեն, Սայլի եզները վարողն է: Կոյս կենդանակերպի գլխաւոր աստղն էլ կոչւում է Spica, որ նշանակում է «հացաբոյսի հասկ»[8]: Սրանից առնչութեան միջնադարից մեզ հասած **Յորենքաղ Մշակն** աստեղատան անունը[9], եւ այն որ, Միհթար Սեբաստացու կազմած աստղային քարտէզի վրայ Եզոդը (Արջապահ) պատկերուած է մանգաղը ձեռքին (այսինքն, հեղինակը Յորենքաղ Մշակը նոյնացրել է Եզոդի հետ): Ունենք նաեւ «Գութանի աստղ» անուանումը (որի նոյնացումը այնքան էլ ստոյգ չէ)[10]: Այս ամենի հետ միասին յիշենք, որ Հայկական լեռնաշխարհը համարւում է այն վայրը, որ կատարուել է երկնքի բաժանումը համաստեղութիւնների[11]: Աւելորդ չէ աւելացնել նաեւ, որ Հայաստանը համարւում է ցորենի մշակութեան ամենահին կենտրոններից մեկը: Այսպիսով տեսնում ենք, որ լուրջ հիմքեր կան ըստ Ագաթանգեղոսի յայտնածի, **Նաւասարդը, որպէս նոր պտղոց տօն,** աշնանացան **ցորենի բերքահաւաքի,** որով եւ՝ **ամառային արեւադարձի շրջանի** հետ կապելու համար[12]

Ամառնամուտի շրջանը բերքահաւաքի շրջան է ոչ միայն հացաբոյսերի, այլ նաեւ մի շարք պտուղների եւ բանջարեղէնի համար: Այս ժամանակներում են հասունանում բազմաթիւ հատապտուղներ (ելակ, մոռ, եւն) ու նաեւ բալը, կեռասը, թութը վաղահաս խնձորները եւ վերջապէս ամենահայկական պտուղը՝ **ծիրանը,** որի հայրենիքը հէնց Հայաստանն էլ համարւում է[13]: Նկատենք, որ ծիրանը հնուց եղել է Հայերի կեանքում կարեւոր դեր ունեցող պտուղ եւ հարեւան շատ ազգեր ծիրանը կոչել են Հայերի կամ Հայաստանի անունով:

Ստացւում է, որ ամառնամուտը շատ կարեւոր բերքահաւաքի շրջան է եւ հէնց սկիզբն է տարեկան բերքահաւաքի, երբ հասունանում են Հայաստանում աճող-մշակուող **համարեա բոլոր կարեւոր** մշակաբոյսերը. ցորեն, գարի, ծիրան, թութ, բալ կեռաս, վաղահաս խնձոր եւ բազում հատապտուղներ ու բանջարեղէն: Այս շարքում բացակայում է թերեւս Հայաստանի երկրագործական կարեւորագոյն մթերքներից միայն խաղողը, որի հիմնական բերքահաւաքը ամառուայ կէսերից մինչեւ աշնան սկիզբներն է[14]: Սակայն

[8] Kunitzsch Paul, Smart Tim, Short Guide to Modern Star Names and Their Derivations, Otto Harrassowitz Weisbaden, 1986, p. 59.

[9] Հ. Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 130:

[10] Տե՛ս Ալիշան, նշվ. աշխ., էջ 115, 126:

[11] Տե՛ս Олькотт Уильям Тейлер, Легенды звездного мира, изд. «Вестник Знания», С. Петербург, 1914, ст. 8—9.

[12] Նոյնը վերաբերում է նաեւ գարուն: Գարին ընդհանրապէս հասունանում է ցորենից մօտ մի շաբաթ առաջ: Բացի այդ, յայտնի է, որ հնում եւ՛ Հայաստանում, եւ՛ շրջակայ որոշ երկրներում յաճախ կիրառուել է ցորենի եւ գարու խառը ցանքի եղանակը, որով դրանց բերքահաւաքն էլ միաժամանակ պիտի լինէր:

[13] Է. Ս. Մօրիկեան, Հայաստանի ծիրանները, «Հայաստան», Երեւան, 1988. էջ 10—11:

[14] Բիւրական գիւղի բնակիչ Սարգիս Սարգսեանն ինձ պատմեց, որ ըստ իր հօր՝ Բագրատ Դալոյ պատմածի, գիւղի այգիներում ժամանակին եղել է վաղահաս խաղողի այնպիսի տեսակ, որ հասունացել է հէնց աշնանացան ցորենի բերքահաւաքի (ամառնամուտի) օրերին, եւ հնձւորներն էլ հնձի ժամանակ ճաշակել են այդ խաղողից: Եթէ ընդունենք, որ հնում էլ այս (կամ նման) տեսակի խաղող կարող էր եղած լինել, ապա կարող ենք այս յոյժ վաղահաս խաղողն էլ դասել Ամանորի նոր պտուղների շարքը, որով համարեա կ'ամբողջանայ ամառնամուտին հասունացող կարեւորագոյն պտուղների շարքը: Սրան համապատասխանում է եւ Խաղողօրհնէքը տեղ-տեղ վարդավառին անելը, յիշելով, որ վարդավառն էլ երբեմնի կապուած էր Նաւասարդին:

այս միակ բացառութիւնը չի կարող ազդել ընդհանուր պատկերի վրայ, առաւել եւս, որ չի բացառւում խաղողի վաղահաս տեսակների գոյութիւնը խոր անցեալում (տե՛ս ծանօթ. 14):

Ի մի բերելով ասուածը, գալիս ենք նրան, որ Նաւասարդի տօնը նոր **պտղոց տօն** լինելու համար հարկ է, որ լինէր տարեկան բերքահաւաքի սկզբում, եւ դրա համար էլ յարմարագոյն շրջանը Հայաստանում ամառնամուտին յարող շրջանն է (գարնան վերջ-ամռան սկիզբ): Ըստ այդմ, Ագաթանգեղոսի վերոբերեալ վկայութիւնը լիովին համաձայն է Նաւասարդի տօնի ժամանակի համար մեր առաջած արդիւնքին: Ի դէպ, նոյնն է եւ ն. Ակինեանի կարծիքը[15]:

Տեսնենք արդեօք հնչ փաստեր ունենք Նաւասարդի տօնի այսպիսի դիրքի օգտին: Շատ բան է պահպանուել Հայ ազգագրութեան մէջ: Այսպէս, տարբեր շրջաններում սովորութիւն է եղել Նոր Տարում կէսգիշերին, կամ առաւօտ կանուխ գնալ աղբիւրը կամ գետը եւ **ջրին ընծայել ցորեն ու գարի** (կամ դրանցից շինուած բլիթ): Եղել են նոյնիսկ կանոնակարգուած խօսքեր (երգեր) յատուկ այդ ծէսի համար.

«Քեզի կու տամ ցորեն, գարի
Դուն ես ինձի տու բարի
Շնորհաւոր Նոր Տարի»[16]:

Ջրերին ցորեն ու գարի ընծայելը անշուշտ պիտի նախապէս կապուած լինէր այդ հացաբոյսերի **բերքահաւաքի** եւ դրանց **օրհնութեան** հետ: Ընդհանրապէս ջուրը (Ջուր տարերքը) խորհրդանիշն է, տեղն է Հայր Աստուծոյ, Արարչի[17]: Եւ ըստ այդմ, ջրերին ցորեն, գարի ընծայելը կը նշանակի գերագոյն Աստծուն՝ Արարչին ընծայ տալ (բնականաբար, Նրա օրհնութիւնը ստանալու համար): Սրան լրիւ ներդաշնակ է Ա. Մատիկեանի այն պնդումը, թէ «Հնդեւրոպական ազգերու քով առ հասարակ գերագոյն էակն էր պտուղներն ու հունձքն օրհնողը, ինչպէս նաեւ պանդուխտներու կամ օտարներու պաշտպանը»[18]: Անշուշտ, սա վերաբերում է նաեւ Հայերին եւ հարկ է Նոր Տարում ջրերին ընծայուող հացն ու հացահատիկը դիտել իբրեւ վերապրուկ այն նախնական կարգի, ըստ որի Նոր Տարին պիտի եղած լինի գլխաւոր աստծու կողմից առաջին բերքն ու բարիքն օրհնելու տօն:

Նաեւ բնական է, որ Նաւասարդի տօնը, որպէս գլխաւորն ու մեծագոյնը տարուայ բոլոր տօներից, ձօնուած լինէր հէնց գլխաւոր պաշտուող էակին՝ Հայր Աստծուն, Արարչին, որի կարեւոր դերերից մէկն է եղել պտուղը ու հունձքը օրհնելը: Աստ յիշենք, որ Նաւասարդի տօնը կապուած է եղել Հայկն աստղատան առաջնորդ աստղի ծագման հետ (այդ աստղի ծագումով է որոշուել տօնի օրը), իսկ Հայկն էլ երկնային պատկերն է եղել

---

[15] Հ. Ն. Ակինեան, Հայոց եկեղեցական տարին եօթներորդ դարու սկիզբը, «Հանդէս Ամսօրեայ», 1947, սիւն 171—179, սիւն 173:

[16] Եփր. վ. Պօղոսեան, Նոր Տարուայ Տօնը Հին եւ Նոր Հայոց քով, Վիեննա, 1952, էջ 39:

[17] Նկատի են առնւում բնութեան չորս տարերքները՝ Հող, Ջուր, Օդ, Հուր: Այս մասին տե՛ս աւելի մանրամասն՝ Գրիգոր Բրուտեան, Հայոց Տոմարի որոշ հարցերի մասին, Հայոց օրացոյցն ու երկնային լուսատուները, «Էջմիածին», 1995 թ., թիւ Ա, էջ 47—60 (56):

[18] Հ. Ա. Մատիկեան, Կրօնի ծագումը եւ դիցաբանութիւն ըստ համեմատական կրօնագիտութեան, Վիեննա, 1920, էջ 163:

ինչց Հայր Աստուծոյ, Արարչի: Սա լաւ ներդաշնակում է տօնի ժամանակի եւ Հայկի աստղով այն որոշելու մասին մեր ստացած պատկերին:

Նաւասարդը ցորենի (գարու) հետ կապուած լինելու վկայութիւն է նաեւ Նաւասարդին յատուկ կերակուրը՝ **Հարիսան:** Այս պատուական կերակուրի պարտադիր բաղադրիչներն են **ցորենը եւ միսը:** Այս կերակուրն այնքան սերտ է կապուած Նաւասարդին, որ այն տեղերում, ուր Նաւասարդը կապուած է եղել եւրոպական տարեմտին՝ յունուարի մէկին, այդ օրը Հայոց համար պահք լինելով, հարիսան էլ ձեւափոխուել է, դարձել **Կաղանդի կոլիւտ** (Սեբաստիայում), **Պահոց բէշկէկ** (Բալուում)[19], եւ կամ՝ **Անուշապուր** (Պօլիս, Բիւթանիա), միշտ պահպանելով իր կարեւորագոյն բաղադրիչը՝ ցորենը:

Համաւորի ծիսական կարեւոր կերակուր է եւ յատուկ պատրաստուած կորակ հացը (կամ բաղարջը), որ մեծ մասամբ կոչուել է **Տարի,** եւ որի մէջ դրուած նշանով (մանր դրամ) որոշուել է Նոր Տարուայ բախտաւորը: Այստեղ էլ փաստօրէն գալիք տարուայ բախտը գուշակում է հացի միջոցով, որով դարձեալ հացը (ցորենը) այս տօնի ծէսերում ստանում է առաջնային կարեւորութիւն:

Ուշագրաւ մի սովորութիւն էլ սա է, որ շատ տեղեր (Խարբերդ, Երզնկա, Բալու, եւն) տեւական ջերմ ունեցող հիւանդներին Ամանորի նախորդ գիշերը (կամ օրը) աղբիւրի մէջ լողացրել են եւ ապա հիւանդը եղել է մօտակայ մի թթի ծառ եւ թութ թափ տալ ձեւացրել: Ծառի տակից մի ուրիշը հարցրել է՝ ին՞չ ես անում: Հիւանդը ,թէ՝ թութ եմ թափ տալիս: Ներքեւինը, թէ՝ բա այս ժամանակ թութ կը լինի՞: Վերինը, թէ՝ իսկ այս ժամանակ ջերմ կը լինի՞: Սրանից յետոյ ջերմը ամաչում, թողնում-գնում էր[20]: Այստեղ կարեւոր է հէնց **թթի** ծառը ելնելը եւ **թութ թափ տալը:** Աստ չքննելով թէ ինչ խորհուրդ ունի թթենին եւ թութ թափ տալը, նկատենք, որ յունուարի մէկին կատարուող այս հին ծէսը էլի վկայում է, որ Ամանորը պիտի նախապէս ամառնամուտին եղած լինի, զի Հայաստանում (Արարատեան դաշտում) թութը հասունանում է հէնց ամառնամուտի շրջանում:

Այն, որ ձմեռուայ ցրտին կատարուող Ամանորի այս եւ այլ ծէսեր նախապէս ոեւէ աղերս չեն ունեցել ձմեռուայ հետ, այլ եղել են ամառուայինն, վկայում է Համշէնում պահպանուած սովորոյթը, որով Նոր Տարուայ նախորդ օրը՝ դեկտեմբերի 31-ը կոչել են **Ծաղկամուտ**[21]: Նոյնի մասին վկայում է եւ ն. Ալիշանը[22]: Բնական է, որ դեկտեմբերի 31-ը բնաւ յարմար չէ Ծաղկամուտ կոչուելու համար, երբ Հայաստանի բնութեան մէջ նմուշի համար իսկ ծաղիկ չկայ, իսկ ամառնամուտին նախորդող մէկ-երկու շաբաթները (այժմ՝ յունիսի 8—22) Հայկական լեռնաշխարհում իրօք ծաղկառատ շրջան է, երբ մայիսի անձրեւներից յետոյ բնութիւնը ամենուր ճոխացած է տեսակ-տեսակ ծաղիկներով: Հէնց այս ժամանակ էլ ծաղկում են վարդերի տարբեր տեսակները. վայրի վարդը՝ մասուրը, եփելու վարդը, եւն: Աւելացնենք նաեւ, որ վարդ եւ ծաղիկ իմաստները նոյն բառով են արտայայտ-

---

[19] Գ. Ա. Գրիգորեան, Ազգագրագէտ Սարգիս Քամալեան, «Պատմա-բանասիրական հանդէս», թիւ 117, 1987, թ 2, էջ 86—95, էջ 94:

[20] Եփր. վ. Պօղոսեան, նշ. աշխ., էջ 66, 69, 75, 78:

[21] Անդ, էջ 125:

[22] Ղ. Ալիշան, նշ. աշխ., էջ 305:

վում պարակերէնում, արաբերէնում[23], եւ հայերէնում էլ յաճախ այս բառերը կոխարինում են իրար (ինչպէս՝ վիճակի երգերում. ջան գեուլում, ջան ծաղիկ): Այնպէս որ **Ծաղկամուտ** նշանակում է նաեւ **Վարդամուտ:**

Նաւասարդի տօնի կապը ցորենի հասունացման ժամանակի հետ սակայ է եւ հետեւեալ սովորութիւնում, որ երկար տարիներ եղել է մեր տանը: Մայրս (բնիկ կիլիկեցի) դեկտեմբերի վերջերին ամանի մէջ թաց բամբակի վրայ ցորեն էր ցանում (շատ խիտ), որը ծլում-կանաչում էր միեչեւ տարեվերջ: Եւ Ամանորի սեղանի կարեւոր զարդն էր լինում այդ ամանը՝ ցորենի կանաչ-թաւիշ բոյսերով:

Նաւասարդի տօնի ժամանակը ցուցանող ժողովրդական աւանդոյթներից յիշելի է եւ այն, որ Խաչենում ընդունուած է եղել, որ միեչեւ Նաւասարդ չի կարելի պսակ անել: Խաչենցիների կարծիքով Սուրբ Սարգիսից միեչեւ Նաւասարդ ժամանակամիջոցը «անիծուած» է համարուել հարսանիքի համար[24]: Սրան զուգահեռ յիշենք, որ մեր օրերում էլ տակաւին կենդանի է (Երեւանում եւ շրջակայքում) մի սովորոյթ, ըստ որի չի կարելի պսակ անել մայիս ամսին, այսինքն, միեչեւ յունիս: Իրար զուգադրելով այս երկու նման աւանդոյթները, կը տեսնենք, որ Նաւասարդի տօնը պէտք է եղած լինի **յունիս ամսին:** Սա եւս լաւ համընկնում է մեր ստացած արդիւնքին:

Վերը շարադրեալ (ու նաեւ շատ այլ) տուեալների քննութիւնը մեզ թեյում է հետեւեալ համոզմանը, որ Նաւասարդի տօնի (Ամանորի, Կաղանդի) ծէսերի, աւանդոյթների բազմաթիւ վերապրուկներ վկայում են, որ Նաւասարդի տօնը նախնաբար եղել է ամառային տօն, տօնուել է ամառային արեւադարձի շրջանում, դրանից մէկ-երկու շաբաթ առաջ: Եւ այս արդիւնքը լրիւ ներդաշնակ է տոմարական-աստղագիտական եղանակով ստացուած արդիւնքին:

Այդուհանդերձ, կարող են լինել առարկութիւններ, ընդդէմ այս եզրակացութեան՝ հիմնուած այն բանի վրայ, որ կան ազգագրական եւ մատենագրական վկայութիւններ այն մասին, թէ Հայերը Նաւասարդը տօնել են ոչ թէ ամառնամուտին, այլ աշնանը, ձմռանը կամ գարնանը, եւն: Իրօք, Հայաստանի տարբեր վայրերում սովորութիւն է եղել Նաւասարդը տօնել աշնանը[25]: Աւելի տարածուած է եղել ձմռանը, յունուարի մէկին տօնելը: Կան եւ վկայութիւններ գարնանամուտը տարեմուտ սեպելու մասին[26]: Առանց մանրամասն քննութեան (տեղի սղութեան պատճառով) փորձենք կարճ պատասխանել այն հարցին, թէ ի՞նչ կերպ կարող էին յառաջանալ այս մօտեցումները, որո՞նք են սրանց ակունքները: Պարզ է, որ այս տարբեր մօտեցումները պիտի տարբեր էլ աղբիւրներ ունենան: Անկասկած է, որ Հայերը հնում չէին կարող միաժամանակ այդքան տարբեր տարեմուտներ ունենալ: Ուրեմն, դրանց ակունքները պիտի փնտռել Հայաստանից դուրս:

Յունուարի 1-ին տարեմուտ դնելը: Ամանորի այս դիրքը, որ կիրառւում է նաեւ մեր օրերում, հայ իրականութեան մէջ է մտել արեւմուտքից, Հռոմէական օրացոյցի ազդեցութեամբ ԺԷ դարից ոչ շուտ: Սրա հետ է Հա-

---

[23] Հր. Աճառեան, Հայերէն Արմատական բառարան, հ. Դ, Երեւանի Համալսարանի հրատարակչութիւն, Երեւան, 1979, էջ 317:

[24] Եփր. Պօղոսեան, նշ. աշխ., էջ 47:

[25] Անդ, էջ 47—49, եւն:

[26] Տե՛ս օր Ա. Օդաբաշեան, Ամանորը Հայ Ժողովրդական Տօնացոյցում, Հայ Ազգագր. եւ բանահիւսութիւն, հ. 9, էջ 5—72, ՀՍՍՀ ԳԱ Հրատ. Երեւան, 1978, էջ 12—15:

յատուկ մտել եւ **Կաղանդ** անունը (իբր Ամանոր), որ գալիս է հռոմէական Kalendae-ից (այդպէս է կոչուել ամեն ամսի սկիզբը՝ մէկը):

Աշնանը Նոր Տարի՝ Նաւասարդ տօնելն էլ գալիս է Հայերի միւս հնդեւրոպական ժողովուրդներից: Բիւզանդացիները սեպտեմբերի մէկին նշել են իրենց քաղաքական եւ եկեղեցական տարուայ սկիզբը: Նոյն կերպ եւ մ. թ. 1493-ից մինչ 1700 թթ. ընթացքում Ռուսները իրենց Նոր Տարին սկսել են սեպտեմբերի 1-ից[27]: Սեպտեմբերին է նաեւ Հրէից Նոր Տարին, որ սակայն կայուն տեղ չունի եւ փոփոխում է սեպտեմբերի 5-ից հոկտեմբերի 5-ի միջակայքում[28]:

Այս դէպքում, եթէ Հրէական օրացոյցից փոխառութիւնը այնքան էլ հաւանական չէ, ապա Բիւզանդական եւ Ռուսական օրացոյցների ազդեցութիւնը շատ հաւանական է, յատկապէս, նկատի առնելով բիւզանդացիների եւ ռուսների տեւական տիրապետութիւնը Հայաստանի արեւմտեան եւ հիւսիսային հատուածներում, որի ընթացքում կարող էր տիրողի օրացուցային աւանդոյթը փոխանցուել Հայերի որոշ հատուածների:

Գալով Նոր Տարին գարնանը (գարնանամուտին) դնելուն, այս մասին շատ է խօսուել հայագիտութեան մէջ: Այսպիսի տարեմուտ ունեցել են նաեւ Ռուսները մինչեւ 1493 թուականը, Պարսիկները Օմար Խայեամից մինչեւ ԺԹ դարը[29] եւ այլն: Սակայն հայագիտութեան մէջ ա՛ս կարգի պրկումների աղբիւրը այլ է: Կարճ նշենք, որ այսպիսի բոլոր վկայութիւնները բխում են միջնադարեան մատենագրական աղբիւրներից եւ ունեն մէկ ընդհանուր սկիզբ, որ է Աստուածաշունչը եւ առաջին դարերի աստուածաշնչեան մեկնութիւնները, որոնք էլ, իրենց հերթին, գալիս են հին-հրէական լուսնա-արեգակնային օրացոյցից: Եւ սա էլ, իր հերթին, փոխառուած է եղել Բաբելականից՝ Ն. Ք. Զ դարում[30]:

Ամանորի մի դիրք էլ, որ վերջերս շատ է հոլովւում, օգոստոսի 11-ն է: Սա էլ գալիս է Յովհ. Սարկաւագի օրացուցային բարեփոխումից. ամբողջովին Սարկաւագ վարդապետի ստեղծածն է եւ ոեւէ այլ (հին, նախնական) հիմք չունի[31]:

Անշուշտ, ամառնամուտը տարեմուտ լինելու համար եւս կարելի է Հայոց հարեւանների մէջ փոխառութեան աղբիւրներ գտնել, ինչպէս հին Եգիպտացիները, հին Յոյները, ըստ Մեթոնի յօրինուած «Պարապեգմայի» եւ այլն: Սակայն խնդիրը միայն փախառու աղբիւր որոնել-գտնելը չէ, այլեւ դա հիմնաւորելը ուրիշ փաստերով: Տեսանք, որ Նաւասարդը ամառնամուտին լինելը հաստատում է բազմաթիւ ազգագրական եւ այլ տուեալներով, ինչը չենք կարող կրկնել աշնանը, ձմռանը կամ գարնանը Նաւասարդ տօնելու մասին: Այնպէս որ աշնանը, ձմռանը եւ գարնանը Նաւասարդ տօնելու մասին եղած սակաւ տուեալները կարող ենք սեպել լիովին բացատրելի՝ օտար փոխառութիւններով եւ դրանց գոյութիւնը բնաւ չի խանգարում մեր եզրակացութեանը, որ **Հայոց Նաւասարդի տօնը եղել է ամառային արեւադարձի շրջանում:**

---

[27] Հ. Ս. Բադալեան, Օրացոյցի Պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1970, էջ 212:

[28] И. А. Климишин, Календарь и хронология, «Наука», Москва, 1985, ст. 177—178.

[29] Հ. Ս. Բադալեան, նշ. աշխ., էջ 212, 147—8:

[30] И. А. Климишин, նշ. աշխ., էջ 169—170:

[31] Տե՛ս մանրամասն Գրիգոր Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, Հայոց Փոքր թուական (Սարկաւագադիր տոմար), «Էջմիածին», 1994, թ Դ—Ե, էջ 100—116;

Հայկի տօն եւ Արեի տօն

Տօնի ժամանակը ստոյգ պարզելուց յետոյ հարկ է որոշել, թէ ինչ տօն է դա եղել, ինչի ձօնուած: Նախ նկատենք, որ տօնի ժամանակն ինքնին յուշում է, որ, լինելով ամառային արեւադարձի շրջանում, այն պիտի աւանդական կապուած լինի Արեի պաշտամունքի հետ: Միւս կողմից էլ յիշենք, որ այս տօնի օրը որոշուել է Հայկն աստեղատան գլխաւոր աստղի արեգակնային ամբարձումով: Փորձենք տեսնել, թէ ինչպէս են իրար ներդաշնակում այս երկու իրողութիւնները՝ ամառային արեւադարձն ու Հայկն աստեղատան ծագումը (Արեի պաշտամունքն ու Հայկի պաշտամունքը):

Թ՛ւ Արեի պաշտամունքը, թ՛ւ էլ Հայկի պաշտամունքը Հայաստանում ունեն շատ հին ու խորն արմատներ, երկուսն էլ վկայուած են սկսած հնագոյն ժայռապատկերներից մինչեւ մեր օրերը: Այս երկու հնագոյն պաշտամունքներն էլ այսօր տակաւին կենդանի են Հայերիս մէջ (արեւապաշտութիւնը՝ հայկական բազմաթիւ աւէնքներում, մաղթանքներում, երդումներում եւն, իսկ Հայկի պաշտամունքը՝ թեկուզ հէնց «Հայ» անուան մէջ): Միեւնոյն ժամանակ, պարզ է, որ Հայկն ու Արեը նոյնը չեն՝ իրարից տարբեր են: Ի՞նչ կերպ են իրար առնչւում այս երկու հնագոյն պատկերացումները:

Յարքիս նախորդ յօդուածում տեսանք, որ ըստ Հայոց աւանդական պատկերացումների, Հայկը կերպաւորել է Հայր Աստծուն, Արարչին, Արքային[32]: Բնական է, որ, որպէս հայր, նա լինի նաեւ հայրը Արեի: Այս նոյն յարաբերութիւնը վկայուած է եւ հայկական բազում հրաշապատում հեքիաթներում: Այստեղ էլ թագաւորի (հօր) փոքր որդին է, որ կարողանում է յաղթահարել բազում դժուարութիւններ եւ բերել իրենց երկրի փրկութեան (կամ հիւանդ հօր բուժման եւն) համար անհրաժեշտ անմահական ջուրը, հազարական հաւքը, խնձորը եւ վերստին կեանքի կոչել քար դարձած մարդկանց, մահամերձ հիւանդ հօրը, ծաղկեցնել չորացած պարտէզը եւն: Մի խօսքով, վերականգնում է խաթարուած նախնական կարգը, պատժում է չարին, դառնում փրկիչ: (Յետոյ էլ հայրը իրեն է յանձնում իշխանութիւնը եւ նա դառնում է թագաւոր): Ապդ, այս կարգի հեքիաթներում թագաւորը նշանակում է Հայր Աստուածը, որ էլի գերագոյն իշխանատուրն է ամեն ինչի: Իսկ թագաւորի կրտսեր որդին զուգահեռը, նշանակն է Արեի: Որ դա այդպէս է, փաստում է բազում զուգահեռներով: Նրա գլուխն ու ճկոյթը (հիմքը մասը) ոսկեգոյն են լինում, նա հրեղէն ձիերով հրաշքներ է գործում, բարձրանում երկինք, իջնում անդունդ (սրանք էլ Արեի հրեղէն ձիերն են): Նա է, որ մտնում է ծովի տակ (մահանում է) կամ անցնում Աւագ ծովը՝ փրկութիւնը բերելու համար (Արեի մայր մտնելն է ծովից այն կողմ եւ ոսկի մակոյկով ծովն անցնելը եւն): Ի վերջո, նա է միայն, որ կարողանում է գտնել-վերականգնել կորսուած արդարութիւնը, որով եւ նոյնանում է արդարութեան Արեգակի հետ: Անշուշտ, զուգահեռներն այսքանով չեն սահմանափակում, բայց այդքանն էլ բաւական է համոզուելու համար, որ Հայկ-Հայր-Արարչի եւ Արեի միջեւ պիտի լինի ճիշդ նոյն կարգի յարաբերութիւն ,ինչ որ կայ հեքիաթի թագաւոր-կրտսեր որդի զոյգի մէջ: Այսինքն, Արեը Հայկի որդին է: Ի դէպ, այս առթիւ կարելի է յիշել, որ ըստ Խորենացու, Հայկի որդիներից մէկը եղել է **Խոռը** (Խորենացի, Ա, ԺԲ): Թէպէտ այս անունը ըստ Աճառեանի անյայտ ծագում ունի[33], սակայն

---

[32] Գր. Բոյսեան, նշ. աշխ.:

սրան շատ մօտ **խորէն** անունը բացատրելիս Աճառեանը յայտնում է, թէ արմատն է պարսկական xor «արեգակ»[34]: Եթէ Հայկի որդի Խոռի անունը ևս կապուի այս նոյն՝ «արեգակ» նշանակող արմատին, դա ևս կը լինի վերոնշեալ մօտեցման մի դրսեւորում, ըստ որի Արեւը (Խոռը) Հայկի որդին է:

Արդ, նայենք, թէ հայկական օրացոյցի պարագայում ինչ կերպ է դրսեւորում այս յարաբերութիւնը: Նաւասարդի սօնը սկսում է Հայկի աստղի արեգակնային ամբարձումով, որ աստղի առաջին առաւօտեան ծագումն է չերեւալու շրջանից յետոյ: Այսինքն, Հայկը չերեւալու շրջանից յետոյ առաջին անգամ երեւում է Արեգակի հետ, արեւածագին, երբ Արեւը երկնքում շարժուելով մօտենում է այդ աստղին: Եւ վերը նկարագրուած հնքիսթային անցքերն էլ ներդաշնակ են այս աստղագիտական անցքերին. աստղի չերեւալու շրջան-աղետ, այգու չորանալ, թագաւորի հիւանդանալ են, Արեւը Հայի աստղին մօտենալ-Արեգի՝ փոքր որդու վերադարձը, որից յետոյ՝ արեգակնային ամբարձումը՝ Հայկի աստղի վերստին երեւալը երկնքում—փրկութիւնը, չարի պարտութիւնը:

Այս առթիւ նկատենք, որ ըստ հաշուարկի, Հայոց օրացոյցի սկզբնատրութեան ժամանակներում Հայաստանի տարածքից Հայկի գլխաւոր աստղի չերեւալու շրջանը տեւել է **70 օր:** Ուշագրաւ է, որ այստեղ ևս ունենք Հայկի կապը 7 թուի հետ (70=7×10), որ առկայ էր նաեւ աստղի ծագման օրուայ եւ արեւադարձի միջեւ (մէկ օրուայ սխալով միայն): Յիշենք նաեւ, որ եօթը Արարչին վերագրուող թիւն է եղել, եւ Հայր Աստծուն տրուած «է» անունն էլ թուական առումով եօթ է նշանակում եւ հայերէն է տառն էլ իր գծապատկերով նոյնանում է (գլխիվայր շրջուած) եօթին:

Տեսնենք, թէ սրան աղերսուող ինչ ունենք հայկական ազգագրութիւնից: Ամենաակնառուն տարբեր տեսակի **արգելքներն** են, որ ըստ իս, անմիջականօրէն աղերսւում են աստղի չերեւալու շրջանին եւ դրա իմաստին: Այսպէս, Խաչենում Սուրբ Սարգսից մինչեւ Նաւասարդ շրջանն անիծուած է համարուել պսակի համար: Սուրբ Սարգսի սօնը շարժական է եւ լինում է յունուարի 17-ից փետրուարի 21 միջակայքում: Եթէ այստեղից հաշուենք մինչեւ Նաւասարդ (ամառնամուտ), կ'ունենանք ողջ գարունը (մի փոքր էլ աւելի): Այսինքն, ունենք պսակի գարնանային արգելք: Այս պարագայում ունենք, որ արգելքը (114 օրից ոչ պակաս) շատ աւելի է, քան աստղի չերեւալու 70 օրը, սակայն դա լիովին բացատրելի է, նկատի առնելով աւանդոյթի այլափոխումները հազարամեակների ընթացքում: Ուշագրաւ մի արգելք էլ վերաբերում է Զատիկ-համբարձում միջոցին (40 օր): Այս շրջանում էլ կանայք երեկոները գործ չեն արել, որպէսզի «հաւկուր» չլինեն[35]: Այս նոյն միջակայքում եղել է նաեւ արգելք ընդհանրապէս կաթնամթերքների օգտագործման վրայ (որպէսզի կովերի կաթը չպակասի): Իսկ Համբարձմանը պարտադիր է եղել կաթով շինուած կաթնապուր կամ աամիր: Ուշագրաւ է, որ այս արգելքներն էլ կապուած են անդրաշխարհի խորհրդանիշների հետ (կով, կաթ, երեկոյ, կին), որ յուշում է դրա կապը Հայկի աստղի չերեւալու շրջանի հետ: Պէտք է մտածել, որ այս շրջանը նախապէս պիտի

---

[33] Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1944, էջ 528:

[34] Անդ, էջ 543:

[35] Ա. Մանուկեան, Հայ Եկեղեցու տօները, Թեհրան, 1994, էջ 159:

ընկալուած լինի իբր Հայկի (գերագոյն աստծու) Սանդարամետ իջնելը, Մութ Աշխարհում լինելը:

Ուրեմն, տեսնում ենք, որ Նաւասարդի տօնը իր խորհուրդներով կապւում է Հայր-Արարչի, Որդի-Արեւի, Սանդարամետից դուրս գալու, փրկութեան գաղափարներին:

Նաւասարդի տօնի բեկորները

Անկասկած է, որ բազմաթիւ դարեր Հայոց գլխաւոր հիմնական տօնը եղած Նաւասարդը չէր կարող անհետ կորչել: Նրա շատ տարրեր պահպանուել, մեզ են հասել իբրեւ ժողովրդական սովորութիւններ, ծէսեր, կապուած տարբեր տօների հետ: Նաւասարդի տօնի հիմնական բեկորները պահպանուել են Համբարձման, Վարդավառի, Խաղողօրհնէքի (նաեւ՝ Ծաղկազարդի) տօների ծէսերում ու սովորութիւններում, որոշ հետազօտողների կարծիքով, այս շարքում են նաեւ Տէրնդէզի հրավառութիւնն ու Բարեկենդանեան խաղերը[36]:

Անկասկած, շատ բան Նաւասարդեան տօնից պահպանուել է հէնց յունուարի 1-ի հետ կապուած հայկական սովորութիւններում: Նշենք մի քանի հիմնականները: Նախորդող օրերին լրիւ մաքրել են տունը, տնից հանել-թափել անպէտք հնոտին: Ամանորի գիշերը, չնայած խիստ ատելամանիքին, շատերը լողացել են աղբիւրների, գետերի ջրերում, հաւատալով այդ ժամերին ջրերի ձեռք բերած հրաշագործ ուժին (դեկտեմբերի 31-ին լողանալու սովորութիւնը—բայց ոչ բացօթեայ—կայ եւ հիմա շատերի մօտ): Վերը նշուեց, այդ գիշեր աղբիւրներին (ջրերին) ցորեն-գարի նուիրաբերելը: Աւելացնենք նաեւ իրար շնորհաւորելը եւ նուէրներ տալը (հիմնականում պտուղներ): Սեղան է դրուել եօթ տեսակ միրգ, եօթ տեսակ կերակուր: Եղել է եւ **Տարի** հացը, որով որոշուել է տարուայ բախտաւորը: Այս սովորութիւնները, որ կապուած են Նոր Տարուայ հետ, կարող ենք դիտել իբր անկասկած Նաւասարդից մնացած վերապրուկներ:

Արդ նայենք այն տօները, որոնք ուղղակիօրէն չեն առնչւում Ամանորին, բայց իրենց ծէսերով, սովորոյթներով ու խորհուրդներով, շատ սերտ աղերսւում են Նաւասարդի հետ:

Առաջինը նայենք **Համբարձման** տօնը: Սա շարժական է եւ լինում է ապրիլ 30—յունիս 3 միջակայքում: Ժողովրդական անուամբ կոչուել է եւ **Վիճակ,** որ ցոյց է տալիս տօնիս ժողովրդական ծէսերի հիմնական բովանդակութիւնը: Այս վիճակախաղը, որ իգական սեռին է վերապահուած, ըստ էութեան անձի ապագայի, բախտի գուշակութիւն է (որն ի դէպ, բնաւ չի խրախուսւում եկեղեցու կողմից), եւ որպէս այդպիսին, սերտօրէն աղերսւում է Ամանորին (Նաւասարդին) պահպանուած գուշակութեան տարրերի հետ: Ամանորի (Նաւասարդի) հետ այս տօնի ընդհանրութիւնը նաեւ երկուսում էլ ջրի նկատմամբ եղած բացառիկ վերաբերմունքն է: Վիճակը, որով արւում է գուշակութիւնը, պատրաստւում է եօթն աղբիւրից ջուր վերցնելով, եօթ ծաղկի մէջը դնելով: Ամանորի նման, Համբարձմանն էլ հաւատ կայ, թէ այդ **գիշեր** ջրերը մի պահ կանգ են առնում, դառնում հրա-

---

[36] Եփր. Պօղոսեան, նշ. աշխ. էջ 12—13:

շագործ. եւ այն գիշերային լոգանքները, որ կան Ամանորին, կան (նոյնիսկ առաւել շատ) եւ Համբարձմանը[37]:

Համբարձման տօնի սովորութիւններում պահպանուած՝ Նաւասարդեան մեծ տօնի տարրերից է եւ այն, որ որոշ տեղեր աւանդոյթ է եղել այդ տօնին ուխտի գնալ եւ մատաղ անել[38]: Հետաքրքիր է, որ որոշ տեղերում տարբեր ձեւերով այս տօնը աղերսուել է Յովհաննու Սուրբ Կարապետի պաշտամունքին (ուխտագնացութիւն նրա սրբավայրերը եւն)[39]: Միեւնոյն ժամանակ, յայտնի է, որ Հայոց եւ հարեւան եկեղեցիները Սուրբ Կարապետի ծննդեան տօնը նշել են յունիսի 24-ին (որ շատ մօտ է Նաւասարդի համար մեր ստացած ամսաթուին՝ յունիսի 14-ին), եւ բացի այդ, յայտնի է, որ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը Նաւասարդի տօնի տեղակ, որպէս խափանիչ հեթանոսական տօնի, կարգեց հէնց Սուրբ Կարապետի եւ Աթանագինէի տօնը:

Յոյժ ուշագրաւ է նաեւ Համբարձման տօնի հետ կապուած **գիշերուայ խորհուրդը,** որով եւս այս տօնը շատ սերտ կապում է Նաւասարդի հետ, երբ կատարուել են գիշերային ծէսեր (աստղի արեգակնային ամբարձման դիտումը, որ եղել է գիշերուայ 10-րդ ժամին)[40]: Համբարձման գիշերը սրբացուած է, ինչպէս Նոր Տարուայ գիշերը: Այս գիշեր էլ (ինչպէս Ամանորին) հոսող ջրերը մի պահ կանգ են առնում, դառնում հրաշագործ, բուժիչ, երկինքը ճեղքւում է, բացւում, երկինք-գետին իրար են գալիս, համբուրւում: Այս գիշեր է, որ բացւում է Մհերի դուռը, Մհերը դուրս է գալիս եւ աւուգում աշխարհի վիճակը եւն: Գիշերուայ հետ է կապուած եւ հէնց **Վիճակը,** որ պատրաստւում է նախընթաց օրը եւ **գիշերը** դրւում է **«աստղունք»**՝ բացօթեայ մի տեղ ,որ աստղերը ներգործեն՝ դարձնեն հրաշագործ: Ի դէպ, այս վերջին սովորութիւնը փոքր տարբերութիւններով կայ նաեւ Ջոջերի եւ Պարսիկների մօտ[41]: Եւ միշտ էլ վիճակը աստղունքից հանւում է **նախքան արեւածագը** (յիշենք Հայկի աստղի ծագելը արեւածագից առաջ): Նոյնիսկ Համբարձման երգերի մէջ շեշտուած է, որ հէնց գիշերն է Համբարձման տօնը.

«Այս գիշեր Համբարձում է,
Աղուրներու հարցում է...»[42]:

Ի հակակշիռ սրան, նկատենք, որ Քրիստոսի համբարձումը գիշերուայ հետ կապուած չէ. ամեն դէպքում կանոնական գրականութեան մէջ Համբարձումը գիշերը լինելու մասին ոչինչ վկայուած չէ (Գործք, Ա, 4—11):

Աւելացնենք, որ Նաւասարդի տօնի հիմնական ծիսական կերակուրը՝ հարիսան, Հայաստանի որոշ վայրերում կոչուել է **գիշերեփեաց**[43]:

Համբարձման տօնը Նաւասարդի հետ ընդհանրանում է նաեւ ցորենի-գարու նկատմամբ բացառիկ վերաբերմունքով: Համբարձման որոշ երգերի մէջ **Վիճակը** պահանջում է, որ իրեն տան «խորերով **ցորեն**» եւ «արտերով **գարի**»[44], որով սա կապում է Ամանորին **ջրերին** ցորեն ու գարի նուիրելու

---

37 Եփր. վ. Պօղոսեան, Համբարձման տօնը եւ Հայ ժողովրդի վիճակախաղը, Վիեննա, 1956, էջ 10, 54 եւն.:

38 Նոյն, էջ 13:

39 Նոյն, էջ 171, 170:

40 Գր. Բրուտեան, «Էջմիածին», 1992, թ Դ—Ե, էջ 95—118:

41 Եփր. Պօղոսեան, Համբարձման տօնը..., էջ 65—65:

42 Նոյն, էջ 40:

43 Գ. Ս. Գրիգորեան, նշ. աշխ., էջ 93:

44 Եփր. Պօղոսեան, նշ. աշխ. էջ 78:

ծէսին (ի դէպ, Վիճակն էլ շինուած է բղուղի մէջ լեցուած **ջրից** ու ծաղիկներից):

Համբարձմանն է նաեւ «Սանդայ Ծոեր» դիցաւէպի սկզբնաւորումը Ծովինարի յղիանալը կաթնով Աղբիւրի ջրից: Այսինքն՝ դիցաւէպի եւ սկիզբը, եւ էլ աւարտը (Մոների ժայռի բացուելը) կատարւում են Համբարձմանը:

Այս ամենը ցոյց են տալիս, որ Համբարձման օրը նախապէս պիտի ընկալուած լինի տարուայ բոլոր օրերից դուրս, տարուան չպատկանող (երբ տեղի էին ունենում «ժամանակից դուրս» իրադարձութիւններ): Իսկ տարուան չպատկանող օրեր եղել են տարեմուտին նախորդող օրերը: Միջնադարում հայ տոմարագէտները տարուայ ընդհանուր կարգից դուրս են համարել Աւելեաց հինգ օրերը, որոնք համարուել են արարչութեան օրեր:

Ի մի բերելով Համբարձման տօնի մասին մեր իմացածը, տեսնում ենք, որ **Համբարձման (Վիճակի)** տօնն իր բազմաթիւ կարեւոր խորհուրդներով, ծէսերով, սովորութիւններով ու հաւատալիքներով ոչ այլ ինչ է, քան **հիմնական բաղադրիչը Հայոց Նաւասարդեան մեծ տօնակատարութեան:**

Միւս տօնը, որ դարձեալ իրաւամբ համարուել է Նաւասարդեան տօնի մաս, **Վարդավառն է:** Սա էլ շարժական է եւ պատահում է յունիսի 28-ից օգոստոսի մէկի միջակայքում: Նախ նկատենք, որ Համբարձումն ու Վարդավառը Հայ Եկեղեցու տօնացոյցում դասաւորուած են այնպէս, որ դրանց փոփոխման միջակայքերը համապատասխան են դասաւորուած Նաւասարդի օրուայ շուրջը: Այսպէս, Համբարձումը լինում է ապրիլ 30-ից յունիս 3 միջակայքում եւ սրա ու Վարդավառի միջակայքերի միջին կէտն է **յունիսի 15-ի,** որ արեւադարձից առաջ է եօթն օրով եւ Նաւասարդի (մեր ստացած) օրից տարբեր է միայն մէկ օրով: Դժուար է միանշանակ ասել, պատահակա՞ն է այս «զուգադիպութիւնը», թէ՞ ոչ: Ամեն դէպքում, եթէ նոյնիսկ դա պատահական համարենք, պիտի ընդունենք, որ այդ երկու քրիստոնէական տօներում ծուարած հին տօնի բեկորները պիտի նախապէս եղած լինեն ինչ-որ տեղ դրանց արանքում:

Ընդհանրապէս, ազգագրական բազում դրսեւորումներում այս երկու տօները (Համբարձում եւ Վարդավառ) հանդէս են գալիս որպէս իրար ներտօրէն շաղկապուած զոյգ (ասես՝ մի ամբողջութեան երկու կէսեր): Այսպէս, Կեսարիոյ եւ նրա որոշ գիւղերի հայերը Համբարձման տօնը կոչել են Վարդավառ, իսկ Այնկերպութեան տօնն էլ, որ էլ Վարդավառի տօն է եղել, կոչուել է Սուրբ Կարապետ[45]: Պահպանուած են եւ Ադանայի Համբարձման վիճակի երգեր, որ սկսուել են «Վարդավառ, վարդավառ...» խօսքերով[46]: Այնթապի եւ Մարաշի մէջ էլ Համբարձման տօնը կոչուել է **Մէնթիվար,** որ անկասկած Վարդավառ անուան աղաւաղումն է[47]:

Այս նոյնի վկայութիւն է եւ այն, որ Վարուանդալի Աւետարանոց գիւղում (ըստ Լէօյի) վիճակահանութիւնը տեղի է ունեցել Վարդավառի շրջանում, իսկ Ադանայի մէջ էլ վիճակախաղը **տարին երկու անգամ** է տեղի ունեցել. Համբարձմանն ու Վարդավառին[48]: Այս երկու տօների՝ իրար ամոլ լինելը հաստատող այս կարգի փաստերը միայն նշուածներով չեն սահմանափակ-

---

[45] Անդ, էջ 186:
[46] Անդ:
[47] Անդ, էջ 181—182:
[48] Անդ, էջ 155, 184:

ւում, բայց այսքանն էլ բաւարար է, հաստոգելու համար, որ իրօք այս երկու ժողովրդական տօները բեկորներն են միեւնոյն նախնական տօնի:

Արդ, տեսանենք ինչեր ունենք պահպանուած Վարդավառի տօնի Նաւասարդեան բնօրինակից: Հիմնականը, որ պահպանուել է ցայսօր, բուռն ջրախաղն է: Ուշագրաւ է, որ այս ջրախաղը կայ նաեւ Պարսիկների մօտ, ընդ որում, այդ՝ ջուր սրսկելու սովորութիւնը Պարսից մօտ մաս է կազմել **Նոր Տարուայ տօնակատարութեան**[49], եւ ըստ այդմ սպասելի է, Հայոց մօտ էլ ջրախաղը եղած լինի Ամանորին (Վարդավառը եղած լինի Նաւասարդին): Վարդավառին եղել են նաեւ գոմէշների կռիւներ, ինչպէս շատ տեղեր՝ Համբարձմանը (օր.՝ Մուշում եւ այլուր)[50]: Վարդավառին սովորութիւն է եղել նաեւ ցորենի հասկեր բերել (ընծայել) եկեղեցի, որ բերքը անվնաս մնայ մորեխից եւ կարկուտից[51]: Ի դէպ, կարկուտը Հայաստանում լինում է հիմնականում յունիս ամսին: Եւ ընդհանրապէս պարզ է, որ բերքի պահպանութիւն Աստծուց խնդրելը իմաստ ունի նախքան բերքահաւաքը, որով Վարդավառի այս սովորութիւնն էլ յուշում է, որ այս տօնը նախապէս պիտի եղած լինի ցորենի բերքահաւաքից առաջ (կամ դրա ընթացքում), յունիս ամսին:

Վարդավառի ջրախաղը, որ արդ երբեմն կապւում է Նոյի եւ Ջրհեղեղի յիշատակի հետ, վկայութիւնն է այն բանի, որ այս տօնը ձօնուած է եղել գլխաւոր աստծուն՝ Հայր Աստծուն, զի ջուրը Հայր Աստուծոյ խորհրդանիշն է: Սրանով եւս Վարդավառը կապւում է Նաւասարդին, որպէս գլխաւոր աստուծոյ տօնի:

Վարդավառի տօնի հետ կապուած մի կարեւոր սովորութիւն էլ պտուղի (ի մասնաւորի՝ խնձորի, խաղողի) վրայ եղած արգելքն է: Յայտնի է, որ Հայաստանի որոշ գաւառներում **Խաղողօրհնէքը** կատարուել է ոչ թէ Աստուածածնին (օգոստոսի կէսերին), այլ դրանից առաջ՝ Վարդավառին[52]: Եղել է նաեւ մինչեւ Վարդավառ խնձոր ուտելու արգելք[53], որ խաղողի եւ ցորենի նկատմամբ այս տօնին եղած վերաբերմունքի հետ (ընծայում, օրհնութիւն) միասին վկայում է, որ Վարդավառը նախապես եղել է նաեւ բերքի, պտղի ընծայման եւ օրհնութեան տօն: Աւելացնենք, որ Վարդավառին սովորութիւն է եղել իրար խնձոր (պտուղ) եւ ծաղիկներ նուիրելու[54], որ նոյնական է Ամանորին (Կաղանդին) իրար չոր պտուղներ նուիրելու եւ հէնց ա՛յդ նուէրներով շնորհաւորելու (կաղանդելու) սովորութեանը:

Նաւասարդեան տօնի ծէսերի ու սովորութիւնների միւս կարեւոր բեկորը, ամենայն հաւանականութեամբ, **Բարեկենդանեան խաղերն են:**

Այս տօնի ամենաէական դրսեւորումներն են ճոխ, հանդիսաւոր, կատակային **թափօրները, դիմակաւորուած** խաղերը եւ անշուշտ, ճոխ, առատ կերոխումն ու անսահման ուրախութիւնները: Եղել են նաեւ ձիարշաւ, սրախաղ եւ այլ խաղեր[55]: Այս տօնի սովորութիւններից թերեւս ամենաառանցքայինը կարելի է համարել թափօրը: Սա այնքան արմատացած է եղել, որ

---

[49] Ա. Մանուկեան, նշ. աշխ., էջ 188:
[50] Անդ, էջ 188:
[51] Կարօ Սուքիասեան, Անահիտ դիցուհին Հայոց, «Գարուն», 1986, թ. 3, էջ 84–86:
[52] Մ. Օրմանեան, Ծիսական բառարան, Անթիլիաս, 1957, էջ 31:
[53] Ա. ամանուկեան, նշ. աշխ., էջ 189:
[54] Անդ:
[55] Անդ, էջ 75;

կատարուել է ճոյնիսկ վանքերում, ուր այդ օրը տեղի են տուել մշտական խառութիւնները եւ ճոյնիսկ տօնը կոչուել է **Աբեղաթող:** Վանքերում ուրախ տեղանին յաջորդել են գիշերային պարն ու թափօրը: Թափօրներն ընդհանրապէս (թէ վանքերում, թէ դրսում) ունեցել են թափօրապետ՝ տուտ թագով ու գաւազանով, որոնք ցոյց են տալիս, որ սրա նախատիպը պիտի եղած լինի հէնց իսկական թագաւորը:

Յայտնի է, որ հանդիսաւոր թափօրները յատուկ են եղել Ամանորի տօնակատարութեանը տակաւին հին Միջագետքում, սկսած Շումերների ժամանակներից: Այստեղ էլ Ամանորի խաղերից նշանաւոր են Carnaval-ը եւ Վիճակախաղը: Carnaval-ը, որ գուգահեռն է մեր Բարեկենդանի, սկսուել է հանդիսաւոր թափօրով, տօնուել է գլխաւոր աստծու Մարդուկի՝ Ջրաշխարհից (Սանդարամետից) ցամաք՝ Լոյս Աշխարհ ելնելը: Ընդ որում Carnaval անունն էլ կապում է դրա հետ, զի Մարդուկը Ջրաշխարհից ցամաք է ելել նաւով, եւ նաւի տակ էլ անիւներ են դրուած եղել (ցամաքում իբր կառք գնալու համար), որով եւ Car navalis=նաւակառք[56]: Ի դէպ, տօնի հայերէն **Բարեկենդան** անունը եւս կարելի է կապել այս պատկերացման հետ, իբր Անդրաշխարհից (մեռեալների աշխարհից) վերադարձը (գլխաւոր պաշտոնեայի) դէպի Լոյս Աշխարհ, որով Բարեկենդան կը նշանակի բարւոք կենդանութիւն ստանալը (յարութիւն առնելը):

Ընդհանրապես ընդունուած է Carnavla-ը համարել գարնանային պաշտամունքի հետ կապուած իրողութիւն[57]: Նկատենք սակայն, որ անկախ գարնանը կամ տարուայ այլ եղանակին տօնուելուց, այս տօնահանդէսները կապուած են եղել հին տարին ճամփու դնելու եւ նոր տարին դիմաւորելու հետ: Այնպէս, որ Բարեկենդանական խաղերը նախապէս կապուած պիտի լինէին ոչ թէ ինչ-որ եղանակի (ասենք՝ գարնան, կամ ամոան) հետ, այլ միայն՝ Տարեմտի, Ամանորի հետ: Բնական է, որ Տարեմուտը տեղափոխուելու պարագայում դրանք էլ կարող էին իրենց տեղը փոխել եւ տարբեր ազգերի մօտ լինել տարուայ տարբեր մասերում (կախուած Տարեմուտի դիրքից): Այսպիսով, Բարեկենդանի խաղերն էլ վերապրուկն են նախապէս Ամանորին կատարուող ծիսական թափօրների: Եւ Հայոց մէջ պահպանուած սովորութիւնն էլ՝ թափօրի գլխին անպայման տուտ թագ ու գաւազանով մի «թագաւոր» դնելու, յուշն է հնագոյն շրջանի թափօրների, որոնց գլխին պիտի լինէր ինքը՝ գլխաւոր, գերագոյն աստուածը (Հայր Աստուած-Հայկն), կամ նրա փոխանորդը, նրա տեղակալը երկրի վրայ՝ թագաւորը: Իր այս յատկանիշով Բարեկենդանը եւս սերտօրէն կապում է Նաւասարդի տօնակատարութեան հետ:

Գալով Բարեկենդանի կերուխումին, սա եւս սերտօրէն կապուած է Տարեմտի հետ: Իրօք, Հայոց եւ շատ ազգերի մեջ արմատացած պատկերացում է, թէ ինչպէս որ անցնի Ամանորի օրը, այնպէս էլ կ'անցնի յաջորդող ողջ տարին: Ահա, ըստ այս պատկերացման ,պէտք է շատ կարեւոր լինէր Ամանորի օրը ճոխ, առատ, կուշտ ուտելը, որ տարուայ մնացած օրերը եւս մարդ անցկացնէր լիութեան, ուտելիքի առատութեան մէջ: Ի դէպ, մեր օրերում էլ Ամանորի կարեւոր պարտադիր բաղադրիչ է առատ սեղանը: Տա-

---

[56] Ա. Մատիկեան, նշ. աշխ., էջ 214: Սրան գուգահեռ է Յոյների Հելիոսը, որ Արեւի աստուած էր. սա էլ ծովն անցնում էր (երեկոյեան) մակոյկով, իսկ ցերեկը երկնքում ճամփորդում էր կառքով:

[57] Мифы Народов Мира, т. 1, Советская Энциклопедия, 1991, ст. 624.

բեակզբի հետո կապուած ծիսական կերուխումը, որպէս ապագայ առատութեան դիտանք ,առկայ է շատ ժողովուրդների պատկերացումներում[58]:

Բարեկենդանի հետո «թէեա աւուղդակի) կապուած մի այլ ուշագրաւ յիշատակ էլ **Բակլախորան** կոչուող տօնն է: Այսպէս է կոչուել Բուն Բարեկենդանին յաջորդող երկուշաբթի օրը: Այս աւունը փորձ է արուել բացատրելու իբր «փակեալ խորան», սակայն, ինչպէս իրաւացի նկատուել են նախորդ հետազօտողները, այս տօնը, որով եւ իր աւունը բնաւ կապ չունեն խորանի գոգուելու հետ, զի եկեղեցու խորանը փակ է լինում Բարեկենդանի նախորդ շաբաթ օրից[59]:

Ըստ Ա. Մատիկեանի, **Բակլախորան** նշանակել է **Բակլայ վրան:** Եւ սրա մեկնութիւնն էլ այն է, որ հնում Հայերն ունեցել են **Բակլայի** նուիրուած տօն, երբ գնացել են դաշտ, ապրել վրանաբնակ եւ բակլայ կերել: Սրա վերապրուկներն են այն, որ որոշ տեղերում դեռ մեր դարասկզբին սովորութիւն է եղել այդ օրը դաշտ գնալու եւ մեծ հանդիսութեամբ բակլայ ճաշակելու[60]: Ընդհանրապէս Հնդեւրոպացիների մօտ բակլան համարուել է նիջեցեալների սովորական զոհը եւ նոյնիսկ արգելք է եղել բակլայ ուտելու վրայ, իսկ քրիստոնէաների (եւ Հայերի) մօտ սովորութիւն է եղել նիջեցեալների յիշատակին բակլայ ուտել եւ բաշխել: Աւելացնենք նաեւ, որ Բակլախորանի օրը միշտ երկուշաբթի է, որը մեռելոց օր է: Սա համադրելով վերը շարադրուածի հետ՝ կարող ենք Բակլախորանն էլ դիտել իբր Հայկի՝ Հայր Աստուծոյ Նադրաշխարհ-Սանդարամետ իջնելու (70 օր Լոյս Աշխարհից բացակայելու, չերեւալու) սկզբի նշում, դրա տօնում, իբր պաշտուող աստծու **մահը,** որին 70 օր անց պիտի յաջորդէր նրա վերադարձը: Ըստ այդմ էլ, Բակլախորանը եւս մասը կը լինի Նաւասարդին նախորդող (եւ դրա հետ աղերսուող) ագատօնի:

Նաւասարդի տօնակատարութեան մի բեկոր էլ թերեւս կարելի է տեսնել Տէրնդէզի ժողովրդական սովորութիւնները: Այս տօնը Հայ Եկեղեցու տօնացոյցում կոչւում է **Տեառնընդառաջ,** եւ նշում է միշտ փետրուար 14-ին: Աւանդաբար այս տօնն ու իր անունը հետազօտողները կապում են Տիր (Տիւր) աստծու անուան հետ[61]: Սրա հիմնական ժողովրդական ծէսերը կապուած են հրի հետ, թէպէտ եկեղեցին ինքը խոտելի է դիտում հրախաղերն ու «շրջելն զհրով»: Այդուհանդերձ, աւանդաբար տօնի նախընթաց երեկոյեան խարոյկ է վառուել եկեղեցու բակում: Ընդ որում, վառել է կամ քահանան, կամ էլ այդ տարուայ մի նոր ամուսնացած փեսայ: Ապա բոլորն այդ կրակից առնելով, տարել են իրենց տները եւ վառել իրենց կտուրներին կամ բակերում պատրաստուած խարոյկները: Խարոյկի վառելանիթը լինում է փուշ, ծղոտ կամ եղէգն (սրանք բոլորն էլ արեւի խորհրդանիշերն են): Տօնիս ծէսերում մեծ տեղ է տրւում նորապսակ փեսաներին ու հարսներին: Մեծ զօրութիւն է վերագրւում ծիսական խարոյկին, որի մոխիրն «ունի» պտղաբերութիւնը շատացնելու ունակութիւն: Այս խարոյկի **ծխի ուղղութեամբ գուշակել են,** թէ որ կողմում ինչ **առատութիւն** կը լինի: Ուշագրաւ է,

---

[58] Տե՛ս օր Календарные Обычаи и Обряды в Странах Зарубежной Европы, исторические Корни и Развитие Обычаев, «Наука», Москва, 1983, ст. 73.

[59] Մ. Օրմանեան, նշ. աշխ., էջ 15:

[60] Ա. Մատիկեան, նշ. աշխ., էջ 230:

[61] Մ. Օրմանեան, նշ. աշխ., էջ 62:

որ ևորապսակ փեսան ու հարսը հարսանեկան հանդերձներով ու ևարօտով այս օրը դիմել են քահանային ,որ **կրկնապսակ** անի[62]:

Այս ոօևի ծէսերի ու սովորութիւնների հոյնիսկ թոուցիկ քննութիւնը ցոյց է տալիս, ւր դրանք կապուած են **Արեւի պաշտամունքի հետ:** Իսկ ծէսերում ևորաքեռաների ունեցած առանցքային դերը (խարոյկ վառելը) վերապրուկն է **թագաւորի** կողմից սկզբնաւորուող ու գլխաւորուող ծէսի (փեսայ-թագաւոր): Կրկնապսակ անելն էլ յուշում է, որ այստեղ առկայ է թագաւորի մասնակցութեամբ կատարուող հնագոյն **ծիսական ամուսնութեան** վերապրուկը:

Ծխի միջոցով կատարուող գուշակութիւնն էլ յոյժ համահունչ է հեթանոս պաշտամունքի զոհաստեղանից ելնող ծխին վերագրուած բացառիկ կարեւոր դերին, որ վկայուած է Արտաշիսեան վէպի փոքրիկ հատուածում «Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի, եւ զառաւօտն Նաւասարդի...»[63]: Ինչպէս ցոյց է տուել այս վիպական հատուածի քննութիւնը, Նաւասարդի ոօևին արբազան գիշերուայ **Առաւօտ** ժամին կատարուել է կարեւոր ծէս, եւ բացառիկ կարեւորութիւն է ունեցել ողջակէզի ծուխը, որ կոչուել է **ծուխ ծխանի,** եւ դրան վերագրուել է մեծ նշանակութիւն եւ զօրութիւն[64]:

Ինչպէս տեսնում եևք, իր տարրերով (Արեւի պաշտամունք, թագաւորի մասնակցութեամբ ծէս եւ ծիսական ամուսնութիւն, բերրիութեան գուշակում, հրավառութիւն եւն) այս ոօևը եւս աղերսում է Նաւասարդի ոօևին եւ դրա խորհուրդներին: Բացառութիւն չէ նաեւ ոօևի անունը:

Այսպէս, ոօևի անունը՝ Տէրընդէզ (Տէրընդաս, Տէրընտաս, եւն) աւանդաբար կապում է **Տիր** անուան հետ: Տիր աստուածը համարուել է **Հայր** Արամազդի **Գրիչը: Տիր** բառը պարսկերէն նշանակում է **«նետ»** եւ ըստ Ստ. Մալխասեանցի, **Տրէ** պահլաւերէն նշանակել է Շնիկ աստղը (Sirius)[65]: Միեւնոյն ժամանակ, բառիս «Տիրէնդազ» պարսկական ձեւը նշանակում է **նետաձիգ**[66]: Յիշենք նաեւ, որ Հայր Աստուծոյ մի հիմնական գէնքը նետասեղն է համարուել եւ Հայկն էլ ինքը նետաձիգ է, եւ Կենդանաշրջանում էլ Հայկի դիմաց իբր նրա նշանակիչներ՝ ունենք Կշիռ եւ Աղեղնաւոր, իսկ հէնց Հայկն աստեղատան տակ էլ հնում եղել է Նետ-Աղեղ աստեղատունը[67]: Այսպիսով, ոօևիս անունը եւս կապում է Հայկի-Հայր Աստուծոյ ոօևին՝ Նաւասարդին:

Ստացում է, որ ե՛ւ իր ծէսերի խորհուրդներով, ե՛ւ էլ իր անունով այս ոօևը եւս առնչւում է Նաւասարդեան ոօևակատարութեանը:

Իր ծէսերով ու խորհուրդներով Նաւասարդի հետ շատ սերտ աղերսներ ունի նաեւ **Ծաղկազարդի ոօևը:** Ժողովրդի մէջ կոչւում է նաեւ **Ծառազարդաւ:** Հնում Հայոց մէջ սովորութիւն է եղել այս ոօևին եկեղեցում ծառ զարդարել եւ ճիւղերին պտուղներ ու այրուող մոմեր ամրացնել[68]: Ծաղկազարդին ցարդ պահպանուած սովորութիւն է եղել ձիթենու, արմաւենու կամ ուռենու դալար ոստեր օրհնելը: Հնում սովորութիւն է եղել նաեւ Ծաղկազարդին հէնց եկեղեցում աղջիկ նշանելու (ծէսի ժամանակ): Այս ոօևին

---

[62] Ա. Մանուկեան, նշ. աշխ., էջ 59—70:
[63] Գրիգոր Բրուտեան, «Էջմիածին», 1992, թ. Դ—Ե, էջ 112:
[64] Անդ:
[65] Տե՛ս Ա. Մանուկեան, նշ. աշխ., էջ 61:
[66] Անդ, էջ 62:
[67] Տե՛ս Գր. Բրուտեան, «Էջմիածին» 1995 թ. Ա, էջ 48, 53—54:
[68] Ա. Մանուկեան, նշ. աշխ., էջ 114—116;

ծառ զարդարելու սովորութիւնը (որից գալիս է եւ Ծառզարդար անունը) ճոյնական է **Նոր Տարուայ Տօնածառին,** որ կայ շատ ու շատ ազգերի մօտ: Ա.ս ծառի մի երկուրեակն էլ Հայոց հարսանեաց ճէնում առկայ «թագաւորի **ծառն»** է, որ էլի զարդարում է պտուղներով (ի դէպ, հիմա էլ **տօնածառի** զարդ-հաղուստների մեծ մասը կլոր-գնդաձեւ պտուղների նմանակներ են): Պտուղներով զարդարուն ծառը գարնանային պաշտամունքի հետ կապելը, ըստ իս, բաւական բոնազբօս մօտեցում է: **Հասուն պտուղներով** զարդարուն ծառը աւելի յարմար է ոչ թէ գարնան զարթօնքի տօնին, այլ **ամառային առաջին բերքի** (Նոր պտղոց) տօնին: Եւ ըստ այդմ, դա աւելի յարմար է Նաւասարդին (Ամանորին), ինչպէս վերը տեսանք, ամառնամուտի շրջանում:

Ծաղկազարդը Ամանորի հետ ընդհանրութիւն ունի նաեւ նրանով, որ այստեղ էլ, ինչպէս Ամանորին, սովորութիւն կայ, որ երեխաները թափօրով տնէ տուն են պտտում, երգում ու նուէրներ ժողովում:

Ուշագրաւ է եւ Ծաղկազարդին աղջիկ նշանելու աւանդոյթը: Նշանելը փաստօրէն ամուսնութեան ճէսի մի մասն է, դրա սկիզբը, որով սա նմանւում է Տէրընդէզի ճէսերին (կրկնապսակ եւն), ուր էլի մեծ դեր է յատկացուել պսակին:

Գալով Ծաղկազարդի հիմնական սովորութեանը՝ դալար ճիւղեր օրհնելուն ,սա կապւում է աւետարանական պատմութեան հետ: Ըստ Նոր Կտակարանի, երբ Յիսուս աւանակի վրայ նստած մտաւ Երուսաղէմ, ժողովրդի բազմութիւնը նրան դիմաւորեց **արմաւենու** ճիւղեր բռնած (Յովհ. ԺԲ. 13): Միւս աւետարանիչներն էլ վկայում են, որ Յիսուսին դիմաւորողները ծառերից ճիւղեր են կտրել եւ փռել նրա ճանապարհին, չնշելով, սակայն, թէ ինչ ծառի ճիւղեր են եղել (Մտթ. ԻԱ, 8, Մրկ. ԺԱ, 8): Նշւում է նաեւ, որ դա եղել է Զիթենեաց լեռան գառիվայրի վրայ, եւ կարելի է մտածել, որ պիտի արմաւենու հետ եղած լինեն նաեւ ձիթենու ճիւղեր: Այսպէս, արմաւենու եւ ձիթենու ճիւղեր օրհնելը կապւում է աւետարանական պատմութեան հետ: Միջդեռ ուռենու մասին աւետարաններում ոեւէ խօսք չկայ: Այնինչ, Ծաղկազարդին մեզ մօտ օրհնւում են ուռենու ոստեր, դեռ աւելին, յայտնի է, որ ռուսները Ծաղկազարդը կոչում են Вербное воскресенье, ուր Верба նշանակում է **ուռի:** Այնպէս որ, ուռենին այս տօնում պատահական չէ:

Ո՞րն է ընդհանրութիւնը ձիթենու, արմաւենու եւ ուռենու միջեւ: Եթէ առաջին երկուսը պտղատու են, եւ դրանց պաշտամունքը (գուցէ) կարելի է բխեցնել զուտ սպառողական նկատառումներից, ապա ուռին ո՛չ պտղատու է, ո՛չ էլ պիտանի փայտ է տալիս, ոչ մի առումով արժեքաւոր ծառ չէ: Ըստ իս, այս երեք ծառերի ընդհանրութիւնը նրանց տերեւների ձեւն է: Երեքի մօտ էլ տերեւները **սրածայր** են: Իսկ **սուր** (ծայրը) համարուել է Արեւի խորհրդանիշ: Յիշենք, որ Տէրընդէզի խարոյկն էլ վառում են անպայման փշով, եղէգնով կամ ծղոտով, որ էլի Արեւի նշանակներն են: Փուշը արդէն յայտնի է, որ **սուր** է, եղէգնն էլ արմաւենու պէս երկար թրանման **սրածայր** երեւներ ունի, իսկ ծղոտն էլ, որ ցորենից է, կապուած է ցորենի **սուր-սուր** բիւսերին: Այնպէս որ, Ծաղկազարդին օրհնուող ծառերն էլ իրենց սրածայր տերեւներով խորհրդանիշն են Արեւի եւ կապւում են Արեւի պաշտամունքի հետ: Եւ ըստ այդմ լրիւ բացատրելի է Աւետարաններում վկայուածը Յիսուսին արմաւենու (եւ ձիթենու) ոստերով դիմաւորելու մասին: Զի Յիսուսին դիմաւորում էին որպէս **թագաւորի** (թագաւորն ինքը համար-

ում է Արեգակ) եւ բացի այդ, Յիսուս ինքն է Արեգակն արդարութեան: Աւելացնենք, որ հիւսիսային երկրներում, ուր չկան ճշուած երեք ծառերը, տօնածառ է դարձել եղեւնին, որ ասեղանման սուր տերեւներ ունի եւ ձիմա էլ փշատերեւ Տօնածառը կապուած է Ամանորի հետ:

Այս ամենը ցոյց է տալիս, որ Ծաղկազարդը նախապէս պիտի եղած լինի Արեւի տօն եւ եղած լինի ամառային արեւադարձին: Այս տօնի այլ յատկանիշների քննութիւնը եւս հանգեցնում է նրան, որ սա նախապէս եղել է ամառային, եւ կապուած է եղել Տարեմուտի հետ, սակայն կարծում եմ, այստեղ բերուած տուեալներն էլ բաւարար են համոզուելու համար, որ դա իրօք այդպէս է:

Նախքան ամբողջացնելը նշենք, որ կայ մի մեծ բեկոր եւս, Հայոց Նաւասարդեան տօնի, որ ոչ մի առանձին տօնի մէջ մտած չէ,այլ պահպանուել է, որպէս ժողովրդական կայուն աւանդոյթ, անկախ բոլոր տօներից: Դա է Հայոց **հարսանեաց ծէսը:** Իրօք, Հայոց հարսանեաց ծէսը, որ իր բազմաթիւ տարրերով հասել է մեր օրերը, պարունակում է շատ բաղադրիչներ, որոնք շատ ներտօրէն կապուած են Նաւասարդի հետ: Այսպէս, ամբողջ հարսանիքն իրը տեւում է **7 օր:** Այս 7 օրը լրիւ համաձայնւում է Նաւասարդը արեւադարձից 7 օր առաջ սկսելուն, եւ 7 օր տեւելուն: Հարսանեաց ծէսի բոլոր 7 օրերն ունեցել են իրենց յատուկ գործողութիւնները, կապուած տուեալ օրուայ խորհուրդի հետ: Յիշենք հարսանեաց ծէսի ամենակենտրոնական մասը՝ հանդիսաւոր թափօրը փեսայի ու հարսի (թագաւորի ու թագուհու) գլխաւորութեամբ: Սա լրիւ զուգահեռն է Ամանորի տօնի առթիւ կատարուած ծիսական հանդիսաւոր թափօրների, որոնց գլխաւորն անպայման եղել է թագաւորը (նոյն ինքը՝ գլխաւոր քուրմը): Սրա հետ եւ ծիսական ամուսնութիւնը, որ էլի կատարուել է Նոր Տարուայ ծէսերի շարքում տարբեր շատ վաղ ժամանակներից՝ Միջագետքի եւ շրջանի այլ ժողովուրդների կողմից: Ծիսական ամուսնութիւնը յայտնի է տակաւին Շումերների մշակոյթից, ուր մեծ հանդիսութեամբ ամեն տարի նշել է **Ինաննիայի** եւ **Ցովիանների** աստուած Դումիզիի ամուսնութեան ծէսը, որ գլխաւորել է անձամբ թագաւորը: Եւ ծէսի ամենակարեւոր մասն էլ եղել է թագաւորի եւ Ինաննա աստուածուհուն ներկայացնող քրմուհու սրբազան կենակցութիւնը, որի յաջող արդիւնքից էլ կախուած է եղել տարուայ յաջող բերքը[69]: Ի դէպ, Ինաննա աստուածուհին նոյնացուած է եղել եւ **Արուսեակ** մոլորակի հետ[70], հետ[71]: Նոյն կերպ եւ Շումերների Դամու աստծու հետ կապուած մեռնել-

---

[69] Мариан Белицкий, Забитый мир Шумеров, «Наука», Москвн, 1980, ст. 254—260.

[70] **Տե՛ս օր.** Мифы Народов Мира, т. 1, ст. 510.

[71] **Հարսն** բառն ըստ Աճառեանի, թէեւ հայկական է (Հայերէն Արմատական բառարան, հ. 3, Երեւան, 1977, էջ 62), հնդեւրոպական արմատից, իսկ **Արուսեակն** էլ հաստատում է իրանական փոխառութիւն (Արմատական, հ. 1, էջ 333, նաեւ՝ Գ. Ջահուկեան, Այդուհանդերձ, չի բացառւում, որ Արուսեակ մոլորակն իր անունը ստացած լինի, նկատի առնելով այն կերպարորող աստուածուհու **հարս** լինելը: **Աւելացնենք** նաեւ, որ հայերէն «հարս» բառը ընդհանուր է շումերական arhus «արգանդ» բառի հետ (Մ. Գաւուրճեան, Հայ ժողովրդի ծագումը, Մոնթրէալ, 1982, էջ 10) Ընդ որում, շումերական բառն իր ձեւով շատ մօտ է եւ Արուսեակ անունին: Չվիճարկելով լեզուաբանական եզրակացութիւնների ճշդութիւնը՝ նկատենք, որ այս բառերի մեջ իր իմաստով անհնականը շումերականն է՝ «արգանդ», որից էլ կարող էր առաջ գալ «հարս» իմաստը, ապա եւ՝ մոլորակի անուն:

յառնելը նշանակող ծէսերը եւ ծիսական ամուսնութիւնը ամբողջ մի հազարամեակի ընթացքում եղել են շումերական պաշտամունքի **հիմնական** ծէսերը (որ բնաւ չի նշանակում, թէ դրանից յետոյ այդ ծէսերը վերացել են)։ Ի տարբերութիւն Դումուզիի, որ հովիւ է, Դամուն երկրագործ է, եւ նրա պաշտամունքը աղերսւում է հէնց երկրագործական մշակոյթին[72]։

Յիշենք նաեւ վերը յիշատակուած՝ մինչեւ Նաւասարդ եղած ամուսնութեան արգելքը եւ դրան զուգահեռ՝ մինչ Վարդավառ (կամ Աստուածածին) խնձոր ու խաղող ուտելու արգելքը։ Մի դէպքում ունենք բերքի (ցորենի, գարու եւ պտուղների) ընծայում եւ օրհնութիւն Նաւասարդի տօնին, եւ դրա համար էլ բնական է, որ մինչ այդ ընծայումն ու օրհնութիւնը պիտի եղած լինէր համապատասխան արգելք (առանց այդ արգելքի մեծապէս իմաստազրկւում են ընծայումն ու օրհնութիւնը)։ Միւս դէպքում էլ ունենք ամուսնութեան արգելք մինչեւ Նաւասարդ եւ այդ տօնին էլ՝ հանդիսաւոր թափօր՝ յար եւ նման պսակի թափօրին։ Ունենք նաեւ ծիսական ամուսնութեան վկայութիւն (Ամանորին) հարեւան ազգերի մօտ։ Այս ամենից կարելի է հետեւեցնել, որ պիտի Հայոց Նաւասարդի տօնական արարողութեան օրերն էլ եղած լինեն ծիսական ամուսնութեան օրեր եւ ընդհանրապէս՝ ամուսնութեան-պսակադրութեան համար տարուայ մէջ որոշուած հիմնական ժամանակը։

Հայոց Նաւասարդի տօնի մի շատ էական առանձնահատկութիւնն էլ եղել է այն, որ այս տօնի ծէսերում, սովորութիւններում (ուրեմն՝ նախապէս եւ կանոններում) յոյժ մեծ կարեւորութիւն է ունեցել 7 թիւը, որպէս խորհրդանշական իրողութիւն։

7 օր է եղել տօնի օրից մինչեւ արեւադարձ, տօնին նախորդել է պաշտամունքի առարկայ աստղի չերեւալը 7×10=**70 օր**։ Բացի այդ կայ եւ **7 տեսակ միրգ, 7 տեսակ կերակուր** սեղան դնելը, որոշ տեղեր Կաղանդը կոչել են **եօթը օղիի օր**[73]։ Նոյնը ունենք եւ Համբարձման ծէսերում, ուր վիճակը պատրաստուել է **7 աղբիւրից ջուր** գողանալով, **7 տեսակ ծաղիկ** աւելացնելով։ Նոյն կերպ էլ հարսանեաց ծէսում, ողջ ծիսակարգը բաժանուած է **7 օրուայ**։ Այս ամենը եւս վկայում են, որ այս բոլոր տօներն ու ծէսերը բեկորներն են միեւնոյն նախնական տօնի, Նաւասարդի տօնի։

Հայոց Նաւասարդի տօնը

Այսպիսով, ի մի հաւաքելով Հայոց հնագոյն գլխաւոր տօնից մեզ հասած բեկորները, փորձենք ըստ հնարաւորին վերականգնել այդ մեծ տօնական արարողութեան նախնական պատկերը։ Անշուշտ, այս «վերականգնումը» կարելի է անել միայն շատ կոպիտ մօտաւորութեամբ։ Խօսքը վերաբերում է տօնիս **որակական պատկերի** վերականգնմանը։

Արդ, ըստ վերը կատարուած քննութեան, հայոց Նաւասարդի տօնը իր սկզբնաւորման ժամանակներում եղել է բազմօրեայ տօնական արարողութիւն (իրար ագուցուած տօներով)։ Կատարուել է ամառային արեւադարձի շրջանում։ Տօնակատարութեանը նախորդել է 70-օրեայ նախատօնական նա-

---

[72] Мифы Народов Мира, т. 1, ст. 193—194.

[73] Եփր. Պօղոսեան, Նոր Տարւոյ տօնը..., էջ 69, ևն։

խապատրաստական շրջան, կապուած Հայկի աստղի չերեւալու հետ, որ ընկալուել է, որպէս Հայկի-Հայր Աստուծոյ Անդրաշխարհ-Սանդարամետ իջնելը[74]: Այս շրջանում կատարուել են տարբեր ծէսեր, եղել են տարբեր արգելքներ, կապուած Անդրաշխարհի եւ դրա խորհրդանիշերի հետ: Ի մասնաւորի, չի գործածուել կաթնամթերք, մայրամուտից յետոյ, կանայք չեն գործել, արգելուել է ամուսնութիւնը եւն: Այս 70 օրերի սկիզբը եղած պիտի լինի (ըստ արդի օրացոյցի) ապրիլի 5-ին: Արգելքի շրջանն էլ սկսուել է երկուշաբթի օրով եւ այդ օրը կատարուել է Անդրաշխարհի հետ կապուած ծէս, եփուել է բակլայ եւ ճաշակուել, իբր նշան սգո, թաղման: Արգելքի այս 10 շաբաթներին յաջորդել է բուն Նաւասարդեան տօնակատարութիւնը, որ տեւել է 7 օր: Սկսուել է ամառային արեւադարձից մի շաբաթ առաջ եւ ընթացել մինչեւ արեւադարձ: Դատելով տօների խորհուրդներից, այս տօնակատարութիւնը եւս սկսուել է երկուշաբթի օրով եւ աւարտուել է կիրակիով (արեւադարձի օրը պէտք է յարմարեցուած լինէր կիրակիին՝ Արեւի օրուան):

Այս տօնական շաբաթուայ բոլոր օրերը ձօնուած են եղել համապատասխան աստուածների, եւ իւրաքանչիւր օրում նշուել է համապատասխան տօնը: Տօնական շաբաթը սկսուել է Անդրաշխարհին վերաբերող տօնով, կատարուել են արարողութիւններ՝ կապուած Սանդարամետի խորհուրդների հետ (կապուած՝ Անդրաշխարհից Հայկի դուրս գալու հետ): Այդ օրուայ գիշերը եղել է արբացուած, կատարուել է գիշերային ծէս, հասկել են, որ տեսնեն Հայկի աստղի առաջին անգամ ծագելը Արեւից առաջ: Դա էլ տեղի է ունեցել գիշերուայ **Առաւօտ** ժամին, կատարուել է զոհաբերութիւն (կով, ցուլ) եւ զոհասեղանի ողջակէզի ծուխն էլ կոչուել է **ծուխ ծխանի,** ունեցել է մեծ կարեւորութիւն, այդ ծխով կատարուել են գուշակութիւններ եւն:

Տօնակատարութեան կենտրոնը՝ 4-րդ օրը ձօնուած է եղել Հայկին—Արարչին: Այդ օրը կատարուել է հանդիսաւոր թափօր թագաւորի եւ թագուհու գլխաւորութեամբ: Այդ օրը (կամ յաջորդ օրը) եղել է բերքի երախայրիքի ընծայում Աստծուն: Ընծայուել է առաջին հերթին ցորհաւոս **ցորեն, գարի** ու նաեւ՝ վաղահաս սլտուղներ (խնձոր, խաղող, գուցէեւ ծիրան, թութ, եւն): Տեղի է ունեցել բերքի հանդիսաւոր օրհնութիւն, որից յետոյ միայն արտօնուել է այն ճաշակել: Եղել է եւ պարտադիր **ծիսական կերակուր՝ հարիսան,** որ եփուել է ցորենով (կամ գարիով) եւ զոհաբերուած կենդանու մսով (այդ օրուայ զոհի կենդանին երեւի պէտք է եղած լինի ուլը, կամ գուցէ եղջերուն): Տօնակատարութեան 6-րդ օրը՝ շաբաթ, եղել է ծիսական ամուսնութիւնը, որ կատարել է թագաւորը:

Տօնակատարութեան 7-րդ օրը՝ կիրակի, որ եղել է հէնց արեւադարձի օրը, ձօնուած է եղել Արեւին: Այդ օրը Արեւը հասել է իր ամենաբարձր դիրքին երկնքում իր տարեկան պտոյտի ընթացքում:

Պահպանուած եւ մեզ հասած պատմական տեղեկութիւնները եւ ժողովրդական աւանդութիւնները վկայում են, որ Նաւասարդեան տօնակատարութիւնը կատարուել է բացօթեայ, բնութեան գրկում: Ընդ որում, այդպէս եղել է սկզբից եւթե, եւ այդպէս շարունակուել է ընդհուպ մինչեւ այդ տօնի խափանումը Գրիգոր Լուսաւորչի սահմանած տօներով:

---

[74] Յայտնի է, օրինակ, որ Շումերների դիցարանում ամենանախնական շրջանում մեռնող-յառնող յատկանիշ է ունեցել **Էնլիլ** գլխաւոր աստուածը, որ իջել է Սանդարամետ եւ այնտեղ եղել Ներս Աշխարհ, յարութիւն առել (տե՛ս, Мифы Народов Мира, т. 2, ст. 663, նաեւ՝ М Белицкий, նշ. աշխ.. էջ 191, եւն):

Նաւասարդի բացօթեայ տօնի լինելը, ըստ երեւոյթին, կարելի է դիտել իբր վկայութիւն այս տօնի շատ մեծ վաղեմութեան, եւ դա կատարողների աւանդապահութեան: Իրոք, մի ժողովուրդ իր գլխաւոր բազմօրեայ տօնը բացօթեայ կը կատարէր, եթէ չունենար, կառուցուած չլինէր տաճարներ (այդ տօնը սահմանելու ժամանակ), իսկ դա էլ պիտի եղած լինի շատ վաղ անցեալում, երբ տակաւին ձեւաւորուած չէր պաշտամունքային շինարարութեան աւանդոյթը[75]:

Ասո ներկայացածը միայն համառօտ ուրուագիծն է Նաւասարդեան տօնի հանդէսների պատկերի, որ կարելի եղաւ փութանակի վերականգնել մեզ հասած բեկորների համադրմամբ: Անշուշտ, այս տօնակատարութեան ընթացքում (դրանից առաջ եւ գուցե յետոյ) պիտի եղած լինեն նաեւ այս տօներ, որոնց դիրքը, խորհուրդները եւ ծէսերը կարելի պիտի լինի վերականգնել, կատարելով աւելի հանգամանալի քննութիւն:

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

---

[75] Սրա հետ համահունչ է Հրէաների կրօնի նախնական շրջանը: Յայտնի է, որ մինչեւ Տաճարի կառուցումը Սողոմոնի կողմից, Հրէաներն իրենց կրօնական պէտքերը հոգում էին, ծէսերը կատարում բացօթեայ եւ իրենց սրբութիւններն էլ (ուխտի տապանակը եւն) պահում էին շարժական խորաններում (վրաններում): Այնպես որ սա եզակի երեւոյթ չէ: Այնպէս որ կարող ենք մտածել, որ հայերի մօտ էլ հնագոյն ժամանակներից եղել է տօնը բացօթեայ տօնելու աւանդոյթը, որ աւանդապահ ժողովուրդը պահպանել է հազարամեակներ եւ մեծ նախանձախնդրութեամբ անցկացրել հեթանոսական, ապա նաեւ՝ քրիստոնէական շքեղ տաճարների կողքով ու հասցրել մինչեւ մեր դարը:



ՀՈՒՅՍԻ ԼՈՒՍԱԲԱՑԸ*

«Փա՜ռք Քեզ, Աստուած, փա՜ռք Քեզ,
Յաղագս ամենայնի, Տէր, փա՜ռք Քեզ»:

Արդեն ուշ երեկո էր, երբ մեզ ծանոթ գաղթականների փոքրիկ խումբը հասավ Ջառաբի-Խանին և նրա հարավ-արևելյան շքամուտքի մեջ կանգ առավ: Նրանց առջև հառնեց անորոշ ու կարծես անլուծելի մի խնդիր. ո՞ւր գնալ, ո՞ւմ դուռը ծեծել... Կային ընտանիքներ, որոնք դուռ էլ չունեին, ծածկ էլ չունեին, քանի որ նրանք տեղավորվել էին ուղղակի բակում, միայն թե կարողանային իրենց լաթերից, ցցուտիներից կցմցելով մի վրանատիպ բան ստեղծել և պատսպարվել նրա տակ՝ պաշտպանվելով արևից և անձրևից: Իսկ ավելի վաղ եկածներն ուղղակի տեղավորվել էին կամարակապ սենյակներում՝ տասը-տասնհինգ հոգով մրսելին:

Անհավոր էր տեսարանը:

Ջառաբի-Խանն ընդարձակ ուղղանկյուն մի կառույց էր՝ մեկ, տեղ-տեղ՝ երկհարկանի աղյուսաշեն կամ քարաշեն մասերով: Այդ միաձույլ կառույցն ուներ ընդարձակ բակ՝ շուրջ 70×50 մետր տարածքով: Համակառույցն ուներ նաև այլ մուտքեր: Բակում երկու տեղ՝ հարավ-արևելյան և հյուսիս արևմտյան մասերում, տեղադրված էին բարեհոգշարձանատիպ աղբյուրներ: Ժամանակին այստեղ գործել էին նաև գեղեցիկ շատրվաններ, որոնք շոգ օրերին զովացնում ու հաճելի էին դարձնում եղանակը: Ջառաբի-Խանի այս հատվածքը կառույցը դրսի կողմից փակ տեսք ուներ, իսկ բակի կողմից ունկնդրատեսակ կամարակապ սենյակներ, որոնց առաստաղը հյուսիսային մասում էր: Ջառաբի-Խանը հիմնականում ծառայում էր որպես կեցարան ուսանողներին, որոնք իրենց արդյունաբերական ապրանքները վաճառում էին տեղում, իրենց զբաղեցրած նիշարան-վաճառատներից, իսկ մթերքները՝ ամառանոցներում:

---

* Երկրորդ մասը տես № № Ը—Թ, էջ 155:

Զաուաբի-Խանի մոտ էր գտնվում Երևանի նշանավոր Դանթարի շուկան: Այստեղ տեղադրված էին երկու՝ մեծ և փոքր կշեռքներ, որոնցով կըշռում էին առևտրի մեծաքանակ ապրանքները:

Դանթարի շուկայի առևտրի և կարգ ու կանոնի վերահսկողությունը դրված էր շուկայի ոստիկանության վրա, որն իր պարտականությունները կատարում էր խիստ անաչառ ձևով: Ամեն օր սննդամթերքը ստուգվում էր բժշկի կողմից: Օրինակ՝ երբ որևէ ձկնավաճառ մինչև կեսօր չէր հասցնում վաճառել իր ապրանքը, շուկան հսկող ոստիկանը, իր հետ ունենալով հատուկ մշակներ, մոտենում էր նրան, առանց նրա համաձայնությունը ստանալու, հավաքել էր տալիս ողջ ապրանքը և լցնում աղբարկղներում, որոնք տեղադրված էին շուկայի տարբեր մասերում: Ձկնավաճառներից ոչ մեկը չէր համարձակվում պատճառաբանել կամ առարկել ոստիկանին՝ շատ լավ գիտակցելով դրա հետևանքները: Այսպիսի հսկողության տակ էին նաև շուկայի մյուս՝ միս, հավ, երշիկեղեն և այլ դժվարապահ մթերքները:

Ահա այստեղ էր՝ Զաուաբի-Խանում, որ մեզ ծանոթ գաղթականների փոքրիկ խումբը, անորոշության մշուշով պատված, չգիտեր իր անելիքը. ի՞նչ անել, ու՞մ դուռը ծեծել...

Մի քանի րոպե նրանք շվարած կանգնել էին, երբ հանկարծ, ներկաների շփոթվածությունը ցրելու համար կարծես, նրանց դիմեց Գրիգորը.

— Ի՞նչ ենք շվարե՛-մնացե, իկեք ներս մտնենք:

Բայց Գրիգորի հորդոր-խոսքից հետո անգամ նրանք մի պահ ընկըրկեցին, չհամարձակվեցին առաջ շարժվել, բայց, այնուամենայնիվ, նրանց ոտքերը ինքնաբերաբար առաջ շարժվեցին:

Անորոշություն և հուսահատություն:

Հուսալքված գաղթականների փոքրիկ խումբը մի քանի քայլ էլ դեռ չէր արել, երբ հանկարծ հարավ-արևմտյան կողմի կամարակապ սենյակներից մեկից դուրս վազեց մի տղա երեխա, որը կլիներ շուրջ տասը տարեկան, և ուղղություն վերցրեց դեպի դիմացի բնակարան, բայց հանկարծ, նկատելով նորեկ խմբին, կես ճանապարհին կանգ առավ և ուշադիր զննեց եկվորներին: Մի քանի վայրկյան հետո նա ուժգին թափով ետ շրջվեց և վերադարձավ նույն սենյակ, որտեղից դուրս էր եկել:

Մի քանի ակնթարթ դեռ չէր անցել, երբ փոքրիկ տղայի ներս մտած բնակարանից դուրս թափվեցին մի խումբ մարդիկ՝ տղամարդ, կին, մեծ, փոքր: Մեծերը մի տեսակ տարօրինակ շարժումներով, կարծես ինչ-որ բանից շանթահարված, ինչ-որ բառեր բլբլացնելով, անհասկանալի և անըմբռնելի ձայներ հանելով, արագությամբ հարձակվեցին նորեկների վրա և... կարուտագին գրկախառնվեցին:

Չափազանց հուզիչ էր պահը և անասելի տպավորիչ:

Կանայք ուշաթափվեցին, իսկ տղամարդիկ ամեն կերպ ձգտում էին պահպանել իրենց առնական հավասարակշռությունը: Բայց, ավա՜ղ, դիտողի աչքից չէր վրիպի նրանց հոգու ալեկոծությունը և այտերից հատիկ-հատիկ գլորվող արցունքի մարգարտանման կաթիլները: Երեխաների մասին խոսելն արդեն ավելորդ էր, քանի որ նրանք անսահման ցնծության մեջ փաթաթվել և պոկ չէին գալիս իրարից:

— Ջո՜ւր, ջո՜ւր,—լսվեց շրջապատից:

Այս արտառմլիկ իրողության և արտաբուխ իրարանցման աղմուկից շրջապատի տներից և «վրաններից» դուրս թափվեցին «հնաբնակները», ջրի օգ-

ևությամբ ուշքի բերեցին գիտակցությունը կորցրած կանանց, համոզիչ հորդորներով սթափեցրին և հանգստացրին դեռևս պահի ազդեցության տակ գտնվող տղամարդկանց: Իսկ երեխաներին օգնելու կամ հանգստացնելու կարիք էլ չկար, որովհետև նրանք կարծես վերագտել էին իրենց երբեմնի մանկական խաղաղ, անհոգ և երջանիկ օրերը:

Սաթենիկը վերջապես վերագտա՞վ իր հարազատներին:

Այն փոքրիկ տասնամյա տղան, որ քիչ առաջ վազքով դուրս էր եկել կամարակապ տնից և նույն արագությամբ ետ վերադարձել, Սաթենիկի քրոջ՝ Նանիկի որդին էր՝ Խաչիկը: Այդ նա էր իմաց արել իր ծնողներին՝ Սաթենիկի ընտանիքի հայտնվելու մասին:

Սաթենիկը գտավ իր ավագ քրոջը՝ 35-ամյա Նանիկին, նրա ամուսնուն՝ 40-ամյա Զադոյին՝ Նանիկի ավագ դստերը՝ 12-ամյա Արաքսուն, փոքրիկ Խաչիկին և նրա կրտսեր եղբայրներ՝ 8-ամյա Անուշավանին ու 6-ամյա Վարդգեսին: Սաթենիկը վերագտավ նաև իր կրտսեր եղբորը՝ Մնացականին, որի 25 տարին դեռ նոր էր լրացել:

Տանջահար գաղթականների աղոթքներն ու աղաչանքներն առ Աստված իրոք արժանացան Տիրոջ ողորմածությանը, և Նախախնամության օգնությամբ կորստյան մատնված հարազատները վերածնվեցին և վերագտան միմյանց:

Երբ իրարանցումը հանդարտվեց, և ամեն ինչ խաղաղվեց, Զադոն բոլորին ներս հրավիրեց:

Ներս մտնելուն պես, հենց շեմի վրա, չկարողանալով զսպել իր հուզմունքը, Գրիգորն ասաց.

— Աստվա՞ծ օրհնի ձեր օջախ: Էսա նոր տուն մեզ համար տարցավ հուսո լուսապսպ:

Տուն մտնելով, նորեկների առջև բացվեց հետևյալ տեսարանը. սենյակում համարյա ոչինչ չկար, ո՛չ պահարան, ո՛չ սեղան, ո՛չ աթոռ, ո՛չ թախտ: Միայն հատակին այս ու այն կողմ փռված էին հնամաշ տաք հագուստներ, որոնք հավանաբար բնակիչների համար ծառայում էին որպես անկողիններ: Ուշադիր զննելուց հետո սենյակը, նորեկների աչքին ընկավ մեկ-երկու կիսամաշ անկողին, որոնք դրված էին սենյակի անկյունում: Դրանք հավանաբար ձեռք էին բերվել Երևանում:

Ահա այս չափազանց խղճուկ վիճակում էր հայտնվել Վանից գաղթած Զադոյի ընտանիքը: Նրանց հետ էր ապրում նաև Սաթենիկի եղբայրը՝ Մնացականը՝ Մնոն: Նա ընդամենը չորս տարի առաջ էր ամուսնացել, և նրա կինը՝ 20-ամյա Գոհարը, իր երկու երեխաների հետ, գաղթի ճանապարհին զոհ էր գնացել թուրքի գնդակին: Մնոն, իր փոքրիկ գերդաստանով, Նանիկենց ընտանիքի ընկերակցությամբ էր գաղթել Վանից: Եվ քանի որ ինքն այժմ մնացել էր միայնակ, այլ տեղ չուներ, ապա բնակվում էր Նանիկենց հետ:

Մեծերը տեղավորվեցին հատակին փռված հնամաշ շորերի վրա, իսկ երեխաները մնացին դրսում: Մնացին դրսում ո՛չ թե սեղ չլինելու պատճառով, այլ որովհետև նրանք դեռևս շա՜տ ու շատ բան ունեին միմյանց հաղորդելու գաղթի ճանապարհից կրած իրենց տպավորություններից:

Սենյակում մի պահ խոր լռություն տիրեց: Այնուհետև կանայք սկսեցին արտասվել և ա՜խ ու վա՜խ անել: Լռությունը խզեց Զադոն, որը բոլորից տարիքով էր, կյանքի շա՜տ ու շատ փորձություններից անցած, համարձակ էր և քաջ: Այդ նրա շնորհիվ էր, նա էր, որ սայլով կարողացել էր իր ընտանիքը անկորուստ տեղ հասցնել: Նա ուղղակի դիմեց ներկաներին.

— Է՛, խոնք-տի՛նցանք, ինչպե՞ս խաապ, ո՞ւր էիք, ինչի՞ էսքան ուշացար:

— Տաս օր մնացինք Վաղարշապատ: Անավոր վիճակ էր էնտեղ, սոխ էր ու ճամճարակ,—պատասխանեց Գրիգորը,—դիակներ էր, որ կխառնեին վանքի պատերի տակեն, փողոցներեն, տներեն:

— Վազգենն էլ խիվա՞նդ էր,—պատճառաբանեց Սաթենիկը,—մկա էլ լավ չի:

— Ես տեսա մենակ Վազգենին, ձեր մնացա՛ծ լաճեր ուր են,—հարցրեց Նանիկը:

— Նրանք ճամխին մնացին,—հազիվ զսպելով իր հուզմունքը, պատասխանեց Գրիգորը: — Վարդանենք էլ ուրանց էրկու էրեխեք թողին:

— Մեր ընտանիք կործանվե՛ց,—հուզումնախառն ասաց Վարդանը և շուռ եկավ, որպեսզի ոչ ոք չտեսնի իր արցունքները:

Այս խոսքի վրա Զարուհին ուշաթափվեց: Ջուր շփելով և ուշքի բերելով նրան, հանդիմանական, բայց խիստ փաղաքշական տոնով կնոջը դիմեց Վարդանը.

— Ասոված տվե՛ց, Աստվա՛ծ էլ տարավ, քե խավաքի, էրեխա չես, Զարեր:

Այսպես նրանք երկա՛ր զրուցեցին, ծանոթացան մեկը մյուսի վիճակին, ճանապարհին նրանց հետ պատահած դեպքերին և... ավելի հուզվեցին՝ եթե, իհարկե, նրանք զերծ չէին դառնությունից և հուզմունքից:

Բոլոր այս զրույցի ընթացքում Մնոն լուռ էր, չէր մասնակցում այս խոսակցություններին: Այս բանը նախ կարելի էր բացատրել նրանով, որ նա կրտսերն էր խոսակիցներից և ուներ հարգանք ու ամոթխածություն նրանց նկատմամբ: Բայց առավել լուրջ պատճառն այն էր, որ նա կորցրել էր իր երեխաներին, երիտասարդ կնոջը, կին, որին ինքը շա՛տ էր սիրել և նվիրվել նրան իր ողջ էությամբ՝ ամուսնական այս կարճ ժամանակաընթացքում: Չէ՞ որ նրանք միմյանց խոստացել էին կյանքի լուսավոր հեռանկարներ: Բայց այս ամենը մի ակնթարթում ի չիք դարձավ:

Նկատելով Մնոյի՝ երբեմնի այդ աշխույժ ու կենսասիրող մարդու անտարբերությունը, Զադոն վեր կացավ տեղից, մոտեցավ նրան, փաթաթվեց և հուսադրիչ տոնով ասաց.

— Ցավ բոլորիս համար էլ մեծ ի, Մնո՛, ի՛մ ախպեր: Դու էն մարդ չես, որ լո՛ւռ նստես: Ամոթ ի, մենք քե լավ կիտենք: Ճիշտ ի, մեր ընտանիք Ասոտուծո օրհնությամբ, փա՛ռք Իրեր մեծ զորության, ապահով, առանց մարդտուծո օգնության, բայց կային կոթուտի տեղ խաապ, պան չունեմ ասելու, Ասոտուծո կամքն ի, բայց ձեր ցավ նաև մեր ցավն ի, մի մոռնա: Ինչպե՞ս մենք կանանք անտարբեր մնալ ձեր բոլորի էս մեծ ցավերուն: Խոսի՛ր, որ փարատես և՛ քյո, և՛ մեր մոլթյալ մտքեր:

Բոլորը նկատեցին, որ այս առնական և հաղթանդամ մարդու աչքերին անսպասելիորեն նկատվեցին արցունքի կաթիլներ:

Այնուհետև, որպեսզի առժամանակ վերջ դրվի այս հոգեմաշ զրույցին, Զադոն դիմեց կնոջը.

— Ախչի Նանիկ, ինչի՞ ես նստե,—ձգտելով իր խոսքին հավասարակշիռ երանգ տալ,—իսոնք ճամխից են իկե, հոգնած են, սոված, մի պան սիր, ուտեն:

Այս խոսքի վրա կանայք վեր կացան: Քիչ հետո սփոռց փուվեց գետնի վրա, և համեստ ուտեստեղենով լցվեց «սեղանը». հաց, պանիր, խաշած լոբի,

փաթաթես և ևսև... մի մեծ սափոր արցունքանման դառնահամ Աշտարակի գինի:

Երեխաներին ևերս կանչեցին, և բոլորը միասին սեղան ևստեցին: Առաջին իսկ հայացքից Սաթենիկը նկատեց, որ Վազգենն այլևս այն հիվանդ երեխան չէ և գտնվում է ուրախ տրամադրության մեջ: Եվ ընդհանրապես բարձր տրամադրության մեջ էին բոլոր երեխաները:

Շուրջ երկու ամիս դադարից հետո, վերջապես, գաղթականների այս ընտանիքների հարկի տակ, ճաշի սեղանի շուրջ, առաջին անգամ համատեղ հնչեց «Հայր մեր» աղոթքը: Այնուհետև սեղանն օրհնեց Գրիգորը.

— «Ճաշակեացուք խաղաղութեամբ զկերակուրս, որ պատրաստեալ է մեզ ի Տեառնէ. ամէն»:

Ապա սկսվեց, այսպես ասած, կերախումը:

Սեղանի շուրջ մեծերի տրամադրությունն այդպես էլ չբարձրացավ: Նրանք համարյա չէին ուտում, միայն ձևացնում էին, թե ուտում են: Իսկ երեխաները մեծ հաճույքով օգտվում էին սեղանից: Վազգենն իրոք կարծես ապաքինվել էր:

Երբ գինով լի մի քանի գավաթներ դատարկվեցին, ամեն անգամ բաժակաճառի փոխարեն հնչելով՝ «Խաղաղություն աշխարքին», նոր միայն Զադոն համարձակվեց շոկել մթնոլորտը.

— Տղա Վարդան, լսիր էի, որ տու ընկիր էիր թուրքի ձեռ: Ի՞նչպես պատահեց, որ անվնաս տուս պրծար էտա անօրեն շներու ոհմակեն:

Վարդանը մի փոքր ուշացումով սկսեց խոսել.

— Չեմ թաքցնի ձեզնե, ես անդամ եմ դաշնակցական կուսակցության: Հանցնարարություն էի ստացե, որ սելով, որին լծված էին էրկու եզներ, զենք ու զինամթերք տանեմ թիրքեր: Զինամթերք ապահով տեղ խասուցելու համար ինձ տվիր էին էրկու հրացանակիր: Ճամխին թուրքի մի ջոկատ, որ հավանաբար տեղյակ էր էդ մասին, անսպասելի հարձակվեց, շրջապատեց մեզ և գրավեց սել: Կռվի մեջ սպանվեցին սել ուղեկցող էրկու հրացանակիրներ: Բնականաբար ինձ ձերբակալեցին: Ես մտածեցի, որ ինձ համար ամեն ինչ վերջացած ի, մկա ուր որ ի թուրքերեն մեկն ու մեկ կառնի հրացան ու կգլխադակահարի զի: Այլևս փրկության հույս չունենալով, կմտածե՞ք, ես էտ տեսակ մահ բարեբախտություն կհամարեի: Ես կվախենայի ավելի սարսափելիեն. գլխատել, արոխողխող անել, մաս-մաս անդամահատել... Բայց, ի բարեբախտություն ինձ, ինձ չսպանեցին: Խմբի թուրք ղեկավար թուրքերեն կարգադրություն արեց ուր ենթականերուն, մեյ պան, որ ես կխասկնայի թուրքերեն, որ ինձ ապահով պիտի խասցնեն ուրանց վերադասի՝ հարյուրապետի մոտ: Հույսի առկայծման նշույլ հայտնվեց իմ մեջ: Աստված մեկ ի, հույսի տոներ՝ խազար: Նրանք սել քշեցին ինձ համար անհայտ մի ուղղությամբ: Ձի կապե և գցիր էին սելի մեջ: Իմ աչքեր չէին կապե՝ մտածելով, որ ես շուտով կմեռնեմ: Շուրջ կես ժամ այսպես, մահ աչքիս առաջ ունենալով, սել քշիցին: Հանկարծ, կարծես, երկնքից հրաշք կատարվեց: Հայկական մի սպառազինված ջոկատ հարձակվեց սել և զի տանող թուրքական խմբի վրա: Մի քանի թուրք սպանվեցին, կենդանի մնացածներ՝ փախան: Փրկվեց սել՝ ուր զենք ու զինամթերքով, նաև... ես: Հետո իմացա, որ ամբողջ ճամխին գաղտնի կերպով մեզ հետևել է հայկական մի սպառազինված ջոկատ՝ զենք ու զինամթերք անվտանգ տեղ խասուցելու համար:

— Կնշանակի՝ հայկական ջոկատի գլխավոր նպատակ սել՝ զենք և զինամթերք փրկելն էր,—ասաց Զադոն:

— Ապա չէ՞ գի՝ իմ խորոտ աչքերու համար,—ինգնախառն ժպիտով, եթե այն ժպիտ կարելի է համարել, պատասխանեց Վարդանը:

— Ապա ի՞նչպես էլավ, որ տու թողիր քյո մարտական թիրքեր ու միացար էս խեղճ ու կրակ քախթականներու խմբին,—հարցրեց Մնոն:

— Ես պաշտոնական գինվոր կամ կամավոր չեմ էլե, այլ կկատարեի կուսակցության հանցնարարություն,— պատասխանեց Վարդանը:— Երբ քախթի հրաման էլավ, մեզ թողին մեր ընտանիքներու խետ՝ տեր կանգնել և օգնել ինոնց՝ դեպի Երևան քախթի ճամխին:

— Իսկ Երևան պիտի շարունակե՞ս քյո կուսակցական քորձունեությունը,—հարցը շարունակեց Մնոն:

— Մկա՞, էս խառնակ վիճակի՞ն,—հարցրեց Վարդանը:

— Խա, հե՛նց մկա: Մկա՛ ի պետք կուսակցական նվիրյալ քորձունեություն, թե չէ մեր ժողովուրդ ոտի տակ կեթա,—ասաց Մնոն:

— Մկա շուն տիրոջ չի ճանչնա, մկա առավ-փախավ ի: Ով ումից ի՝ վերացիր ի: Մկա յուրաքանչյուր մարդ պիտի ջանա փրկի ուր կյլոխ: Ի՞նչ երկիր, ի՞նչ կուսակցություն,—իր դժգոհությունը հայտնեց Գրիգորը:

— Վան մեր ազգային քորձիչներ կպոտայի՞ն, կկանչեի՞ն՝ մե՛նք, մեր ա՛զգ, մեր ժողովո՛ւրդ, մենք չորս խազար տարիեն ավելի կապրենք աշխըրքի քաղաքակիրթ ժողովուրդներու շարքին: Է՞ս ի մեր քաղաքակիրթ ժողովուրդ: Է՞ս վիճակով ի ապրե մեր քաղաքակիրթ ժողովուրդ: Մեռնի՛ էս տեսակ ժողովուրդ, քյան թե ապրել շարունակի՝ ոտաց տակ քյաշ կյալով,—ասաց Մնոն:

— Կյո հոգեվա՞րք ի կապրենք, արդեն մեր վերջ էկիր ի,—վրա բերեց Գրիգորը:

— Մի՛ հուսահատվեք, տղեկներ, Աստված մեծ ի, մեզ վրա էլ կպացվի Աստուծո լուսավոր առավոտ,—հուսադրիչ տոնով ասաց Զադոն:

— Դարերով սպասի՛ր ենք, մկա՞ էլ սպասենք, երբ մեզ չորս կողմե կկոտրեն, կճոշոտեն: Մենք մկա նման ենք էն լուռ ու մունջ անմեղ ոչխարին, որ ուր կյլոխ կախե, կսպասի դասաբի սրած տաննակին,—կրկին իր դժգոհությունը շարունակեց Մնոն:

— Ես մեյ պահ կիտեմ. ո՛ր ժողովուրդներ ու ազգեր, որոնք մեզ խետ կապրեին ժամանակին և մկա չկան, ինոնք պատվո՛վ, նամուսո՛վ մտիր են պատմության ասպարեզ և պատվո՛վ ու նամուսո՛վ էլ հրաժեշտ են տվե աշխըրքին: Մենք, չեմ կիտի, պատվո՞վ ենք մտե ժողովուրդներու և ազգերու պատմության ասպարեզ, թե չէ, բայց մեյ պահ հայտնի ի, որ մենք,—այստեղ մի փոքր դադար տալով շարունակեց Գրիգորը,—անպատի՛վ կերպով կշարունակենք մեր քոյությունը:

— Ի՛նչ կառաջարկես, ի՞նչ անենք,—հարցրեց Զադոն:

— Ինչ անե՞նք... Շշարունակենք մնալ ոչխար, գենք առնենք ուր ձեռ, կովնո՛ք և պատվով հրաժեշտ տանք էս աշխրքին: Էսա ազգ չի, էսա ժողովուրդ չի: Մեզ խալխն, մաշին,—օգնության եկավ Գրիգորին Մնոն:

— Լավ ի կասես, փոա՛վո,—ծափ զարկելով ու հեգնախառն բարկացավ Զադոն:— Տու կիտե՞ս, ինչ ի կասես: Տու մի ազգու ճակատագրի խետ կխաղաս:

— Ապա չէ՛, «փարոյական հաղթանակներով» մեզ սիրփենք ու շարունակենք «քոյատևել»: Ես թքի՛ր եմ վեր էտ «փարոյական հաղթանակներուն», խերիք ի,—միտքը շարունակեց Մնոն:— Սկսե՛լ՝ ինչպես մարդ, կամ... մեռնել՝ պատվո՛վ:

— Մկա ո՞ւմ դեմ կռվենք, ռուսո՞ւ: Չէ՞ որ էստեղ իշխանություն ռուսուն ի: Ճիշտ ի, պատմական մեր խողերն են, բայց վերին իշխանավոր ռուսն ի: Էնի քրիստոնյա ժողովուրդ ի, թուրք չի: Մեր ձեռ պիտի թալենք վեր ռուսուն,—ասաց Զադոն:— Մեր հո՛ւյս, մեր ապավե՛ն ռուսն ի: Ռուս չէ՞ր, որ մեզ փրկեց էս արհավիրքեն:

— Զադոն ճիշտ կասի, մեր հույս-ապավեն ո՛ւսն: Ի փրկություն մեզ, մեր հույս պիտի տնենք վեր ռուսուն: Փայց Ռուսաստանն էլ մկա լավ վիճակի մեջ չի: Փոլշևիկներ մկա մեծ ուժ ունեն, փաևակ համարյա իրենց կողմն ի: Փոլշևիկ կուզի տապալի ցար: Իրենց կօգնեն Կովկասի, Միջին Ասիայի, Մերձբալթիկայի երկրներ: Հայ փոլշևիկներ նույնպես իրենց կ՛ողմն են,—վրա բերեց Գրիգորը:— Հայաստան խառնակ վիճակ ի, մեծ խլրտում ի սկսե...

— Եթե, իհարկե, Հայաստա՛ն քոյություն ունի,—խոսքի մեջ մտավ Մնոն:

— Փոլշևիկ, մոլշևիկ չեմ կիտի: Ես մեյ պան կիտեմ, որ մենք պիտի ռուսու միջոցով փրկենք Հայաստան,—ասաց Զադոն:

— Իսոնք փոլոր խաղե՞ր են, ջանմ, և մեր խելքի պան չի,—նորից մեջ մտավ Մնոն:

— Էս փոլոր խաղեր մեր կյանո՞ւն պիտի կոտրվի,—ասաց Գրիգորը,— մեր ազգ ոտաց տա՛կ պիտի էթա:

— Այո, էս խաղերուն մենք պիտի խաղալիք չտառնանք, խելոք պիտի մտածենք: Մենք ուժ չունենք, որ փրկենք և՛ մեր պատիվ, և՛ մեր ժողովուրդ: Մեր հո՛ւյս, ապավե՛ն ո՛ւսն ի,—եզրակացրեց Զադոն:

Այսպես երկար զրուցեցին, տաքացան, խաղաղվեցին, նորից հիշեցին իրենց մոտակա անցյալը, կերան, խմեցին: Գինու սափորը մի քանի անգամ նորոգվեց:

Երեխաներն արդեն վաղո՞ւց տաքուկ անկողինների մեջ ընկել էին Մորփեոսի գիրկը:

Համարյա լուսաբաց էր, երբ բոլորը պառկեցին գետնին փռված հնամաշ հագուստների վրա և կարճատև խոր քուն մտան:

Վաղ լուսաբացին դուռն ուժգին ծեծեցին: Տնեցիները չանհանգստացան, բայց միայն մտածեցին, թե այսքան վաղ ո՞վ կլինի դուռը ծեծողը: Դռան ծեծոցը նորից կրկնվեց: Նաևիկը ստիպված վեր կացավ և, քանի որ քնել էր հագուստներով, դուռը բաց արեց: Ներս մտան երկու մեծահասակ մարդիկ՝ կին և տղամարդ: Նաևիկն իսկույն ճանաչեց նրանց:

— Աստված խերն անի, Մարկոս աղա, ներս հրամեցեք,—ասաց Նաևիկը և դռան շեմից մի կողմ քաշվեց, որպեսզի նորեկները ներս մտնեն:

— Երևի անհարմար ի, փոլոր քնած են,—մի պահ ընկրկելով ասաց նորեկ տղամարդը:

— Լուսապաց մոտ էր, երբ պառկեցինք,—արդարացավ Նաևիկը:

— Ավելի լավ ի մենք ոտս նատենք, մինչև իրենք քնից էլնեն,—անհարմար զգալով ասաց նորեկը:

Բայց կինն անհամբեր էր, չկարողացավ զսպել իրեն:

— Շոտ արթնացրու իրենց, Նաևիկ:

Մարկոս աղան Սաթենիկի մորական մոտ ազգական էր, կլիներ շուրջ 60 տարեկան: Բարձրահասակ էր, ահիռավուն, գեղեցկատես ապիտակահեր: Առաջին իսկ հանդիպումից զրուցակիցը կզգար, որ նա մանկությունից իսկ սովոծ վարել է բարեկեցիկ կյանք: Նույնքան գեղեցիկ էր և բարեհոտ նրա կինը՝ Զարուհին՝ Զարուխը, որը համարյա հասակակից էր իր ամուսնուն;

Սակայն նրա գլխին դեռևս նոր-նոր էին հայտնվել ալեխառն վարսերը: Բարեկեցիկ կյանքին զուգահեռ, նա ուներ նաև չափազանց մաքուր և ազնիվ հոգի: Նա կարծեք մի գթության քույր լիներ շրջապատի համար:

Սակայն այս անզուգական բարի, համեստ և բարեպաշտ ընտանիքն ուներ հոգեխռով և անդարմանելի մի ցավ. նրանք... անժառանգ էին:

Մարկոս աղան հավասարակշիռ մարդ էր, իսկ Զարուհի-Զարուխը՝ անմիջական. զգացմունքային: Ահա հենց այս բնավորության գիծն էր պատճառը, որ վերջինս չկարողացավ զսպել իրեն և ատիպեց Նահիկին՝ արթնացնել քնածներին: Հյուրընկալն անմիջապես նկատեց, որ այդ գեղեցկատես և բարի կինը կարոտախտառն հայացքը չի կտրում քնած նորեկներից: Նահիկն արդեն պատրաստվում էր ձայն տալ նրանց, երբ հանկարծ Գրիգորը, այս խոհակցություններից արթնանալով, վեր թռավ տեղից և ձայնեց

— Մարկո՞ս աղա:

Գրիգորի ձայնից բոլորն արթնացան: Նորից գրկախառնություն, նորից հուզմունք, արտասուք, ցնծություն...

Հենց այս պահին ներս մտավ Զադոն: Նա չէր գիշերել տանը:

— Պարի լուս փոլորիդ,—ջերմագին կերպով բոլորի լուսաբացը ողջունեց Զադոն:

— Խազարի պարի,—պատասխանեցին բոլորը:

Զարուհի-Զարուխը հուզված էր, միայն գլխի ջերմագին շարժումով պատասխանեց նրան:

Երբ բոլորը տեղավորվեցին հատակին փռված շորերին, Զադոն դիմեց Մարկոս աղային:

— Տուն արդեն առա՞ք:

— Խա, էս էրկու օրս կքյաշվենք նոր տուն,—պատասխանեց Մարկոս աղան:

— Հարմարություններ լա՞վ ի:

— Մեկհարկանի տուն ի՝ ուր բաղ-բախչով:

Մարկոս աղան իր կնոջ հետ նախքան գաղթը՝ մեկ տարի առաջ էր տեղափոխվել Երևան և բնակվում էր Զառաբի-Խանում, դեմ-դիմաց Զադոյի բնակարանին: Օրերս նա տուն էր գնել Կոնդի բարձունքի փեշերին՝ դիմահայաց Հրազդան գետին: Տունը բաղկացած էր մի քանի սենյակներից, ուներ խաղողի ընդարձակ այգի, տանձի, խնձորի, ծիրանի, թթի և այլ ճառնեական:

— Իսոնք,—մատնացույց անելով նորեկներին,—ճիշտ ժամանակին են ինկե,—ասաց Մարկոս աղան:

— Ի՞նչպես խասկնանք, Մարկոս աղա,—հարցրեց Զադոն:

— Էրեկ կիշե՛ր իմացանք իսոնց մասին: Զարուխի խետ որոշեցինք Զադոյի-Խանի մեր տուն տալ իսոնց:

— Խոկյո՞վ-մարմնո՞վ պարտական ենք քե, Մարկոս աղա,—անակընկալի գալով նրա խոսքից և խոնարհաբար գլուխ տալով ասաց Գրիգորը:— Աստուծո օրհնություն ձեզ վրա:

— Հենց էսոր տեղափոխվեք,—ասաց Զարուհի-Զարուխը:

Հարազատների միջև սկսվեց ջերմագին և արտալի զրույց, որը տևեց բավականին ժամանակ: Երեխաներն արթնացան, հագնվեցին և դուրս եկան բակ:

Այստեղ Մարկոս աղան վեր կացավ տեղից, իր խոսքին ազդեցիկ տոգ տալով ասաց:

— Քյաճի որ կիրակի առավոտ ի, իկնք փոլոս միասին էթացք եկեղեցի, փառաբանենք Աստծուն և իմոր գթությունն ու ողորմածությունը հայցենք: Տիրոջ գորությամբ էր, որ փոլոս փրկվեցիենք: Ճիշտ ի, կաց ցավալի կրոտատեր: Աստված ողորմի՞ իմոնց խոկիմեերուն:

Բոլոր մեծերը դուրս եկած տացից և ուղղվեցին դեպի Ս. Սարգիս եկեղեցի: Միայն Նաճիկը մնաց տանը, որպեսզի ճակի երեխաներին:

Դուրս գալուց առաջ Մարկոս աղաճ ելբի մոտ շրջվեց դեպի արևելք, խաչակնքեց երեսը, հայացքն ուղղեց դեպի երկինք և արտասանեց.

— Տե՞ր Աստված, Երկնային Քո բարձունքներից թող Քո ամենակարող Աջը զորավիգ լինի էս տատապյալ ժողովրդին: Ամեն:

ՎԱԼՈՒՅԱՆ ԱԲՐԱՀԱՄԻՑԱՆ

ԼՈՒՑԻՒ ՅՈԼՔԵՐ

Վերջին տասնամյակների ընթացքում հոգևոր գրականության խնամող հրատարակչության վրա հուսադրող ցոլացումներ եղան, ցոլացումներ, որոնք իրենց շնչող ներկայությամբ ընթերցողի համար դարձան հորդորում կոչեր վերադարձի, վերհանումի: Վերադարձ դեպի սկիզբ, դեպի լույսի ակունք, որից մեզ հեռացրել էին տխուր ժամանակները, վերադարձ ոչ միայն դեպ Միրոք, այլև դեպ լույսով լիալիր հոգևոր տարածք: Վերադարձի այս տիրական շնչ-ը կա Մեծի Տանն Կիլիկիո Տաթողիկոս Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի (այժմ՝ Ամենայն Հայոց Տաթողիկոս) գործերում: Այդ գաղափարի անդրադարձ ենք գտնում Գրքի ցուցահանդեսների առիթով գրված նրա «Խոսքեր» մեջ, որոնք մեկտեղվել են հեղինակի «Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց» խորագրով հատորում (Անթիլիաս, 1990):

Այդ «Խոսքերը» ոչ այլ ինչ են, քան օրհնություններ ծրում ներբողներ ու փառաբանություններ, որոնցում հետևյալ կերպ է գնահատվում Գիրքը. «Հայ ժողովուրդին կյանքին մեջ Գիրքը ճնած է Սուրբ Գիրքով՝ Աստվածաշունչ մատյանով: Հայ Գիրքը սուգցած է երկինքեն և կամ երկնված է երկնայնացած միտքին մեջ Հայոց երկրեն ճնած և երկիրը երկնքին կամարակապած Սուրբ Լուսոյի տեսիլքին մեջ» (40):

Գարեգին Վեհափառի համար Գիրքը, Գիրքը երկնատուր պարգև է, երկինքը երկիր իջեցնող սանդուխք, բայց նաև՝ երկիրը երկինք բարձրացնող..., մարդկային միտքը երկինքող միջոց ու պայման: Գրքի ճորոգող, նկարագիրը բարեկերտող այս գորությունը յուրացնած է «Հայ գիրքը՝ հանգույց հավերժության և ժամանակի» գլխում: Վկայաբերելով Պլատոնի «Ժամանակը շարժում պատկերն է աճչարժ հավերժության» խոսքը՝ հեղինակը հարց է տալիս, թե ինչպե՞ս, ի՞նչ եղանակով սրտամորին կարող է բռնել հոսանուն ժամանակը «և այսպես ժամանակը պատմության վերածել ու պատմությունը հավերժական գանձի ու դողանջի»: Հավերժի միտքը ժամանակի մեջ տեղի է ունենում անձյութի ձյութակազացումով, հոգու առարկայացումով, երևույթ, որի անունը «մշակույթ» է: Ուստի մարդու «տեղծագործությունը իր հարատևառագույն իմաստին մեջ, հոգեգործություն է ձյութին վրա, հոգիի շարժումն է ձյութին մեջ, և սրով՝ ժամանակին մարմնացումը և ձյութին միջեն հոգիի մանձացումն ու ներշնչողական ուժականացումը պատկերացումը» (69):

Իր բնույթով ոգուն և ոգեկանությանը շատ ավելի մոտ է Գիրքը, որ պատկանելով մշակույթին՝ վեր է մշակույթից, որովհետև նրա մեջ, ի տարբերություն մշակույթի այլ մարզերի, շատ ավելի բացորոշ կերպով է հավերժը հայտնում Իր խորհրդավոր ներկայությունը ժամանակի մեջ: Այս է պատճառը, որ Գիրքը առավել ընտանի ու հարազատ ճանապարհն է Վերադարձի, ժամանակը հաղթահարելու ամենահարմար եղանակը: «Այս հասկացողությամբ իր կյանքն իրագործած մեր ժողովուրդը,—նկատում է գեղասեր եկեղեցականը,—իր հոգիին և հոգեպաք երթին փարոս ընտրվ Գիրքը, որովհետև անոր մեջ գտավ իր հավիտենության հուշարարն ու լուսարարը, մատակարարն ու մատուակը...» (71): Սակայն գրապաշտ մեր ժողովրդի մեջ նկատվում է նաև ցավալի մի անտարբերություն Գրքի նկատմամբ. ժամանակի ամենաստորին տեսակի՝ առօրեականի մեջ մխրճված նրա զավակները մոռացության են մատնել միլիոնավոր գրքերի ճակատագիրը, գրքեր, որոնք հեծում են նկուղների, գետնահարկերի խոնավության մեջ: Գիրքը պանծացնող հեղինակը ցավ ի սիրտ արձանագրում է այս փաստը և նախկին հույս հայտնում. «Եթե Հայությունը իր ողջ կյանքի ընթացքին կրցեր է «Ովսաննա» կարդալ Հայ Գիրքին, մենք չենք կրնար այսօր «ի խաչ հան զդա» գոռալ ամբոխային խոլ, անգիտակից և ինքնակործան հոգեբանության ոճով» (78):

Հատորի ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ նրա մյուս բոլոր «խոսքերի» հիմքում ևս ընկած է Գրքի միջոցով ժամանակի հաղթահարման և վերադարձի գաղափարը՝ («Հայ Գիրքը՝ Պատիվն հայուն», «Հայ Գիրքը՝ Պարտքը հայուն», «Հայ Գիրքը՝ Տագնապը հայուն», «Հայ Գիրքը՝ Ճանապարհը հայուն», «Հայ Գիրքը՝ Զրահաւոդերձը հայուն», «Հայ Գիրքը՝ Օճաւասփյուռ հայության»...), որ իր մասնավոր, սևեռուն արծարծումն է գտել նաև հեղինակի 1991-ին հրատարակած «Ան-ժամանակը ժամանակի մեջ» վերնագրով քարոզների ու հոդվածների ժողովածուի մեջ: Այս ժողովածուի հետ օրգանական կապի մեջ է Հեհափառ Վայրապետի մյուս գիրքը՝ «Հայաստանյայց Եկեղեցին իր «ծառայական կերպին մեջ»:

Ինչպես Գիրն ու Գիրքը, Եկեղեցին ևս Ան-ժամանակը ժամանակին, հավերժը այսօրին կամրջող միջոց է: Հայի համար Գիրքը Եկեղեցի է ու Եկեղեցին՝ Գիրք: Ազգային պատմության մեջ ձեռագիր մատյանը, Գիրքը իր հոգևոր արժեքով ու արժանիքով ինքնօրինակ մագաղաթյա տոճան է և հավերժի պարունակ: Ինչպես Եկեղեցին, Գիրքը ևս երևաց «ի մեջ մարդկան (Զգեցեալ զկերպ ծառայական» (Փիլիպ. Բ 7): Տիրոջ համար ասված այս խոսքը, որ բարբառում է շարականագիր հեղինակը, նոր որակ ու բովանդակություն է ստանում երկու համաբնույթ իրականությունների համար՝ Գրքի և Եկեղեցու:

Հայ Եկեղեցու սրբազան ավանդության մեջ հոգևորի (ոչ հոգեկանի) համար վերապահված դերը մի տեսակ կիսվեց Եկեղեցու «ծառայական» գործունեությամբ, գործունեություն, որ ունի դրսևորման իր կերպերն ու եղանակները: Հեղինակը քննախույզ հայացքով պեղում է Սգգային Եկեղեցու ծառայության ոլորտները՝ դրանք բաժանելով երեքի. 1) Կրոնական-բարոյական, 2) Մշակութային-քաղաքական և 3) Ազգային-քաղաքական: Սակայն նա այդ անում է ոչ թե իբրև կողքից դիտող մանրախնդիր հետազոտող, այլ ջերմ պաշտպան Հայ Եկեղեցու ավազանի մեջ ծնված մշակութային արժեքների:

Հեղինակը գիտե ընդգրկուն հայացքով արժևորել դրանք՝ ընթերցողին պարգևելով այն էականն ու կարևորը, որոնք տարրացած են տվյալ երևույ-

թի մեջ: Գնահատումի այդ ոգին արդեն ներկա է Գրքի գլուխների վերնագրերի մեջ իսկ. «Քրիստոս՝ Տեր և Ծառա», «Եկեղեցիի՝ մարմին Քրիստոսի և ժառանգորդ Ծառայության», «Հայաստանյայց Եկեղեցիի՝ մի ճյուղ քրիստոնեական Եկեղեցու Ծառի վրա»), որոնց մեջ տրվում է երևույթի ընդհանուր եկեղեցաբանական գնահատականը: Երկրորդ մասը բովանդակում է գնահատումը Հայ Եկեղեցու հոգևոր, մշակութային ծառայության: Այստեղ արժևորվում է Եկեղեցու ընկերային դերը, մասնավորաբար հիշվում է Մեծն Ներսեսի սխրանքը, «որ Օրմանյան Պատրիարքի խորաթափանց բնորոշումով հանդիսացավ «Լուսավորիչ սրտից» հայ ժողովրդի, այնպիսի բարեկարգություններ ներմուծեց հայ ժողովրդի կյանքի մեջ, որ քրիստոնեությունը սկսեց գործնապես և արդյունավորապես արտահայտվել մարդոց **առօրյա կենցաղի** մեջ, ինչպես և տեղ գտավ հայ ժողովրդի **ընկերային իմաստության և հասարակաց բարքերի** մեջ» (41):

Այսօրինակ բնորոշումով հեղինակը արձանագրում է հայ հասարակության քրիստոնեացման ու եկեղեցագործման մեջ Եկեղեցու կատարած դերը: Եկեղեցագործման այդ ընթացքը շարունակում է ընդլայնվել՝ ներառնելով հոգու և մտքի նորանոր տարածքներ: Այս մասին խոսվում է «Հայաստանյայց Եկեղեցիի՝ օջախ հայ մշակույթի» գլխում: Այդ օջախի կրակը բորբոքող այուքը եղավ Աստվածաշունչ մատյանի հայացումը, որն իր խնկաբույր արծարծումով աստիճանաբար վանում էր մթնոլորտի մեջ տակավին ներկա հեթանոս անցյալի մտապատկերները: Նյութն իր տեղը գիջում էր Որդուն, խավարը՝ Լույսին: Հայոց գիրն առաջին անգամ ներկայացավ իրեն ընտանի տարազի մեջ, որովհետև թե՛ մեկի և թե՛ մյուսի համար ներշնչանքի աղբյուրը նույնն էր՝ Սուրբ Հոգին: «Արդարև, Աստվածաշունչի թարգմանությունը՝ առաջին քայլը մեր գրականության, եղավ առաջին և մեծագույն ծառայությունը **մշակութային** գետնի վրա» (61):

Աստվածաշունչ մատյանի հայացումը մեծագույն խթան հանդիսացավ թարգմանական այլաբնույթ աշխատանքների համար: Թարգմանվեց և հրապարակ հանվեց եկեղեցու հայրերի ժառանգությունը, որի նպատակը Աստվածաշնչի մեկնաբանություն էր: Սա շատ կարևոր էր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի ջանքերով սկսված հայոց դարձը իր լրումին հասցնելու համար: Հայի հոգու ուխջ ծագած քրիստոնեական լույսը առավել պայծառացավ իմացական արժեքներով: Այդ երկերի «մեջ արտահայտված գաղափարները, աշխարհայացքները դարձան սեփականությունը հայ ժողովրդի» (62):

Հայ ինքնուրույն միտքը ծնվեց թարգմանական մատենագրության ավազանի մեջ: Հեղինակն ամենայն իրավամբ նկատում է, որ «թարգմանությունը, սակայն, սոսկ մի սկիզբ էր հայ գրականության համար: Իր ինքնությունը և առանձնահատկությունը Աստուծո Շունչին և Խոսքին մեջ գտած և ազնվացված հայ միտքը՝ բնականորեն պիտի տար իր սեփական արդյունքները, չհանդուրժելով մնալ և պարփակվել ուրիշի մտածման շրջագծին մեջ, որքան էլ որ ընտանի, մտերիմ լիներ այդ շրջագիծը իր համար»: Ինչպես գարնանային ջրերից վարարած գետը չի կարող մնալ իրեն «պարտադրված» հունի մեջ, այնպես էլ հայ միտքը չէր կարող մնալ, ճիշտ է, իրեն հոգեհարազատ և այնուամենայնիվ օտար մշակույթի հունի մեջ:

Թարգմանական երկասիրությունները լուրջ խթան դարձան հայ ինքնուրույն մտքի զարգացման համար: Այդ միտքը կազմեց շարականագրությունը, արթախոսական գրականությունը, մեկնողական կամ մեկնաբանական աշխատությունները, ճառախոսական կամ ճառագրական, վարդապետական,

աստվածաբանական, դավանաբանական աշխատությունները: Անդրադառնալով այս վերջին բնագավառին՝ Վեհափառ Հայրապետը գիտական իրատեսությամբ արձանագրում է, որ այն «հաճախ արտահայտվել է ընդելուզված ձևով մյուս գրական սեռերի կամ ճյուղերի հետ: ...Պատճառներից մեկը այս երևույթի համար այն է, որ մեր հայրերը քրիստոնեական Եկեղեցու հին շրջանի «հայրաբանական» (Patristique) ժամանակների հարազատ ոգու համաձայն՝ աստվածաբանությունը չեն մշակել որպես մտքի տեսաբանական դիսիպլին, այլ աստվածաբանության մասին գրել են միշտ **քարոզագրական կամ մեկնաբանական դիսիպլինների** մարզում, որովհետև աստվածաբանությունն ընկալել են հարաբերաբար քրիստոնեական կյանքին և ոչ որպես մտահղացումների և բնազանցական որոնումների մարզ. ինչ որ հետագայում պատահեց «Սքոլաստիկյան» (Scolastique) դպրոցով ու՛ Միջնադարում Եվրոպայի մեջ» (76):

Գիտաբանական վերլուծումից հետո հեղինակը գրում է այդօրինակ գրականության (Եզնիկ Կողբացի՝ «Եղծ աղանդոց», «Գիրք թղթոց», «Կնիք հաւատոյ», Հովհան Օձնեցու, Խոսրովիկ Թարգմանչի և այլոց երկերը) հրապարակ գալու պատմաքաղաքական անհրաժեշտության մասին: Եկեղեցու հանձն առած ծառայության մյուս բնագավառը ծիսական գրականություն է. Աղոթքներ, Պատարագամատույց, Ժամագիրք, Մաշտոց, Ճաշոց: Աստվածպաշտական կյանքի ճշմարիտ հնքը կա այս գրականության մեջ, որովհետև այստեղ է, որ Աստծո հետ հաղորդակցման կենդանի շունչը փոխանցվում է հավատացյալին՝ պայծառակերպելով նրա անձը: Այս ակնարկելով հեղինակը գրում է. «Ես վստահ եմ, որ եթե մի օր Ժամագիրքը կամ Պատարագի խորհրդատետրը կամ Մաշտոցը ձեռք առնեն հավատացյալները և կարդան, հետևեն նրանց, արարողությունների կատարման ժամանակ այնպես կզգան իրենք իրենց, ինչպես երկար երաշտից հետո ջրով ոռոգված մի պարտեզ» (79):

Հայ Եկեղեցու ծառայության հոգևոր ծիրի մեջ ընդգրկվում է նաև իմաստասիրությունը և գիտությունը (իր երկու կարգերով «Երրեակ»՝ Trivium= քերականություն, տրամաբանություն, ճարտասանություն, «Քառյակ»՝ Quadrium=թվաբանություն, երաժշտություն, աստղագիտություն): Այս փաստն ինքնին ցույց է տալիս Հայ Եկեղեցու լայնախոհ մոտեցումը այսպես կոչված «ազատական» գիտությունների և գիտելիքի ձկատմամբ առհասարակ: Եկեղեցին մասնավոր հոգածություն է ցուցաբերել պատմագրության հանդեպ նմանապես: Ինչպես իրավացիորեն ձկատում է հեղինակը, «հայ դասական գրականության մեջ պատմագրական ճյուղը չի մշակվել որպես առանձ քաղաքական դեպքերի հաջորդական շարահյուսվածք և ոչ էլ որպես աշխարհիկ երևույթների մի ձկարագրություն, այլ կրոնական որոշ հասկացողությամբ ըմբռնված մի իմացական-գրական-գիտական գործունեություն...» (81):

Հայրաստանյայց Եկեղեցին մեծ և անկորնչելի արժեքներ է ստեղծել նաև մշակույթի մարզում, որի ամենահարուստ, փարթամ կալվածքը ճարտարապետությունն է: Ի մտի ունենալով այդ ճարտարապետության ճյութը, բովանդակությունն ու ընդգրկումը, «արդար կլինի նրան կոչել հայ եկեղեցու, հայկական տաճարի ճարտարապետություն»: Հայ ճարտարապետության ամենանվիրական և հարազատ դրսևորումը եկեղեցականն է: Այն ոչ այլ ինչ է, քան հայ ճարտարապետության դեսպանն ու խոսնակը: Եկեղեցին իր ամբողջության մեջ տակավին ճարտարապետական զանգված չէ: Նրա

բարերը օծված են հայ հավատքի լույսով, հայ ոգեկանությամբ: Մեր եկեղեցին գոյացած է լույսի և ոգու շաղախից: Այս իրողությունը հետևյալ կերպ է բնորոշվում. «Դիտել գիտցողին այնպես է թվում, որ հայ աղոթքի վերապաց խոյանքի հետ դեպի երկինք բարձրացող գմբեթի միության ու վերահայաց հետևվածքին մեջ բարերը կյանք ունեն: Համայն զանգվածին վրա մի ընդհանուր ներդաշնակության շնորհին անտեսանելի լույսն է իջել ու ողջ կառուցվածքը պայծառակերպվել հայ հոգու վառ պայծառության պարզ, բայց պերճախոս շքեղության մեջ» (87—88):

Պերճախոս այդ շքեղությունը կա քանդակագործության մեջ, խաչքարային արվեստում, որ բացառիկ է իր տեսակի մեջ: Հայ Եկեղեցին իր հոգևոր մատուռների դերը կատարում է նաև ձեռագրական մշակույթի հարուստ, պըտղալի անդաստանում: Ձեռագիր մատյաններն իրենց մեջ պահպանում են ազգի երկնած հոգու և մտքի գանձերը, որոնք վկայություն են այն մեծ հավատքի, որ ապրեցրել է բազում սերունդներ: «Հայաստանյայց Եկեղեցին,— ասում է հեղինակը,—**գույնի և գիծի** բարբառով խոսք է տալիս հայ մտքին, որի պատգամը անմահական շնչով դեռ ապրում է աշխարհի չորս ծագերին, որ տարտղնվել են հայ ձեռագրերը հայ մարդկանց հետո...» (91): Որեմն հայերեն ձեռագրերը դեռ շարունակում են իրենց ազգապահպան, ազգաշեն գործը՝ զորացնելով, գորակերտելով հայ մարդուն:

Աշխատության երրորդ ենթաբաժինը նվիրված է Հայոց Եկեղեցու ընկերային-քաղաքական կյանքում խաղացած կարևոր դերի գնահատությանը: Հայ եկեղեցու ազգապահպան դերը շատ հաճախ մակերևույթին դատումով նմանեցվում է ծառը պահպանող կեղևին: Միևչդեռ այսօրինակ ընկալումը «ոչ միայն սխալ է ըստ էության, այլև՝ ըստ պատմական անցյալի տվյալների: Եթե եկեղեցին դադարի ինքն իրենով արժևոր հատատություն լինելուց, եթե դատարկվի իր քրիստոնեական հոգևոր, բարոյական բովանդակությունից, կդառնա իսկապես կեղև, և չի կարող երկար ժամանակ պահպանել ծառը, որովհետև նախ ինքը որպես կեղև խորունկ և երկար կյանք չունենար և ապա շուտով կչորանա և արտաքին հովերի դեմ չի կարող տոկալ: Կեղև չի եղել նա պատմության մեջ, այլ՝ ավիշ» (96): Հեղինակն այս բառերով բնորոշում է նախնական իմաստով ընկալված Եկեղեցու վերպատմական, վերժամանակային բնույթը և նրա հայտնութենական բովանդակությունը:

Լինելով ժամանակի մեջ, սակայն ժամանակից, օրվա թոհուբոհից բարձր Եկեղեցին միայն կարող է հավիտենական ճշմարտության խոսափողը լինել և իր հզոր թևերի հովանու տակ պահել ժամանակի ալեծուփ վայրիվերումին ենթակա հայ մարդուն: Պետականության չգոյության պայմաններում հայ եկեղեցին, հակառակ դժնի պայմաններին, կարողացավ ազգի բոլոր ուժերը կենտրոնացնող, միավորող ուժ դառնալ շնորհիվ ոչ միայն վարչական ձիրքի և կազմակերպվածության, այլև հայտնությունից ածվող իր կուռ դավանաբանության: Եթե ընդունենիք քաղկեդոնականությունը կամ կաթոլիկ վարդապետությունը, ապա ազգովի այն ճակատագրին կարժանանայինք, ինչին սպրդավանականքը, ապա ազգովի այն ճակատագրին կարժանանայինք, ինչին սպրդավանականքը, ժամի դարձավ հունական բաժնի քաղկեդոնական հայությունն ու Քոնդայի կաթոլիկ դավանանք ընդունած հայ զանգվածը: Դավանական ճահճացը ծնում է ճահճացք ժամանակի փորձությանը դիմակայած ազգային արժեքներից, որն իր հերթին բերում է ուծացում և օտարացում:

Աշխատության Երկրորդ մասում՝ «Հայաստանյայց Եկեղեցին՝ ի սպաս ընդհանուր քրիստոնեական աշխարհի» իր երեք ենթաբաժիններով («Հա-

յաւտանձյայց Եկեղեցիի՝ առաքելության մարզում», «Հայաստանյայց Եկեղեցիի՝ ի սպաս քրիստոնեական ընդհանուր մշակույթին», «Հայաստանյայց Եկեղեցիի՝ ընդհանուր քրիստոնեական կացության մեջ») աթոռի, հավասարակշռված գնահատումներով արժևորում է Հայ Եկեղեցու բերած հսկա նպաստը քրիստոնեական քաղաքակրթության զորացման գործին: Առաջին հերթին քաղաքակրթական այս առաքելությունը Հայց. Եկեղեցին իրագործեց հարևան երկրների քրիստոնեացումով՝ Վրաստան, Աղվանք, Հոնաց երկիր, «Քրիստոսի վարդապետությունը տարածելու «զամենայն հեթանոս աշակերտելու» քրիստոսավանդ պատգամով և նախանձախնդրությամբ» (115): Իր խոսքն ավելի առարկայական դարձնելու նպատակով հեղինակը վկայաբերում է հայագիտությանը ծանոթ փաստեր, և վերջում հույս հայտնում, որ մի օր կմեկտեղվեն բոլոր այն տեղեկությունները, «որոնք այժմ ցրիվ վիճակով գոյություն ունեն Հայց. Եկեղեցու առաքելական գործունեության շուրջ և դրանցով կարելի կլինի Հայց. Եկեղեցու պատմության այս էջն ևս իր լուսավոր պատկերի մեջ երևան բերել և լուսարձակի տակ դնել» (120):

Չափազանց մեծ է Հայց. Եկեղեցու դերը քրիստոնեական ընդհանուր մշակույթի մարզում: Այս դերը բազմիցս գնահատվել է հայ և օտար մասնագետների կողմից: Եկեղեցական հեղինակն իրեն հատուկ լայնահայաց ընդգրկումով ամբողջացնում է հայագիտության ձեռքբերումները՝ հիշատակելով Աստվածաշնչի և Եկեղեցու հայրերի՝ Ս. Իրենիոս, Տիմոթեոս Կուզ, Հիպպոլիտոս և այլք, ժառանգության բարձրարժեք, բնագրային հավասարազոր թարգմանությունների փաստը: Այնուհետ հեղինակը մի մասնավոր շեշտով խոսում է Ս. Գրիգոր Նարեկացու Աղոթամատույանի միջազգային ճշանակության մասին՝ ամենայն իրավամբ գտնելով, որ «մի Գրիգոր Նարեկացի միայն բավական պիտի լիներ բարձր պահելու համար դիրքն ու արժեքը հայ եկեղեցական գրականության և օգտավետ ընծայելու նրա ծառայությունն ընդհանուր քրիստոնեական բանաստեղծական գրականության» (130—131): Նույն ոգով է արժևորվում «աղոթքի մյուս երգիչը՝ շնորհալից Ներսես Կլայեցին, համակ սեր, քնքշություն և քաղցրություն բուրող իր սրտառուչ, հոգելից մրմունջներով, որոնք այսօր ավելի քան երեսուն ազգերի մեջ հնչում են իրենց հատուկ բառերով, բայց Հայց. Եկեղեցու ոգիով թաթախուն, խորհրդովը՝ տոգորուն և հայ ժողովրդի հոգեկանությամբը խոսուն՝ «Հաւատով խոստովանիմը...» (134):

Հեղինակը հուզախառն ներշնչանքով օծուն տողեր է հյուսում նաև Հայց. Եկեղեցու Պատարագի մասին, վկայաբերում օտարների հիացական գնահատումները և այդու ընդգծում նրա ունեցած արժեքը և բերած անկորնչելի նպաստը համաքրիստոնեական խորհրդարկության մեջ: Նույնքան կարևոր է Հայց. Եկեղեցու աստվածաբանական, դավանաբանական ժառանգության գնահատումը ոչ միայն նրա խաղացած, այլև էկումենիկ հարաբերությունների «շրջագծի» մեջ նրա ունեցալիք դերի առումով:

Մի քարեղեն սխրանք կարելի է համարել Հայց. Եկեղեցու քաղաքակրթական այն մեծ առաքելությունը, որ իրականացրել է ճարտարապետության մարզում: Այն ևս արժանիորեն գնահատվում է: Սակայն այդ գնահատումը կատարում է ոչ այնքան հեղինակը, որքան, նրա իսկ մտացի «թողությամբ», օտարը: Սրանով է՛լ ավելի է շեշտվում հայ ճարտարապետության միջազգային կշիռն ու արժեքը:

Այս բաժնում ի մի բերելով իր խոսքը՝ Վեհափառ Հայրապետը եզրակացնում է. Հայց. Եկեղեցու մշակութային գանձարանը միշտ եղել է «ավա-

րի թիրախ՝ ավերիչ ուժերի համար: ...Հազիվ մի մասն է փրկվել գանձարանի պարունակյալից... Բայց այդ «հազիվ»-ն էլ աճա իր անվան շուրջ փառքի դրասանգ է հյուսել...»:

Աշխատության վերջին՝ երրորդ բաժինը նվիրված է «ընդհանուր քրիստոնեական կացության մեջ» Հայց. Եկեղեցու կատարած քաղաքական ճշանակալից դերին: Լինելով առաջին քրիստոնյա պետությունը, Հայաստանը ազգային Եկեղեցու առաջնորդությամբ կարողացավ դիմագրավիչ ժամանակի հեթանոս տերությունների գիշատչային հավակնությունները՝ օրինակ դառնալով քրիստոնեական կենտրոնաձիգ պետականության՝ հաստատագրելով քրիստոնեական իրավունքները: Այս մասին է վկայում 311, 451 թթ. հայոնի իրադարձությունների դյուցազնապատումը:

Հայաստանը ճզոր վահան էր դարձել Բյուզանդիայի համար ընդդեմ օտարահավատ տերությունների: Սակայն կայսրությունը չկարողացավ գնահատել Հայոց պետության այդ կարևոր դերը: Բյուզանդիայի վարած եկեղեցական, ռազմական անիրատես քաղաքականությունը հանգեցրին այն բանին, որ կայսրության արևելյան շրջանների անվտանգությունը ապահովող հայ տարրը աքսորվեց արևմուտք, որի հետևանքով այն խոցելի դարձավ քրիստոնեության թշնամի թուրք սելջուկյան հորդաների համար: Սակայն Հայց. Եկեղեցու գլխավորությամբ Կիլիկիայում հաստատված հայոց պետությունը դարձավ «քրիստոնեության մի նոր միջնաբերդ», որին պետք է ապավինեին խաչակիրներն իրենց արշավանքների ժամանակ:

Այսպես և միշտ Հայց. Եկեղեցին Արևելքում, հաճախ ի գին բազում նահատակությանց, կատարել է քրիստոնեության ջատագովի իր բարձր ու վեհ պաշտոնը՝ դրոշակակիրը լինելով Քրիստոս Փրկչի համատիեզերական վարդապետության: Վկայաբերելով զանազան մասնագետների նպաստավոր կարծիքները Արևելքում Հայոց քրիստոնեության կատարած դերի մասին՝ հեղինակը եզրակացնում է. «Հայց. Եկեղեցու ծառայության դերը այս մարզում որոշելու համար չի բավեր միայն նկատի ունենալ Հայց. Եկեղեցին որպես սոսկ մի պահապան քրիստոնեության...: Նրան պետք է նկատի ունենալ որպես Արևելքի քրիստոնեության մեջ գլխավոր առաջնորդող, գործուն եկեղեցիներից մեկին, առանց որի տարբեր կլիներ Արևելքի քրիստոնեության կյանքի ընթացքը և թերը՝ նրա պատմությունը» (157):

Վեհափառ Հայրապետը գիրքն ավարտում է առ Բարձյալն ուղղված աղոթավոր այս խոսքերով.

«Թագաւոր երկնաւոր,
Զեկեղեցի Քո անշարժ պահեա
Եւ զերկրպագուս անուանդ Քում
Պահեա ի խաղաղութեան»:

Գարեգին Կաթողիկոսի մյուս գիրքը՝ **«Ես յաղթեցի աշխարհի...». Հաւրություն և հայություն** (Անթիլիաս, 1993) հեղինակի տարբեր տարիներին խոսած քարոզների ժողովածու է: Այն բաղկացած է երկու մասից: Գրքի Առաջին մասը՝ «Քրիստոսի Հարությունը՝ Ս. Գրական պատկերացումով» մի տեսակ մուտք է, որ Հարության դեպքը մեկնաբանված է «պատմական և իմաստային տարողության մեջ»: Այն ունի հետևյալ ենթաբաժինները. «Ընդհանուր մթնոլորտը», «Հիսուսի Հարության հետ առնչված դեպքեր և երևույթներ», «Հարության նշանակությունը»: Կիրարկելով գիտական հետա-

խուզման որոշակի եղանակ՝ հեղինակը աշխատում է այդ միայն միջոց դարձնել Հարության պատմականը և բարոյականը վեր հանելու համար: Հարության պատմականը փաստելու նպատակով Վեհափառ Հայրապետը կարգազատում է Ավետարանի կարևորագույն իրողություները:

Հարության առաջին զորավոր վկայությունը, որքան էլ որ զարմանալի թվա, Հարության նկատմամբ առաքյալների թերահավատության փաստն է, և մյուս կողմից այն էական կերպարանափոխումը, որ տեղի ունեցավ առաքյալների հետ ի հետևանս Հարության: Սրանից բխող տրամաբանական հետևությունն այն է, որ միայն Հարության իրական լինելը կարող էր նրանց մղել ինքնամոռաց ևվիրումի ու նահատակության: Հարության երկրորդ վկայությունը Հիսուսի հակառակորդների՝ գերեզմանը հսկող հռոմեացի զինվորների՝ կատարվածի մասին պատմածն է: Հիսուսի հարության վերաբերյալ մյուս վկայությունը այդ ամենակեցույց իրողությունից հետո Նրա երևումն է բարեպաշտ կանանց, Եմավուսի ճամփորդներին, առաքյալներին: Այս կապակցությամբ ուշագրավ է Ս. Գրիգոր Տաթևացու մեկնությունը: Հիսուս ինչո՞ւ առաջինը երևաց բարեպաշտ կանանց հարցին պատասխանում է. որովհետև կանայք իրենց բնախոսական հատկությամբ դյուրախոս լինելով պետք է փութով տարածեին Հարության լուրը:

Անչափելի է Հարության նշանակությունը. Այն «չի կրնար նկատվիլ մարդու մտքին համար լիովին գոհացուցիչ կերպով պարագրելի» իրողություն, որ սկզբունքորեն անմատչելի է «մարդկային տրամախոհական մտածողության և եզրաբանական բանաձևումին»: Այս նշանակում է, որ Հարության իրողությունը չի կարող նաև գիտական քննության առարկա դառնալ: Հեղինակը ցույց է տալիս այդ իրողության վերլուծման հոգեբնախոսական, հոգեբանական եղանակների սնամեջ լինելը: Հիմնվելով Հարության մասին գրված բազմաթիվ հետազոտությունների վրա՝ հաստատում է, որ Հարության դեպքը բնագոյութենական կարգի, մարդկային տրամախոհական կամ բանական կարողության, պատմական փորձառության տարողությանց սահմաններում մեջ պարագրվող երևույթ չէ: Գեր-բնական, գեր-մարդկային, գեր-պատմական տարածքներու հատուկ երևույթ է» (42): Այդ տարածքներ կարելի է մուտք գործել բացառապես **հավատքի** միջոցով; տրամաբանությունից սկզբունքորեն, էապես զանազանվող հավատքի, որ ունի իր «օրենքները» (Ս. Օգոստինոս, Պասկալ): Հավատքը և տրամաբանությունը այնպիսով տարբեր հարթություններ են: Եթե տրամաբանություն անհրաժեշտ է բանաքննական եղանակով ապացուցելու կամ ժխտելու համար, ապա հավատքը՝ վերժամանակային, վերտարածքային, վերպատմական իրողությունների ընկալման: Ուստի միայն հավատքով կարելի է ընկալել որևէ չափումի չենթարկվող Աստվածամարդության երկու բևեռների՝ Ծննդյան ու Հարության խորհուրդը: Գոյաբանական այս վերլուծումից հետո աստվածաբան հեղինակն անցնում է իրողության բարոյաբանական քննությանը: Հավատարիմ մնալով արևելաքրիստոնեական աստվածաբանական ավանդույթին՝ հեղինակը նկատում է. «Խորհուրդին «ինչ»-ն ու «ինչպես»-ը չենք կրնար գիտնալ: Բայց խորհուրդին «ինչու»-ն պարզ է մեզ համար: Քրիստոսի Հարության **պատճառը** շատ հստակ է. այդ «ինչու»-ն, այնպես, ինչպես մեզի տրված է Հարուցյալին իսկ կողմե...: Քրիստոսի հարությունը մահվան **ժխտումը** չէ, այլ մահվան **ետաձգումը...**, որով մենք կունենանք կարելիությունը մահեն չընկճելու», և «Իր տված կյանքովը... երկնից արքայության մեջ հավերժորեն ապրելու» (45): Հարության նկատմամբ անխորտակելի հավատքն

է, որ պաւեել է հայ ժողովրդին, նրան տվել մաւը **նվաճելու** կարողություն և ապրելու անսասան կամք: Աստվածաբանական այս վերլուծումին հետևում են տասնհինգ քարոզները, որոնք ունեն նույն աստվածաբանական խորքն ու վերլուծական ջիղը: Դրանք աստվածաբանական խորհրդածություններ են՝ խոսված անկեղծ հուզումով, վերին արժեքներին մեզ հաղորդակից դարձնելու, իր վայելած լույսից մեզ բաժին հանելու հրայրքոտ նախանձախնդրությամբ:

Քարոզներում դրսևորվում է հոետորական խոսքի բոլոր նրբություններին քաջ ծանոթ բեմբասացը, նաև՝ բառաշինարար ճառախոսը: Դրանց մեջ կարելի է հատակորեն նշմարել հին և միջնադարյան դասական ճառախոսության այն լավագույն հատկությունները, որոնք բնորոշվում են մտքի և հույզի ներդաշն համերաշխությամբ, երևույթի լայնաշունչ ընդգրկմամբ, խորքային իրողությունների բազմաշերտ մեկնաբանությամբ: Հարության խորհուրդը մեկնաբանելու համար հեղինակը դիմում է դասական ճառախոսությանը ընտանի հարցական և բացականչական եղանակին, որն է՛լ ավելի է ընդգծում տիեզերակեցույց խորհրդի անպարագիծ վեհությունը.

Յարեաւ Աստուած.

Կրնա՞ք երևակայել, մտապարփակել տարողությունը այս երկու բառերով հոչակված դեպքի իմաստին: Կրնա՞ք պատկերացնել անսահման ապշանքը, աննկարագրելի զարմացումը այն տասներկու առաքյալներուն, որոնք երեք տարիներ շարունակ ապրեցան Անոր՝ Աստուածորդույն հետ, լսեցին Անոր խոսքերը, ունկնդիր եղան Անոր հայտնատեսական կանխագուշակումներուն և մարգարեական հայտարարություններուն...

Յարեաւ Աստուած.

Ի՜նչ մեծ ույժ դարձավ այս հավատքը աշխարհին մեջ և աշխարհի ընկալյալ չափանիշերով տկար եղող հետևորդներուն համար Խաչյալին» (54):

Խոսքն առավել ներգործուն դարձնելու նպատակով հեղինակը դիմում է քրիստոնեական ճառագրության և քարոզխոսության մեջ ընդունված հակադրության ու հարակրկնության հայտնի կերպերին: Ահա այդ մասնացույց աՀող մի քանի օրինակներ.

«Հարության հավատքը սևն սպիտակի էր վերածած, տկարը՝ զորավորի, վատը՝ բարիի, վախկոտը՝ քաջի, ուրացողը՝ քարոզողի» (55):

«Գիտեք. մեր պատմությունը քանի Ավագ-Ուրբաթյան շրջաններ ունեցավ:

Գիտեք. մեր Հայաստան աշխարհի ձորերը քանի անգամ Գեթսեմանի անունը հագան:

Գիտեք. քանի՜ սերունդներ իրենց կյանքն ապրեցան Գողգոթայի տապագին ու անձկալից ճանապարհով:

Գիտեք. քանի անգամ հայոց ծառաստանները Խաչի փայտ հայթայթեցին:

Գիտեք. թշնամիներ ինչքան փուշ ու տատասկ ցանեցին մեր ուղեքուն առջև:

Գիտեք. հայոց լեռներու ժայռերուն վրա քանի դարեր հայոց մարմինները արյունեցան ու պատռվեցան:

Գիտեք. մեր հայրենի հողը քանի հազար ու բյուր հայ մարդերու մարմինները իր մեջ հողի վերածեց...» (71):

Կամ հետևյալը.

«Այս է ճամբան հարության
Այս է ճամբան հայության
Այս է ճամբան հավերժության» (113):

Բանաստեղծաշունչ քարոզների այս ժողովածուն ավարտվում է «Հավելվածով», ուր զետեղված են Հարությունը պաճուճացնող Եղիշեի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Եղիշե Պատրիարք Դուրյանի, Վահան Թեքեյանի երկերից, որոնք մի տեսակ պսակում են հատորը:

Ամբողջ ասվածը (ու նաև չասվածը) իրավունք է վերապահում մեզ սրտի և մտքի նոր պտույտներ ակնկալել տեսլապաշտ հեղինակից, ակնակառույց լինել լույսի նորանոր ցոլացումների...

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ

ներգո» բաժնետիրական ընկերության նախագահ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի և միջազգային ինժեներական ակադեմիաների ակադեմիկոս Սեմյոն Կազարովին, Ս. Պետերբուրգի «Արդյունաբերական էլեկտրատեխնիկա» բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն, միջազգային էներգետիկայի ակադեմիայի անդամ Լևոն Սարգսյանին, Էստոնիայի «ԱՍԿՅՈՒԻ» արտադրական կոմերցիոն ֆիրմայի նախագահ Սուրեն Սահակյանին և ֆիրմայի փոխտնօրեն Վանուշ Կարապետյանին, որոնց ուղեկցում էր Ս. Պետերբուրգի և Մերձբալթյան երկրների հայոց հոգևոր հովիվ Եզրաս աբեղ. Ներսիսյանը:

Վեհարանում ողջունելով մեծահարգ հյուրերին, Գարեգին Ա Կաթողիկոսն ասաց. «Ես ձեզ այստեղ չեմ ընդունի, ինչպես օտարներին եմ ընդունում: Ձեզ նկատում եմ տունն եք գալիս: Ս. Էջմիածինը ամբողջ հայության տունն է: Մենք երկար դարերի պատմություն ենք ունեցել, բայց այս դարը մեր բոլորիս դարն է Հայաստանի անկախ Հանրապետության ստեղծումից հետո: Ես տեղյակ եմ, թե որքան կարևոր գործ եք կատարում դուք Ս. Պետերբուրգում, որտեղ հայությունը փառավոր անցյալ ունի և պատճառ չունի նույնպիսի ապագա չունենալու: Մեր հայրենիքը կպատկանի բոլորիս: Մենք հպարտ ենք մեր Սիյոնքով, մենք ուժեղ ենք մեր Սիյոնքով, որովհետև նրանք մասն են մեր մարմնի, և Հայաստանի հզորությունը միայն Հայաստանի ժողովրդից չէ գալիս»:

Վեհափառ Հայրապետը, ի գնահատություն բազում ծառայությունների, «Վենէներգո» բաժնետիրական ընկերության նախագահ Սեմյոն Կազարովին պարգևատրեց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով: Հայ բարերարներին տրվեցին նաև հուշամեդալներ՝ Հայաստանի և Ս. Էջմիածնի պատկերներով:

Շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը ջերմ ընդունելության և բարձրագույն պարգևի համար, սրն. Կազարովը նշեց, որ հայ ժողովրդի համար այս դժվարին օրերին Ս. Էջմիածինը բացառիկ մեծ և կարևոր դեր է կատարում: Ստացած պարգևն ինձ առավել պարտավորեցնում է, ասաց հայ բարերարը և տեղեկացրեց, որ իրենց նպատակն է՝ բազմաթիվ անհելիքների շարքում ավարտին հասցնել Ս. Պետերբուրգի Ս. Կատարինե եկեղեցու նորոգման աշխատանքները:

Հայ բարերարները վեհափառ Հայրապետին նվիրեցին արծաթե հուշամեդալներ, հնատոճ թանկարժեք իրեր և աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհ. Այվազովսկու վրձնին պատկանող մի կտավ՝ ստեղծված 1834 թ.:

Սրն. Կազարովը գնահատանքի խոսք ասաց Եզրաս աբեղ. Ներսիսյանի մասին, որ կարևոր գործ է կատարում Ս. Պետերբուրգի հայ համայնքի հոգևոր խնամախնամության ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին Ս. Պետերբուրգի և Էստոնիայի հայության ներկա կացությանը, ինչպես նաև Հայաստանում Քրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության առընչվող հարցեր:

ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հոկտեմբերի 7-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ռուսաստանի Դաշնությունում, Բելոռուսում և Հայաստանի Հանրապետությունում Բրազի-

լիայի արտակարգ և լիազոր դեսպան Թերեզա Մարիա Գիլմտելա Մաշադոն: Վեհարանում նրան ընդունեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Տիկ. Մաշադոն, շնորհավորելով Վեհափառ Հայրապետին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ, իր համակրանքն ու հարգանքն արտահայտեց հինավուրց հայ ժողովրդի, նրա 1700-ամյա հոգևոր կենտրոն Ս. Էջմիածնի նկատմամբ:

Ծավալված ջերմ զրույցի ընթացքում հարգելի հյուրի խնդրանքով Վեհափառ Հայրապետը ներկայացրեց ապրիլին տեղի ունեցած կաթողիկոսական ընտրությունների կարգն ու ընթացքը, խոսեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կառուցվածքի և դերի մասին:

Զրույցի ընթացքում շոշափվեցին նաև երկու երկրների բազմակողմանի համագործակցությանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում և Հարավկովկասյան տիրող իրավիճակներին առնչվող հարցեր: Գարեգին Ա Կաթողիկոսը նշեց, որ եկել է պահը՝ շտկելու անցյալի սխալները, և յուրաքանչյուր ժողովուրդ պետք է ապրի ու ստեղծագործի ազատ, անկախ պայմաններում, բոլոր հակամարտություններն էլ պետք է լուծվեն դիվանագիտական երկխոսությունների ճանապարհով:

Հանդիպման վերջում Նորին Սրբություն ու դեսպանը գրքեր փոխանակեցին:

Տիկ. Մաշադոյին ուղեկցում էին Բրազիլիայի դեսպանատան և ՀՀ արտգործնախարարության աշխատակիցներ:

ՀՅՈՒՐ ԷՐ ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԸ

Հոկտեմբերի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի նախարար Սեյեդ Մուսթաֆա Միր-Սալիմին՝ ընկերակցությամբ Հայաստանի Հանրապետությունում ՀԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Համիդռեզա Նիքքար-Էսֆահանիի և Թեհրանից ժամանած պատվիրակության:

Իրանի Հանրապետության մշակույթի նախարարը Վեհափառ Հայրապետին հայտնեց իրենց առաքելության նպատակը և շեշտեց հայ և իրանական ժողովուրդների դարավոր հարաբերությունների առավել զարգացման կարևորությունը: Նա խոսեց նաև ներկայումս հակակրոնական երևույթների տարածման մասին՝ ընդգծելով միասնական հոգևոր գործակցության անհրաժեշտությունը: Նորին Վսեմությունը հատուկ կերպով գնահատեց Գարեգին Ա Կաթողիկոսի փորձառությունը և գործունեությունը Պարսկաստանում պաշտոնավարության տարիներին՝ առանձնակի նշելով, որ Նորին Սրբությունը լավ է ընմբռնում Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքակրթական գործունեության ոգին և բովանդակությունը: Այնուհետև Սեյեդ Մուսթաֆա Միր-Սալիմը ցանկություն հայտնեց հրավիրել Վեհափառ Հայրապետին ա՛յցելելու Իրան:

Վեհափառը կարևորեց Իրանի մշակույթի նախարարի այցը Ս. Էջմիածին: Իր գնահատանքը հայտնեց այն գեղեցիկ երևույթի առնչությամբ, որ Երևանում Իրանի մշակույթի օրերին հատուկ և լայն տեղ է տրվել իրանահայությանը և նրա մշակութային ստեղծագործություններին: «Մենք խորա-

պես գնահատում ենք Իրանում բնակվող մեր սիրելի ժողովրդին այն անխախտելի կապվածության համար, որ նա ունեցել է միշտ և շարունակում է ունենալ իրանյան հայրենիքի հանդեպ,—ասաց Գարեգին Ա Կաթողիկոսը:

— Մայր Աթոռ Ս. Էջմիածինը դարեր շարունակ քաջալերել է իր հավատացյալ ժողովրդին, որ միշտ հավատարիմ մնան Աստծուն, քայլեն Աստծո ցույց տված ճանապարհներով, սիրեն իրենց իրանյան հայրենիքը, զորավիգ կանգնեն Իրանի Իսլամական Հանրապետությանը և կենդանի պահեն հայ ժողովրդի դարավոր մշակույթը, որ արտահայտվել է գլխավորաբար Հայաստանյա ց Եկեղեցու միջոցավ»:

Նորին Սրբությունը հատուկ ուրախությամբ հիշեց իր հանդիպումն ու խոսակցությունը Իրանի Հանրապետության նախագահ Ռուֆսանջանիի հետ երկու տարի առաջ և իր խոր տպավորությունը նրա գաղափարներից և հումանարդկային լայնախոհ համոզումներից: Ամենայն հայոց Հովվապետը մեկ անգամ ևս իր գնահատանքը հայտնեց այն սիրույն և հոգեկան կապվածությանը, որ Իրանի հայ ժողովուրդը տածում է իր Եկեղեցու, նրա ավիրակնագույն արբատեղիների և հոգևոր կենտրոնի՝ Ս. Էջմիածնի հանդեպ:

Գարեգին Ա Կաթողիկոսը նախարարին տեղեկացրեց, թե առաջիկա վեց տարիների ընթացքում Հայաստանյայց Եկեղեցին բարձրագույն աստիճանի կարևորությամբ նշելու է իր պաշտոնական հիմնադրության 1700-ամյակը, որի համար հատուկ ժողով է գումարվել Ս. Էջմիածնում՝ մասնակցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի, Երուսաղեմի և Պոլսո Պատրիարքների և բազմաթիվ եկեղեցականների, նրանց շարքում նաև՝ Թեհրանի և Սպահանի առաջնորդների:

Տեսակցության ավարտին տեղի ունեցավ նվերների փոխանակություն, ապա հարգելի նախարարը, առաջնորդությամբ Ներսես արքեպս. Պոզապալյանի, ա֊ցելեց Մայր տաճար:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐԻ ԽՈՒՄԲԸ ՄԱՏՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 13-ին, ուրբաթ կեսօրին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրական սիրով ողջունեց այցելությունը ավելի քան 60 ամերիկահայերի, որոնք Հայկական Համագումարի (Armenian Assembly) նախաձեռնությամբ և կազմակերպությամբ եկել էին Հայաստան՝ հայրենիքը մոտիկից ճանաչելու գովելի ձեռնարկումով: Հյուրերը Միացյալ Նահանգների այլազան շրջաններից էին, և նրանցից շատերը անձամբ ծանոթ էին Նորին Սուրբ Օծության հետ: Հանդիպումից հետո ամերիկահայ այցելուները եղան Վեհափառ Հայրապետի ճաշի հյուրերը: Նրանց ուղղած իր խոսքի մեջ Գարեգին Վեհափառն ասաց. «Բարձրորեն գնահատում եմ ձեր սերտ կապվածությունը Մայր Հայրենիքին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Հատկապես գնահատում եմ Հայկական Համագումարի այս գեղեցիկ նախաձեռնությունը, որով ամեն տարի, ուխտագնացության իմաստով, ամերիկահայ ներքայրներ և քույրեր գալիս են Մայր Հայրենիք, տեսնում են մեր ժողովրդին, ճանաչում են մեր ժողովրդի կյանքը, մոտիկից հետևում են մեր հանրապետության գործերին, արտակցորեն հետաքրքրվում են մեր Եկեղեցու և Մայր Աթոռի գործունեությամբ, կարիքներով և ծրագրերով:

Ես բարձրորեն կարևորում եմ անձնական ճանոթության և ճանաչման անհրաժեշտությունը: Լսել, կարդալ, երևակայել, տեսանկանոնել մտապատկերացնել բավարար չեն լրիվ ձևով և հարազատ կերպով ճանաչելու համար ճշմարտությունը:

Անհավասիկ դուք եկաք, տեսաք ձեր Մայր երկիրը, տեսաք ձեր հայրերի թողած մշակութային ժառանգություններ, իրազեկ դարձաք մեր ժողովրդի, պետության և Եկեղեցու դժվարություններին, տնտեսական կեղտությունների, բայց վստահաբար նաև տեսաք մեր ժողովրդի կարպվածությունը իր հայրենի աշխարհին և իր հայրենաբնակ կյանքին: Արտասահմանում շատ է խոսվում կեղծությունների, դժվարությունների, տագնապների, ժխտական երևույթների մասին: Առհասարակ մոռացվում է ասկայն, որ այդ բոլորից վեր կա մեր ժողովրդի ստեղծագործական կյանքը, մշակութային իրագործումները և, հազար փառք Աստծուն, նաև ապահովության վիճակը մեր երկրում, պետության և Եկեղեցու առաջ տարած տնտեսային աշխատանքները՝ մեր ժողովրդի կյանքի բարելավման համար: Անշուշտ ամեն ինչ մեղքը ու կարագ չի, վարդ ու մանուշակ չի, կա փուշը, կա տառապանքը: Ինչ որ ինձ համար ամենից հատկանշական երևույթն է, այն է, որ մեր ժողովուրդը սիրով է տանում իր տառապանքը, սիրով է վայելում իր ճակտի քրտինքին բարիքները: Ես ցանկանում եմ, որ դուք ձեր ակնատեսի վկայությունները արտաբացորեն բաժանեք ձեր քույրերի և եղբայրների հետ Միացյալ Նահանգների մեջ և խրախուսեք նրանց, որ իրենք ևս հետևեն ձեզ, գան հաղորդվեն մեր բոլորի Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուխտավաքներին և մեր հայրերի արյամբ և քրտինքով ոռոգված մեր հայրենի հողին:

Սիրելիք, այս է մեր երկիրը, մեր ճակատներին գրված, մեր արտերում ապրող և մեր բոլորի ձեռքերովը պահպանվելու և բարգավաճելու կոչված: Գիտցեք արժեքը ազատ և անկախ մեր Հայրենիքի՝ իր վերքերով և երգերով, իր ցավերով և ուրախություններով, իր առավելություններով և պակասություններով, իր լուսավոր և ստվերոտ կողմերով: Այս է կտակը մեր հայրերի: Այս պետք է լինի պարտքը ապրողներիս»:

Վեհարանում տեղի ունեցած ընդունելությունից հետո հյուրերը առիթ ունեցան, ընկերակցությամբ Հայկական Համագումարի Հայաստանի տնօրեն Էդիտ Խաչատրյանի, շրջագայելու Մայր Աթոռի թանգարաններում:

Ավելացնենք նաև, որ ամերիկահայ ուխտավորները ևնցած կիրակի, հոկտեմբերի 8-ին, իրենց ժամանման հաջորդ օրն իսկ, արդեն այցելել էին Ս. Էջմիածին, ներկա գտնվել Մայր տաճարում մատուցված ս. պատարագին և լսել Վեհափառ Հայրապետի պատգամը՝ թե՛ Վեհարանում, թե՛ եկեղեցում:

«ԱԶԳԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ ԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԱԶԳ»

Հոկտեմբերի 16-ին Երևանի մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ ՄԱԿ-ի 50-ամյակին նվիրված հանդիսություն, որին իր մասնակցությամբ պատվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Բացելով հանդիսավոր ցերեկույթը, ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվության հանդիսանյան գրասենյակի պատասխանատու տիկ. Կեբեդեն

ներկայացրեց 50-ամյա կազմակերպության ուղին, ներկա անելիքներն ու հեռանկարները: Նա նշեց, որ 15 հազար հայ դպրոցականներ կատանան «Գալիքի անձնագրեր»՝ ստեղծված ՄԱԿ-ի 50-ամյակի քարտուղարության հանձնարարությամբ, որով այսուհետև հնարավորություն կունենան առավել գործուն մասնակցություն ցուցաբերելու հայրենիքի վերաշինության վանում գործին:

Ներկաների ջերմ ծափողջույնների ներքո բեմ հրավիրվեց Ամենայն Հայոց Հայրապետը: Ողջույնի խոսք ուղղելով հայ պատանիներին, Նորին Սրբություն ի մասնավորի ասաց. «ՄԱԿ-ը իր 50-ամյակի առիթով հրավիրել է ձեզ, թանկագին զավակներ, որ հանձնի «Գալիքի անձնագրեր»: Մեր երկրի ապագան դուք եք, և ձեզ նկատում եմ բախտավոր սերունդ: Դուք այս տարիքում ՄԱԿ-ի դրոշների շարքում տեսնում եք հայկական պանծալի եռագույնը: Դուք բախտավոր եք և նաև պարտավոր եք մեր անկախ հայրենիքի անունը բարձր պահել: Սա մեր երկիրն է և մեր դրոշը: Ապագան ոչ թե պիտի գա, ապագան դուք պիտի կառուցեք: Ազգերի ընտանիքում լինելու ենք խաղաղության և արդարության ձգիրված ազգ ու պետություն»:

Հանդիսությանը ներկա էր և ելույթ ունեցավ հանրապետության առաջին տիկին Լյուդմիլա Տեր-Պետրոսյանը, որ փոխանցեց հանրապետության նախագահի ողջույնը միջոցառման մասնակիցներին: Ելույթներ ունեցան Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան տիկ. Ֆրանս Դը Հարթինգը, ինչպես նաև ներկայացուցիչներ՝ ԱՄՆ-ից, Իտալիայից և Չինաստանից: Ողջույնի խոսք ասացին ՀՀ Կրթության և գիտության նախարարության և Վեներանների միության պատասխանատու անձինք: Հանդիսությանը ներկա էին ՄԱԿ-ի պաշտոնեության ներկայացուցիչներ, Վեհափառ Հայրապետին ուղեկցող հոգևոր հայրեր:

Հայ դպրոցականներին «Գալիքի անձնագրեր»-ի հանձնման հանդիսությունը ուղեկցվեց Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարումներով:

ՀԱՅ ԴԵՍՊԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Ավստրիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան և ԵԱՀԿ-ում Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչ Աշոտ Ոսկանյանին: Ծանոթանալու հանդիպման ընդունելության համար, դեսպանը ներկայացրեց իր առաքելության նպատակներն ու ծրագրերը:

Վեհափառ Հայրապետը հաջողություններ մաղթեց պրն. Ոսկանյանին նոր և պատասխանատու այս պաշտոնում, կարևորեց միջազգային կազմակերպությունների հետ գործակցության դերը: Նորին Սրբությունը նշեց, որ դեսպանությանը կարևոր դեր է վերապահված Վիեննայի հայ համայնքի հայմախմբման գործում:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԶԱՐԳԱՆԱ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ»

Նոյեմբերի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ ատոմային էներգիայի նախարար Վիկտոր Միխայլովին և նրան ընկերակցող պատվիրակությանը: Նախարարին ուղեկցում էին ՀՀ էներգետիկայի նախարար Գագիկ Մարտիրոսյանը, Կառավարության բարտուղար-նախարար Սերգեյ Մանասարյանը, Հայաստանի Հանրապետությունում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Ուռնովը:

Վեհարանի ընդունելությունների սրահում հյուրերին ընդունելով, Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն ասաց. «Ես կցանկանայի նախ գնահատել հարգարժան այցելուներին, որոնք Մայր Աթոռ են եկել առաջին հերթին Աստծո օրհնությունը առանալու: Այստեղ, որտեղ նստած ենք, 1700-ամյա քրիստոնեական հավատքն է խոսում: Ռուս Ուղղափառ Եկեղեցին ինձի շատ մոտիկ եղած է: Ռուս և հայ ժողովուրդներու կյանքը իրար միացած են և՛ կրոնականորեն, և՛ քաղաքականորեն, և՛, հիմա պիտի ըսեմ, նաև գիտականորեն: Բարձրորեն կգնահատեմ ձեր աջակցությունը հայկական ատոմակայանի գործարկման մեջ»:

Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Եկեղեցին միշտ եղել է գնահատողը գիտության, իսկ գիտությունը զարգանում է գործակցությամբ և փոխադարձ շփումներով: Նաև, որ մեր ժողովուրդը հեռուներին աչք չի հառում, այլ իր ձեռքերով է կառուցում իր ապագան:

Նորին Սրբությունը ռուս նախարարին նվիրեց հուշամեդալ և Ս. Էջմիածինը պատկերող գրքեր:

Շնորհակալություն հայտնելով ջերմ խոսքերի և ընդունելության համար, պրն. Միխայլովը նշեց, որ մասնագետները հնարավոր ամեն բան պիտի ձեռնարկեն՝ ատոմակայանի անվտանգությունը ապահովելու համար: Ռուսական կողմը, ասաց նա, պատրաստ է ամենատես և անշահախնդիր գործակցության:

Մեծահարգ նախարարը Նորին Սրբությանը նվիրեց իր հեղինակած և ատոմային էներգիային վերաբերող գրքեր:

Հանդիպմանը մասնակցեց Մայր Աթոռի դիվանապետ Տերտես արքեպս. Պոզապալյանը, որի ուղեկցությամբ հյուրերը եղան Մայր տաճարում և Վեհարանի սրահներում:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 14-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության արտաքին գործոց փոխնախարար Ալբերտ Չերնիշովին, Հայաստանի հետ երկկողմ բանակցություններ վարելու ռուսական պատվիրակության ղեկավար Վսեվոլոդ Օլեանդրովին և Հայաստանի Հանրապետությունում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Ա. Ուռնովին: Հանդիպման ընթացքին շոշափվեցին հայ-ռուսական հարաբերությունների ներկա փուլին, Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորմանն ու միջպետական փոխգործակցությանն առնչվող հարցեր: Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետն ընդգծեց Եկեղեցու դերակատարությունը՝ նշելով, որ առաջնահերթ խնդիրը քրիստո-

ևեական հավատքն ամուր պահելն է ժողովրդի մեջ: Վերջում արև. Ձերնիշոլը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը ջերմ ընդունելության և օգտակար գրույցի համար:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարար Վահան Փափազյանը և Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Յու. Մկրտումյանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Նոյեմբերի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների ռեգիոնալ բյուրոյի բաժնի վարիչ Ֆիլիպ Էլգուայեին, Վրաստանում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ Յուջին Յունկեին, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի երևանյան գրասենյակի աշխատակիցներ Հելեն Լյո Դահֆին և Անահիտ Սիմոնյանին:

Շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար, հյուրերը նշեցին, որ Հայաստանում ՄԱԿ-ը գլխավորաբար նախաձեռնում է երկարաժամկետ ծրագրեր, սակայն, հաշվի առնելով Հայաստանի յուրահատուկ տնտեսական կացությունը, իր նպաստը կբերի ձմռան նախապատրաստման աշխատանքներին, դաշտագրքերի հրատարակությանն ու այլ ձեռնարկումների:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի երևանյան գրասենյակը սերտորեն գործակցում է Հայաստանյայց Եկեղեցու հետ և նրա կառույցների միջոցով է նպատակադրվել իրականացնել օգնության բաշխման ծրագրերը:

Ողջունելով մեծահարգ հյուրերին Վեհարանի իր աշխատասենյակում, Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը նշեց, որ Հայ Եկեղեցին իր գործուն կառույցներով մեծ փորձառություն ունի օգնության բաշխումը կազմակերպելու գործում: Միջազգային կազմակերպությունների շարքում հատուկ ընդգծելով և բարձրորեն գնահատելով ՄԱԿ-ի կառույցների դերը, Վեհափառ Հայրապետը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցիչների այցը համարեց խորհրդանիշ՝ միասնական ու սերտ գործակցության:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը:

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Պորտուգալիայի արտակարգ և լիազոր դեսպան Ժոզե Մանուել Վիլլաշ-Բոաշին:

Ողջունելով մեծահարգ հյուրերին Վեհարանի իր աշխատասենյակում, Նորին Սրբությունը ներկայացրեց Հայաստանի տնտեսական ներկա կացությունը և Հայ Առաքելական Եկեղեցու գործունեությունը: Վեհափառ Հայրապետը կարևորեց Պորտուգալիայի հետ Հայաստանի Հանրապետության բարեկամական հարաբերությունների պետականությունը: Նորին Սրբությունն իր

գոհունակություն արտահայտեց այն փաստի առթիվ, որ հայ ժողովրդի զավակները իրենց եռանդուն մասնակցություն են բերում Պորտուգալիայի պետության ազգային և հոգևոր կյանքին: Զրույցի ընթացքում շոշափվեցին նաև միջեկեղեցական հարաբերություններին, Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորմանը վերաբերող հարցեր:

Գրն. Վիլլաշ-Բոաշը նշեց, որ իր պետությունը մեծապես կարևորում է Հայաստանի հետ գործակցությունը, և շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ ջերմ ընդունելության համար:

«ՄԵՆՔ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՆՔ»

Նոյեմբերի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Մուսալեռ» հայրենակցական միության նախագահ Կամո Տեր-Պետրոսյանին, միության նախագահի տեղակալ Միհրան Միհրանյանին, հիմնադիր կազմի անդամ Մովսես ավագ քհն. Ղազարյանին և միության բարեկամ Գրիգոր Ղազարյանին:

Շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը ընդունելության համար, միության նախագահ Կամո Տեր-Պետրոսյանը ներկայացրեց մուսալեռցիների վերջին տարիների մշակութային ձեռնարկները՝ նշելով, որ ժողովուրդը գնալով առավել եռանդուն մասնակցություն է բերում դրանց:

Գրն. Տեր-Պետրոսյանը ներկայացրեց այն գրքերը, որոնք հրատարակվում են միության հովանավորությամբ: Խոսակցության ընթացքում նշվեց նաև, որ մուսալեռցիները այսօր իրենց տեղն ունեն Արցախյան գոյամարտի տարեգրության մեջ, որոնցից 14-ը իրենց կյանքն են զոհաբերել հանուն հայրենյաց: Վեհափառ Հայրապետին ներկայացվեց Մուսալեռ գյուղի եկեղեցու նախագիծը, որ Նորին Սրբության առաջարկով բարեփոխվել էր՝ մեղեցու նախագիծը, որ Նորին Սրբության առաջարկով բարեփոխվել էր՝ մեծացվելով գրեթե երկու անգամ:

Իր խոսքի ավարտին գրն. Տեր-Պետրոսյանը Վեհափառ Հայրապետին հանձնեց Մուսա լեռան հերոսամարտի 80-ամյակի ոսկեձույլ հուշանշան և վկայագիր:

«Մենք հայրենակցական միություն չենք, մենք հայրենիք ենք,—ասուտումնական խոսքում ասաց Գարեգին Ա. Կաթողիկոսը,—որովհետև եթե տեղ մը այդ հողի վրա կզգացվի հայերու ներկայությունը, դա Քեսապի փոքրիկ մը այդ հողի վրա կզգացվի հայերու ներկայությունը, դա Քեսապի փոքրիկ կտորն է: Մենք այդ գյուղի տղաներն էինք, որ հիմա շատ է փոխվել, բայց կա»:

Վեհափառ Հայրապետը բարձրորեն գնահատեց միության գործունեությունը, նրա հատկապես մշակութային ձեռնարկները, հաջողություններ մաղթեց նրանց ծրագրերի իրականացման գործում և նվիրեց Քեսապի պատմությունը ներկայացնող գրքեր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Նոյեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Ազգությունների միության նախագահ Վլադիմիր Զատոևին և միության կազմի մեջ մտնող

«Հարմոնիա» և «Օդա» ռուսական մշակութային կենտրոնների, ռուսաստանցի հայրենակիցների օգնության և աջակցության հիմնադրամի, Ուկրաինական «Զերվոնա կալինա» համայնքի և բարեգործական հիմնադրամի, գերմանական, հունական, հրեական համայնքների և քուրդ մտավորականության ներկայացուցիչներին:

Հայաստանի Ազգությունների միության ղեկավարը Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց, որ 1994-ին պաշտոնապես գրանցված իրենց կազմակերպությունը նպատակ ունի աջակցել հանրապետությունում բնակվող ազգությունների կրթության և մշակույթի զարգացմանը: Այն չի միահյուսում և գործակցում որևէ կուսակցության հետ: Ապա պրն. Ջաւոնը Նորին Սրբությանը հանձնեց Ազգությունների միության ողջույնի ուղերձը:

Վեհարանի ընդունելությունների սրահում ողջունելով Ազգությունների միության ներկայացուցիչներին, Գարեգին Ա Կաթողիկոսն ասաց. «Ես շատ զգացված եմ այս այցելության համար: Ձեզ հետ պիտի խոսեմ ոչ պաշտոնապես, այլ անձնապես: Ես զգացել եմ անձնական փորձառությամբ, թե ինչ հպատություն է ազգերի ներդաշնակ գոյակցությունը: Ազգերը կարող են խաղաղորեն միասնական ապրել, եթե մեկ սկզբունք ունեն՝ մարդ են, Աստծո արարած: Մարդկությունը և մարդկային քաղաքակրթությունը սիմֆոնիա է, որտեղ գերազանց կամ անկարևոր մասնակիցներ չկան: Ես մեկ ազգի՝ մյուսի հանդեպ գերազանցության գաղափարին չեմ դավանում: Եթե այս գաղափարը մեր մեջ տարածվի, կվերանա ազգային տագնապը»: Վեհափառ Հայրապետը հաջողություններ մաղթեց Ազգությունների միության ներկայացուցիչներին, որոնք հայ ժողովրդի կյանքն են եղբայրորեն բաժանում: «Այսուհետև Ս. Էջմիածինը նկատեք ձեր տունը», ասաց Նորին Սրբությունը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը ծանոթացավ համայնքների կացության մանրամասներին և իր օրհնությունը բաշխեց նրանց՝ նվիրելով խաչ, հուշանշաններ, և իր բարեմաղթանքը ընծայագրեց Ազգությունների միության հուշագրքում:

* * *

Նույն օրը Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց մոսկվաբնակ բարերար Հրաչ Ոսկանյանին, նրա տիկնոջը, հարազատներին՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանի ուղեկցությամբ:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց հայ բարերարի ազգանվեր գործունեությունը, նրա նվիրատվությունները Մայր Աթոռին, ինչպես նաև Եռաբլուրում նոր եկեղեցու կառուցման հանձնառությունը: Նորին Սրբությունը առանձնակի նշեց, որ հայ բարերարի գործունեությունը բարձր գնահատանքի է արժանացել իր երջանկահիշատակ նախորդի՝ Վազգեն Վեհափառի կողմից և պրն. Ոսկանյանին հանձնեց Հայ Եկեղեցու բարձրագույն «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան և հայրապետական կոնդակ: Պրն. Ոսկանյանի հարազատներին հանձնվեցին հուշամեդալներ: Բարձրագույն պարգևի հանձնման արարողության վերջում պրն. Ոսկանյանը իր անկեղծ հուզմունքն ու շնորհակալանքը հայտնեց Վեհափառ Հայրապետին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՊ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Դեկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության բարձրագույն կրթության պետական կոմիտեի նախագահ պրն. Վլադիմիր Կինելյովին՝ ՀՀ գիտության և կրթության նախարար պրն. Վարդգես Գևորգյանի և Հայաստանի Հանրապետությունում ՈՊ դեսպանատան առաջին քարտուղար պրն. Վլադիմիր Սուարիկովի ուղեկցությամբ:

Շուրջ մեկժամյա ջերմ զրույցի ընթացքում Նորին Սրբությունն ու պրն. Կինելյովը խոսեցին հավատի, Եկեղեցու վերազարթոնքի, Եկեղեցի-ժողովուրդ փոխհարաբերությունների շուրջ: Պրն. Կինելյովը տեղեկացրեց, որ այժմ կրթության պետական կոմիտեն ծրագրեր է մշակում Ռուսաստանի միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում կրոնի պատմություն և դավանաբանություն ուսուցանելու ուղղությամբ: Այդ գործում նրանց գործուն աջակցություն է ցուցաբերում Ռուս Ուղղափառ Եկեղեցին: Մեծահարգ հյուրն իր մտահոգություններ արտահայտեց գործող աղանդավորական խմբերի կապակցությամբ: Գարեգին Ա Կաթողիկոսը հույս հայտնեց, որ նոր հազարամյակը կնշանավորվի հոգևոր նոր վերածնունդով, մարդիկ նորից ամուր կկանգնեն իրենց հավատքի վրա, և աղանդավորական խմբերը աստիճանաբար տեղի կտան:

«ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ՄԵԾԵՐԸ ԿՓՈՔՐԱՆԱՆ, ԵՎ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ՓՈՔՐԵՐԸ ԿՄԵԾԱՆԱՆ»

Դեկտեմբերի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ջորավար Անդրանիկ» միության ներկայացուցիչներին: Միության նախագահ Նորայր Մուշեղյանը ներկայացրեց կազմակերպության նպատակներն ու խնդիրները, որից հետո Վեհափառ Հայրապետին ողջունեցին ակադեմիկոս Պարիս Հերունին, բանաստեղծ Սրապիոն Սուրիկյանը, դերասան Ազատ Գասպարյանը և միության այլ անդամներ:

Շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար, «Ջորավար Անդրանիկ» միության ներկայացուցիչները Նորին Սրբությանը ընծայեցին գեղանկար և Վեհափառ Հայրապետի պատկերով մի գեղեցիկ սափոր:

Ողջունելով հյուրերին Վեհարանի ընդունելությունների սրահում, Գարեգին Ա Կաթողիկոսը կարևորեց ազգակերտման վրեմ գաղափարը: «Ընկալելու այնպիսի եղանակ պիտի մշակենք,—ասաց Նորին Սրբությունը,—որ հերոսությունը կյանքի մեջ արտահայտվի: Աշխատեք երիտասարդ սերընդի մեջ պայքար տանել արևմտյան քաղաքակրթության մակերեսային ազդեցությունների դեմ: Դրանք փրփուրն են արևմտյան արժեքների, բայց ոչ երբեք արժեք: Մեզ այսօր մատուցում են երաժշտություն, որի մեջ միակ բացականչությունն է, որ կա: Մենք պետք է մեր նոր սերնդի համար ազգային գաղափարաբանություն տարածենք»:

Վեհափառ Հայրապետը հիշեցրեց անցյալի մեր մոռացված պատրիարք-

ներից Հակոբ Նալչյանի խոսքը, թե անմիաբանությամբ մեծերը կփոքրանան, և միաբանությամբ փոքրերը կմեծանան:

Հաջողություններ մաղթելով միաբան ձեռնարկներին, Նորին Սրբություն ներկաներին ընծայեց իր հեղինակած գրքերից:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԵՔՍԻԿԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Դեկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մեքսիկայի արտակարգ և լիազոր դեսպան Աբելարդո Տրևինյոյին և նրան ուղեկցող անձանց: Ողջունելով մեծահարգ հյուրին Վեհարանի ընդունելությունների սրահում, Նորին Սրբությունը ներկայացրեց հանրապետության տնտեսական և ընկերային կացությունը և Մայր Աթոռի դերակատարությունը ազգային կյանքում: Գարեգին Ա Կաթողիկոսն անդրադարձավ Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման ուղիներին՝ առանձնակի շեշտելով, որ առաջնահերթ խնդիր է հայության այդ հատվածի անվտանգության ապահովումը: Խոսակցության առարկա հանդիսացան պետության և Եկեղեցու գործակցության, ինչպես նաև քրիստոնեական քարոզչության ծավալման հարցերը: Մենք մտահոգվում ենք այն խնդրով, թե ինչ են անում աղանդները, ասաց Նորին Սրբությունը, բայց առավել պիտի մտահոգվենք նրանով, թե ինչ ենք մենք անում:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, դեսպանը Վեհափառին ներկայացրեց իր առաքելության նպատակը՝ նշելով, որ իր պետությունը կարևորում է Հայաստանի Հանրապետության հետ հարաբերությունների ներտացումը:

Հանդիպման ավարտին Գարեգին Ա Կաթողիկոսը Աբելարդո Տրևինյոյին նվիրեց գրքեր և հուշամեդալ:

ՍԻԼՎԻԱ ԱՃԵՄՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Անցնող երկու շաբաթների ընթացքում (5—19 դեկտեմբեր 1995) Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառի հրավերով Հայաստան այցելեց անվանի հայ արվեստաբան և մանրանկարչության հետազոտող Օր. Սիլվիա Աճեմյանը (Բեյրութ):

Ս. Էջմիածնում իր կեցության շրջանին նա հնարավորություն ունեցավ մոտից ծանոթանալու Մայր Աթոռի չորս թանգարաններում ցուցադրված արվեստի գործերին, ձեռագրերին և հնություններին, այցելեց Մաշտոցի անվան Մատենադարան, հանդիպումներ ունեցավ տնօրեն Սեն Արևշատյանի և այլ գիտնականների հետ: Եղավ Պատմության և Երևանի այլ թանգարաններում: Այցելեց նաև Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ, Գեղարդի, Խոր Վիրապի, Սևանի կղզու վանքեր:

Երեքշաբթի, 12 դեկտեմբերին, նա ընդունվեց Հանրապետության նախագահի՝ մեծահարգ պրն. Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից նախագահական գրասենյակում և երկուստեք երկար խոսակցություն ունեցավ հայագետ Սիրարփի Տեր Ներսեսյանի վաստակի արժևորման մասին:

Շաբաթ, 16 դեկտեմբերին, Սիլվիա Աճեմյանը դասախոսությամբ հանդես եկավ Մայր Աթոռի հոգևոր ճեմարանում՝ հրավերովը տեսուչ Տ. Հայկազուն Ծ. վարդապետի: Դասախոսության նյութն էր Միրաւրփի Տեր-Ներսեսյանի անձն ու գիտական վաստակը:

Ջեռնարկին անձամբ ներկա գտնվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառը և կատարեց փակման խոսքը՝ արժանի հարգանք ընծայելով Միրաւրփի Տեր-Ներսեսյանի հիշատակին և գնահատանք՝ Սիլվիա Աճեմյանի եռանդուն գործունեության:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՓՈԽԿԱՆՑԼԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 21-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության փոխկանցլեր, արտաքին գործոց նախարար Կլաուս Քինկելին: Վեհափառը բարձրորեն գնահատեց գերմանական պետության, ինչպես նաև տնտեսական և ճարտարվեստական ընկերությունների բարյացակամ և զորակցական վերաբերումը Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ՝ քաղաքական, տնտեսական և տեխնիկական մարզերում: Նորին Սրբությունը հատուկ գնահատեց գերմանական Եկեղեցու, թե՛ կաթոլիկ, թե՛ ավետարանական, ցուցաբերած օրինակելի օժանդակությունը հատկապես աղետի գոտու վերականգնման մարզում: Վեհափառ Հայրապետը շեշտեց Դիակոնիշքե և այլ եկեղեցական և էկումենիկ կազմակերպությունների կատարած մեծ դերը և գործակցության պատրաստակամությունը հանդեպ Հայ Եկեղեցու:

Ջրույցից հետո Վեհարանի Հանդիսությունների դահլիճում Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ պրն. Քինկելի հետ ժամանած պատվիրակության անդամների հետ: Հանդիպմանը ներկա էին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը և Հայաստանում Գերմանիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Նորբերտ Հայնցեն:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐՐԸ ՄԻՇՏ ՍՏԵՂԾԱՐԱՐ Է ԵՂԵԼ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ»

Դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի Խորհրդարանի հայ պատգամավորներ Գիվի Ծուվարովին և Հենրիխ Մուրադյանին: Մեծաճարտ հյուրերը Վեհափառին ներկայացրեցին Վրաստանի ներկա կացության և հայ համայնքի կյանքի ընդհանուր պատկերը և ընդգծեցին Մայր Աթոռի հետ գործակցության կարևորությունը:

Ողջունելով հյուրերին Վեհարանի իր աշխատասենյակում, Վեհափառը շնորհավորեց նրանց Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր ընտրվելու առթիվ և հաջողություններ մաղթեց հայ-վրացական հարաբերությունների ներտացման կարևոր ասպարեզում: «Հայկական տարրը միշտ շինարար, ստեղծարար է եղել Վրաստանում,—ասաց Նորին Սրբությունը,—և հիմա, երբ հասարակական կյանքն ավելի է կայունանում, և հայրենիքին իրապես նվիրվածներն են առանձնում գլխավոր դերերը, պետք է հնարավորը ձեռ-

ևարկել, որպեսզի հայ-վրացական հարաբերությունները օրեօր ավելի բարելավվեն: Եթե դրացի երկրների հետ լավ չապրենք, ուրիշների հետ չենք կրնա ապրիլ»: Նորին Սրբությունը բարձրորեն գնահատեց Վրաստանի պետության ղեկավար Է. Շևարդնաձեի ջանքերը դրացի ժողովուրդների հեղբայրական հարաբերությունների ամրապնդման գործում:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը, Կրոնի գործոց պետական խորհրդի նախագահ Լազար Սուջյանը:

«ՄԵՆՔ ՊԵՏՔ ՈՒՆԵՆՔ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՉՄԱՆ»

Դեկտեմբերի 27-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Համիդռեզա Նիքքար Էսֆահանիին: Ջերմ զրույցի ընթացքում դեսպանի խնդրանքով Գարեգին Ա Կաթողիկոսն անդրադարձավ Հայաստանի ներկա կացությանը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դերակատարության խնդիրներին, միջպետական և միջեկեղեցական հարաբերություններին: «Նոր տարվա սեմին ենք կանգնած,—նշեց Վեհափառ Հայրապետը: — Երբ նայում եմ 1995 ին, ես փառք եմ տալիս Աստծուն, որ խաղաղ տարի շնորհեց Հայաստանին: Այս մեկ տարվա ընթացքում առավել ներտացան Հայաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության հարաբերությունները: Դրացի երկրների հետ ներտ հարաբերություններ մշակելը մեր ընդհանուր շահն է»:

Տեղեկություններ հաղորդելով իր հայրապետական այցելությունների վերաբերյալ, Նորին Սրբությունը անդրադարձավ նաև այն ծավալում աշխատանքին, որ իրականացվել է Մայր Աթոռում իր կաթողիկոսության շրջանին՝ քրիստոնեական դաստիարակության, կրոնի ուսուցիչների պատրաստման մարզերի մեջ: Վեհափառը առանձնակի կարևորեց դրացի ժողովուրդների փոխգործակցության խնդիրը: «Մենք պետք ունենք փոխադարձ ճանաչման», ավելացրեց Նորին Սրբությունը:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, Նորին Վսեմություն Համիդռեզա Նիքքար Էսֆահանիին նշեց, որ որևէ խոչընդոտ չկա Հայաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև տնտեսական և մշակութային համագործակցության ասպարեզում՝ ավելացնելով, որ այդ գործում առանձնապես մեծ է Գարեգին Ա Կաթողիկոսի դերը:

Հանդիպման ընթացքում շոշափվեցին նաև Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորմանն ու տարածաշրջանային գործակցությանն առնչվող հարցեր:

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 1-ին, կիրակի.—Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Բագրատ աբդ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բոստոնի Ս.Ստեփանոս եկեղեցու հովիվ Տ. Թորգոմ ավ. քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը.

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

Հոկտեմբերի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անանիա եպս. Արաբաջյանը: Ս. պատարագի ընթացքում կատարվեց սարկավագական ձեռնադրություն, որից հետո Վեհափառ Հայրապետը հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Հոկտեմբերի 29-ին, կիրակի.—Գ-իւտ Խաչ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կարապետ աբդ. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 4-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ավստրալիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջեֆրի Ռոբերտ Բենթլիին: Ողջունելով մեծահարգ հյուրին, Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Հայաստանի ներկա տնտեսական կացությունը, ապա դեսպանի խնդրանքով պատմեց Հայաստանյայց Եկեղեցու կառուցվածքի և հայ գաղթօջախներում նրա թեմերի կատարած աշխատանքների մասին:

Հայաստանն առաջին երկիրն է, որ պետականորեն ընդունել է Քրիստոնեությունը, նշեց Նորին Սրբությունը և տեղեկություններ հաղորդեց Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարման կենտրոնական հանձնախմբի վերջերս կայացած ժողովի աշխատանքների մասին: Մեզ համար անցյալն անցյալ չէ, ասաց Գարեգին Ա Կաթողիկոսը, և մենք ձգտում ենք կենդանի ու արթուն պահել մեր Եկեղեցու դարավոր ավանդույթները: Այդ նպատակով եռանդագին աշխատանքներ ենք տանում Ս. Էջմիածնի ճեմարանում հոգևորական նոր սերնդի պատրաստության համար:

Շեշտելով Եկեղեցու դերը ներկա դժվարին պայմաններում, Վեհափառ Հայրապետը կարևորեց միջեկեղեցական կապերի ու գործակցության ամրացումը:

Հանդիպման վերջում տեղի ունեցավ նվերների փոխանակություն:

«ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԿՊԱՏԿԱՆԻ ԲՈԼՈՐԻՍ»

Հոկտեմբերի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հայ բարերարներ՝ «Վեհէ-

Նոյեմբերի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ վրդ. Չուլջյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

Նոյեմբերի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը: Ս. պատարագի ընթացքում կատարվեց չորս սարկավագների քահանայական ձեռնադրություն, որի ավարտին շնորհավորանքի խոսք ասաց Վեհափառ Հայրապետը (տես էջ 72): Իսկ երեկոյան ժամերգությունից հետո կատարվեց երեք նորընծա քահանաների վեղարի տվչություն՝ ձեռամբ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի:

* * *

Նոյեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

Նոյեմբերի 26-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

Դեկտեմբերի 2-ին, շաբաթ.—Տօն Սրբոց Առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Բագրատ աբղ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ հանդիսավոր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ռխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ֆրեզնոյի հայոց հոգևոր հովիվ Տ. Սահակ վրդ. Զմրուխտյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ռխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ֆրեզնոյի հայոց հոգևոր հովիվ Տ. Սահակ վրդ. Զմրուխտյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ վրդ. Չուլջյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

Դեկտեմբերի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անուշավան աբղ. Ժամկոչյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Դեկտեմբերի 25-ին, երկուշաբթի.—Սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին:

Այսօր Մայր տաճարում, Ս. Ստեփաննոս նախավկայի խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս բհն. Մելիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ց Ա Ն Կ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1995 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ անդրանիկ կոնդակը, Զ—Է 5:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանին արքության տիտղոս և պատիվ շնորհելու մասին, Ը—Թ 88:

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի պատգամը Նոր տորուայ առթիւ, Ա 6:

Ամաւորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Կաթողիկոսական Տեղապահ, Նորին Ամենապատվություն Տ. Թորգոմ Պատրիարքի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագիրն ու գրությունները, Ա 13:

Կաթողիկոսական Տեղապահի շնորհավորական գիրը Ամաւորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու ևվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին, Ա 16:

Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկյանի, Հայաստանի Հանրապետության մեծահարգ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մեծահարգ նախագահ Բաբկեն Արարքցյանի, Հայաստանի Հանրապետության մեծահարգ վարչապետ Հրանտ Բագրատյանի և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանների միջև փոխանակվեցին հեռագրեր Ամաւորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ, Ա 18:

Վեհափառ Հայրապետն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակներին, Դ 68:

Հայրապետական իսօք շնորհակալութեան և գնահատանքի, Ե 3:

Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը տիար Ժակ Շիրակին՝ Ֆրանսիայի Հանրապետության նախագահի ընտրվելու առթիվ, Ե 11:

Շիրակայ թեմին Մեր հովուապետական անդրանիկ այցելութեան աւարտին, Սուրբ Էջմիածնի ուխտավայրի օջախից աղօթք եմ վերառաքում աւ Բարձրեալն Աստուած, Ե 89:

Արցախի թեմ կատարած Մեր հայրապետական այցելութիւնից յետոյ Մեր աղօթքն ենք վերառաքում աւ Աստուած և հայցում, Ե 130:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքն ու աղոթքը Հայաստանի Հանրապետության ընտրելիների Ազգային Ժողովի առաջին նիստին, Զ—Է 17:

Վեհափառ Հայրապետի խոսքը Վազգեն Առաջինի մահվան տարելիցի օրը՝ արտասանված շիրմի առաջ, Ը—Թ 11:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհակալական հեռագիրը հանյալ Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ին, Ը—թ 90:
Հայաստանի օրերը Վրաստանում, Ը—թ 128:
Խօսք Հայրապետական օրհնութեան Լազարեան ճեմարանի 180-ամեակի առթիւ, Ժ—ԺԱ—ԺԲ 65:
Գիր Հայրապետական օրհնութեան Սիոնիի «Արշակ և Սոֆի Գալստեան» վարժարանին, Ժ—ԺԱ—ԺԲ 67:
Վրաստանի Հանրապետության նախագահ Էդուարդ Շևարդնաձեի շնորհակալական հեռագիրը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Ժ—ԺԱ—ԺԲ 70:
Պատվիրակությունը Հայաստանից, Ժ—ԺԱ—ԺԲ 106:

Բ. ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ—Ի փառս Հավատի և Հայրենյաց, Դ 7:
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ամփոփ կենսագրությունը, Դ 14:
1995 թվականի Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորների ցուցակը, Դ 18:
Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության հանդիսությունների հյուրերի ցանկ, Դ 30:
Ազգային-Եկեղեցական Ժողովը, Դ 32:
Արձանագրություն Ազգային-Եկեղեցական Ժողովի, Դ 36:
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանի հեռագիրը Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկյանին՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարման և կաթողիկոսական ընտրության առթիվ, Դ 47:
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Կ. Բաբուրյանի հեռագիրը Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկյանին՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարման և կաթողիկոսական ընտրության առթիվ, Դ 48:
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ Լ. Պետրոսյանի հեռագիրը Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկյանին՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարման և կաթողիկոսական ընտրության առթիվ, Դ 49:
Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի խոսքը Ազգային-Եկեղեցական Ժողովում, Դ 50:
ՀՀ նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանի խոսքը Ազգային-Եկեղեցական Ժողովում, Դ 52:
Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ-ի խոսքը Ազգային-Եկեղեցական Ժողովում, Դ 55:
Գարեգին Ա Կաթողիկոսի խոսքը Մայր տաճարում ընտրություններից հետո, Դ 57:
Գարեգին Ա Կաթողիկոսի փակման խոսքը Ազգային-Եկեղեցական Ժողովում, Դ 59:
Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի շնորհավորական խոսքը գահասրահում, Դ 65:
Վեհափառ Հայրապետի խոսքը Վեհարանի գահասրահում ընտրությունից հետո, Դ 66:
Գահակալություն Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Դ 69:

Շնորհավորանքներ գահակալության առթիվ

Քույր Եկեղեցիների հոգևոր պետեր և եկեղեցական բարձրաստիճան գործիչներ, Դ 95:
Օտար պետությունների պետական և հասարակական գործիչներ, Դ 111:
Հայաստանի Հանրապետության և Արցախի պետական և սփյուռքահայ հասարակական գործիչներ, Դ 119:
Շնորհավորականներ Գարեգին Ա Կաթողիկոսի ընտրության առթիվ, Դ 129:
Հայրապետական պատգամ Ապրիլեան եղեռնի 80-ամեակի առթիւ, Դ 153:
Ծիծեռնակաբերդի թանգարանային համալիրի բացման առիթով ասված Վեհափառ Հայրապետի օրհնանքի խոսքը, Դ 159:
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ԱՇՃՅԱՆ—Հոմկլայեն Սուրբ Էջմիածին, Դ 164:
ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ—Մաշտոցյան Մատենադարանի բարեկամը և բարերարը, Դ 167:
ԲԱԲԿԵՆ ՉՈՒԳԱՍԶՅԱՆ—Արժանավոր հաջորդը, Դ 169:
ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—Լուսավորչի կանթեղը, Դ 170:
ԳԵՎՈՐԳ ԱԲԳԱՐՅԱՆ—«Նրա հիշատակը իմ անձի հետ միաշաղախաւոն ապրում է», Դ 172:

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ—Հանուն ազգի հպարտ գալիքի, Դ 175:
ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ—Գիտնականն ու մանկավարժը, Դ 178:
ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ—Եվս մի լուսատու փարոս, Դ 182:
ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Գիրքը, Դ 185:
Շնորհավորականներ Գարեգին Ա Կաթողիկոսի ընտրության առթիվ, Ե 131:

Գ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶՆԵՐ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ի (այժմ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս) քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Բ—Գ 5:
Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում կաթողիկոսական գահակալության առթիվ, Դ 72:
Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի Սուրբ Յարութեան տոնի առթիվ Մայր տաճարում, Դ 89:
Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում ապրիլի 24-ին, Դ 161:
Վեհափառի մտածումներից, Դ 195:
Վեհափառ Հայրապետի քարոզը՝ խոսված Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում, Ե 6:
Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում Երևման Սուրբ Խաչի տոնին, Ե 84:
Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տոնին, Զ—Է 13:
Վեհափառ Հայրապետի քարոզը՝ խօսուած Մայր տաճարում Ս. Աստուածածնի Վերափոխման տոնին, Ը—Թ 7:
Գարեգին Ա Կաթողիկոսի քարոզը՝ խոսված Մայր տաճարում, Վազգեն Ա-ի մահվան տարելիցի առթիվ, Ը—Թ 13:

Դ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ նախագահին ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Դ 67:
Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջին Կաթողիկոսի գահակալության առիթով տրված ճաշկերույթ Մարզահամերգային համալիրում, Դ 77:
Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Առաջինի այցելությունը Ծիծեռնակաբերդ, Դ 150:
«Ցեղասպանության հարցեր»-ի միջազգային գիտաժողով Գիտությունների Ազգային Ակադեմիայում, Դ 156:
Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հովվապետական այցելությունը Շիրակի թեմ, Ե 13:
Վեհափառ Հայրապետի հովվապետական այցելությունը Արցախի թեմ, Ե 91:
Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Ռուսաստանի Դաշնություն, Զ—Է 21:
ՍԱՐԳԻՍ ՍՐԿ. ԲՈՅԱՋՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի այցը Գուգարաց թեմ, Զ—Է 37:
ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆ—Վեհափառ Հայրապետի այցը Խոր Վիրապ և Արարատի շրջան, Զ—Է 63:
ՎԱՉԳԵՆ ԱԲԵՂԱ ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆ—Գարեգին Վեհափառ Հայրապետի այցը Անթիլիաս և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկրսի ընտրությունն ու օծումը, Ը—Թ 17:
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲՈՅԱՋՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Առաջինի այցը Սևանի ավազան, Ը—Թ 59:
ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի այցելությունը Վրաց Ուղղափառ Եկեղեցուն և Վիրահայոց թեմին, Ը—Թ 71:
Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ—Վեհափառ Հոր մասնակցությունը համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի բացման արարողությանը, Ը—Թ 91:
Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունը Խնկո Ապոր անվան մանկական գրադարան, Ը—Թ 95:

ԱՐՏԱԿ ԱԲԵՂԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ—Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի այցը Ռումինիա, Ժ—ԺԱ—ԺԲ 5:
ՎԱՐՈՒԺԱՆ ՍԲԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆ—Վեհափառ Հայրապետի այցելությունը Օդեսա, Ժ—ԺԱ—ԺԲ 31:
ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ—Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցը Ախաբաեյան հայրապետական թեմ, Ժ—ԺԱ—ԺԲ 49:
Սուրբ պատարագ՝ Թարգմանչաց տոնին, Ժ—ԺԱ—ԺԲ 81:
Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ—Կրոնից ուսուցիչների պատրաստման նոր դասընթացի բացումը Ախալքալաքյան հայրապետական թեմում, Ժ—ԺԱ—ԺԲ 101:
Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ—Քրիստոնեական կրոնի ուսուցիչների պատրաստման լսարանի բացումը Արտաշատում և Ապարանում, Ժ—ԺԱ—ԺԲ 103:

Ե. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմի առաջին նստաշրջանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ը—Թ 100:

Զ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Խմբագրական, Ա 3:
Խմբագրական, Բ—Գ 3:
Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմ, Դ 3:
Քրիստոսաբանական արժեչափ հանդեպ արարչագործության, Զ—Է 3:
Խմբագրական, Ը—Թ 3:
Առաքելականությունը՝ աղբյուր առաքելության, Ժ—ԺԱ—ԺԲ 3:

Է. ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Եկեղեցական բեմ. լուրեր, Ա 103, Բ—Գ 134, Դ 208, Ե 178, Զ—Է 117, Ը—Թ 173, Ժ—ԺԱ—ԺԲ 187:
Ընդունելություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ե 133, Զ—Է 104, Ը—Թ 167, Ժ—ԺԱ—ԺԲ 173:
Ուխտագնացություն դեպի Հավուց Թառի Ամենափրկիչ վանք, Զ—Է 67:
Տարելից Վազգեն Ա Կաթողիկոսի վախճանման և հոգեհանգստի պատարագ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ը—Թ 10:
ՎԱՐՈՒԺԱՆ ՍԲԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆ—Հայաստանի Քրիստոնեական դաստիարակության դպրոցների ուսուցիչների մեկօրյա համագումար Մայր Աթոռում, Ը—Թ 97:
Հոգելից պահեր Սուրբ Էջմիածնում, Ը—Թ 132:
Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարման Հայ Եկեղեցու Կենտրոնական հանձնախմբի ժողովը Մայր Աթոռում, Ժ—ԺԱ—ԺԲ 51:
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին շնորհվեց Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում, Ժ—ԺԱ—ԺԲ 69:
Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ժ—ԺԱ—ԺԲ 71:
ԱՐՏԱԿ ԱԲՂ. ՏԻԳՐԱՆՅԱՆ—Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ժ—ԺԱ—ԺԲ 79:
Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ—Հայաստանի Քրիստոնեական դաստիարակության օրվան նվիրված հանդիսություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ժ—ԺԱ—ԺԲ 87:

Ը. ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ—Հոգևոր ճեմարանի հիմնադրությունը և վերաբացումը, Ը—Թ 111;

Թ. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի քարոզը Փրկչի հրաշափառ Ս. Ծննդեան տօնի առթիւ Մայր տաճարում, Ա 9:
ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈՉԱՊԱԼՅԱՆ—«Ողորմածությամբ արդարացնենք ապաշխարությունը», Բ—Գ 9:
ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ—«Մի չարաշահեք Աստծո ներողամտությունը», Բ—Գ 13:
Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված 1995 թ. մայիսի 28-ին, Երկրորդ Ծաղկազարդի տոնի առթիվ, Ե 139:
ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ—Խորհրդածություններ միջկրոնական հարցերի շուրջ, Զ—Է 72:
Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը Սամարղանդի Ս. Աստվածածին եկեղեցու օծման առթիվ, Ը—Թ 108:
ՄԱՐԻՆԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ—Հայաստանյայց Եկեղեցվո կիրակնօրյա դպրոցների միջթեմական հանդիպումները Քեսապում, Ը—Թ 117:
Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը Մայր տաճարում, Ը—Թ 122:
Հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանի անդրանիկ քարոզը Մայր տաճարում, Ը—Թ 139:
Հոգեշնորհ Տ. Բագրատ աբեղա Գալստյանի անդրանիկ քարոզը Մայր տաճարում, Ը—Թ 143:
Հոգեշնորհ Տ. Կարապետ աբեղա Հարությունյանի անդրանիկ քարոզը Ս. Գայանե վանքում, Ը—Թ 146:
Հոգեշնորհ Տ. Գուրգեն աբեղա Աղաբաբյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ս. Աստվածածին եկեղեցում, Ը—Թ 149:
ՇԱՀԷ ԱՐՔԵՊՍ. ԱՃԷՄԵԱՆ—Հաւատք, Ը—Թ 151:
Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված Գյուտ Խաչի տոնի առթիվ, Ժ—ԺԱ—ԺԲ 83:

Ժ. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՄԱՂԱՔԻԱ ԱԲԳ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ—Կոմիտաս վարդապետը 125 տարեկան, Բ—Գ 105:
ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՋԱՊԱՀՅԱՆ—Մելիքգյուղի Ս. Հովհաննես եկեղեցու վերաբացումը, Զ—Է 61:
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲՈՅԱՋՅԱՆ—Նոր եկեղեցու հիմնարկեք Տաշիր քաղաքում, Ը—Թ 102:
Հայկական եկեղեցու օծում Սամարղանդում, Ը—Թ 106:
ՏԻԳՐԱՆ ՍԱՆՈՍՅԱՆ—Հանդիսություն Խոջաբեկ գյուղում, Ը—Թ 130:
ԱՆԱՀԻՏ ՍԵՊՐԱԿՅԱՆ—Ջեռնադրություն Արարատյան հայրապետական թեմում, Ժ—ԺԱ—ԺԲ 86:

ԺԱ. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

Մ. Ծ. Վ. Ա.—Բոլդերևի միջեկեղեցական հանդիպումը, Զ—Է 65:
ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ—Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի տարեկան նստաշրջանը, Ը—Թ 126:

ԺԲ. ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

Աստվածաշունչ Մատյանից, Ա 61:

ԺԳ. ԳՐԱԿԱՆ

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

Հերոս արցախցուն, Ա 87:
Հովհաննես Թումանյանի հիշատակին, Ա 88:
Ծաղիկներս, Ա 89:

ՎՈՒՈՂՅԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ցավ ի սիրտ, Ա 19:
Դեպի փրկություն, Ե 168:
Սուրբ Էջմիածնի պատերի տակ, Ը—Թ 155:
Հույսի լուսաբացը, Ժ—ԺԱ—ԺԲ 154:

ԺԴ. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇՃՅԱՆ Վ. Ս.—Կրթությունը Կ. Պոլսում 18-րդ դ. վերջին և 19-րդ դ. առաջին կեսին, Բ—Գ 81:
ԱՋԱՊԱՀՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ.—Սիրո գաղափարը Հին Կտակարանում, Ե 156:
ԱՍՄԱՐՅԱՆ ՀՐԱՉՅԱ ԱՇՈՏԻ—Հրաչյա Աճառյանի «Տաճկահայոց հարցի պատմությունը» աշխատությունը, Ժ—ԺԱ—ԺԲ 107:
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՔՆԱՐԻԿ—Մկտում Հովնաթանյանի արվեստը, Ա 76:
ԲՐՈՒՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ—Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, Ա 47, Ժ—ԺԱ—ԺԲ 130:
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՍՏՂԻԿ—Լևոն Գ թագավորի նորահայտ տպագիր դիմապատկերը, Ա 72:
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ—Էջմիածնի և շրջակա վայրերի տնտեսական ու մշակութային կյանքի արտացոլումը Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսի անտիպ նամակներում, Զ—Է 76:
ԴԵՎՐԻԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ—Ամենամեծ առաքինությունը, Բ—Գ 45:
ԽԱՉԱՏՐՅԱՆ Լ. Մ., ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ Դ. Ս.—Դիտարկումներ «Ատվաձ» բաղադրիչով կայուն բառակապակցությունների շուրջ, Ա 41:
ԽԱՌԱՏՅԱՆ ՀԵՆՐԻԿ—Դիլիջանի Ս. Աստվածածին և Ս. Պողոս եկեղեցիները, Բ—Գ 62:
ՀԱԿՈԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ—Սուրբ Ծնունդի և Կաղանդի անդրադարձումները արևմտահայ նոր-ռավեպի գեղարվեստական համակարգում, Ա 90:
ՀԱԿՈԲՅԱՆ ՊԻՈՆ
Սրբագրումներ հայ հին մատենագրության մեջ, Բ—Գ 96:
Նիրհող և արթնացող մեղեդի, Ժ—ԺԱ—ԺԲ 114:
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՈՎԻԿ—Կիրակոս Վիրապեցու կոնդակը, Ա 22:
ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ—Հայ Եկեղեցու թեմական բաժանումը Ե—Է դարերում, Զ—Է 94:
ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ
Մայր Աթոռի Մատենադարանի գրադարանը, Բ—Գ 90:
Պատմական մի վավերագիր (Գարեգին Հովսեփյանի անտիպ նամակներից), Ե 165:
ՄԱԼԽԱՍՅԱՆ ԱՐՄԵՆ—Հայերեն ձեռագրերի կազմերը և նրանց պատրաստման եղանակները, Բ—Գ 75:
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ—Կորյունի մասին մատենագրական մի վկայության ընթերցում, Բ—Գ 71:
ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՍՄԻԿ—Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի արաբերեն թարգմանությունը, Ա 99:
ՄՈՒՏՍՈՊՈՒԼՈՍ Ն., ԴԻՄԻՏՐՈԿԱԼԼԻՍ Կ.—Սուրբ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը Յունաստանի մէջ, Ե 142:
ՆԵՐՍԷՍԵԱՆ ԴՈԿՏ. Տ. ՆԵՐՍԷՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ—Հաւատամք և ի Մի միայն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ և ԱՌԱՔԵԼԱԿԱՆ, (ՍՈՒՐԲ) Եկեղեցի, Ե 148:
ՊԱՊՅԱՆ ՄՀԵՐ—Հովհաննէս Օձնեցի Կաթողիկոսի պայքարը քաղկեդոնականության դեմ և Հայ Եկեղեցու ազգայնացման փուլի ավարտը, Բ—Գ 18:
ՊՈՋԱՊԱԼՅԱՆ ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ—Մտորումներ եփեսացիներին ուղղված Պողոս Առաքյալի նամակի մասին, Զ—Է 69:
ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ—Ներսես Աշտարակեցի—Պաշտպան Հայրենյաց, Բ—Գ 27:
ՍՏԵՓԱՆՅԱՆՑ ՍՏԵՓԱՆ—Կյանք մահվանից հետո, Ա 30:
ՔՅՈՍԵՅԱՆ ՀԱԿՈԲ—Ս. Աթանաս Ալեքսանդրացու՝ հունարեն բնագրով անհայտ Անտիոքի Եկեղեցուն հղած թղթի հայերեն թարգմանությունը, Բ—Գ 51:

ԺԵ. ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՂԴԱՍԱՐ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ—Անմնացորդ նվիրումով, Բ—Գ 115:
ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Ծառայություն գաղիակալներին, Բ—Գ 121:

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ամփոփ կենսագրությունը, Ը—Թ 57:
Տ. Արտակ աբեղա Տիգրանյան, Ը—Թ 135:
Տ. Բագրատ աբեղա Գալստյան, Ը—Թ 136:
Տ. Կարապետ աբեղա Հարությունյան, Ը—Թ 137:
Տ. Գուրգեն աբեղա Աղաբաբյան, Ը—Թ 138:
Տ. Բաբկեն աբեղա Սալբիյան, Ժ—ԺԱ—ԺԲ 75:
Տ. Դերենիկ աբեղա Դավթյան, Ժ—ԺԱ—ԺԲ 76:
Տ. Անուշավան աբեղա Ժամկոչյան, Ժ—ԺԱ—ԺԲ 77:
Տ. Պարթև քահանա Աշուրյան, Ժ—ԺԱ—ԺԲ 78:

ԺԶ. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Յուցակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, Ա 105, Բ—Գ 138, Ը—Թ 175:
ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ—«Ընտրեալդ Աստուծոյ», Բ—Գ 107:
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ
Կարևոր հրատարակություն, Բ—Գ 111:
Գիրք բանաստեղծի և մտածողի մասին, Ե 174:
Կորյունի երկը նոր քննությամբ, Զ—Է 113:
1700-ամյակի թեկադրանքով, Ը—Թ 163:
ՊՈՂՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ—Երկարորեն սպասված գիրք, Դ 188:
ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ—Լույսի ցոլքեր, Ժ—ԺԱ—ԺԲ 163:

«Էջմիածին» ամսագրի յուրաքանչյուր համարի վերջում տրվում են բովանդակության համառոտ թարգմանությունները ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով:

„ЭЧМИАДЗИН"

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

(ОКТЯБРЬ—НОЯБРЬ—ДЕКАБРЬ 1995 г.)

СОРЕДАКЦИОННАЯ

1. Апостольство—источник миссии (стр. 3—4).

2. ИЕРОМОНАХ АРТАК ТИГРАНЯН—ПОЕЗДКА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГАРЕГИНА I В РУМЫНИЮ, 26 октября—2 ноября 1995 г. (стр. 5—29).

3. ДИАКОН ВАРУЖАН ТЕРТЕРЯН—ПОЕЗДКА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГАРЕГИНА I В Г. ОДЕССУ, 24—27 ноября 1995 г. (стр. 31—48).

4. АНАИТ СЕДРАКЯН—Благодатное посещение Католикоса всех армян Гарегина I Араратской патриаршей епархии, 17 декабря 1995 г. (стр. 49—50).

5. Торжественное собрание Центральной Комиссии Армянской Апостольской Церкви, посвященное 1700-летию провозглашения христианства государственной религией в Армении в первопрестольном Эчмиадзине, 27—29 сентября 1995 г. (стр. 51—64).

6. Слово благословления Католикоса всех армян Гарегина I по случаю 180-летия Лазаревской семинарии, 6 декабря 1995 г. (стр. 65—66).

7. Благословительное послание Католикоса всех армян Гарегина I по случаю 10-и летия лицея «Аршак и Софи Галстян» в г. Сиднее, 21 сентября 1995 г. (стр. 67—68).

8. Звание почетного доктора Ереванского государственного университета было присуждено Католикосу всех армян Гарегину I. Вручение постановления в первопрестольном Эчмиадзине, 20 декабря 1995 г. (стр. 69).

9. Благодарственная телеграмма президента Республики Грузия Эдуарда Шеварнадзе Католикосу всех армян Гарегину I, 2 ноября 1995 г. (стр. 70).

10. Священническое рукоположение в первопрестольном Эчмиадзине. Также помещена проповедь Католикоса всех армян Гарегина I в Кафедральном соборе по случаю священнического рукоположения, 12 ноября 1995 г. (стр. 71—74).

11. Биографии иеромонаха Бабкена Салбияна, иеромонаха Дереника Давтяна, иеромонаха Анушавана Жамкочяна и священника Партева Ашуряна (стр. 75—78).

12. ИЕРОМОНАХ АРТАК ТИГРАНЯН—Диаконское рукоположение в первопрестольном Эчмиадзине, 21—22 октября 1995 г. (стр. 79—80).

13. Божественная литургия в церкви Св. Месропа Маштоца в Ошакане по случаю праздника Таргманчац, 14 октября 1995 г. (стр. 81—82).

14. Проповедь архиепископа Нерсеса Позапаляна в Кафедральном соборе Св. Эчмиадзина по случаю праздника Обретения Святого Креста, 29 октября 1995 г. (стр. 83—85).

15. АНАИТ СЕДРАКЯН—Рукоположение в Араратской патриаршей епархии, 25—26 ноября 1995 г. (стр .86).

16. М. ВАРТАНЯН—Торжество, посвященное дню христианского воспитания в Армении в первопрестольном Эчмиадзине, 2 декабря 1995 г. (стр. 87—100).

17. М. ВАРТАНЯН—Открытие нового курса по подготовке учителей религии в Араратской патриаршей епархии (стр. 101—102).

18. М. ВАРТАНЯН—Открытие аудитории по подготовке учителей христанской религии в Арташате и Апаране, 12—13 ноября 1995 г. (стр. 103—105).

19. Делегация Республики Армения в Грузии, 12—14 ноября 1995 г. (стр. 108).
20. ГРАЧЬЯ АШОТОВИЧ АСМАРЯН—Труд Грачья Ачаряна «История армянского вопроса в Турции» (исследование)—(стр. 107—113).
21. ПИОН АКОПЯН—Дремлющая и пробуждающая мелодия (исследование)—(стр. 114—119).
22. ГРИГОР БРУТЯН—О некоторых вопросах армянского календаря (исследование)—(стр. 130—153).
23. ВОЛОДЯ АБРАМЯН—Восход надежды (литературный)—(стр. 154—162).
24. АКОП КЕОСЕЯН—Блески света (рецензия)—(стр. 163—172).
25. Приемы в первопрестольном Эчмиадзине, 4 октября—27 декабря 1995 г. (стр. 173—186).
26. Церковная хроника первопрестолного Эчмиадзина за октябрь—ноябрь—декабрь месяцы (стр. 187—189).
27. Перечень статей, напечатанных в журнале «Эчмиадзин» за 1995 г. (стр. 190—195).

„ETCHMIADZIN"

OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN

(OCTOBER, NOVEMBER, DECEMBER 1995)

FOR EDITORIAL

1. The opostolicism as the source of apostleship (pp. 3—4).

2. REV. FATHER ARDAK TIGRANIAN—THE VISIT OF GUAREGUIN I CATHOLICOS OF ALL ARMENIANS IN RUMANIA, from 26--th October to 2nd November 1995 (pp. 5—29).

3. DEACON VAROOJAN TERTERIAN—THE VISIT OF HIS HOLINESS AT ODESSA, 24-27th November 1995 (pp. 31—48).

4. ANAID SEDRAKIAN(The gracious visit of His Holiness to the Araratian patriarchal diocese, 17th December 1995 (pp. 49—50).

5. On the occasion of the 1700-th anniversary of the proclamation of Christianity as state religion in Armenia's celebration of the Armenian Church Central Committee's meeting in the Mother See. 27—29th September 1995 (pp. 51—64).

6. The address of blessing of His Holiness on the occasion of the 180th anniversary of Moscow's Lazarian College, 6-th December 1995 (pp. 65—66).

7. The letter of blessing of His Holiness the Catholicos of All Armenians on the occasion of the 10-th anniversary of Sydney's «Arshag and Sofia Kalesdan» College, 21-st September 1995 (pp. 67—68).

8. It has been granted the nomination of Honourable Doctor of the Yerevan's university to His Holiness Guareguin I Catholicos of All Armenians. The delivery of the decision: 23th December in the Holy See of St. Etchmiadzin (p. 69).

9. Cable of gratitude of Mr. Edward Shevardnadzeh, president of the Georgian Republic, to His Holiness Guareguin I, Catholicos of All Armenians, 2-nd November 1995 (p. 70).

10. Sacerdotal ordination in the Holy See of St. Etchmiadzin. It has given also the sermon of His Holiness on the occasion of the sacerdotal ordination, 12-th November 1995 (pp. 71—74).

11. The biographies of Rev. Father Babken Salbiyan, of Rev. Father Derenik Davtian, of Rev. Father Anooshavan Jamgotchian and of Rev. Father Bartev Ashoorian (pp. 75—78).

12. REV. FATHER ARDAK TIGRANIAN—Diaconal ordination in tse Mother See of Holy Etchmiadzin, 21st-22nd October 1995 (pp. 79—80).

13. Holy Mass in the Oshagan Saint Mesrop Mashtotz church on the occasion of the feast of Translators 14-th October 1995 (pp. 81—82).

14. Sermon of Archbishop Nerses Bozabalian given on the occasion of the discovery of the Cross in the Mother Cathedral of Holy Etchmiadzin, 29-th October 1995 (pp. 83—85).

15. ANAHID SEDRAKIAN—Ordination in the Patriarchal Araratian diocese, 25—26th November 1995 (p. 86).

16. M. VARDANIAN—Festival devoted to the day of Armenia's Christian education in the Mother See of Holy Etchmiadzin, 2nd December 1995 (pp. 87—100).

17. M. VARDANIAN—The opening of the new course for the preparation of the teachers of religion in the Araratian Patriarchal diocese (pp. 101—102).

18. M. VARDANIAN—The opening of the auditory for the preparation of the teachers of christian religion in Artashat and Aparan regions, 12—13th November 1995 (pp. 103—105).

19. The delegation of the Armenian Republic in Georgia, 12—14th November 1995 (p. 106).

20. HRATCHYA ASMARIAN—About the book of Hratchya Adjarian's «The history of the Turqish Armenian's question» (study)—(pp. 107—113).

21. PION HAGOBIAN—The sleepy and awakening melody (study)—(pp. 114—129).

22. GRIGOR BROOTIAN—About some question of Armenian calendar (study)—(pp. 130—153).

23. VOLODYA ABRAHAMIAN—The dawn of hepe (litterary)—(pp. 154—162).

24. HAGOB KEUSEYAN—Reflections of light (bibliographical)—(pp. 163—172).

25. Receptions in the Mother See of Holy Etchmiadzin, 4-th October—27-th December 1995 (pp. 173—186).

26. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the months of October—November—December 1995 (pp. 187—189).

27. List of the materials printed in the «Etchmiadzin» monthly during the year 1995 (pp. 190—195).

„ETCHMIADZINE"

ORGANE OFFICIEL DU SAINT—SIEGE D'ETCHMIADZINE

(OCTOBRE, NOVEMBRE, DECEMBRE 1995)

POUR EDITORIAL

1. Apostolacité comme la source d'apostolat (pp. 3—4).

2. REV. PERE ARDAK TIGRANIAN—LA VISITE DU GUAREGUINE I CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS EN ROUMANIE, du 26 Octobre au 2 Novembre 1995 (pp. 5—29).

3. DIACRE VAROUJAN TERTERIAN—LA VISITE DU GAREGUINE I CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS EN ODESSA, 24—27 Novembre 1995 (pp. 3i—48).

4. ANAHID SEDRAKIAN—La visite gracieuse de Sa Sainteté à la diocèse patriarcale d'Araratian, le 17 Décembre 1995 (pp. 49—50).

5. A l'occasion du 1700-ième anniversaire de la proclamation du chrétienté en Arménie comme religion d'état l'assemblée centrale de la commission de l'Eglise Arménienne du Saint-Siège, 27—29 Septembre 1995 (pp. 51—64).

6. La parole de bénédiction de Sa Sainteté du Catholicos de Tous les Arméniens à l'occasion de 180-ième anniversaire du Collège Lazarian de Moscou, le 6 Décembre 1995 (pp. 65—66).

7. La lettre de bénédection de Sa Sainteté à l'occasion du dixzième anniversaire du college «Archak et Sophie Kalesdan», le 21 Septembre 1995 (pp. 67—68).

8. C'est accordé la nomination d'Honorable Docteur de l'Université d'Erévan à Sa Sainteté Garéguine I Catholicos de Tous les Arméniens. La délivrance de la déci sion: 20 Décembre dans le Saint-Siège d'Etchmiadzine (p. 69).

9. Cable du remercîement de Mr. Edouard Chévardnadzeh à Sa Sainteté Garéguine I Catholicos de Tous les Arméniens, le 2 Novembre 1995 (p. 70).

10. Ordination sacerdotale dans le Saint-Siège d'Etchmiadzine. Il y a aussi le sermon de Sa Sainteté qui a donnée dans la Cathédrale à l'occasion de l'ordination sacerdotale, le 12 Novembre 1995 (pp. 71—74).

11. Les biographies du Rév. Père Babken Salbiyan, du Rév. Père Dérénik Davtian, du Rév. Père Anouchavan Jamgotchian et du Rév. Père Bartève Achourian (pp. 75—78).

12. REV. PERE ARDAK TIGRANIAN—Ordination diacrale au Saint-Siège d'Etchmiadzine, le 21—22 Octobre 1995 (pp. 79—80).

13. Sainte Messe dans l'église St. Mesrop Mashdotz d'Ochagan à l'occasion de la fête des Traducteurs, le 14 Octobre 1995 (pp. 81—82).

14. Le sermon d'Archevêque Nerses Bozabalian donné à l'occasion de la décou-

verte de la Croix dans la Cathédrale de la Saint Etchmiadzine, le 29 Octobre 1995 (pp. 83—85).

15. ANAHID SEDRAKIAN—Ordination dans la diocèse Patriarcale Araratian, le 25—26 Novembre 1995 (p. 86).

16. M. VARDANIAN—Solennité dédi cée au jour de l'éducation chrétienne d'Arménie dans le Saint-Siège d'Etchmiadzine, le 2 Décembre 1995 (pp. 87—100).

17. M. VARDANIAN—L'ouverture d'un nouveau cours pour la préparation des instituteurs de religion dans la diocèse Patriarcale Araratian (pp. 101—102).

18. M. VARDANIAN—L'ouverture d'auditoire pour la préparation des instituteurs de religion dans les régions d'Artachat et Aparan, le 12—13 Novembre 1995 (pp. 103—105).

19. La délégation de la République d'Arménie en Géorgie, le 12—14 Novembre 1995 (p. 106).

20. HRATCHYA ASMARAIN—L'ouvrage du Hratchya Adjarian «La question de l'vistoire des Arméniens de la Turquie» (étude)—(pp. 107—113).

21. PION HAGOBIAN—La mélodie dormeuse et réveilleuse (étude)—(pp. 114—129).

22. GRIGOR BROUTIAN—Sur quelques questions du calendrier des Arméniens (étude)—(pp. 130—153).

23. VOLODYA ABRAHAMIAN—L'aurore de la lumière (littéraire)—(pp. 154—162).

24. HAGOB KEUSEYAN—Les reflets de la lumière (bibliographique)—(pp. 163—172).

25. Réceptions au Saint-Siège du Saint Etchmiadzine, du 4 Octobre au 27 Décembre 1995 (pp. 173—186).

26. Brèves informations concernant les célébrations des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la Cathédrale de Saint Etchmiadzine au cours des mois d'Octobre—Novembre—Décembre 1995 (pp. 187—189).

27. Table des matières publiées dans la revue «Etchmiadzine» au cours de l'année 1995 (pp. 190—195).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՑԻ

Առաքելականութիւնք[1] սղոյս առաքելութեան ... 8

ԱՐՁԱԿ ԱՌԵՔԱԼ ՋԻԳՐԱՆՑՑԱՆ—ԱՄԵՆԱՆՑՆ ՀԱՑՈՑ ԳԱՒՐԵԳԻՆ և ԿԱՓՈՎՈՒԹԻՒՆ ԱՑՑԸ ՈՄԻՍԻՆԻ ... 5

ԱԼԱՐՈՒԹԻՒՆ ՍԻՒ, ՋԵՐՈՋԵՐՑԱՆ—ՎԵՀԱՓԱՌՈՒ ՀԱՑՐՈՒՊԵՑԻ ԱՑՑԵԼՈՒԹՒՆԸ ՕՎԵՐԻ ... 81

ԱՆԱՀԻՑ ՍԵՒՐՈՒԱՑՑԱՆ—Վեճասիրտ Հայրապետի բնորոշութիւն սկզբ Արարատեան թղթակոսական թեմ ... 49

Հայաստանեայց քրիստոնէութեան պետական կրօն ճոչակելու 1700-ամեակի տոնակատարութիւն Հայ Եկեղեցու Կենսատրոնական Հանճարեղի ժողովք Մայր Աթոռում ... 51

Խոսք Հայրապետական Օրհնութեան Լազարեան ճեմարանի 180-ամեակի առթիւ ... 65

Գիր Հայրապետական Օրհնութեան Սիսոնի «Սիրուն և Սոֆի Գալուստ» վարժարանին ... 67

Ն, Ս, Օ, Ջ, Ջ, Գաբրիէլի Ս Նահապետական քնորհիւք Էրևանի պետական ճեմարանի ... 69

Արարատեան Հայրապետութեան ճեխուզան Էդուարդ Մելարդեանցի քնորհակալական ճեռագիրք Ն, Ս, Օ, Ջ, Ջ, Գաբրիէլի Ս Սահճան Հայոց Նահապետին ... 70

Քահանայական ձեռնադրութիւն Մայր Աթոռ Ս, Էջմիածնում ... 71

Ջ, Բարկեն արեղա Նալբանեան ... 75

Ջ, Գէորգիկ արեղա Գասպեան ... 76

Ջ, Մեսրոպ արեղա Ժամկոչեան ... 77

Ջ, Գարեգին քահանա Սիրունեան ... 78

ԱՐՁԱԿ ԱՌՔ, ՋԻԳՐԱՆՑՑԱՆ—Նարեկասիրագական ձեռնադրութիւն Մայր Աթոռ Ս, Էջմիածնում ... 79

Նուրբ պատասխան[1] Թարգմանչաց տոնին ... 81

Գեղարշունի Ջ, Կեղտեղ արքեպիսկոպոս Պոզապալեանի քարոզք[1] խոսված Գլուխ Խաչի տոնի առթիվ ... 88

ԱՆԱՀԻՑ ՍԵՒՐՈՒԱՑՑԱՆ—Ձեռնադրութիւն Արարատեան ճայրապետական թեմում ... 86

Մ, ՎԱՐԴԱՆՑԱՆ—Հայաստանեայց քրիստոնեական դասակարգական կարգ ճին ու նոր ... 87

Մ, ՎԱՐԴԱՆՑԱՆ—Կրոնից ուսուցիչների պատրաստման մեր դասընթացի բացումը Արարատեան հայրապետական թեմում ... 101

Մ, ՎԱՐԴԱՆՑԱՆ—Քրիստոնեական կրոնի ուսուցիչների պատրաստման բարձր բացումը Արարաշատում և Նախիջևանում ... 108

Պատուիրակութեան Հայաստանից ... 106

ՀՐԱՏՑԱՆ ՍՈՍԻ ՍԱՐԳՍՈՑԱՆ—Հրատ տէրտ Սմբատյանի «Ցանկալի հարցի պատասխան» աշխատութեան ... 107

ՊԻՏԱՆ ՀԱՆԳՈՑՑԱՆ—Նիւթոց և առթացեալ մեկնի ... 114

ԳՐԻԳՈՐ ԼՐՄԻՑԵԱՆ—Հայոց տոմարի տուն հարցերի մասին ... 180

ՎԱԼՈՒՑԱՆ ԱՌՔԱՀԱՄՑԱՆՆ—Հույսի յուսաբացը 154
ՀԱՆՈՒՐ ՔՅՈՒՆԵՑԱՆՆ—Հույսի ցոլքեր 168
Ընդունելություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 178

ՄԵՐ ԱՂՕՒՈՒՄԸ

Եկեղեցական բեմ. լուրեր 187
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1995 թվականի ընթացքում տպագրված գլուխների . 190
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . 197
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 199
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 201

Խմբագիր՝ ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie.

Հանձնված է արտադրության 27.11.1995 թ.: Ստորագրված է տպագրության 16.02.1996 թ.:
Տպագրական 12,75 մամուլ + 9 գերդիր, թուղթ 70×108 1/16, պատվեր 314:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան

ISSN 0134—5249